

The Institute of Ancient Manuscripts after Mesrop Mashtots
“MATENADARAN” and “Friends of the Matenadaran” Benevolent Fund
express their gratitude to “JTI ARMENIA” CJSC
for sponsoring the publication of this book

Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանը և «Մատենադարանի
բարեկամներ» բարեգործական հիմնադրամը երախտագիտություն են
հայտնում «ՋԵՅ ԹԻ ԱՅ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ին
սույն գրքի հրատարակությանն աջակցելու համար



MATENADARAN
MESROP MASHTOTS INSTITUTE OF ANCIENT MANUSCRIPTS

**NEMESIUS OF EMESA
ON THE NATURE OF MAN
IN OLD ARMENIAN TRANSLATION**

Text, Introduction and Notes by
Karine Mosikyan

Yerevan – 2019

МАТЕНАДАРАН
ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ ИМЕНИ МЕСРОПА МАШТОЦА

**НЕМЕСИЙ ЭМЕССКИЙ
“О ПРИРОДЕ ЧЕЛОВЕКА”
В ДРЕВНЕАРМЯНСКОМ ПЕРЕВОДЕ**

Критический текст, предисловие и комментарии
Карине Мосикян

Ереван – 2019

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՆԵՄԵՍԻՈՍ ԵՄԵՍԱՑԻ ՅԱՂԱԳՍ ԲՆՈՒԹԵԱՆ ՄԱՐԴՈՅ

Առաջաբանը, համեմատական բնագիրը և
ծանոթագրությունները՝ Կարինե Մոսիկյանի

Երևան – 2019

ՀՏԴ 1/14:61:09
ԳՄԴ 87+5+76.11
Ն 521

Հրատարակվում է Մերուպ Մաշտոցի անվան
Մատենադարանի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագիրներ՝ բանաս. գիտ. դոկտոր Գոհար Մուրադյան
բժշկ. գիտ. դոկտոր Ստելլա Վարդանյան

Նեմեսիոս Եմեսացի

Ն 521 Յաղագս բնութեան մարդոյ / Նեմեսիոս Եմեսացի: Առաջաբանը,
Համեմատական բնագիրը և ծանոթագրությունները՝ Կ.
Մոսիկյանի, Եր.: Մաշտոցի անվ. Մատենադարան, 2019.- 512 էջ
+ 4 էջ ներդիր

Դ. դարի բժիշկ փիլիսոփա Նեմեսիոս Եմեսացու «Յաղագս բնութեան
մարդոյ» երկը հունարեն հայերեն են թարգմանել Ստեփանոս Սյունեցին և
Դավիթ Հյուսիսատուր 717 թ. Կոստանդնուպոլսում: Այն մեծ ազդեցություն է
ունեցել հայ միջնադարյան մարդակազմական և բժշկագիտական մտքի
ձևավորման և զարգացման վրա:

Երկի հայերեն թարգմանության բնագիրը կազմվել է Երևանի
Մատենադարանի 13 հնագույն ձեռագրերի, Երուսաղեմում պահվող հմր.
1862 ձեռագրի (մեզ հասածներից ամենահինը՝ ԺԱ. դար), վենետիկյան վեց
գրչագրի համեմատությամբ կազմված 1889 թ. հրատարակված բնագրի
հիման վրա՝ հունարեն սկզբնագրի համեմատությամբ: Գիրքը պարունակում
է նաև վերլուծական առաջաբան, ընդարձակ ծանոթագրություններ, եզրերի
և բառային նորաբանությունների բառարան:

ՀՏԴ 1/14:61:09
ԳՄԴ 87+5+76.11



Իմ երախտագիտությունն եմ հայտնում բոլոր նրանց, ովքեր օժանդակել են այս քննական բնագրի ստեղծմանը: Եվ առաջին հերթին՝ բազմափորձ և վաստակաշատ ձեռագրագետ Գևորգ Տեր-Վարդանյանին, ում շնորհիվ ես սովորեցի աշխատել ձեռագրերի հետ և առանց որի արժեքավոր դիտարկումների հնարավոր չէր լինի այս գրքի ստեղծումը:

Շնորհակալություն Մատենադարանի բժշկության բաժնի ավագ գիտաշխատող Դոնարա Կարապետյանին, որի կարծիքը շատ կարևոր էր երկի բժշկագիտական վերլուծության համար, Տիգրան Սիրունյանին՝ լատիներեն թարգմանությունների հարցում մեծ օգնության, նաև Վահե Թորոսյանին և Գրիգոր Բրուտյանին՝ պատրաստակամ աջակցության համար:

Անշուշտ աշխատանքի լիարժեքության համար անուրանալի է Երուսաղեմի Ս. Հակոբեանց վանքից Տեր Շնորհաք Փալոյանի օգնությունը: Նրա անմիջական մասնակցությամբ մեզ հասանելի դարձավ երկի Երուսաղեմում գտնվող հնագույն ձեռագիրը, որի համեմատությունից մեր քննական բնագիրն աներկբայորեն մեծապես շահեց:

Եվ վերջապես ցանկանում եմ իմ մեծ երախտագիտությունը հայտնել հրատարակության գիտական խմբագիր Գոհար Մուրադյանին, որի մեծ օգնությունը հունարեն սկզբնագրի հետ համեմատելու, քննական բնագիրը կառուցելու և գիրքը հրատարակության պատրաստելու համար անգնահատելի է:

Կարինե Մոսիկյան



ԱՌԱՋԱԲԱՆ

Վաղ քրիստոնեական շրջանը նշանավորվեց Արևմուտքում անտիկ քաղաքակրթության կորստով: Մինչդեռ, ինչպես Հայաստանի հարևան երկրներում՝ Բյուզանդիայում և Ասորիքում, այնպես էլ Հայաստանում շարունակվում էր անտիկ հեղինակների գործերի ուսումնասիրությունը, թարգմանությունն ու մեկնությունը: Ուշ անտիկ և բյուզանդական մշակույթի ձևավորման սկզբնական շրջանում փիլիսոփայական մի շարք բաժիններ բուռն զարգացում ապրեցին՝ գտնվելով փիլիսոփայական գիտելիքի և բնագիտության խաչմերուկում: Մասնավորապես հաճախ էին ներկայացվում մարդաբանական գիտելիքներ՝ ինչպես փիլիսոփայության, այնպես էլ բնախոսություն ոլորտում նախկինում կուտակված պատկերացումների հիման վրա:

Այդ շրջանում հայկական մշակույթում կողք-կողքի գոյակցում էին քրիստոնեությունը և ուշ շրջանի հելլենականությունը: Այն ժամանակ, երբ քրիստոնեության ջատագույնները քարոզում և տարածում էին նոր հավատը, հելլենականության հետևորդները ուսումնասիրում էին անտիկ հեղինակների գործերը, թարգմանում և մեկնում էին հելլենական գիտության և փիլիսոփայության առավել կարևոր երկերը, դրանով հանդերձ շարունակելով մնալ ազգային գործիչներ և հետապնդելով հեռահար նպատակներ՝ կապված հայ ինքնուրույն գիտության հետագա զարգացման և ազգային մշակույթի խորացման հետ (տե՛ս Մալոյան 1959, շ. 58): Ուշ շրջանի հելլենականության կողմնակիցները ստեղծեցին բարձրարժեք ազգային մշակույթ: Այս առումով մեծ կարևորություն ունի հունարենից հայերեն թարգմանված մեծածավալ գրականությունը, ինչպես նաև առանձին երկերի բազմաթիվ մեկնությունները:

Հայոց թարգմանական մատենագրության պատկառելի մասն են կազմում «հայրաբանական» երկերը (*patristica*), որոնց շարքում հնություն, ձևաբանական հավաքածուների առատությունը և հայոց ինքնու-

ըստ զրականության վրա թողած ազդեցությամբ առանձնանում են երեք մեծ կապադոկիացիներ Բարսեղ Մեծի (330-379), Գրիգոր Նյուսացու (335-394) և Գրիգոր Նազիանզացու (330-390) հայերեն թարգմանությունները: Հայրաբանական գրականությունը, որը ձևավորվեց և զարգացավ անտիկ մշակույթի շրջանակներում, օգտագործում էր վերջինիս ձևերն ու մեթոդները, գաղափարներն ու թողած գրականությունը՝ այն փոխանցելու համար հետագա սերունդներին:

«Հայրաբանական մշակույթն առավելապես համադրական մշակույթ էր, որ կիրառում էր մի սկզբունք՝ վերցրու ուրիշներից, ինչպես մեղուն է վերցնում ծաղիկներից՝ ըստ Մեծն Բարսեղ և Գրիգոր Աստվածաբան սրբերի հիշարժան խոսքերի: Երբեմն հանձնարարվում էր և կիրառվում, ինչպես օրինակ՝ Ալեքսանդրիայի դպրոցում, այն սկզբունքը, որ Սուրբ Գրոց ըմբռնումից և մկրտությունն ընդունելուց առաջ անհրաժեշտ էր աշխարհիկ մշակույթի յուրացումը: Մի բան, որ իրականացրել են բոլոր եկեղեցական հայրերը» (տե՛ս Կոման 1971, էջ 13): Հայրաբանական գրական գործերն, ընդհանուր առմամբ, քննական և համեմատական մեթոդով են մեկնաբանում աշխարհիկ մշակույթը, «նշավակելով նրա այն սկզբունքներն ու արտահայտությունները, որոնք չէին համաձայնվում ավետարանական պատգամի հետ և նույնիսկ հակադրվում էին նրան» (նույն տեղում): Նրանք ծնունդ և դրսևորում տվեցին մի տարրողունակ ու բարդ մշակույթի, որը ներամփոփում և մեկնաբանում է մարդ-էակի ներդաշնակությունը, նրա ճակատագիրը երկրային կյանքում և դրանից հետո, բոլոր եղանակներով և առիթներով վերհանում է բարու և բարոյական առաքինությունից կարևորությունը: Նպատակների ընդհանրությունը, տարբեր մշակույթների համադրման սկզբունքը, միևնույն ժամանակաշրջանը և զանազան այլ գործոններ ողջ միջնադարի ընթացքում առիթ են հանդիսացել հայրաբանական գործերի հեղինակային պատկանելիության բազմաթիվ շփոթների: Նման շփոթի օրինակներից մեկը երկար տարիներ Գրիգոր Նյուսացուն վերագրված Նեմեսիոս Եմեսացու (Դ. դար) «Յաղագս բնութեան մարդոյ» երկն է: Բազմաթիվ են այն ընդօրինակությունները, որոնցում Նեմեսիոսի այս աշխատանքը մատուցվում է իբրև Նյուսացու հեղինակած գործ: Ըստ որում այդ շփոթը վերաբերում էր ինչպես երկի հունարեն սկզբնագրին, այնպես էլ հայերեն թարգմանությանը: Հայերեն ձև-

ուսմանը և այն դիտվում է արդեն թարգմանչաց հիշատակարանում, հետևաբար հունարեն բնագիրը, որից կատարվել է թարգմանությունը, նույնպես ներկայացված է եղել Նյուսացու հեղինակմամբ:

Սակայն եղել են նաև գրիչներ, որոնք կասկածի տակ են առել երկի հեղինակային պատկանելիությունը: Այս առումով հիշատակության արժանի է 1227 թ. Պղնձահանքում ընդօրինակված ՄՄ 1013 ձեռագիր ժողովածուն, որ Գրիգոր Նյուսացու մի քանի գործերի հետ միասին պարունակում է նաև նրան վերագրվող «Յաղագս բնութեան մարդոյ» երկը: Ահա այս գրչագրում «Գրիգորի Եպիսկոպոսի Նիւսացոյ՝ Յաղագս բնութեան մարդոյ» հերթական խորագրի կողքին նույն ձեռքով և գրչությամբ ավելացվել է «Գրիգոր Նեմեսոյի Եպիսկոպոսի Եմեսոյ է» (ՄՄ 1013, թ. 201ա):

Ըստ Կիմ Մուրադյանի՝ սա թերևս բազմաթիվ ընդօրինակությունների շարքում գործի հեղինակային պատկանելիությունը կասկածի տակ առնող ամենահին ձեռագրական վկայությունն է: «Հեղինակային պատկանելիության քննվող խնդիրը ուշադրության ոլորտում է եղել շատ ավելի վաղ և առավել հմուտ մատենագիրների հոգածությունը: Համենայն դեպս առկա սկզբնաղբյուրները հնարավորություն են տալիս ասելու, որ հեղինակային պատկանելիության սույն շփոթը գոյություն է ունեցել ողջ միջնադարում» (Կ. Մուրադյան, Նյուսացի 1993, էջ 54-58):

Գարեգին Զարբհանալյանն այս առնչությամբ գրում է. «Նեմեսիոսի անվամբ ... գրուածք մը կայ՝ Յաղագս բնութեան մարդոյ կոչուած, որ կը բովանդակուի ամբողջ գլուխս, յորոց երկրորդն և երրորդը՝ սրբոյն Գրիգորի Նիւսոցոյ ընծայուած է յոմանց, ինչպէս նաև բովանդակ մատեանն՝ յայլոց, թեպետև չկայ հաւաստիք կամ հաւանականութիւն, որ երանելի հայրապետս ըլլայ անոնց հեղինակ: Հոգւոյ նախագոյակ ըլլալը (prèexistence) բացայայտ կը վարդապետուի ի գլուխն երկրորդ, որ Նիւսացի հակառակամարտ կը հանդիսանա այն գրութեան ի գիրսն Յաղագս կազմութեան մարդոյ: Այսպէս, ի գլուխն երրորդը՝ արհամարհանօք կը խօսի Որոգինեայ վրայ, որ Գրիգոր սիրող և մեծարող կերևնայ այդ նշանաւոր հանճարոյն: Երեսներորդ հիգերորդ և հետևեալ գլխոց մեջ՝ ճակատագրի վրա խօսելով կը ցուցնէ անոր անպատեհութիւն: Պատճառ մը չկայ, որ Նիւսացին կրկին դառնար այնպիսի կարծեաց վրայ, զոր արդեն լիուլի և այնչափ բացայայտ և խորիմաստ ոճով և լեզուով հերքել էր նոյն նիւթին վրայ յօրինած մասնաւոր երկասիրութեամբ: Տարակուսական կերևնայ Նիւսացոյն

կամ եպիսկոպոսական աստիճան ունեցող որ և իցէ անձի մը վերագրել՝ անդամագնական մանրամասնութիւնքն, որ ի գլուխն քսաներորդ հինգերորդ» (Ջարբհանալյան 1889, էջ 629-630):

Արեւմուտքում այս շփոթն առկա էր դեռևս ժԱ. դարում, երբ Ալֆանոս արքեպիսկոպոս Սալեռնացին (1058-1085 թթ.) երկը թարգմանեց լատիներեն, և շարունակվում էր մինչև ժՁ. դար, երբ այն հրատարակվեց 1512 թ. իբրև Նյուսացու ստեղծագործություն¹: Արդեն Նեմեսիոսի հեղինակմամբ երկը 1538 թ. հրատարակել է Գէորգ Դելլա Վալլեն: Հայտնի է, որ Բելլարմինի «Ութ գիրք փիլիսոփայության մասին» գրքի նախնական տարբերակում երկը դեռևս վերագրված է եղել Նյուսացուն, բայց 1684 թ. վերահրատարակության մեջ (Bellarmine 1684, p. 80), նա հրաժարվում է իր նախկին կարծիքից՝ ընդունելով, որ այն պատկանում է Նեմեսիոսին:

Նեմեսիոս Եմեսացի

Նեմեսիոս Եմեսացու անձի և գործունեության մասին սուղ տեղեկություններ են պահպանվել: Այսպես, Գրիգոր Նազիանզացին իր մի քանի նամակներում (386 թ.) և նույն ժամանակաշրջանին պատկանող մի պոեմում հիշատակում է ոմն հեթանոս Նեմեսիոսի, որը Գամրաց (Կապադոկիայի) կուսակալն էր (Назуанзан, русьма 2000, № 184-187): Այդ մասին գրում է նաև Գարեգին Ջարբհանալյանը. «Բովանդակ գրուածին մեջ հեղինակը ոչ աննշան, մանաւանդ թէ երբեմն բազմաճմուտ իմաստասէր կ'երևնայ. բայց քրիստոնեական կրօնից ճշմարտութեանց նկատմամբ՝ թերևս չափաւոր գիտութեամբ: Ուստի եթէ բռնադատուինք Նեմեսիոս անունով մէկում ալ ընծայել զայն, հաւանական կ'երևնայ հմտից՝ Կապադոկիոյ համանուն քաղաքապէտ մը հեղինակ սեպել, որուն Աստուածաբանն ուղղած է իր մեկ քերթուած, քան եպիսկոպոսական աւագութիւն ունեցող անձի մը: Ապողինարի և Եւնոմիոսի անուանց և հերձուածոց յիշատակութենէն յայտնի կ'երևնայ թէ 375 թուականէն ետքն եղած է գրքին շարագրութիւնը» (Ջարբհանալյան 1889, էջ 630-631):

¹ Divini Gregorii Nyssae Episcopi qui fuit frater Basilii Magni Libri Octo: De Homine. II De Anima. III De Elementis. IIII De Viribus 'nimae. V De volu[n]tario et inuolu[n]tario VI De Fato. VII De Libero 'rbitrio. VIII De Prouidentia, Schurenius, 1512 (վերնագիրը բաղկացած է գլուխների խորագրերից):

Իսկ Հակոբ Տաշյանի հաղորդմամբ՝ Թ. դարի ասորի մատենագիր Մովսէս Բար-Կեփան իր «Դրախտի մեկնութիւն» աշխատութեան մեջ (գլուխ Ա) հիշատակում է «գՆեմեսիոս իմաստասէր փիլիսոփեայ Վասն ծառոյն կենաց գործքը» (ՀՅՏ 1892, էջ 65-71): Դրախտային այգու և առաջին մարդու մեղսագործութեան մասին Նեմեսիոսի *De arbore vitae* կորսված երկին անդրադառնում է նաև Ասեմանին (*Assemanus 1721, t. II, p. 129*): Նա Նեմեսիոսին է վերագրում Գրիգոր Նյուսացու «կասկածելի» երկերից մեկը և՛ *Introductio in Categorias Aristotelis* (*Assemanus 1721, t. III, p. 129*):

Եթե խոսքն իրոք նույն մարդու մասին է, ապա Նեմեսիոս Եմեսացին ապրել և ստեղծագործել է Կապադովկիայում՝ հանճարեղ «եռյակի» հետ մոտավորապես նույն ժամանակաշրջանում: Ընդհանուր առմամբ, նրա ապրած շրջանի մասին հետազոտողների կարծիքները տարածվում են Գ.-Ե. դարերի միջակայքում, սակայն ավելի ընդունելի է համարվում Դ. դարը:

«Յաղագս բնութեան մարդոյ»

Ք. ա. Ե. դարում Հիպոկրատեսի *De natura hominis* երկի հետևութեամբ անտիկ գիտութեան մեջ առաջ եկավ երկու գուգահեռ ուղղություն, որոնցից մեկը դրեց փիլիսոփայական մարդաբանութեան, իսկ մյուսը՝ հունական բժշկագիտութեան սկիզբը: Հատկապես վերջինիս առաջընթացը հնարավորություն տվեց առաջինի զարգացմանը: Ք. ա. Բ. դարի վերջին մարդաբանութեան արդեն ծանրակշիռ տեղ էր զբաղեցրել հունա-հռոմեական գիտութեան մեջ: Նրա գլխավոր թեման բանավեճն էր մարդկային հոգու բնութեան շուրջ, նաև մարմնի ու հոգու փոխհարաբերության խնդիրը: Նոր գիտելիքը մարդկային մարմինը ներկայացնում էր իբրև աշխարհակարգի ավարտուն տարր: Այն ժամանակ, երբ քրիստոնեությունը մոտաք էր գործում հունա-հռոմեական մշակույթ, մարդու մասին ուսմունքն արդեն հստակորեն դիտարկվում էր փիլիսոփայութեան և բժշկութեան հատման կետում:

Կիրառելով ինչպես անտիկ փիլիսոփաների ու գիտնականների, այնպես էլ եկեղեցու հայրերի՝ գիտութեան մեջ ներդրած լավագույն ավանդույթները, Նեմեսիոսը հեղինակեց մարդու ֆիզիկական, հոգեկան և

Հոգևոր աշխարհը բնութագրող, տիեզերքում և բնության մեջ նրա տեղն ու դերը պատկերող մի կուռ աշխատանք, որտեղ հիմնական թեմայի հետ կապակցված արծարծվում են նաև տիեզերագիտական և բնափիլիսոփայական բնույթի քննարկումներ, ինչպես նաև որոշ աստվածաբանական և բարոյախոսական դրույթներ, որոնք, սակայն ներկայանում են իբրև կարճ հետևություններ՝ տիեզերագիտական և մարդաբանական դիտարկումներից: «Յաղագս բնութեան մարդոյ» գրքում փորձ է արվում վաղ բյուզանդական շրջանի փիլիսոփայությունն ու բնագիտական գիտելիքը սինթեզել քրիստոնեական գաղափարախոսության հետ և համակարգել մարդու մասին հայտնի ուսմունքները:

Հունարեն բնագրի թարգմանությունները և հրատարակությունները

«Յաղագս բնութեան մարդոյ» երկը հրատարակվել ու վերահրատարակվել է տարբեր լեզուներով: Քրիստիան Ֆրեդերիկ Մատթէի պատրաստած և 1802 թ. Մագդեբուրգում *Patrologiae Graecae cursus completus* շարքում հրատարակած բնագիրը (PG 40) երկար ժամանակ լավագույնն էր համարվում: Դրանից էին օգտվում Նեմեսիոսի հետազոտողները: 1987 թ. Լեյպցիգում Մորենո Մորանիի հրատարակած քննական նորագույն բնագիրը² համեմատված է նաև հայերեն, ասորերեն, արաբերեն և այլ հնագույն թարգմանությունների, ինչպես նաև ԺԱ. դարի լատիներենի հետ: Ներածականում Մորանին հանգամանորեն անդրադառնում է հայերեն թարգմանությանը՝ ափսոսանք հայտնելով, որ չհրատարակված և չմեկնաբանված են մնացել երկի Մատենադարանում պահվող ձեռագրերը: Նա չափազանց կարևորում է նաև երկի բազմաթիվ հայերեն մեկնություններն ու լուծմունքները: «Այս թարգմանությունը, – գրում է Մորանին, – հունյն թարգմանիչների տեքստերում մեծաթիվ և նաև խիստ էական սխալների բանալի է, սակայն շատ հաճախ մատուցում է նաև ընտիր մեկնաբանություններ, որոնք հունարեն ձեռագրերում կամ այլ վկայություններում

² *Nemesius Emesenus, Nemesii Emeseni De natura hominis, Moreno Morani (ed.), BSB B. G. Teubner Verlagsgesellschaft, Leipzig, 1987 (Nem).*

ապարդյուն պիտի փնտրենք: Թերևս կարևոր հանգամանք է նաև, որ միայն հայերեն թարգմանությունն է գերծ որոշ աղճատումներից, որոնք հատուկ են բոլոր ձեռագրերին և վկայություններին: Հունարեն տեքստը, մեկնությունները այնքան ճիշտ են արտացոլված հայերեն թարգմանություն մեջ, որ կարելի է վստահաբար ասել, որ այն հաճախ կարող է գործածվել հունարեն բնագրի փոխարեն: Հայերեն թարգմանությունը որոշ ընդհանուր ընթերցումներ ունի Ալֆանուսի հետ, բայց Ալֆանուսը թարգմանություն մեջ օգտագործել է այլ ձեռագրեր ևս» (Nem 1987, pp. X-XI): Ուստի հարկ է խելամտորեն և շրջահայաց կերպով քննել ինչպես հայերեն բնագրերը, այնպես էլ հայ մեկնիչների գրած մեկնություններն ու լուծմունքները (որոնք առկա են և՛ առանձին ձեռագրերի տեսքով, և՛ բնագրի լուսանցքներում դրված նշումների) և «բացահայտել, թե ինչ են դրանք իրենցից ներկայացնում» (նույն տեղում):

Հայտնի է, որ երկն ասորերեն թարգմանվել է է. դարում, արաբերեն՝ Թ. դարի վերջին, իսկ վրացերեն՝ ԺԲ. դարում:

«Բնութեան» հայերեն թարգմանությունը

Երկը հայերեն է թարգմանել Ստեփանոս Այուլնեցին (680-735 թթ.) Դավիթ Հյուսպատոսի օժանդակությամբ, հունաբան դպրոցի գործունեություն մեջ վերջին փուլում Ը. դարում: Այս մասին Ստեփանոս Օրբելյանը (1245-1305) հաղորդում է. «Եւ ծանօթացեալ մեծ հիւպատոսի մի Դաւիթ անուն և թագաւորական սեղանոյն կենառի, և ձեռնտուութեամբ նորին թարգմանէ զգեղեցիկ գիրսն սրբոյն Դիոնիսիոսի, և դնէ ինքն դժուարագոյն և խրթին բանիցն լուծումն բան առ բան. թարգմանէ և զգիրսն քաղցրաբան Գրիգորի Նիւսացւոյ զԲնութեան և զԿազմութեան» (Պատմութիւն Նահանգին Սիսական, արարեալ Ստ. Օրբելեան արքեպիսկոպոսի Սիւնեաց, Թիֆլիս, 1910, էջ 135):

Իսկ Մխիթար Այրիվանցին (1222-1291 թթ.) ներկայացնում է մեկ այլ համաբնույթ սկզբնաղբյուր, ըստ որի «Յաղագս բնութեան և կազմութեան մարդոյ» գործերը և հունարեն գանազան այլ բնագրեր հայերեն թարգմանելիս Այուլնեցուն աշխատակցել է թարգմանական պատրաստությամբ օժտված հմուտ գործընկեր՝ Այրիվանքի միաբան «Գրիգոր անուն»

մատենագիրը: Մխիթար Այրիվանցին գրում է. «էր եւ ընկեր սորա ի նմին քաղաքէ ք[ա]հա[նա] յոմն Գրիգոր անուն, ի ս[ուր]բ ուխտէն Այրիվանաց. . . Երկոքին սոքա ընտիրք և զարմանալիք, յառաջադէմք ի գիտութիւն գրոց եւ յարուեստս երաժշտականութեան: Սոքա միաբանեալ գնացին իմաստասիրաց յԱթէնս եւ ուսան զամենայն սահմանս փիլիսոփայութեան իմաստնոց արտաքնոց, և քաջատեղեակք եղեն աստուածաշունչ բնագրեաց և մեկնչաց: Անտի եկեալ, եկին ի թագաւորաբնակ քաղաքն Կոստանդնուպոլիս...Անդ գտին նոքա զգիրսն Դիոնիսիոսի Արիոպագացոյ... թարգմանեցին զնա ի յունականէն ի հայ բարբառ... Գտին և ի նմին քաղաքի զբազմիմաստ գիրսն Գրիգորի Նիւսացոյ, որ վասն բնութեան մարդոյ եւ կազմութեան կարգեալ էր, եւ զայն ևս թարգմանեցին» (Յովսեփեանց 1931, էջ 17):

Ըստ որում Սյունեցու և «Գրիգոր անուն» թարգմանիչ-մատենագիրների համատեղ գործունեութեան հետ են կապվում ոչ միայն Նյուսացու կամ Եմեսացու նշված գործերը, այլև ուրիշ աշխատանքներ: «Իրականում խոսքը ծրագրավորված, որոշակի մշակված սկզբունքներով գործող տեական թարգմանական գործունեություն ծավալելու մասին է, – կարծում է Կիմ Մուրադյանը, – որ, բնականաբար, մեկ-երկու աշխատակից-կատարողների ձեռնարկումներով դժվար էր իրականացնել» (Կ. Մուրադյան, Նյուսացի 1993, էջ 64): Այն, որ թարգմանիչները մեկից ավելին են, նշվում է նաև 1227 թ. Նյուսացու գործերի ընդօրինակություն (ՄՄ 1013) առիթով գրված Սիմեոն Պղնձահանեցու հիշատակարանում. «աւարտեցաւ գիրքս Գրիգորի Նիւսացոյ... որ թարգմանչացն գրածն էր»³: Ի վերջո, այս ամենը հավաստվում է ավելի վաղ մի վկայություն՝ գրչագրերի մեծ մասում տեղ գտած թարգմանչաց հիշատակարանով. «Ի վեցհազարերորդի, երկերիւրորդի, քսան եւ եւթներորդի ամի արարածոց աշխարհիս ըստ յունարեն թուոյ: Ի չորեքտասաներորդի էնտիկտիոնին, յառաջին ամի թագա-

³ ՄՄ 1013, թ. 241բ. «Յամին ՅՁԼԵ-երորդի (6735-5508 = 1227) յաւիտենից թուոցն գրեցաւ եւ աւարտեցաւ գիրքս Գրիգորի Նիւսացոյ Եպիսկոպոսի, ընդէր եւ լաւ աւրինակաց հնոց, որ թարգմանչացն գրած էր, ձեռամբ մեղապարտն եւ անարժան կրաւնաւորի Սիմեոնի, յերկիրս Հայոց, մերձ ի Լաւռէոյի վանքն, որ կոչի Սպլենձահան, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնին, յիշխանութիւն Իվանէ Աթապակին՝ շինողի վանիցս, զոր յերկար ժամանակ արասցէ Տէր որդովքն իւրովք հանդերձ: Արդ աղաչեմ որք ընթեռնոյք կամ աւրինակէք, յիշման արժանի արարէք, եւ որք յիշէք յիշեալ լիցիք ի Տեառնէ»:

ւորութեանն Լեւոնի թագաւորի, թարգմանեցան գիրքսն Սրբոյն Գրիգորի եպիսկոպոսի Նիւսեա ի ստույգ աւրինակաց ի Կոստանդիանուպոլիս, ի ձեռն Դաւթի Հիպատոսի, և թագաւորական սեղանւոյն կինառի, և ի ձեռն Ստեփանոսի քահանայի քերթողի. աշակերտի տեառն Մովսէսի Սիւնեաց եպիսկոպոսի: Արդ աղաչեմ գրքիստոսասէր պաշտօնեայք սրբոյ եկեղեցոյ յիշեալ զիս յաղաւթս ձեր հանապագ»:

Ինչ վերաբերում է Նեմեսիոս Եմեսացու և Գրիգոր Նյուսացու հիշյալ աշխատանքների թարգմանութեան ստույգ ժամանակին, ապա ինչպես տեսնում ենք, հիշատակարանում նշվում է միաժամանակ գրութեան երկու տարբեր տարեթիվ՝ ըստ աշխարհի արարչագործութեան (6227 կամ 6225), որը համապատասխանում է 717 թ. -ին, և ըստ հայոց թվականութեան՝ ՄԻԱ, այսինքն՝ 772 թ.: Վերջինս չի համապատասխանում ո՛չ Ստեփանոս Սյունեցու ապրած տարիներին (680-735թթ.), ո՛չ էլ Լեոն Գ. Կայսեր թագավորութեան ժամանակաշրջանին (717-741 թթ.): Ամփոփելով թարգմանչաց հիշատակարանի տվյալները, պատմիչների վկայութեաններն ու հայագետների որոշ ճշգրտումներ, հետազոտողները⁴ չնչին բացառությամբ, ավելի ընդունելի են համարում Հ. Տաշյանի այն եզրակացությունը, «թէ 716 կամ 717 թուականն է միայն ուղիղն՝ այն ստույգ է» (ՀՅՏ 1895, էջ 10):

Սուքիաս Սոմալյանը 1829թ. Վենետիկում հրատարակված «Պատկեր այլ և այլ հեղինակաց գործուոց ի հնուց թարգմանելոց ի հայ» գրքում գրում է. «Սիւնեաց եպիսկոպոս Ստեփանոս (Ը. դար), տեղեակ և ամենավարժ թէ յոյն և թէ լատին լեզուանց, հասարակաց գովութեան արժանացած է հետեւեալ գրուածոց թարգմանութեամբ, որ իր անխոնջ գրչին արդիւնքն են. գրուածոց սբ. Գրիգոր Նիւսացոյ, յորս կը բովանդակին. 1. Գիրք կամ ճառ յաղագս բնութեան մարդոյ, 2. Յաղագս մարդակազմութեան, 3. Ճառ յաղագս կուսութեան: Իրեքն ալ թարգմանուած ի յոյն բնագրէ: Սակայն զիտել արժան է, որ մարդկային բնութեան վրայ գրուածը՝ ի Մատենադարանի նախնի հարց, կ'ընծայուի Նեմեսիոսի եպիսկոպոսին Եմեսացոյ» (Դեզայի ուսումն., 1892, էջ 478):

⁴ Տե՛ս Մ. Չամչեան, Պատմութիւն Հայոց, հ. Բ, էջ 555, Գ. Զարբհանալեան, Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց, էջ 362-374, Գ. Հովսեփեան, Յիշատակարանք ձեռագրաց, էջ 55, Կ. Մուրադյան, Գրիգոր Նյուսացին Հայ մատենագրութեան մեջ, էջ 59, Ս. Վարդանյան, Ս. Գրիգոր Նյուսացու Տեսութիւն ի մարդոյն կազմութիւն, էջ 7 և այլն:

Ստեփանոս Սյունեցի

Ստեփանոս Սյունեցուն հիացական, գրեթե երկրպագական բառերով է ներկայացնում Ստեփանոս Օրբելյանը, որի պատմական երկում մի գլուխ նվիրված է Ստեփանոսի կյանքին ու գործին. «Ստեփանոսը սյունն է երկնքի և խաբիսիսը՝ հավատքի, սուրբ եկեղեցու անխախտելի վեմն ու անվախ պաշտպանը, մարդն էր երկնային և հրեշտակը՝ երկրային, հավիտյան մեռածը և միշտ կենդանին, հրեշտակներին հիացնողը և քերովբեներին զարմացնողը» (Օրբելյան 1986, էջ 148): Անվանելով նրան «ամենասուրբ հոգու ձեռքին հրեղեն սուր», ջահ, որը չէր կամենում թաքնվել մարմնավոր ծածկոցի տակ, Օրբելյանը պատմում է, որ «հրեշտակերամ սուրբ կրոնատանը՝ Մաքենոցաց աստվածաբանակ առաքինարանում, աստվածակիր և սերովբեատիպ հայրերի հայր Սողոմոնի, որը մեծ ուխտի կառավարիչն էր» (նույն տեղում, էջ 148), Սյունեցին անձնատուր է լինում «մշտաջան առաքինական գործերի»: Մի քանի տարի անց, ներքուստ գործնականապես բավարարված, նա այլևս պատշաճ չի համարում մնալ «անգիտության խավարի մեջ» և ձգտում է հասնել «աստվածային իմաստնական գիտության և կրթության, քանի որ նպատակահարմար չէր երկրագործության ակոսը միակողմանի լծով քաշել, այլ լծվել երկուսին, այսինքն՝ տեսականին և գործնականին, որպեսզի ամբողջը պատշաճավոր լիներ» (նույն տեղում, էջ 148): Հետևաբար գնում է գիտությունների աղբյուր համարվող Սյունյաց վարդապետարանը, աշակերտում է Սյունյաց երանելի եպիսկոպոս Մովսեսին, «ըստ ունեցած շնորհի» արագ հմտանում է աստվածային գիտությունների մեջ, հասնելով «տեսական շնորհի գագաթին՝ լցվելով անհամեմատելի հանճարով» (նույն տեղում, էջ 149): Նա եպիսկոպոսից իրավունք ստանալով՝ ըաբունարանում սովորողների համար մեկնաբանում էր Աստվածաշունչը:

Օժտված լինելով աստվածաբանական-փիլիսոփայական խորն ու ընդարձակ ծանոթություններով, Սյունեցին, անշուշտ, ոչ պակաս հմուտ պետք է եղած լիներ նաև արտաքին գիտությունների ոլորտում, հատկապես բնագիտական հարցերում, որպեսզի կարողանար թարգմանել կամ խմբագրել Նեմեսիոսի և Նյուսացու երկերը: Եվ, իրոք, Կոնստանդնուպոլսում «ճշմարտագավան» մի մենակյացի մոտ, որը հմուտ էր արտաքին գի-

տուժյունների մեջ, նա սովորում է հույն և հռոմեացի ժողովուրդների գիր-
րը, և վարժվում նրանց գրականությունն ու գիտությունը՝ «ըստ փիլիսո-
փայական ոճի»: Դառնալով մետրոպոլիտ, Սյունեցին աստվածային օրենք-
ներով «խրատում ու սովորեցնում էր. որպես սուր կտրում էր ախտահար-
վածությունները. որպես իմաստուն բժիշկ բուժում էր վիրավորներին. որ-
պես ընտիր աղ համ էր տալիս անհամություններին. որպես արեգակ պայ-
ծառ լուսավորում էր խավարյալներին. տհասներին Քրիստոսի միջոցով
կաթով սնում էր որպես ծնող. կատարյալներին կատարյալ կերակուր էր
մատուցում որպես հավատարիմ տնտես. մեկնում էր Աստվածաշնչի գրքե-
րը (Արարածքը, Հոբբը, Եգեկիելը)» (նույն տեղում, էջ 152):

Այն, որ Ստեփանոս Սյունեցու նման լուսավորյալ ու բազմահմուտ
մեկը ձեռնարկել է Նեմեսիոսի երկի թարգմանությունը, խոսում է միայն
դրա կարևորություն և իր ժամանակաշրջանի համար լրջագույն գիտելիք-
ներ պարունակելու մասին: Չի կարելի, իհարկե, բացառել նաև Գրիգոր
Նյուսացու անվան հեղինակության հանգամանքը, որին վերագրված է
եղել երկը: Ուշագրավ են միջնադարյան հայ գրականության մեջ այս երկի
հետքերը, բազմաթիվ հիշատակումներն ու բառացի մեջբերումները, որ
հանդիպում են տարբեր դարերի գրչագրերում (հաճախ նույնիսկ առանց
հեղինակի անվան), ինչը վկայում է, որ գիրքը հետաքրքիր և ընդունված
է եղել ինքնին:

Գևորգ (Գէորգ) Սկևռացի (Լամբրոնացի)

Բազմաթիվ են նաև լուծմունքներն ու մեկնությունները, ինչպես
առանձին աշխատությունների ձևով, այնպես էլ բնագրի գրչագրերի լու-
սանցքներում: Հետազոտողների կարծիքով դրանց հեղինակը հիմնակա-
նում Գրիգոր (Գէորգ) Սկևռացին է: Նրա անունը երբեմն նշվում է լու-
սանցքներում գետեղված լուծմունքների մոտ՝ «Գէ» կամ «Գէորգ»: Գարե-
գին Զարբհանալյանը գրում է. «Մեր մէջ՝ մանաւանդ առ հին նախնիս՝
սակաւաթիւ են բուն ուսումնական երկք կամ անոնց փոխադրութիւնք,
որով և զգալի՝ ոչ այնչափ ճոխութիւն լեզուիս ի ճշգրիտ բացատրութիւն
այսպիսի նիւթոց: Նեմեսիոսի անուամբ մեզ հասած այս երկասիրութիւն՝

մեծապէս կրնայ օժանդակիլ ի լնուլ զայս պակաս: Մեր նախնիք Լուծմունք 'մ ալ յօրինած են այս երկասիրութեան, որ յոմանց Գրիգորի Սկեռացւոյ ընծայուած է» (Զարբհանալեան 1889, էջ 164):

Լուծմունքների նպատակը բնագրի անհասկանալի մասերը մեկնաբանելն է կամ պարզապէս՝ սեփական կարծիքը հայտնելը: Դրանք կամ ընդհանուր լայնածավալ մեկնութիւններ են, կամ առանձին հասկացութիւնների, սահմանումների և եզրույթների բացատրութիւններ:

Գրիգոր Սկեռացին ծնվել է 1170թ. Լամբրոն ամրոցում: Մահվան տարեթիվը հայտնի չէ, մոտավորապէս 1230թ.: Նա Ներսէս Լամբրոնացու զարմիկն էր ու հետեւորդը, թագավորի՝ թարգմանիչը, խորհրդատուն և խոստովանահայրը: Գիտական գործունեութիւնը նա ծավալել է Սկեռավանքում: Բազմաթիւ մեկնութիւնների հեղինակ է՝ հիմնականում աստվածաշնչյան թեմաներով: Սակայն Ալիշանը հայտնում է նաև նրա գրած լուծմունքների մասին՝ «գժուարիմաց բանից սրբոց Հարց, որպէս զԴիոնեսիոսի և զՆարեկացւոյն և զայլ խնդրոց աստուածաբանականաց» (Ալիշան 1885, էջ 91): Հենց այս շարքում Ալիշանը հավելում է՝ «և գիրք Մարդակազմութեան, ըստ վկայութեան համառօտողի ուրուք վարուց նորին, թերևս մեկնութիւն գրոց Նիւսացւոյն, հանդերձ այլովք, յորոց ո՞ գիտէ, որքան տակաւին անծանօթ մնաց առ ի մէնջ» (ն.տ.):

Զեռագրեր և հրատարակություններ

Նեմեսիոս Եմեսացու «Յաղագս բնութեան մարգոյ» երկի հայերեն թարգմանական բնագիրը պահպանվել է բազմաթիւ ընդօրինակութիւններով, որոնք հիմնականում գերծ են մնացել միջնադարյան «խմբագրական» աղավաղումներից: Ներկայումս Մաշտոցի անվան Մատենադարանում, Վենետիկի և Վիեննայի Մխիթարյան Միաբանութիւնում և Երուսաղէմում Նեմեսիոսի երկը ներկայացված է շուրջ 65 ձեռագրով, որոնցից 21-ն ամփոփում են երկի մասին լուծմունքներ և մեկնութիւններ, մյուսները՝ բնագիրը: Դրանց մեծ մասը (մոտ 45) գտնվում են Երևանի Մատենադարանում: Հնագույն օրինակը Երուսաղէմի սբ. Հակոբեանց վանքում պահվող թիւ 1862 ձեռագիրն է՝ ընդօրինակված 1047 թ.:

Գրչագրերի մեծ քանակը և բազմաթիվ այլ ձեռագրերում «Բնութեան» առանձին հատվածների և նույնիսկ ամբողջական գլուխների մեջբերումը, բազմաթիվ լուծմունքներն ու մեկնությունները խոսում են այն մասին, որ երկը մի տեսակ մարդաբանությունից դասագիրք էր միջնադարյան Հայաստանում: Չնայած դրան, այն բավական ուշ է հրատարակվել և արժանացել ուսումնասիրողների ուշադրությունը:

1887-88 թթ. «Բազմավէպ»-ում տպագրվեց բնագրի տասնմեկ գլուխ: Առաջին գլխին նախորդող նախաբանը («գեկուցում»-ը) Աթանաս Տիրոյեանինն էր⁵: 1889թ. լույս տեսավ ամբողջական բնագիրը՝ Վենետիկյան Մատենադարանի վեց ձեռագրերի համեմատությունով: Հրատարակության պատրաստողն դարձյալ Աթանաս Տիրոյեանն էր: 1892 թ. «Բազմավէպ»-ում տպագրվեց անանուն հեղինակի մի հոդված՝ իտալացի լեզվաբան, արևելագետ, հայագետ Ամբրոսիոս Թեզետոսի (1469-1540) մի գրքի մասին, որտեղ վերջինս՝ ներկայացնելով նաև «Բնութեան» ավելի վաղ կատարված ասորերեն թարգմանությունը և նշելով, որ այն մեծ հետաքրքրություն չառաջացրեց ու նկատելի հետևորդներ չունեցավ, համարում էր, որ Արևելքում Նեմեսիոսը հատկապես «Հայոց ձեռքով նոր կեանք մը ստացած է» (Դեզայի ուսումն., 1892): Ավելին, զանազան օրինակներ բերելով և համեմատելով դրանք հունարենի հետ, Թեզետոսը «ընտրելագոյն և ուղղագոյն» է համարում հայերենը՝ հավելելով, որ եթե «փութաջան և ծայրալիր» համեմատություն կատարվի արևելյան (իմա՝ հայերեն) գրչագրերի հետ, դա մեծապես կօժանդակի հունարենին: Նա վստահ էր, որ «վիճելիք և հակառակելի» շատ հատվածներ պարզապես կանհետանան, եթե «հայերենին դիմացը դրվին»: Այս կարծիքն ամրապնդվում է նաև Մորանի կազմած բնագրում, որտեղ Ֆրեդերիկ Մատթէի հրատարակության մեջ առկա բազմաթիվ բնագրային բառեր հայտնվում են տարընթերցվածների մեջ՝ իրենց տեղը զիջելով հայերենով հաստատվող տարբերակներին:

⁵ Հ. Աթենաս Տիրոյեան, «Նեմեսիոս եւ նորա Յաղագս բնութեան մարդոյ գրոց հայկական հին թարգմանութիւնն. Ձեկուցումն», Բազմավէպ, հ. ԽԵ., Վենետիկ, 1887, էջ 318-319: Նույն տեղում, «Նեմեսիոսի՝ փիլիսոփայի Եմեսուցոյ Յաղագս բնութեան մարդոյ», էջ 320-329 (գլ. Ա): Հաջորդ գլուխները (մինչև ժԱ.)՝ Բազմավէպ, հ. ԽԶ., Վենետիկ, 1888, էջ 31-50 (գլ. Բ), էջ 118—124 (գլ. Գ, Դ), էջ 217-224 (գլ. Ե.), էջ 313- 323 (գլ. Զ, Է, Ը, Թ, Ճ, ԺԱ):

Չնայած դրան, Մորանին հավաստում է, որ Վենետիկի հրատարակութայան մեջ ձեռագրերից ընտրված ընթերցումները միշտ չէ, որ լավագույնն են, հետևաբար հունարեն սկզբնագիրը պետք է անպայման հաշվի առնվի՝ հայերեն թարգմանության քննական բնագիր պատրաստելիս (Nem 1987, p. XI):

Հայագետները՝ Նեմեսիոսի երկի հայերեն թարգմանության մասին

Հայերեն թարգմանության վերաբերյալ բանասերների գնահատականները տարբեր են: Օրինակ, Հ. Արսէն Սուքրին կարծում է, որ «թարգմանը շատ հաւատարիմ չէ իւր բնագրին» և շատ տեղերում, ուր ցանկալի էր, որ հայերեն բառով «լոյս մը տար մեզի՝ հօն լռութեամբ կանցնի» (Սուքրի 1880, էջ 339): Հ. Տաշյանն՝ իր վերը նշված հոդվածում նույնպես քննադատության է ենթարկում երկում գործածված հայերեն բառակազմը՝ ասելով, որ «լեզուի կողմանէ խէղճ» թարգմանությունն է, և որ հայերենը կարծես «ձուլուած» է հունարենի համեմատ՝ ասես հայ բառերով հունարեն խոսելով, որ «ուսումնական բառեր ու ասութիւններ կամ դուրս թողնուած են, կամ յունարէնը պարզապէս օրինակուած, եւ կամ անհետեւութեամբ նմանցուցած յունարէնին» (ՀՅՏ 1892, էջ 69): Մյուս կողմից՝ հեղինակը քննադատում է որոշ կենդանիների, բույսերի կամ հիվանդութիւնների հայերեն համարժեքն ունեցող անվանումների փոխարեն դրանց հունարեն եզրերի կիրառումը: Նա նաև անընդունելի է համարում այն, որ հունարեն որևէ բառ թարգմանիչն ամենուր փոխարինում է հայերեն նույն բառով չկարևորելով, որ հունարեն բառը կարող է ունենալ զանազան իմաստներ, և տարբեր տեղերում ի հայտ բերել այդ իմաստներից որևէ մեկը: Այս ամենը «կը ցուցընէ գրոցս նիւթական ստրկութիւնը լեզուի», – եզրակացնում է Հ. Տաշյանը:

Ընդհանրապես, հունաբան դպրոցի ուսումնասիրությամբ զբաղվող բանասերները շեշտել են թարգմանությունների չափազանց բառացիությունը, որը հաճախ արդյունք են համարել այդ դպրոցի ներկայացուցիչների հունամոլության: Սակայն «գասական թարգմանությունների հիմնական նպատակը եկեղեցու կարիքների բավարարումն էր, և Աստվածաշնչից բացի, դրանք ընդգրկում էին ծիսական, մեկնողական, կրոնական

երկեր, իսկ հունաբան դպրոցի գործունեությունն ուղղված էր աստվածաբանական ու փիլիսոփայական գործերի թարգմանությունը» (Գ. Մուրադյան 2010, էջ 23), հետևաբար՝ բառացի կամ այսպես կոչված՝ նյութական թարգմանությունն անհրաժեշտ էր գիտափիլիսոփայական և դավանաբանական կարևոր երկերի իմաստը ճշգրիտ փոխանցելու համար: Այսպիսով, բնագրի նյութական թարգմանությունը ստանում էր գիտական նշանակություն՝ պահպանելով բնագրի լեզվական բոլոր դժվարությունները և հնարավորություն տալով ըստ կարելիության հասկանալի դարձնել բնագրի վիճելի հատվածի բոլոր կողմերը (տե՛ս Ա. Մուրադյան 1971, էջ 48): «Այդ բնույթի կարևոր աշխատությունները հաճախ բառ առ բառ քննության էին ենթարկվում նաև այն պատճառով, որ կամ որպես դասագիրք էին ծառայում կամ մեծ ժողովրդականություն էին վայելում, և նրանց մասին գրվում էին բազմաթիվ մեկնություններ, որոնք բնագրի հետ նույնպես թարգմանվում էին հայերեն: Այսպիսով, մեկնելի բնագրի յուրաքանչյուր մանրամասնության նյութական թարգմանությունը ոչ միայն անհրաժեշտություն էր նկատվում, այլ և գիտական նշանակություն էր ստանում» (նույն տեղում, էջ 56):

Բովանդակային առումով նույնպես երկն ուսումնասիրել են գիտություն պատմությունամբ զբաղվող մի շարք հայ նշանավոր գիտնականներ: Օրինակ, ակադեմիկոս Լևոն Հովհաննիսյանը (1885-1970 թթ.) խիստ կարևորել է Նեմեսիոսի դերը հայ բժշկագիտության զարգացման գործում՝ փաստարկելով դա նրանով, որ այդ ժամանակաշրջանում քիչ էին նման բովանդակությամբ գրքերը, որոնք վերաբերում էին տեսական բժշկությունը, մարդու կազմախոսությունն ու բնախոսությունը (Օганесян 1946, сс. 150-164, 250-252): Նա բավական հանգամանորեն ներկայացնում է «Յաղագս բնութեան մարդոյ» երկում նկարագրված օրգան-համակարգերը՝ Նեմեսիոսին անվանելով «բժիշկ փիլիսոփա», թեպետ նրա բժշկական գործունեության մասին գրականության մեջ տվյալներ չեն պահպանվել: Լ. Հովհաննիսյանն անդրադարձել է նաև երկի՝ Մատենադարանում պահպանված բազմաթիվ լուծմունքներին և մեկնություններին՝ վերագրելով դրանք Գևորգ Սկևռացուն:

Ավետիք Տեր-Պողոսյանը (1880-1954) կարծում է, որ Նեմեսիոսի և Նյուսացու երկերի հայերեն թարգմանությամբ հայ ընթերցողն առաջին անգամ գործ է ունենում «իսկական բիոլոգիական գրվածքների» հետ՝

իբրև «Հայ բիոլոգիական մտքի իսկական ներկայացուցիչ» նշելով Ստեփանոս Սյունեցուն, «Հատկապես իր կատարած ու մեր երկրի գիտություն համար խիստ մեծ նշանակություն ունեցած թարգմանություններով» (Տեր-Պողոսյան 1960, էջ 174-175): Համառոտակի ներկայացնելով «Յաղագս բնութեան մարդոյ» երկն իբրև բնախոսական, կազմախոսական և հոգեբանական նշանակալի աշխատանք, նա կանգ է առնում հատկապես բույսերի և կենդանիների մասին երկում տեղ գտած բավականաչափ ցրիվ տեղեկությունների վրա: «Մ՛վ կարող է չհամաձայնել, որ ամբողջ շարադարանքի մեջ աստիճանավորություն, էվյուցիա չէ պատկերված, մարդն էլ բարձրագույն կենդանի չի նկատվել և այն էլ մի հոգևորականի, մի բարձրաստիճան եկեղեցականի կողմից, իսկ այդ պատկերացումը մեզ ետ՝ մինչև Արիստոտել է հասցնում» (նույն տեղում, էջ 186):

Նեմեսիոսի ու Գրիգոր Նյուսացու գիտական հետաքրքրությունների մերձություն և դրանց ընդհանուր գալենյան լուծումների համեմատությունն է տալիս Ստեյլա Վարդանյանը: «Այս երկու գրեթե նույն միջավայրում և ժամանակաշրջանում ստեղծված երկվորյակ գործերի հոգեհարազատությունը պարզ երևում է լյարդի, սրտի և ուղեղի բնախոսությունը նվիրված գլուխներում: Անշուշտ, նրանց հիմքում ընկած է եղել Գալենի ֆիզիոլոգիական ուսմունքը» (Նյուսացի, կազմ, 2008, էջ 19): Ըստ նրա՝ դա խոսում է այս երկու հեղինակների կապազովկյան դպրոցին պատկանելու մասին (Վարդանյան 2008, էջ 5-17):

Երկի կառուցվածքը

«Յաղագս բնութեան մարդոյ» երկը հայերեն գրչագրերում ներկայացված է 42 գլուխներով⁶: Այն յուրօրինակ դասագիրք է, որտեղ ի տարբերություն Գրիգոր Նյուսացու «Կազմութեան»՝ մեկտեղված և համակարգված են տարբեր փիլիսոփաների կարծիքներ, որոնց հեղինակները սովորաբար հանվան է հիշատակված են:

«Նեմեսիոսն իրեն պետք եղած տեղեկությունն ընտրում է զգուշ և մանրակրկիտ՝ Պլատոնից, Արիստոտելից, Էպիկուրոսից, ստոիկյաններից, նորպլատոնականներից, Հիպոկրատեսից, Գալենոսից: Նա ջանում է մո-

⁶ Հոնարենում գլուխների քանակը 44 է:

տեցնել և ներդաշնակության բերել այս երկու ուղղությունները՝ քրիստոնեականն ու հեթանոսականը, այն արդարացի համոզմունքով, որ բնական ճշմարտությունը և գերբնական ճշմարտությունը միմյանց չեն կարող հակասել, որ ճշմարտությունը է՛ և կարող է լինել միայն մեկը, և որ գերբնական ճշմարտությունը պետք է ծառայի իբրև ուղեցույց բնական ճանաչողության գործում» (Владимирский 1912, с. 12): Սակայն ակնհայտ է նաև, որ Նեմեսիոսի համար Աստվածաշունչն է ամենամեծ հեղինակությունը:

Մարդը՝ փոքր աշխարհ

Նեմեսիոսի տիեզերագիտության հիմնական գաղափարը բնութեան խիստ նպատակային կարգուկանոնն է՝ արտահայտված բնական և օրգանական որոշակի փուլերով, որոնց հանգուցայուծումը մարդն է (Немесий 2011, с. 5-6): Համաձայն որոշակի և խիստ օրինաչափությունների, հստակ և տրամաբանական աստիճանականությամբ, առանց կտրուկ ցատկերի, սկսելով անձև նյութից՝ արարչությունն աննկատելիորեն բարձրանում է տեսակագործման բոլոր աստիճաններով, մինչև առավել կատարյալ էակներ. մշտապես ստեղծում և ոչնչացում, անփոփոխ պահպանվող իրերի դրություն, հավերժ նույնակերպ աստղերի ընթացք, տարեկան պտույտ, տարվա եղանակների պարբերականություն, ցերեկվա և գիշերվա ճիշտ հերթագայում, դրանց միանման համաչափ երկարում և կարճացում տարվա ընթացքում և այլն: Գործող օրենքներն ու դրանց հիմքում դրված չափակցությունները երբեք չեն փոխվում: Համապարփակ միեղենի մեջ յուրաքանչյուր առանձին մաս օգուտ է բերում ամբողջին և սերտ կապի մեջ է նրա հետ: Մի խոսքով՝ ողջ արարչագործությունն այնքան «բարևոք» է կազմված, որ սրանից լավ չէր էլ կարող լինել: Այն կարիք չունի ոչ մի հավելումի, և նրանում չկա ոչ մի թերություն:

Սակայն ո՛չ տիեզերքն առանց մարդու, ո՛չ էլ մարդն առանց տիեզերքի չեն կարող ամբողջական լինել: Ավարտուն ձև նրանք ստանում են միայն այն ժամանակ, երբ տիեզերքը մեկնաբանվում է մարդկային կյանքը բացատրելու նպատակով, իսկ մարդկային կյանքը պարզաբանվում է տիեզերական զարգացման արդյունքում:

Մարդու և աշխարհի ազգակցությունը, նրանց փոխալայմանավորվածությունը, միմյանց մեջ ներթափանցելիությունն ու նրանց էական շաղկապվածությունը միշտ եղել է բոլոր ժամանակների փիլիսոփաների ուշադրության կենտրոնում: Տիրապետող կարծիքը մոտավորապես այսպիսին է՝ կյանքի յուրաքանչյուր ոլորտ իր սահմաններում կրկնում է Լինելության համընդհանուր օրենքները: Մարդը նույնպես կազմվում է այդ նույն սկզբունքով: Սակայն գտնվելով հոգևորի և մարմնականի, մտքի և նյութի միջև, նա մի տեսակ կապող օղակ է դառնում երևութականի և աներևույթի, զգալիի և իմանալիի միջև: Նա Լինելության բոլոր շերտերի միասնությունն է՝ համընդհանուր մի խողովակ կամ ցողուն, որ թափանցում է Համայնով մեկ, գոյում է նրա բոլոր չորս տարրերում և ինքն էլ բնակեցված է այդ տարրերով: Նա արտահայտում է դրանք, և այդ պատճառով էլ հանդիսանում է աշխարհակառույցի ամբողջական և բացարձակ արտահայտությունը՝ նրա բոլոր ձևերում և կերպերում: Մարդն արարչագործության պսակն է և երկու բնությունները կապող օղակ՝ հոգևոր, իմացական, վերգալական և երևութական, նյութական, զգայական, հետևաբար նա ունի ընդհանրություններ՝ ինչպես անշունչ գոյի, բույսերի և անբանական կենդանիների հետ, այնպես էլ՝ «երկնային բանականների»: Անօրգանական բնությանը նա նման է մարմնով և այն ձևավորող չորս տարրերով, բույսերին՝ բացի վերը նշածից, նաև վերարտադրողական և սննդային զորությունը, կենդանիներին՝ և՛ վերը նշած հատկանիշներով, և՛ կամային, ազատ շարժողականությամբ, մղումներով, զգայական և շնչական ունակությամբ, բարձրագույն, անմարմին և իմացական էակներին (հրեշտակներին)՝ մտածելով, քննարկելով, ձգտելով դեպի առաքինություն՝ գագաթը բոլոր արժանիքների (1. [4]):

Սակայն մարդը նաև փոքր աշխարհ է՝ μικρός κόσμος (եզրն առաջին անգամ ներմուծել է Դեմոկրիտոսը), որն իր մեջ ամփոփում է տիեզերքի ողջ իմաստային կառուցվածքը՝ պակաս կատարելությամբ կրկնելով այն: Կիրառելի է նաև հակառակ համեմատությունը՝ երբ բնությունը ներկայացվում է իբրև մեծ մարդ (μακρός άνθρωπος), որն իր տարածականորեն բացահայտված մասերում ու երևույթներում կրկնում է մարդուն բնորոշ գծերը: Անվանումը ենթադրում է ոչ միայն չափը, այլև Լինելության աստիճանականությունը: Մարդն աշխարհի հանրագումարն է, նրա համառոտագրությունը, ինչպես որ աշխարհը մարդու բացահայտումն է, նրա տա-

րածական պատկերը: Փիլիսոփայական այս վաղեմի բնորոշումը քրիստոնեությունից մեջ նոր բովանդակություն է ստանում մարդուն դիտարկելով Աստծո և աշխարհի հատման կետ: Նա Փոքր Աշխարհ է՝ ոչ միայն տիեզերքի բոլոր կառուցվածքային տարրերն իր մեջ ներամփոփելու, կրելու, այլ նաև իր ներսում առկա Լինելության երկու կողմերի՝ հոգևորի և նյութականի ներդաշնակության պատճառով: Անտիկ մարդաբանությունը միավորելով աստվածաշնչյան տիեզերագիտության հետ, Նեմեսիոսը կատարում է կարևոր ճշգրտում այն մասին, որ մարդը միայն իր բնությունը է աշխարհի պատկերը, սակայն ստեղծված է Աստծո պատկերով և նմանությունը, իսկ աշխարհը, նրա պատկերացմամբ, ոչ թե տարբեր տարրերի և դրանք միմյանց փոխարկող երևույթների պարզ հանրագումար է, այլ մեկ օրգանական ամբողջություն՝ բաղադրիչ մասերի սերտ փոխկապակցվածությունը: Մարդը համարվում է արարչագործության պսակ, և հետևաբար, բոլոր արարածները ստեղծված են մարդու համար և ծառայում են նրան: Նա Համայնի արքան է և տիրակալը (1. [16]), այդ պատճառով էլ Մովսեսը՝ «գեղեցիկ» կերպով նկարագրելով արարչագործությունը, ասում է, որ մարդը հետո եղավ, ոչ միայն այն պատճառով, որ հարկ էր նախապատրաստել ամեն անհրաժեշտ բան, հետո միայն դրանց գործածողին ի հայտ բերել, այլ «զի իմացականին եղելոյ էութեան եւ դարձեալ երեւելոյս պարտ էր լինել ումեք շողկապ երկաքանչիւրիցն, զի մի իցէ ամենայն եւ կրակից ինքեան, եւ մի՛ աւտար ինքն ինքեան: Արդ եղեւ, որ շողկապէն զերկաքանչիւր բնութիւնս՝ կենդանի մարդն եւ զորս իմաստութեանն արարչագործին համառաւտաբար ասել այսպիսիս» (1. [6]):

Սակայն մարդը միջաստիճան է նաև մահկանացու և անմահ բնությունների միջև, ըստ ասվածի, թե՛ «Որպէս հողեղեն՝ ինչպէս հողեղենները, և որպէս երկնային՝ ինչպէս երկնայինները»: Այս մասին Նեմեսիոսը, երևում է, բավական հեղինակավոր է համարում եբրայացի փիլիսոփաների կարծիքը, որոնք «զմարդն իսկզբանէ խոստովանին ոչ մահկանացու և ոչ անմահ լինել, այլ ի միջաստիճանս երկաքանչիւր բնութեանցն» (1. [8]): Ավելին, մարդը մահկանացու ստեղծվեց՝ հնարավորություն ունենալով «յառաջադիմութեանէ կատարեալ անմահ լինել, այսինքն զաւրութեամբ անմահ լինել» (1[9]): Բայց քանի որ նրան օգտակար չէր նախքան իր կատարումը ճանաչել սեփական բնությունը, նրան արգելվեց ճաշակել գիտության ծառից: «Քանզի էին իսկ, յաւէտ՝ զի են տակաւին և այժմ, զաւ-

րուծիւնք ի տունկս մեծամեծք, իսկ յայնժամ իսկզբանն աշխարհագործութեանն՝ ծայրագոյն գոլով, հզաւրագոյն ունեին ներգործութիւն: Էր ուրեմն ճաշակումն իրիք պտղոյ՝ ծանուցումն առնել կերողին բնութեան» (1. [9]): Թե ինչու Աստված մարդու համար օգտակար չէր համարում նախքան կատարումը ծանուցվել սեփական բնութեան մասին, ունի իր պարզ բացատրութիւնը: Նա անհանգստանում էր, որ դեռևս անկատար մարդն՝ իմանալով, թե որքան մարմնական պիտույքների կարիք ունի ինքը, կսկսի հոգ տանել դրանց մասին՝ «թողեալ զհոգւոյն խնամակալութիւնն» (1. [9]):

Այս հատվածն ուշագրավ է նաև զարմանալի «զաւրութիւններ» պարունակող «մեծամեծ տունկերի» նկարագրութեամբ: Տունկն իբրև առանձնահատուկ գոյ ներկայացնում է Պլատոնը: Աստվածները «սերեցին մարդկայինին ազգակից բնութիւն, որն ուներ ուրիշ տեսակներ ու զգայութիւններ և այդ պատճառով պատկանում էր բոլորովին այլ կենդանի էակների» (Plato Tim. 77a): «Նրա (տունկի) ողջ կյանքը կրավորական է, շարժվում է միայն ինքն իր մեջ և իր հարաբերութեամբ և անհաղորդ է արտաքին շարժմանը՝ օգտվելով միայն սեփական շարժումից, այնպես որ չի տեսնում ինքն իրեն բնութիւնը և չգիտի իր ծագումը... Բոլոր այս սեռերը աճեցրել են հզորները մեզ՝ տկարներին համար որպես սնունդ և մեր մարմնում, ինչպես այգիներում, բացել են ջրանցքներ, որպեսզի այն ոռոգվի հոսող ջրով» (նույն տեղում, 77c, d): «Սահմանք փիլիսոփայականք» կոչվող բնագրում այլ սահմանումների շարքում տրվում է նաև տունկի սահմանումը. «Տունկ է՝ կենդանի երկնաին, կամ էութիւն շնչաւոր անզգա (ոչ զգայական), կամ որո շունչ միաւորեալ ընդ երկրի»⁷:

Մարդու և ծառի համեմատութիւնն ունի նաև խորհրդանշական բնույթ, որն օգնում է հասկանալ մարդու ներքին բնութեան գաղտնիքները: Նմանատիպ գուգահեռներ հանդիպում են նաև ժամանակակից հոգեբանութեան մեջ: Այսպես, օրինակ Կ. Յունգը հաճախ է մարդու ներքին

⁷ ՄՄ 5443. «Սահմանք փիլիսոփայականք», էջ 35, նաև «Սահման իմաստասիրական իբր հարցմամբ», Մատենագիրք հայոց, Ի հատոր, ԺԲ դար, Երևան, 2014, Յաւելուած՝ Դաւիթ Անյաղթին վերագրուած և նրա անուանն առնչուող գրուածքներ, էջ 781:

էությունը դիտարկում որպես ծառ⁸, իսկ մարդուն՝ փոքր աշխարհ: «Մեր հոգեկան կառույցը կրկնում է համայնի կառուցվածքը: Եվ այն ամենը, որ կատարվում է տիեզերքում, կրկնում է ինքն իրեն մարդկային հոգու անսահման փոքր և եզակի տարածություն մեջ» (ԻՕՈՀ 1998, շ. 407): Հենց այս տրամաբանություններն էլ Նեմեսիոսը գրում է. «Արդ տեսանելով գնոյն բնութիւն՝ թէ որքան բարետոհմութեան հաղորդեալք, եւ զի տունկ եմք երկնային, մի՛ ամաւթ արասցուք զբնութիւնս, եւ մի՛ այսքան պարզեաց երեւեսցուք անարժանք, եւ մի յայսքան իշխանութենէ եւ ի փառաց եւ երանութենէ զրկեսցուք զմեզ, ընդ փոքր ժամանակի և դոյզն հեշտութեան՝ փոխանակելով զամենայն յաւիտենից վայելումն» (1. [20]):

Ավելի ուշ Արևմտյան փիլիսոփայության մեջ մարդու փոքր աշխարհի մասին պատկերացումները ստացան ինչպես իրապաշտական, այնպես էլ խորհրդապաշտական իմաստ: Համեմատականներ էին անցկացվում մարդու օրգանների և տիեզերքի մասերի ու երևույթների միջև: Այս միտումն առկա է նաև հայ մատենագրության մեջ: Ամբողջ տիեզերքը և բոլոր մարմինները կառուցող չորս տարրերին համապատասխան մարդն ունի չորս կարևորագույն օրգան. «Ասէ իմաստունն Գալիանոս՝ թէ Դ. մեծ անդամ կայ ի մարմին մարդոյն, որ են այսոքիկ. առաջին՝ ըղեղն, երկրորդ՝ սիրտն, երրորդ՝ լերդն, չորրորդ՝ ձուքն»⁹: Մարդու մարմնում առանձնացվող այս չորսը՝ գլխուղեղը, սիրտը, լյարդը և ամորձիները (կամ ձվարանները), «մարդ-արարածի» չորս հիմնական սկզբունքների կրողներն են:

⁸ Արմատները համապատասխանեցնում է մեր անգիտակցական ոլորտին, որը մեր ելակետային մասն է և պահպանում է մեր անցյալն ու այն ամենը, ինչ դուրս է մնացել մեր հիշողության դաշտից: Ունակություններն ու վիճակները, որոնք հեշտություններ կարող են տեղափոխվել մեր գիտակցության դաշտ, ըստ Յունգի՝ պատկանում են միջին անգիտակցական ոլորտին և համապատասխանում են ծառաբնին: Մեր չօգտագործված հնարավորությունները, ստեղծագործական իրացման տարբեր ձևերը ամփոփված են գերգիտակցականի մեջ, ամենավերևում՝ գագաթում: Մեր գիտակից Եսը կամ էգոն ընկալում է բոլոր նշված մակարդակները և գտնվում է կենտրոնում: Գոյություն ունի նաև «կոլեկտիվ անգիտակցական» հասկացությունը, որի վրա թեպետ խարսխված է անհատական հոգեբանությունը, սակայն միևնույն ժամանակ այն ընդհանուր է ամենքի համար՝ իրենով մի տեսակ միավորելով և շաղկապելով բոլոր մարդկանց: Այն համեմատվում է Համաշխարհային Մառի ճյուղերի հետ՝ այն համապարփակ օրենքների, որոնցով առաջնորդվելով մենք ապրում ենք (տե՛ս ԻՕՈՀ 2001, շ. 46, 95):

⁹ ՄՄ 464, թ. 68ա. «Վասն մարդոյն կազմութեան (ի չորից գոյացեալ ասի մարդն)», (այսուհետ՝ միայն էջահամարը տեքստում):

Ուղեղը կրում է անմահ միտքը, սիրտը՝ հոգին, լյարդը՝ ցանկությունների և ֆիզիկական զգացողությունների օրգանն է, իսկ սեռական օրգանները («ձուք») ապահովում են մարդու ֆիզիկական լինելությունը (նույն տեղում, թ. 57բ): Յոթ հիմնական մոլորակների համապատասխանությունը մարդն ունի յոթ կենսական օրգաններ. «Ըղեղն, սիրտն, լերդն, թոքն, երիկամունքն, լեղին, փայծաղն. եթէ մէկն ի դոցանէ որ պակասի, անճարակ մարդն մեռանի: Ըղեղ՝ հով և գէջ, սիրտ՝ տաք և չոր, լերդն՝ տաք և գէջ, թոք՝ հով և գէջ, երիկամ՝ տաք և գէջ, լեղի՝ տաք և չոր, փայծաղ՝ հով և չոր: Եթէ այս յօթը հաւասար կենան իրերաց և անյաւելու աստուած, նա հանապազ մարդն առողջ լինի» (նույն տեղում, թ. 70բ): Տարվա տասներկու ամիսների և տասներկու կենդանակերպերի համեմատությունը մարդն ունի մարմնի հիմնական գործառույթներն իրականացնող տասներկու գլխավոր օրգաններ. «Տարին ունի ԺԲ. (12) ամիս և երկինքն ունի ԺԲ. կենդանակերպ, և մարդն ունի ԺԲ. անդամք գլխաւորք» (նույն տեղում, թ. 80բ): «Կենդանակերպք են թուով ԺԲ., նախ՝ վասն զի ԺԲ. մասն է բաժանեալ աշխարհս, պարտ էր ԺԲ. լինել կենդանակերպիցն, զի յերաքանչիւր կենդանակերպ միոյ մասին աշխարհի տանուտէր և իշխան լիցի, զի մարդս փոքր աշխարհ է և ԺԲ. անդամօք ունի զկատարելութիւն գոյութեան իւրոյ, այսպէս և արարածքս, որ մեծ աշխարհ է, ԺԲ. կենդանակերպիւ ունի զկատարելութիւն իւր ըստ նմանութեան մասին անդամոց մարդոյն: Ըստ այնմ խոյն՝ պարսիկք, որ է գլուխն, ցուլն՝ բաբելացիք, որ է պարանոցն, եկաւորն՝ գամիրք, որ է ուսքն, խեցգետինն՝ հայք, որ է լանջքն, առիւծն՝ ասիացիք, որ է աջ ձեռքն, կոյսն՝ էլլադացիք, որ է ձախ ձեռքն, կշիռն՝ կիլիկացիք, որ է կուշտն և կուռն, Կարիճն՝ կրետացիք, որ է փորն, աղեղնաւորն՝ իտալացիք, որ է երանքն, այծեղջիւրն՝ ասորեցիք, որ են բարձքն, ջրհոսն՝ եգիպտացիք, որ է սրունքն, ձուկն՝ հնդիկք, որ է թաթ ոտիցն» (նույն տեղում, թ. 121ա)¹⁰:

¹⁰ Այսպիսի համեմատականները հաճախ են հանդիպում միջնադարյան տոմարագիտական աշխատություններում: Օր. Տե՛ս «Պատճէն Տումարի» (է.-ժ.Ն. դ.դ.), քննութիւն եւ բնագրեր, աշխ. Ջ. Էյնաթեանի, խմբ. Գ. Տէր-Վարդանեան, Երևան, 2002, էջ 145: Ջ. Էյնաթյան, Տիեզերագիտության և տոմարի մեկնություններ (է.-ժ.Ն. դ.դ.), ուսումն. և բնագրեր, Երևան, 2015, էջ 111: Pseudo-Zeno, Anonymous philosophical treatise by M. E. Stone and M. E. Shirinian, Brill, Leiden . Boston . Köln, 2000, p. 57:

Երևութական բնության և մարդու միջև զուգահեռներ անցկացվում են միջնադարյան Հայաստանի գրեթե բոլոր տոմարագիտական երկերում (տե՛ս Էյնաթյան 2015): «Երկինքն ունի ՅԿ. (360) աստիճան, և մարդն ունի ՅԿ. երակ: Տարին ունի ՅԿԵ. (365) օր, իսկ մարդն ունի ՅԿ. զօդուած և Ե. զգայարանք: Երկիր ունի բոյսք և տունկք և քարինս, և մարդն ունի զմազն, իբրև զխոտ, և զոսկերս, որպէս զքարինս, և զըղնգունս, որպէս զփայտ ծառոց» (ՄՄ 464, թ. 80բ): Հակոբ Ղրիմեցին գրում է. «Ճառելի է յաղագս ԺԲ. թուով բացակատարիլ սոցա. նախ ըստ գոյաւորութեան մարդոյն, զի մարդ յԺԲ. (12) անդամոց կազմեցավ եւ ԺԲ. զգայութեամբ զարդարեցաւ, նոյնպէս եւ երկինք ԺԲ. կենդանակերպօք սահմանեցաւ եւ զարդարեցաւ... Ըստ բաժանման երկրի, որ յԺԲ. մասն բաժանեցաւ ըստ անդամոց մարդկան» (Ղրիմեցի 1987, էջ 392), «...զի և մարդս փոքր աշխարհ է և ԺԲ. անդամօք է բաղկացեալ, նոյնպէս եւ տարի մեծ աշխարհիս ԺԲ. ամսօք է բոլորեալ» (նույն տեղում, էջ 168)¹¹:

Ավելի ուշ գիտության տարբեր ուղղությունների զարգացման հետ մեկտեղ, մարդ-միեղեն երևույթը սկսեց ուսումնասիրվել իր առանձին մասերի մեջ: Ֆիզիկական մարմնի վիճակն արտացոլող ցուցանիշներով առաջնորդվողները դիտարկում էին միայն մարդու արտաքին շերտը, որն էլ ընդունվում էր որպես օրգանիզմի վիճակը բնութագրող չափիչ համակարգ: Մեկ ուրիշ մոտեցմամբ այդ բնութագրերին հակադրվում էր հոգին: Այս երկու բևեռային հայեցակարգերը արտացոլում էին կենդանի համակարգերի բնութագրերի ուսումնասիրման երկու ուղղություն՝ մեխանիցիզմ և վիտալիզմ: Մեխանիցիզմը, որի հիմնադիրը համարվում է Ռենե Դեկարտը, օրգանիզմը ներկայացնում էր որպես աշխատող մեխանիզմ սիրտն իբրև պոմպ, թոքերն իբրև փուքս, երիկամները՝ զտիչ (տե՛ս Декарт 1989, с. 423): Եվ այս բոլորից առանձին գոյող հոգին: Այս կերպ մարդը մեկուսացվում էր իր նյութական մարմնի սահմաններում, որն այլևս հոգու միջամտության կարիքը չունեւ: Իսկ վիտալիզմն առաջ էր քաշում այն թեզը, որ կենդանի բնությունն ընդհանրապես չի կարող բացատրվել ֆիզիկա-քիմիական գործոններով:

¹¹ Նմանատիպ կարծիք է հայտնում նաև Անանիա Շիրակացին, տե՛ս Անանիա Շիրակացի, Տիեզերագիտութիւն և տոմար, աշխ. Ա. Աբրահամյանի, Երևան, 1940, էջ 93:

Սակայն, անշուշտ, գոյություն ունի **Ես** հասկացությունը որպես կենտրոնական կետ այս երկու բեռնային շերտերի միջև: Դա մարդու դրսևորումն է իբրև սահման արտաքին՝ առարկայական, և ներքին՝ անձնական աշխարհների միջև: Հոգեբանների կարծիքով՝ մեր գիտակցությունն առավելապես գտնվում է այս ոլորտում, որտեղ իրականացվում է երկու աշխարհների փոխարտացոլումը: Ինչ-որ մակարդակի վրա՝ այդ սահմանից վերև և ներքև, կայանում է համամարդկային միասնությունը՝ արքետիպային¹² կառուցվածքների միջոցով: Մրա հետ կապված, մարդիկ մի տեսակ սահմանային համակարգեր են՝ միջնորդներ արտաքին և ներքին աշխարհների միջև (նյութական և հոգևոր): Այս մտայնությունը, ներքին աշխարհը և՛ լինելով անհատական և մասնավոր, իր ինչ-որ մի շերտում համամարդկային է և նման արտաքին աշխարհին, և իր զարգացման որոշակի մակարդակի վրա այդ շերտը միջաշխարհային սահմանը դարձնում է թափանցելի, որի շնորհիվ հնարավոր է հասնել այդ երկու աշխարհների սկզբունքային միասնության: Այսինքն, մարդը դառնում է փոխադրեցություն կետ, որի շնորհիվ բնությունը շփվում է ինքն իր հետ (տե՛ս ԽՈՒՀ 2001, շ. 95):

Ինչպես տեսնում ենք, դարերի ընթացքում մոտեցումները շատ չեն փոխվել:

Ի վերջո, մարդու գիտակցությունը, որ ճանապարհով էլ այն ընթանա, հանգում է այն կարծիքին, որ մարդը տիեզերական է իր բնույթով: Մարդն իբրև փակ անհատ-էակ չէր կարող ունենալ տիեզերքի ճանաչման ուղիներ: Նա, ով փիլիսոփայորեն հայտնում է աշխարհը և իր առաջ դրան համարժեք խնդիրներ է դնում, չի կարող լինել պարզապես այդ աշխարհի իրերից որևէ մեկը: Նա ինքը պետք է աշխարհ լինի, ամբողջական մի տիեզերք: Շրջակա աշխարհը «մարդկային մտքի դռներով»՝ նրա զգայարաններով ու զգացողություններով, մուտք է գործում մարդու մեջ, առնմանվում է նրան, նրանով ճանաչվում և իմանալի է դառնում, ներըմբռնվում միայն այն պատճառով, որ մարդու մեջ առկա է տիեզերքի ամբողջ կազմը, նրա բոլոր ուժերն ու որակները: Մարդը իմացականորեն թափանցում է

¹² «Արքետիպ» բնորոշումն առաջին անգամ ներմուծել է Կ. Յունգը 1919թ: Դա այն կառույցն է, որի մեջ սեղմ ձևով ամփոփված է հասարակական կենսափորձը:

տիեզերքի իմաստի մեջ: Սակայն տիեզերքը ևս թափանցում է մարդու մեջ՝ ենթարկվելով նրա ստեղծագործական ներգործությանը: Մարդն ապրեցնում և ոգեղենացնում է բնությունն՝ իր ազատությունը, բայց կարող է նաև մեռցնել, բռնադատել նրան՝ իր իսկ ստրկությունը և անկամար նյութական անհրաժեշտության հորձանուտ: Մարդու կենտրոնական դիրքն աշխարհում, ըստ Նեմեսիոսի, բնորոշվում է նրանով, որ Աստված ի դեմս մարդու, արարեց մի հենման կետ, Համայնի վերափոխման, վերակերտման մի ակունք, որտեղ միավորեց մարմնական և հոգևոր աշխարհները՝ մարմնականին հնարավորություն տալով վերառաքվել դեպի հոգևորը, եթե հակվի առաքինությունն ու հոգևոր արժեքներին՝ ժառանգելով Աստվածայինն ու մարդու համար նախատեսված երանելի կյանքը, իսկ հոգևորին՝ իր էջքով, մարդեղացմամբ, ավելացնել իր հոգևոր ունակություններն ու առաջադիմել:

Եվ այս ամբողջի միջով կարմիր թելի նման անցնող միտքը հետևյալն է. եթե նույնիսկ անօրգանական, անշունչ բնության մեջ ամենուր թագավորում է համաչափությունն ու ներդաշնակությունը, միեղենությունն ու նպատակայնությունը, իբրև բնական հետևանք աշխարհաստեղծ բանական Պատճառի, ապա ի՞նչ կարելի է ասել այս բարձրագույն, իշխանական արարածի՝ բանական, ազատ մարդու մասին, որի հոգևոր հզորությունն ու ազատությունն ըստ էության չեն խաթարում նույնիսկ բնության օրենքներն ու նախախնամությունը: Մարդու բնության մասին իր խոսքը Նեմեսիոսն ամփոփում է նրան ուղղված մի սքանչելի ներբողով՝ «Արդ ո՞վ ոք արժանաւորապէս սքանչասցի ընդ բարետոհմութիւն այս կենդանւոյս, շողկապողիս ըստ ինքեան զմահկանացուս ընդ անմահիցն, զբանականքս ընդ անբանիցն խառնողի, բերողիս յիւրում բնութեան զամենայն արարածոցս պատկեր, վասն որոյ և փոքր աշխարհ ասի... ըստ պատկերի և ըստ նմանութեան Աստուծո եղեալք, Քրիստոսի կենակից և Աստուծոյ ժառանգ, ամենայն իշխանութեանց և պետութեանց գահէրեցք նստեալք... » (1. [19]):

Մարդու սահմանումը

Սահմանելով մարդուն «կենդանի բանաւոր, մահկանացու, մտաց և մակացութեանց ընդունակ», Նեմեսիոսը հավելում է, որ նա նաև «ժողովասէր է, և քաղաքական է կենդանի եղեալ» (1. [14]): Այստեղ հայ թարգմանիչները փոխել են հեղինակի միտքը՝ բոլոր հունարեն և այլալեզու բնագրերում այս նույն ձևակերպմամբ տեղ գտած արտահայտութիւնը դարձնելով «և քաղաք է կենդանի եղեալ»: Թարգմանիչների այս մոտեցումը պատահական չէ: Երկը վերագրված էր Նյուսացուն, որը մարդ-քաղաք զուգահեռը շատ գեղեցիկ ու տպավորիչ է ներկայացնում իր «Կազմութեան» գրքում (Նիւսացի, Կազմ. 2008, էջ 82)՝ նկարագրելով զգայաւորանները որպէս մտավոր քաղաքի դռներ, որով օտարները (արտաքին առարկաները) քաղաք մտնելով, դրոշմվում են մտքի վրա՝ ուրվապատկերների, կնիքների ձևով: Ըստ կնիքադրման այս տեսութեան, մարդու անհատական տիպը (εἶδος)՝ կնիքի և նրա դրոշմի օրինակով, դրված է հոգու և մարմնի վրա այնպէս, որ մարմնի տարրերը, եթե նրանք նույնիսկ ցիրուցան լինեն, կրկին կարող են ճանաչվել՝ տվյալ հոգուն պատկանող հետքի և կնիքի համընկմամբ: Այսպիսով, հոգու անհատական դրոշմը միշտ մնում է մարմնի մասնիկների մեջ, որոնք ձևավորում են նրան, որտեղ էլ որ դրանք լինեն, ինչքան էլ որ ցրված լինեն կամ խառնված այլ նյութերի հետ: Հետևաբար, նյութը, որ մասնակից է կյանքին, ըստ որում անհատական կյանքին, մշտապէս մնում է այդ շրջապտույտի մեջ, եթե անգամ այդ կենսական գործընթացի խտութիւնը տվյալ պահին չափազանց փոքր է (տե՛ս նույն տեղում, էջ 177): Հետագայում այս մարդ-քաղաք համեմատութիւնը, երբեմն՝ մեջբերումների, երբեմն էլ՝ ինքնուրույն վերլուծութիւնների ձևով հաճախ է հանդիպում հայ մատենագիրների երկերում (տե՛ս ծնթ. 23):

Դիտարկելով մարդու երկկազմ կառուցվածքը, Նեմեսիոսն առանձին-առանձին անդրադառնում է նրա հոգու, մարմնի և դրանց միավորման քննարկմանը: Այդ գլուխները հսկայածավալ դոքսոգրաֆիկ նյութ են պարունակում: Մի շարք հատվածներ անտիկ փիլիսոփաներ Կլեանթեսի (Ք. ա. 330-230 թթ.), Նումենիոս Ապամեացու (Ք դար) գրվածքներից պահպանվել են միայն Նեմեսիոսի երկում:

Աշխարհականույց

Ըստ Նեմեսիոսի՝ Ֆիզիկական աշխարհի կառուցողական հումքը նյութն է՝ իբրև անընդհատ շարունակվող լինելություն: Այն դրսևորվում է բնության տարրերի ձևով:

«Տարրն աշխարհական», – գրում է Նեմեսիոսը, – «է՛ նուստ մասն շարախառնութեան մարմնոց» (5. [1]): Տարրերը կամ տարրը (*elementum, principium, στοιχείον*) անտիկ և միջնադարյան փիլիսոփայության մեջ կարևորագույն հասկացություններից է: Դիտարկելով տարրերն իբրև նյութական էակներ, էմպեդոկլեսը (Ք. ա. Ն. դար) կարծում էր, որ դրանք օժտված են համակրանքի կամ սիրո և հակակրանքի կամ թշնամության հատկանիշներով, քանի որ այդ երկու հակադրություններն են շարժման մեջ դնում նյութը: Ըստ հին փիլիսոփաների պատկերացումների՝ տարրերի միջև փոխհարաբերությունը ճանաչելի է, և նրանք ունակ են արտահայտել ու բացատրել երևութական աշխարհի ողջ բազմազանությունը: Անտիկ բնափիլիսոփայության մեջ առկա աշխարհականույց չորս տարրերին՝ հող, ջուր, օդ, կրակ, Արիստոտելը հավելում է նաև եթերը (այն գործում է նաև ողջ դիցաբանական գրականության մեջ): Նկարագրելով տարրերն իբրև նախնական, համասեռ և պարզ մարմիններ, որոնցից բոլոր որակությունների «ծայրերը» (սկզբնակունքները, *summae qualitates*) երևում են իրենց գորությունմբ և ներգործությունմբ (5. [1]), Նեմեսիոսն առաջ է քաշում այն կարծիքը, որ այս չորսը գոյություն են ստացել միմյանցից, և նրանցից ոչ մեկն օտար չէ մյուսին, այլ բոլորը մի տեսակ աննկատ կերպով խառնված են, և հաղորդակից են իրար, բայց նույնիսկ խառնման մեջ «քաջայայտ» է նրանց բնությունը: Տարրերից յուրաքանչյուրը բնութագրվում է երկուական փոխկապակցված «տեսակարար» որակներով, որոնք նրան որոշակիություն են հաղորդում: Հողը չոր է և սառը, ջուրը սառն է և թաց, օդը խոնավ է և տաք, կրակը տաք է և չոր:

Բայց որակություններն ինքնին չեն կարող տարրեր լինել, որովհետև անմարմին որակություններից չի կարող մարմին հաստատվել. բացի այդ մարմինները նույնպես չունենալով սկիզբնական և ներգործող որոշակի որակություն, չեն կարող լինել տարրեր, քանզի դա կհանգեցներ տարրերի անվերջանալի բազմության, և հնարավոր չէր լինի տարանջա-

տել, թե որոնք են սկզբնատարրերը: Արդ հարկ է, որ տարրերը լինեն մարմին, և պարզ մարմին՝ իրենց մեջ ունենալով որակությունների սկիզբն ըստ ներգործության (5. [1]): Այսպիսով, տարրերի ամբողջական բնորոշումն, ըստ էության, այսպիսին է. տարրը պարզ համասեռ մարմին է, որն իրականում ունի որոշակի ծայրագույն որակներ, որոնք ի գործ են փոխել առարկայի էությունը (ինքնությունը) ներսից, ինչը չի կարող անել մյուս որակներից ոչ մեկը: Օրինակ՝ ճեղքվածությունը չի կարող ընդգրկել ողջ առարկան ամբողջովին, իսկ տաքությունը կամ սառնությունը կարող են: Ըստ Նեմեսիոսի՝ տարրերն այն էություններն են, ինչից ձևավորվում և ինչի մեջ լուծվում է լինելությունը: Նրանցից երկուսը՝ կրակը և օդը, արարողական են, որոնք «տեսակագործում են նյութը», մյուս երկուսը՝ ջուրը և հողը, կրական են:

Կրակը՝ լինելով տաք և չոր, հակադրվում է ջրին, որ սառն է և թաց, իսկ հողը՝ լինելով սառը և չոր, հակադրվում է օդին, որ տաք է և խոնավ: Սակայն հակադրությունները չեն կարող համադրվել, եթե չունենան միջանկյալ կապող օղակ: Այստեղ էլ ի հայտ է գալիս համաչափության պլատոնյան թեզը (տե՛ս ծնթ. 55): Միայն թե եզրային տարրերը՝ երկիրն (հողը) ու կրակը, նույնպես ունեն ընդհանուր հատկություն՝ չորությունը: Այդ պատճառով տարրերի փոխհարաբերությունների և համադրությունների մեջ նկատվում է ոչ միայն վերելք ու վայրէջք, այլ նաև շրջանաձև շարժում, որի ժամանակ երկիրն (հողն) ու կրակը ինչ-որ ձևով հակվում են դեպի իրար՝ «ըստ մակերբութեան և մակդարձութեան», և հավում իրենց ունեցած միակ ընդհանուր որակով՝ չորությունը, հնարավորություն ստանալով նույնպես փոխարկվել մեկը՝ մյուսին: Մասնավորապես կրակը՝ կորցնելով իր ջերմությունը, դառնում է հող կամ քար: «Ամենայն շանթի՝ քարի և ծծմբով բերի ի վայր. եւ է ծծումբն որպէս զհողը չորացեալ, ոչ եւս ջերմ ըստ ներգործութեան, այլ զաւրութեամբ, իսկ չոր՝ եւ ներգործութեամբ» (5. [3]):

Այս չորսը ներքին միավորման և ներդաշնակ խառնման ճանապարհով գոյացնում են ինչ-որ այլ մարմին՝ իրենցից բոլորովին տարբեր, այնպես որ առնամանան (ասիմիլյացիա) գործընթացի ավարտից հետո անհնար է տարբերակել դրանք, ինչպես «չորեքդեղեանի» միավորման դեպքում (տե՛ս ծնթ. 88): Զևակորված այդ առաջին ատոմը վերացական բանաձևերի

Հանրագումար չէր, այլ կանոնավոր, օրինաչափորեն կառուցված տեսանելի մարմին: Որոշակի բարեչափությամբ ստեղծելով Չորսի միությունը, Աստված այդ ամբողջությանը հաղորդեց միայն շրջանաձև շարժում՝ մտքին և մտածողությանը բնորոշ: Տարրերի փոխարկումն իրար և դրանցից կազմված մարմինների, և ընդհակառակը՝ մարմինների տարալուծումը տարրերի, հրաշալի միջոց է լիակատար ոչնչացումից մշտապես խուսափելու համար, և իր ամբողջության մեջ իրենից ներկայացնում է անընդհատ տիեզերական ընթացք՝ գոյացման և քայքայման շրջապտույտի ձևով: Այսպիսով, բոլոր տարրերն անընդմեջ շարունակվում ու պահպանվում են՝ չավելանալով երբեք և չնվազելով, որի պատճառով ասվում է, որ մեկի ոչնչացումը մյուսի գոյացումն է, և հակառակը: Ըստ Նեմեսիոսի՝ լինելության ողջ ընթացքում նյութական սկզբնատարրերի քանակը, ինչպես նաև բնության մեջ գործող «գորությունների» քանակը մնում է այնպիսին, ինչպիսին սահմանվել է նրա համար ի սկզբանե՝ աշխարհի ստեղծագործ Պատճառի կողմից (նյութի և էներգիայի պահպանման օրենք): Կարևոր է նաև այն, որ բնության այս մարմնական տարրերը անձնավորված են և կապված հավերժական գաղափարի՝ համայնական, համատիեզերական Հոգու հետ, որը կցող և ամբողջություն ապահովող կապ է գաղափարների և նյութի (մարմնական աշխարհի) միջև: Այն թափանցում է ողջ տիեզերական մարմնով մեկ և աշխարհի համար ծառայում է իբրև կյանքի ու շարժման աղբյուր:

Ընդհանուր առմամբ, Նեմեսիոսը հակված է աշխարհաստեղծման աստվածաշնչյան տարբերակին: Մեջբերելով Մովսեսի խոսքը, թե սկզբում Աստված արարեց երկինքն ու երկիրը, նա հավելում է Ապոլինարիոս Լավոդիկեցու (Դ. դար) կարծիքը, որ Աստված երկինքն ու երկիրն արարեց Անդունդից իբրև նախանյութ, և թեպետ Մովսեսը չի հիշատակում անդունդն իբրև արարված, սակայն, ինչպես պնդում է Նեմեսիոսը, Հոբի գրքում ասվում է՝ «Մ՛վ արարեց Անդունդը»¹³ (5. [12], Nem 53. 13): Հետևաբար, Անդունդն անսկիզբ չէ, պարզապես արարվել է ողջ տեսանելի (երևութական) աշխարհից առաջ և նախապատրաստվել է Արարչի կողմից ամենայնի ստեղծման համար (5. [12]): Հայտնում է նաև անդունդի անունը՝ «նիւթոյն անբաւութիւն» (τῆς ὕλης ἄπειρον) (Nem 53. 17):

¹³ Հոբի գրքում այսպիսի խոսքեր չկան, տե՛ս ծնթ. 96:

Անդունդի առթիվ հետաքրքիր դիտարկում է անում Հ. Արսէն Սուքրին. «Մովսէս ըսած էր. Իսկ զբանէ արար Աստուած զերկին և զերկիր: Նոյնն խոստովանէ Նեմեսիոս: Սակայն գիտեն ամենայն հմուտ մեկնիչք Սուրբ Գրոց, որ այդ «իսկզբանէ» բառն միայն Եօթանասնից հասկըցածն էր, մինչդեռ այլք կը թարգմանէին «յանկարծ, յական թօթափել արար Աստուած զերկին և զերկիր»: Ուրիշներն ալ այդ «իսկզբանէ» բառն Անդունդք կը հասկնային, (յայսմ Նեմեսիոս Ապօղինարի կարծիքն մէջ կը բերէ). և զԱնդունդս առաջնաստեղծ նիւթ մը կը համարէին՝ ուստի զամենայն ինչ ստեղծած ըլլար Աստուած: Եթէ անդունդք, եթէ որ և իցէ տարր ալ դնենք իբր առաջին նիւթ ի գոյացութիւն աշխարհիս, սակայն միշտ ստեղծեալ ըլլալն կընդունի Նեմեսիոս» (Սուքրի 1880, էջ 334):

Չորս տարրերից կենսական չորս հեղուկների գոյացման ու նրանց կենսագործունեութեան վրա հիմնված հեղահոսութեան արտաբանութիւնը (հումորալ պատրոգիա) ընկած է ողջ անտիկ բժշկութեան, նաև հայ միջնադարյան բժշկագիտութեան հիմքում:

«Ամենայն մարմին չորից տարերցս է խառնուած, և ի սոցանէ եղև, իսկ մերձաւորապէս արիւնաւորացն կենդանեացն՝ ի չորիցն հիւթոց, յարենէ, ի մաղասոյ, ի խարտեաշ մաղձոյ և ի սևոյ, իսկ անարեանցն՝ յայլոցն հիւթոց և համեմատելոցն ի նոսա՝ փոխանակ արեանն» (4. [1]): Չորս հոսութիւնը՝ սև մաղձը նման է հողին, մաղասը (լորձը)՝ ջրին, արյունը՝ օդին, իսկ դեղին մաղձը՝ հրին: Արիստոտելը որպէս մարմնի սկզբնահոսութիւն կամ սկզբնատարր է դիտարկում արյունը, քանի որ նրանից են սնվում և աճում մարմնի մյուս մասերը, և նրա մեջ է ձևավորվում սերմը: Իսկ Հիպոկրատեսն ավելի ընդունելի է համարում մարմնի ձևավորումն ու «մածոմն» բոլոր չորս հեղուկներից: Ըստ որում, ավելի թանձրերից գոյանում են առավել պինդ մասերը, իսկ նոսրերից՝ փափուկները: Նեմեսիոսը նրանց կարծիքները շատ հակասական չի կարծում, քանի որ արյան մեջ առկա են բոլոր հեղուկները, և երակի հատմամբ կարելի է տեսնել դրանցից որևէ մեկի գերակշռութիւնը մյուսների նկատմամբ:

Քանի որ մարդկային մարմինը հաստատուել է այս չորս տարրերից, այն ենթակա է նույն «ախտերի» ազդեցութեանը, ինչ և տարրերը՝ «փոխադրութեան, հատման և հոսման» (1. [10]): «Փոխադրութիւն» ասելով հավանաբար պետք է հասկանալ օրգանիզմում կատարվող նյութափոխա-

նակությունը, որն «ըստ որակութեան» է: Իսկ «Հոսումը», որը ենթադրում է հեղուկների տեղաշարժ, ինչպես նաև, ավելցուկի արտազատում, հեռացում օրգանիզմից՝ «ըստ թափման» է: «Հատումը» կարելի է հասկանալ և՛ կտրվածքի, վնասվածքի, և՛ ավարտի, վախճանի, մահվան իմաստով, ի նկատի ունենալով ինչպես ամբողջ օրգանիզմը, այնպես էլ առանձին վերցրած որևէ օրգան կամ նույնիսկ բջիջ: Արտազատման ժամանակ նաև որոշակի անհրաժեշտ որակները՝ «չորին, խոնավին և ոգւոյն» (1. [10]) կորուստ է լինում օրգանիզմից, և անհրաժեշտություն է առաջանում դրանք լրացնել ներմուծվող համապատասխան նյութերով: «Չոր, խոնավ և ոգի» բառերը կարելի է հասկանալ նաև՝ նյութի ազրեզատային վիճակների իմաստով պինդ, հեղուկ և գազային վիճակում գտնվող նյութեր: Այն, ինչ ուտում ենք կամ խմում, նույնպես կազմված են այն նույն տարրերից, ինչից՝ մարմինը: Այդ պատճառով էլ հնարավոր է լինում դրսից ստացված օտար նյութերը մարմամբ առնմանել այն մարմնին, ուր մուտք են գործել նրանք: Այն, ինչ ինչ-որ չափով ազդակից ու նման է մեր օրգանիզմին, օգտագործելի է իբրև կերակուր, իսկ «ի հակառակիցն ուրախանայ» (τῶδε ἐναντίῳ θεραπεύεται) (Nem 8. 2): Ըստ վենետիկյան հրատարակչի, այս դեպքում *θεραπεύεται*-ի ավելի ճշգրիտ թարգմանությունը կլիներ «դարմանի» բառը (Նեմեսիոս, Վ 1889, էջ 17, ծ. 2):

Հոգի և մարմին

Մարմինը հոգու օրգանն է: «Երբ այն բարևք է կառուցված», համապատասխանում է հոգուն և ինքն էլ է գտնվում լավ վիճակում: Հակառակ դեպքում այն կարող է խանգարել հոգու գործառույթների իրականացմանը՝ այնպես, ինչպես վնասված քնարը խանգարում է երաժշտին գտնել պետք եղած հնչյունները:

Քննարկելով Դեմոկրիտոսի (Ք. ա. 460-370 թթ.), Էպիկուրոսի (Ք. ա. 342-272 թթ.) և ստոիկյանների ուսմունքները հոգու մարմնական լինելու մասին, Արիստոտելի մոտեցումը հոգուն իբրև կատարունություն (էնտելեխիա), Նեմեսիոսը կանգ է առնում պլատոնյան դրույթի վրա, ըստ որի հոգին անմարմին և անմահ էություն է և մարմինն՝ իր ամբողջության մեջ պահպանող սկիզբ, որը միայն մտքով կարելի է ըմբռնել: Տարբեր փիլիսո-

փաների կարծիքների մասին նա հավանաբար տեղեկություններ է քաղել Արիստոտելի «Հոգու մասին» երկից (Arist. De anima), որտեղ ասվում է ոմանք ընդունում են, որ հոգին վերին աստճանի շարժուն մի բան է, մյուսները կարծում են, որ Սկիզբ է: Ըստ որում, ոմանց կարծիքով այդպիսի Սկիզբները շատ են, իսկ մյուսների համար կա միայն մեկ Սկիզբ, և դա հոգին է: Նույն տեղում Արիստոտելը քննարկում է նաև Պլատոնի կարծիքն այս առնչությամբ: Վերջինս հոգին համարում է ինքնաշարժ, որն ունակ է շարժման բերել և ճանաչել էությունները (Arist. De anima, 405b, 407a): Իսկ ըստ Արիստոտելի՝ հոգին, լինելով կատարունություն, ինքնին անշարժ է, նրա շարժումը կապված է մարմնի հետ, որը կազմված լինելով «ծանր ու թեթև» տարրերից, օժտված է որոշակի շարժունակությամբ: Նեմեսիոսը մերժում է այս կարծիքը՝ նշելով, որ թեթևությունն ու ծանրությունը չեն կարող ապահովել այնպիսի հոգեկան շարժումներ, ինչպիսիք են մտածողությունը, խորհրդածությունը: Դրանք հատուկ չեն տարրերին, և ոչ էլ մարմնին: Եվ եթե հոգին իր շարժունակությունը ստանում է մարմնից, մի՞թե այդ դեպքում մարմինը կարող է շարժվել նաև հոգու բացակայությամբ: Հոգին ինքնաշարժ է և մշտաշարժ, իսկ դադարը ապակառություն է ինչպես նրա, այնպես էլ բոլոր մշտաշարժերի համար: Եվ քանի որ հոգին ունակ է ինչպես շարժել, այնպես էլ ճանաչել, ոմանք այն համարեցին այդ երկու ունակություն համադրություն՝ հոգին հայտարարելով ինքնին շարժվող թիվ:

«Ոմանք գտնում են, որ հոգին կրակ է, քանզի կրակը բաղկացած է նրբագույն մասերից, և առավել անմարմին տարրն է: Բացի այդ, ամենից առաջ նա է գտնվում շարժման մեջ և շարժման է բերում մնացյալը: Ընդհանրապես, բոլոր տարրերը, բացի հողից աջակիցներ գտան: Հողը ոչ ոք հոգի չհայտարարեց, գուցե միայն այն առումով, երբ ասվում էր, թե հոգին բաղկացած է բոլոր տարրերից կամ որ այն բոլորի հանրագումարն է» (նույն տեղում, 405b)¹⁴:

¹⁴ Հովհաննես Որոտնեցու մոտ գտնում ենք. «Արարիչ Աստուած ստեղծեաց զամենայն զգալի գնիւթական եղեալքս ի հողոյ, և դալարեցոյց ջրով, և ետ շարժումն ի յօդոյն, և երեւումն և գոյն ի հրոյն, քանզի ամենայն իրաց էութեանց չորս ինչ պետք են բաղկացութեանց՝ էութիւն, մածումն, շարժումն և երեւումն, որով լինի մարմին շօշափելի եռակի տրամատեալ» («Յովհաննու Որոտնեցոյ՝ Հաւաքեալ ի բանից իմաստասիրաց», ԲՄ 3, 1956, էջ 363):

Գալենոսի այն կարծիքին, որը պնդում է, թե հոգին խառնվածք է, Նեմեսիոսը հակադարձում է ասելով, որ եթե խառնվածքը ձևավորվում է տարրերի որոշակի խառնմամբ, իսկ բոլոր մարմինները կազմված են տարրերից, և ուրեմն՝ ամեն մարմին խառնվածք ունի, այդ դեպքում նաև կարելի է պնդել, թե ամեն մարմին հոգի ունի: Եվ հետևաբար «ոչ քար, ոչ փայտ, և ոչ երկաթ, և ոչ այլ ինչ եղիցի անանձն» (2. [9]): Այդ դեպքում հատկապես ո՞ր խառնվածքն է, որ ստեղծում է կենդանի, բանական հոգին: Նա նշում է ինը տեսակի խառնվածքներ, որոնցից ութը համարում է «վատախառն» և միայն մեկը՝ «բարեխառն», որը «միջակ խառնուածն» է (հղում կատարելով Գալենոսի «Յաղագս խառնուածոյ» աշխատությանը, տե՛ս ծնթ. 61-62): Ավել կամ պակաս չափով այդ խառնվածքները հատուկ են նաև անշունչ բնությանը: Ի հիմնավորում վերջինիս՝ Նեմեսիոսը նշում է Գալենոսի մեկ այլ երկ, որը կոչվում է «գՊարզս» («Գիրք պարզ նյութերի (կամ դեղամիջոցների) մասին») (2. [9]):

Դիկեարքոսը (հայերեն տեքստերում նա հիշատակվում է իբրև Դի-նարքոս, այդպես է նաև Մորանիի բնագրում, տե՛ս ծնթ. 46) և Սիմիասը հոգին դիտարկում էին որպես մարմնի չորս հիմնական որակների՝ ցրտի, տաքի, խոնավի և չորի դաշինք («յալգումն») ասելով, որ հոգին նման է երաժշտական գործիքի լարերի ներդաշնակ լարման («յալգման աղեացս»), իսկ մարմինը՝ քնարի (տե՛ս Αφουασι 2015, cc. 226-243): Այստեղ Նեմեսիոսը հստակորեն արտահայտում է հոգու նախագոյության հանդեպ իր վերաբերմունքը: Անխախտորեն ընդունելով Պլատոնի այն կարծիքը, որ «ուսմունք վերստին յիշեցմունք են», նա հոգու գոյությունը՝ նախքան մարմնում ներդրվելը, ընդունում է իբրև նախապայման: Բայց եթե ասվում է, որ նա «յալգումն» է, ուրեմն պետք է ընդունել, որ նախկին չէ, այլ հետո՞ մարմնի հետ միասին «յալգեալ եղեւ», որովհետև «յալգումն կցորդութիւն իմն է շարադրելոցն» (2. [8]): Հետևաբար, հոգին չի կարող «յալգումն» լինել:

Չնայած անհամաձայնություններին, բոլոր փիլիսոփայական ուղղություններն ի վերջո ընդունում են, որ հոգին կարելի է բնութագրել երեք հիմնական նշաններով՝ շարժում, ընկալունակություն, անմարմնություն: Այս նշաններից յուրաքանչյուրը միավորվում է որևէ սկզբնատարրի հետ: Այդ պատճառով նույնիսկ հոգին իմացականորեն բնութագրողնե-

ըը պատկերում են այն իբրև տարր կամ տարրերից կազմված, ըստ որում բոլորը գրեթե միանման են պատճառաբանում դա՝ քանի որ նմանը ճանաչվում է նմանով, իսկ հոգին իմանում է ամեն ինչ, այն պետք է կազմված լինի բոլոր Սկիզբներից (Arist. De Anima, 405b):

Նեմեսիոսը մերժում է այն թեզը, որ հոգին էլ մարմնի նման սերնդեսերունդ կարող է փոխանցվել, քանի որ այդ դեպքում հոգին էլ մահկանացու կլիներ, ինչպես մարմինը: Սակայն մարմնի քայքայման ժամանակ հոգու որակները չեն ոչնչանում, այլ փոփոխվում են (մի ձևից անցնում են մյուսին): Սա որոշ չափով նման է Գրիգոր Նյուսացու «կնիքադրման»՝ հոգով իրերի վրա նշան դնելու վերոհիշյալ տեսությունը: Այսպիսով հոգեկան ուժը միշտ մնում է մարմնի բոլոր մասնիկների մեջ, որտեղ էլ որ դրանք հայտնվեն կամ անգամ եթե խառնված լինեն այլ նյութերի հետ: Նա մերժում է նաև յուրաքանչյուր նոր մարմնի համար Աստծո ձեռքով նոր հոգի ստեղծելու մասին կարծիքը, մեջբերելով Սուրբ գիրքը, թե յոթերորդ օրը «հանգեալ Աստուած յամենայն գործոց իւրոց» (Ծննդ. Բ. 2): Հետևաբար Աստված արդեն նոր հոգիներ չի արարում, նա ավարտել է իր գործը և հանգստանում է:

Ինչպես արդեն ասացինք, Նեմեսիոսը կիսում է պլատոնյան գաղափարը հոգու նախագոյություն մասին, իսկ վերամարմնավորման (մետեմփսիխոսիս) նկատմամբ նրա վերաբերմունքը մնում է ոչ լիովին պարզաբանված: Նա առաջ է քաշում այս մասին անտիկ փիլիսոփաների կարծիքը և ոչ մերժում է, ոչ էլ հաստատում այն: Բավական հանգամանորեն անդրադառնում է այսպես կոչված «ամենեցունց հոգի» հասկացությունը, ըստ որի կա համընդհանուր, համատիեզերական հոգի ասվածը, որը բաժանվում է մարմնական էակների մեջ՝ մասնավոր հոգիների ձևով, և կենդանացնում (անձնավորում) է նրանց (տե՛ս ծնթ. 41):

Ինչ վերաբերում է հոգու և մարմնի միավորմանը, ապա Նեմեսիոսը չի ընդունում նրանց հասարակ միավորումը, տեղակայումը կամ հպումը, առավել ևս՝ խառնումը: Այս բոլորը կարող են ընդունելի համարվել միայն երկու մարմնական էությունների միավորման դեպքում: Նրան չի բավարարում նաև պլատոնյան ձևակերպումը՝ մարմինն իբրև հոգու հանդերձանք: Նեմեսիոսին ավելի մոտ են նորպլատոնականության հիմնադիր Ամմոնիոս Սակկասի մտքերն այս առնչությամբ: Ոչ մի համեմատություն

չի կարող լինել երկու մարմինների և մարմնի ու որևէ անմարմին էություն միավորումների միջև: Մարմինների միավորումը բոլորովին փոփոխում է միավորվողներին, քանի որ նրանք միանալով նոր մարմին են գոյացնում, որը նման չէ սկզբնական բաղադրիչներից ոչ մեկին: Իսկ անմարմին էությունը միշտ մնում է անձույլ, անապական և անայլայլ: Հետևաբար հոգին մարմնի հետ միավորվելիս չի խառնվում նրան: Ավելին, նա կարող է անգամ ինչ-որ մի պահի թողնել մարմինը, ինչպես լինում է երազում կամ մտահայեցողության ժամանակ: Հոգին բնակվում է մարմնում՝ չձուլվելով նրա հետ, այնպես, ինչպես արևն է իր լույսով թափանցում օդի մեջ՝ դարձնելով նրան լուսակիր, բայց չխառնվելով նրան: Թեպետ, այս համեմատությունը նեմեսիոսն ինքն այնքան էլ տեղին չի համարում, քանի որ արևն ու օդը երկուսն էլ նյութական են, իսկ արևի ճառագայթը գտնվում է որոշակի, սահմանափակ տարածքում, այն դեպքում, երբ հոգին աննյութ է և ընդգրկում է ամբողջ մարմինը:

Այն, որ հոգին ու մարմինը մարդու մեջ միավորված են, ապացուցում է այն փաստը, որ հոգին «կրակից» է մարմնին, կիսում է նրա զգացողությունները: Պատճառն այն է, որ այդ միավորումը լինում է ոչ թե «ըստ էության, այլ ըստ իւրաքանչիւր զաւրութեանն» (3. [8]) (ըստ հոգեկան և մարմնական գորությունների): Եվ ընդհանրապես, «հոգին՝ մարմնի մեջ» արտահայտությունը բնավ էլ ի նկատի չունի նրա տեղակայումը, այլ կապը մարմնի հետ՝ ըստ փոխհարաբերություն և փոխադարձ հակման («կալմամբ և առընթեր գոլ» (3. [5]): Հոգու և մարմնի միավորման նման եղանակն ավելի շուտ համեմատելի է Աստվածային Լոգոսի միավորմանը մարդկային բնության հետ՝ անխառն և անայլայլ, «անչփոթ և անպարագրելի» (3. [6]): Այսպիսի միավորման դեպքում աստվածային էությանը վնաս չի լինում «ի նուաստագունէն», սակայն վերջինս է օգուտ ստանում աստվածայինից՝ հնարավորություն ունենալով մաքուր և անմարմին բնության հետ «անարգելաբար տարեալ լինել ընդ ամենայն» (3. [10]):

Զորությունների այդ միախառնման արդյունքում հարկ է առաջանում տարբերակել, ո՞ր գորություններն են միայն մարմիններ, որո՞նք՝ հոգունը, և ի վերջո որո՞նք են պատկանում հոգուն և մարմնին:

Հոգու գործառույթները

Հոգին («անձն»), որի գործառույթների մեջ են մտնում օրգանիզմում տեղի ունեցող բոլոր բնախոսական (ֆիզիոլոգիական) երևույթները, դրսևորվում է երկու տարբերակով բանական և անբանական: Միայն հոգուն պատկանող հիմնական «գորուծյուններն» են՝ 1. տեսողական գորուծյունը կամ պատկերացումը, 2. իմացականը, 3. հիշողականը: Վերջին երկուսը պատկանում են բանական հոգուն: Իսկ տեսողական գորուծյունը նեմեսիոսը համարում է անբանական հոգու գործառույթ: Սակայն ըստ նեմեսիոսյան բնութագրումների՝ այս ունակուծյան ենթակայուծյունը հոգու անբանական մասին—այնքան էլ անվիճելի չի թվում: Տեսողական, ըստ նեմեսիոսի, հոգու «գորուծյան ներգործուծիւնն» է, այսինքն՝ հոգու ունակուծյունների գործուն դրսևորումը, երբ նա ձևավորում և ձևափոխում է զգացողուծյունները, դրանց ընկալումն ու պատկերացումը: Այն գործառուծ է հինգ արտաքին զգայարանների միջոցով և սերտ կապի մեջ է իմացականի և հիշողականի հետ»՝ կազմելով հոգեբանական գործընթացի մի ամբողջական պատկեր, հետևաբար, ըստ եվանգելիիդեսի արդարացի դիտարկման (Evangelides 1882, p. 12, n. 22)՝ այն ծայրահեղ դեպքում կարելի է հասկանալ զուտ իբրև սահման, միջանկյալ աստիճան հոգու բանական և անբանական մասերի միջև» (տե՛ս Владимирский 1912, с. 144): Դրա միջոցով հոգին կա՛մ գիտակցուծյան մեջ որոշակի ճշտուծյամբ վերարտադրում է այն առարկայի պատկերը, որն ինչ—որ ժամանակ ընկալվել է զգացողուծյուններով, կա՛մ զգայական ընկալումներից դեն է նետում այդ նախնական պատկերը, կա՛մ էլ ավելացնելով ինչ—որ տարրեր՝ վերստեղծում է նոր պատկերներ, կառուցում տիպեր, որ երբեք չեն ընկալվել զգացողուծյուններով (տե՛ս նույն տեղում, էջ 145): Տեսողական գորուծյունը նեմեսիոսի մոտ մի կողմից միավորում է զգացողուծյունները, որ ստացվում են հինգ արտաքին զգայարաններից, մյուս կողմից ստեղծում է ինչ—որ նոր բան, որ կախված չէ ընկալման ենթակա որևէ առարկայից: Նեմեսիոսն այս ունակուծյան «գործարան» (օրգան) է համարում գլխուղեղի առաջային փորոքները, նրանցում գտնվող հոգեկան շունչը (փսիխիկ պնևման), նրանցից դուրս եկող նյարդերը՝ ներծծված այդ շնչով, և արտաքին զգայարանները (տե՛ս ծնթ. 106):

Քանի որ տեսողական զորութիւնը անմիջական կապ ունի զգայարանների հետ, Նեմեսիոսը՝ թեման շարունակելով, վերլուծում է զգայարանները:

Զգացողություն և զգայարաններ

Զգացողութիւնը սովորաբար բնորոշվում է իբրև զգայական իրերի ընկալում: Սակայն Նեմեսիոսի կարծիքով, այս սահմանումն ավելի շուտ ամփոփում է զգայական ներգործութեան բնորոշումը և ոչ թե զգացողութեան (6. [3]): Նա կարծում է, որ զգացողութիւնը «բանական շնչի» (νοερόν πνεῦμα) դուրս մղումն է հոգու գլխավոր նստավայրից՝ գլխուղեղից, դեպի օրգաններ: Այլ կերպ ասած, դա այն հոգեկան զորութիւնն է, որն ունակ է ընկալել զգայական առարկաները, և ոչ թե ինքնին ընկալումն է: Ինչպես Պլատոնի համար՝ զգացողութիւնը հոգու և մարմնի հարդակացութիւնն է արտաքին աշխարհի հետ (ինքը՝ ունակութիւնը հոգուն է, իսկ գործարանը (օրգանը), որով այն ներգործում է՝ մարմնինը), այնպես էլ ըստ Նեմեսիոսի՝ զգացողութիւնը ոչ միայն մարմնական (ֆիզիոլոգիական) գործառույթ է, այլև հոգեկան: Նա հաստատում է, որ զգացողութիւնն ինքնին «այլայլումն» (փոփոխութիւն) չէ, այլ «գիտութիւն այլայլման» (իմա՝ ճանաչում, տարբերակում կամ ավելի շուտ՝ գիտակցում, διαγνώσις – դիագնոզ), «քանզի այլայլին զգայարանքս, բայց տարորոշ է այլայլումնն զգայութիւնն» (6. [2]): Այսինքն, փոփոխման են ենթարկվում զգայարանները, սակայն փոփոխութեան ճանաչումը, տարբերակումը լինում է զգացողութեամբ: Զգայարաններից յուրաքանչյուրն ընկալում է այն, ինչն առավել մոտ է իր իսկ բնութեանը: Օրինակ, մարմնական և շոշափելի օրգանով՝ շոշափելիքով, մենք ընկալում ենք առավել շոշափելին և իրեղենը: Լուսատես օրգանը՝ տեսողութիւնը, ընկալում է լուսատեսակը: Օդակերպ օրգանով՝ լսողութեամբ, ընկալում ենք օդի շարժումը, որի շնորհիվ է ձևավորվում ձայնի էութիւնը: Սպունգանման և ջրատեսակ օրգանով՝ համի զգայարանով, հոգին ընկալում է հյութերը: Այսպիսով, զգայականն ընկալվում է նրանով, ինչն իրեն ազգակից է կամ հարազատ՝ հիմքում ունենալով չորս սկզբնատարրերը: Սակայն այդ դեպքում զգայարանները:

րանները ևս չորսը պիտի լինեին՝ ըստ տարրերի թվի, իսկ դրանք հինգն են: Պատճառն այն է, որ գոլորշին և հոտն իրենց բնույթով (խտուժյամբ) միջասահման են օդի և ջրի միջև, և բնությունը ստեղծել է հինգերորդ օրգանը՝ հոտառությունը, որպեսզի ոչինչ, որ ճանաչելի է և ենթակա է գիտության, չմնա արտաքին զգացողություններից դուրս:

Իմացականի և հիշողականի մասին

Իմացական գորությունն, ըստ Նեմեսիոսի՝ իր մեջ ներառում է «դատելն և հաւանելն» (վերլուծելն ու համաձայնելը), «ի բաց փախչելն և ի վերայ յարձակելն» (խորշումն ու փափագելը), բայց հատկապես «իմացմունք իմացականացն», առաքինությունն ու գիտելիքը, արվեստն ու արհեստը, մտածելու և նախընտրության կարողությունները: Այս գորությանն են վերագրվում նաև իրական մարգարեական ունակությունները, ինչը պյութագորականները եբրայացիների հետ միասին համարում էին «ճշմարիտ նախագիտութիւն» (12. [1]): Իմացականի գործարան նա համարում է գլխուղեղի միջին փորոքը և նրանում տեղակայված «անձնական շունչը»:

Հոգու հաջորդ գործառույթը հիշողական գորությունն է՝ իբրև հիշողության ու վերհիշման «պատճառ և շտեմարան» (13. [1]): Այստեղ ևս Նեմեսիոսը մեջբերում և համադրում է հեղինակավոր փիլիսոփաների կարծիքներ:

Հիշողությունն, ըստ Օրիգենեսի¹⁵ մարդու ներսում մնացած «տեսութիւն» է, այսինքն՝ մտապատկեր, որ ձևավորվել և դրոշմվել է իր տեսած որևէ երևույթի ներգործությամբ առաջացած զգացողությունից: Իսկ ըստ Պլատոնի՝ դա «զգայութեան և իմացման փրկութիւն» է (տե՛ս Plato Philebus, 34b): Հոգին զգալի իրերին ընկալունակ է զգայարանների միջոցով՝ այդպես ձևավորվում է կարծիքը, իսկ իմացականներին՝ մտքի միջոցով, որով ձևավորվում է «իմացումն» (իրական գիտելիքը): Եվ երբ առարկայի մասին ձևավորված կարծիքն ու իմացումը պահպանվում է, դա կոչվում է հիշողություն (տե՛ս Plato Philebus, 33d-34c): Սակայն Պլատոնի այս կերպ ներկայացրած «իմացումն», ըստ Նեմեսիոսի՝ ավելի շատ նման է մտածելուն, խորհելուն և ոչ այնքան իրական իմացմանը (13. [2]): Քանի

¹⁵ Իրականում՝ ըստ Արիստոտելի. տե՛ս ծնթ. 122:

որ զգայական հիշողությունները ձևավորվում են ինքնըստինքյան («ի յինքեանց»), իսկ իմացականներն՝ ըստ հանգամանքների կամ ըստ ասոցիացիաների («ըստ պատահման»): Նախնական պատկերներից հիշողությունը ձևավորվում է մտածելու ընթացքում, իսկ «իրական իմացական» ոչ միայն այն ամենն է, ինչը լսելով կամ սովորելով ենք հիշում, այլև այն, ինչ վերաբերում է «բնաւորական (բնատուր) իմացմանն», որ չի կարելի դասել հիշողությունների շարքին, որովհետև ըստ էության մենք դրանք ոչ թե հիշում ենք, այլ գիտենք (13. [2]):

Վերհուշն այն է, երբ հիշողությունն ընդհատվում է մոռացմամբ, և ապա վերականգնվում: Այլ կերպ ասած՝ վերհուշը տկարացած հիշողության վերականգնումն է: Տկարացումը լինում է մոռացման պատճառով, իսկ մոռացումը կամ լրակատար է, կամ այնքան ժամանակով, մինչև կլինի վերհիշում: Սակայն կա վերհուշի մեկ այլ տեսակ ևս, որը կապված է զգացողությունների կամ իմացության մոռացման հետ, այլ «բնաւորական» մտածումների, որոնք անուսանելի են համայնական բոլոր է՛երի համար: Դրանցից է, օրինակ, Աստծո գոյության մասին հիշողությունը (տե՛ս ծնթ. 124):

Այսպիսով, տեսողականը զգայարաններով ընկալածի մասին հաղորդում է իմացականին, որն իր մեջ առնելով և վերլուծելով ստացած տեղեկությունը, առաքում է հիշողականին: Հիշողականի գործարանն, ըստ Նեմեսիոսի՝ գլխուղեղի «հետին փորոքն» է (13. [3]), որը նա նաև «ուղեղիկ» է անվանում (παρεγκεφαλίς, παρεγκρανίς) (տե՛ս ծնթ. 125):

Խոսքի մասին

Բանական հոգու մեկ այլ գործառույթ է խոսքը: Ըստ որում, ինչպես «ներտրամադրեալ» կամ ներքին, ներունակ, չարտաբերված, այնպես էլ՝ «յառաջ եկեալ» կամ արտաբերված խոսքը: «Ներտրամադրեալ» խոսքը հոգու շարժում է, որ ձևավորվում է խոհեցողականի մեջ՝ առանց որևէ արտաձայնության: Ուստի հաճախ լռելով հանդերձ բարբառում ենք ինքներս մեր մեջ կամ խոսում ենք երազում: Եվ հատկապես սրանով ենք բանական, համոզված է Նեմեսիոսը (14. [1]): Իսկ արտաբերված խոսքը ձայնի մեջ է ամփոփում իր ներգործությունը: Ըստ Պլատոնի, հոգին՝ անընդհատ շարժ-

ման մեջ լինելով ինքն իր ներսում, իրերի հետ իր յուրաքանչյուր հսկայական ժամանակ սկսում է շարժվել իր ամբողջ էությունը և արտահայտվում է Բառի (կամ Խոսքի) մեջ (տե՛ս Plato Tim. 37a, b): Երբ այդ բառը՝ անխոս և անձայն արտաբերվելով ինքնաշարժ տիեզերում, հայտնում է զգայական առարկայի մասին, ձևավորվում են հաստատուն ու ճշմարիտ կարծիքներ և համոզմունքներ: Իսկ երբ այդ խոսքն ասվում է բանականի մասին, այդ ժամանակ անհրաժեշտաբար իրացվում են խելքն ու իմացությունը (տե՛ս Plato Tim., 37 b, c): Պլատոնի դրույթները Բառի մասին, որը գտնվում է հոգու մեջ և արտաբերվում է նրա կողմից, սկիզբ դրեցին ներուճակ և արտաբերված խոսքի մասին ստոիկյան ուսմունքին:

Բնական առարկայի պատկերը կամ որևէ երևույթ առաջ են բերում միտք, որ վերաբերում է մի քանի համապատասխանող թեմաների: Դրանք կարող են իրարից շատ տարբեր լինել և անգամ հակադիր, ինչպես անիվի ճաղերը: Ծագող այդ բոլոր մտքերը, որ առաջացել են հիմնական պատկերից, պետք է ներդաշնակորեն համապատասխանեն կամ կապ ունենան իրար հետ: Լոկ մտապատկերը չի կարող գաղափար դառնալ: Մտավոր գործողությունը, որ ամբողջովին մի ներքին, արագ կազմակերպվող և անցողիկ ընթացք է, շոշափելի է դառնում մեր արտաքին զգայարանների համար հնչյունի միջնորդությամբ: Միտքը կազմակերպող օրգանը լեզուն է: Մտավոր գործողությունն ինքնըստինքյան հարկադրված է կապակցվելու լեզվի հետ, որովհետև առանց դրա չի կարող արտահայտվել և բացատրվել մտածմունքը: «Նոյն իսկ այն ժամանակ, երբ չենք խօսում և լուռ ենք մտածում, այնուամենայնիվ մեր մտքերը մտածում են բառերով, ուստի երբ մտածում ենք, նշանակում է, որ նոյնպես խօսում ենք (Լագարոս)» (Հայոց գիրը, Թիֆլիս, 1892, էջ 40, ծնթ. 7): «Մտածմունքն անձայն խօսակցութիւն է, իսկ խօսակցութիւնը՝ հնչիւնաւոր մտածմունք: Բառը մարմնացած միտք է (Մաքս Մյուլլեր)» (նույն տեղում, էջ 41, ծնթ. 8):

Միշտ է շրջանառվել այն կարծիքը, որ արտաբերված խոսքն ունի գաղտնի գորություն, քանի որ ձայնի զանազան տատանումներն օդում անկասկած գործի են դնում համապատասխան ուժեր, որոնց համադրությունը տալիս է այս կամ այն արդյունքը՝ նայած հանգամանքների: Այդ պատճառով, իրական գիտելիքին վերաբերող որևէ միտք նախկինում թույլ չէր տրվում շարադրել բառացի՝ վախից, որ կարող են գործի դրվել այդ

ուժերը: «Ինչպէս որ միտքը մարդկային յարաբերութեան մէջ միշտ խաւարից դէպի լոյս, սահմանափակ շրջանից դէպի անսահմանն է ձգտում, նոյնպէս և Հնչիւնը կրօնի խորքերից հոսում է դէպի դուրս և տարածւում հրաշալի կերպիւ իրեն համապատասխանող միջնորդ նիւթի, այն է՝ օդի մէջ, որ տարրերից ամենաքնքոյշը և շարժունն է և որի, ըստ երևոյթին, անմարմին լինելը գեղեցիկ կերպիւ համապատասխանում է ոգւոյ էութեան: Մտաւոր ձգտումը զբաղեցնում է ոչ միայն միտքը, այլ և զրդում է մարդուն ամբողջապէս դեպի գործունէութիւն. սորան նպաստում է առաւելապէս ձայնի Հնչիւնը... Լեզուի Հնչիւնին յարմարւում է նոյնպէս մարդուս ուղղահայեաց կազմուածքը - որից զուրկ են կենդանիները - ուստի և խօսքն անմիջապէս գետին չէ ընկնում, և խուլ կերպիւ անյայտանում, այլ ազատ-համարձակ դուրս է գալիս շրթունքներից և դէպի նպատակ ուղղւում... Հնչիւնի հետ միանում է հայեացքի արտայայտութիւնը և ձեռքերի շարժողութիւնը» (նույն տեղում, էջ 41-42):

Մարդու ուղղահայաց կազմվածքին՝ իբրև նրա հոգու գործառույթների իրականացման անհրաժեշտ պայմանի, անդրադառնում է նաև Նեմեսիոսը: Միայն կատարյալ մարդկային մարմինը կարող է բանական հոգու կրողը լինել: Միայն մարդու ուղղագնաց քայլվածքը կարող է հնարավորություն ստեղծել նրա հոգեկան ընդունակությունների դրսևորման համար (տե՛ս ծնթ. 29):

Անբանական հոգի կամ «հարկաւոր ցանկական»

Անբանական հոգին կամ, ավելի ճիշտ, հոգու անբանական շերտը կոչվում է նաև «հարկաւոր ցանկական» (15. [1]): Նրանով են իրականացվում օրգանիզմի ֆիզիոլոգիական գործառույթները: Նրան են պատկանում նաև կամային շարժումները, քանի որ ցանկացած շարժման սկիզբը «հարկաւոր ցանկութիւն»-ն է: Կարիքից, անհարժեշտությունից, «հարկ»-ից ելնելով է կենդանին ցանկանում և շարժվում:

Անբանական հոգին գործում է կրքերով՝ որպես ձգտում, մղում, փափագ, որն ուղեկցվում է որոշակի տանջալից հոգեվիճակով, այդ պատճառով էլ անբանական հոգին կոչվում է կրական (παθητικόν) և ցանկական

(ὀρεκτικόν): Կիրքը (πάθος) անբանական հոգու առաջնային, հիմնական և ընդհանուր շարժումն է: Կրքերն էության հաստատողն են՝ «կենդանապէս» (իբրև կենդանի): Առանց նրանց չի կարող կառուցվել կյանքը: Կիրքը միավորվում է ձգտման, ազդակների, ցանկության հետ՝ դեպի ինչ-որ մի նպատակ, և ինքնին շարժում է: «Կիրք» և «ախտ» բառերը հայերեն բնագրում հաճախ են փոխարինում մեկը մյուսին՝ որպես πάθος-ի համարժեք, սահմանվելով իբրև հոգու անբանական շարժում՝ բարու կամ չարի «ակնկալիքով», որին հետևում է «հեշտութիւն կամ տրտմութիւն» (15. [3]): Կիրքը՝ գործելով հոգում, ազդում է ամբողջ մարմնի վրա, որը ենթարկվելով այդ ներգործութեանը՝ բռնութեամբ տարվում է դեպի որևէ գործողություն: Օրինակ, ինչպես սրտատուլթյունը սրտամտականի ներգործութեանն է, այդպես էլ կիրքը՝ անձի երկու մասերի և մարմնի, որոնք գործում են բռնի կերպով՝ սրտատուլթյունից դրդված (15. [4]): Համեմատական անցկացնելով ախտի և ներգործութեան մեջ, նեմեսիոսն ասում է ներգործութեանը արարողական շարժում է, որն համահունչ է բնութեանը (արարողական է կոչվում ինքնին շարժվողը 15. [4]), իսկ ախտը բնութեանը հակառակ շարժում է: Չափազանցված ներգործութեանն, ի վերջո, վերածվում է ախտի, ինչպես օրինակ՝ սովորական անոթազարկը և ինչ-որ պատճառով առաջացած հաճախասրտութեանը (տախիկարդիան) կամ առիթմիան: Կիրքն առավելապես հոգեկան ակտ է, որն ուղեկցվում է զգացողութուններով: «Ոչ ամենայն շարժութիւն ախտականին՝ ախտ կոչի», – գրում է Նեմեսիոսը (15. [4]): Այսինքն, յուրաքանչյուր կրային սկիզբ ունեցող շարժում դեռևս կիրք չէ, այլ դրանցից ամենաուժեղները միայն, որ ձևավորում են որոշակի զգացմունքներ: Աննշան և անզգացմունք գրգիռները դեռևս կրքի (կամ ախտի) էութուն չեն, քանի որ անհրաժեշտ է, որպեսզի կիրքն ունենա նաև «մեծութիւն» (ուժգնութուն), ըստ որում նշանակալի: Այլ կերպ ասած՝ կիրքը հոգեկան ալեկոծում է, անհանգստութուն, որն առաջացնում է ուժեղ զգացողութուններ:

Անբանական հոգին իր հերթին բաժանվում է երկու խմբի՝ բանականութեանը ենթարկվող («հաւանական բանի») և չենթարկվող («անհաւան»)։ Առաջին խմբին են պատկանում ցանկականն ու սրտամտականը։

«Ցանկական» և «սրտմտական»

Այս «ցանկական»-ը (*ἐπιθυμητικόν*) տարբերվում է «հարկավոր ցանկական»-ից (*ὀρεκτικόν*), և դրսևորվում է երկու տարբերակով՝ հեշտություն և սրտմտություն: Հեշտությունը (հաճույքի զգացողություն) լինում է հոգեկան, որն ինքնին հոգունն է, և մարմնական՝ որը վերաբերում է հոգուն և մարմնին, ինչպես օրինակ, կերակուրից և սեռական մերձավորությունից առաջացածը: Հեշտությունը միայն մարմնինը լինել չի կարող, քանի որ ցանկացած հեշտություն զգայություն է, իսկ զգայությունը հոգու գործառույթ է: Մարմնական հեշտությունները լինում են՝ ա) հարկավոր և բնական, որոնք կենսական անհրաժեշտություն են, բ) բնական, բայց ոչ անհրաժեշտ, ինչպես ըստ բնության և ըստ օրենքի մերձավորությունը, քանի որ դա անհրաժեշտ է տեսակի շարունակականության համար, բայց կարելի է նաև կուսությունը ապրել, և գ) ոչ բնական ու ոչ անհրաժեշտ, ինչպես հարբեցողությունն ու վավաչոտությունը: Իսկ իրական հոգեկան հեշտությունը լինում է հայեցողությամբ, մակացությամբ (այսինքն՝ գիտելիքով) և առաքինությամբ:

Տրտմության տեսակները չորսն են՝ 1. թախիծ կամ ձանձրույթ, 2. վիշտ կամ դառնություն, 3. նախանձ, 4. ողորմ կամ խղճահարություն:

Սակայն ցանկականն, ընդհանուր առմամբ, կարող է դրսևորվել չորս ձևով՝ 1. ցանկություն, որը ակնկալվող բարիքն է, 2. հեշտություն, որ առկա, հասանելի բարիքն է, 3. երկյուղ, որ ակնկալվող չարիքն է, 4. սրտմտություն, որ արդեն վրա հասած չարիքն է: Ախտերը նույնպես կարելի է տարանջատել նման կերպ՝ ցանկություն, հեշտություն, սրտմտություն և երկյուղ:

Նեմեսիոսը տարբերակում է երկյուղի վեց տեսակ. 1. ահ՝ ապագա, սպասվելիք ինչ-որ գործողությունից, 2. զգուշություն կամ երկյուղածություն, ակնածանք, անհանգստություն՝ սպասվող պարսավանքից, 3. ամոթ, որը վախ է կատարած ինչ-որ վատ գործի պատճառով, 4. հիացում կամ ապշություն՝ ինչ-որ մեծ տեսությունից, 5. զարհուրում, որ երկյուղ է ինչ-որ անսովոր, սարսափելի տեսությունից, 6. տագնապ, որ կործանման երկյուղն է, երբ խոտոր գործերի, մոլորությունների և մեղանչումների պատճառով տագնապում ենք մեր հոգու համար:

Երկյուզի տեսակները տարբեր են և, թվում է, նույնիսկ նման չեն իրար, սակայն նրանց բոլորի առաջացման մեխանիզմը նույնն է՝ ինչ-որ պատճառով առաջացած «սոսկման» հետևանքով մարմնի ամբողջ ջերմությունն ընթանում է դեպի «իշխանական» սիրտը, այնպես, ինչպես ռամիկները՝ երկյուզելիս ապավինում են իրենց իշխանին: Վախի նման բնախոսական բացատրություն գտնում ենք նաև Գալենոսի մոտ: Նա «վախ» հոգեվիճակի առաջացումը բացատրում է մարմնի մակերևույթի ջերմության սառեցմամբ և սրտում արյան ու շնչի (պնևմա) կենտրոնացմամբ (Гален, т. 3, 2016 [De Hippocr. et Platon. decretis], 2. 7)¹⁶:

Վախի և ընդհանրապես տրտմության գործարան Նեմեսիոսը համարում է ստամոքսամուտքը («բերան քաղրթին»), քանի որ սա է նախ զգում ազդակը կամ ծակոցը, որն առաջանում է մաղձի ներհոսքից ստամոքսի խոռոչ: Եվ մինչև առաջ չբերվի փսխում, որով մաղձը դուրս կհանվի ստամոքսից, տրտմությունը չի դադարի՝ մեջբերելով Գալենոսի խոսքերը, եզրակացնում է Նեմեսիոսը: Ազդման ճշգրիտ կետը թրանման ելունի ներքևում է: «Սիրտն ավելի վեր է, քան առագաստը (ստոծանին), իսկ ստամոքսն՝ ավելի ցած» (20. [2]): Այս հատվածը մի փոքր խառն է նկարագրված նաև Հունարեն բնագրում: Իսկ հայերեն տեքստում, բացի այդ շփոթից, մի հատված էլ բացակայում է (տե՛ս ծնթ. 147): Դժվար է ասել՝ այսպիսի տեղագրական նկարագրությունը շարունակում է վերաբերել ազդման կետի ստույգ տեղակայմանը, թե՞ արդեն ստոծանու դիրքին: Ամեն

¹⁶ Ժամանակակից պատկերացմամբ՝ վախի ազդակն անմիջապես հաղորդվում է գլխուղեղի հիպոթալամոսի շրջան, այդտեղից՝ միջին ուղեղ, և այդ ընթացքում հասցնում է շատ արագ մոբիլիզացնել օրգանիզմի բոլոր էներգետիկ ռեսուրսները, վերադասավորել գրեթե բոլոր օրգան-համակարգերի գործունեությունը: Այս ազդակը հասնում է սիմպաթիկ հանգույցին, որը բերում է ամբողջ սիմպաթիկ նյարդային համակարգի ակտիվացման, առաջանում է հաճախասրտություն, մարսողական գեղձերի աշխատանքի արգելակում և այլ օրգանական փոփոխություններ: Զուգահեռաբար միանում է նաև ներզատիչ համակարգը, որն արյուն է նետում ազրենալինի մեծ քանակ: Վերջինս այլ կերպ անվանվում է «ճագարի հորմոն», ի տարբերություն նորազրենալինի, որը կոչվում է «առյուծի հորմոն» և արտադրվում է գայրույթի, սրտմտության ժամանակ: Ազրենալինը նեղացնում է մաշկի անոթները և հիմնականում գործում է այնպես, ինչպես սիմպաթիկ նյարդային համակարգը՝ կրկնապատկելով նրա գործունեությունը: Նյարդային գրգռունների միջնորդ (մեդիատոր) հանդիսացող ադրենալինի մեծ քանակը սառը քրտնարտադրության պատճառ է դառնում:

դեպքում, կարելի է ենթադրել, որ ազդման կետը, որը Նեմեսիոսը և Գալենոսը նկարագրում են իբրև ստամոքսամուտք, ավելի շուտ՝ արևային հյուսիսակն է, որը սիմպլիկ նյարդաթելերից և հանգույցներից կազմված գոյացություն է, և որի տեղակայումը մոտ է ստամոքսամուտքին: Ավելի տրամաբանական է, որ հատկապես նրա միջոցով է որևէ ազդակ ընկալվում և տարածվում ամբողջ մարմնով:

Արտատուությունը արյան եռքն է շուրջարտային տարածքում, որն առաջանում է մաղձի գոլորշիացումից («վերծխություն») կամ պղտորումից: Այն լինում է երեք տեսակի՝ 1. բարկություն, որ կոչվում է նաև դառնություն և ցասում, 2. քեն, 3. ոխ:

Մարմնագիտություն (սոմատոլոգիա)

«Բնութեան» գրքի հիմնական մասը նվիրված է բնախոսական հարցերին և այն թեմային, ինչն այժմ ընդունված է անվանել փորձարարական հոգեբանություն: Այս բաժինները վկայում են, որ նրանց հեղինակը բավականաչափ լրջորեն է ուսումնասիրել Հիպոկրատեսի և հատկապես Գալենոսի աշխատությունները: Պետք է ասել, որ Նեմեսիոսին հաճախ են մեղադրում էկլեկտիզմի մեջ: Որ իբր՝ տարօրինակ է քրիստոնյա աստվածաբանի համար այդչափ հետաքրքրությունը հոգեբանախոսության նկատմամբ: Եվ, իրոք, Եմեսացի եպիսկոպոսի գիտելիքները կենսաբանության և բժշկության ոլորտում բավական տպավորիչ են:

Կենսական շնչի կամ ոգու մասին

Նախնական կերպը, որում բացահայտվում էին հին մտածողների բնախոսական առաջին գաղափարները, ուսմունքն էր կենսական ոգու (շնչի, պնեմայի, πνεῦμα) մասին, որի շնորհիվ են իրականացվում բոլոր կենսական գործընթացներն օրգանիզմում: Արիստոտելը տարբերակում էր երկու տեսակի ոգի կամ շունչ (պնեմա). 1. շնչառության ընթացքում օրգանիզմ մտնող արտաքին օդը, որը տաքացվում և վերամշակվում է ներքին կենսական ջերմությամբ, և 2. ներքին պնեման, որ զարգանում է սերմում և կենդանի էակի կառուցվածքային մաս է կազմում: Դա օրգանիզմի

կենսական սկիզբն է: Կենսատու ոգու կամ շնչի այս երկու տեսակը տարանջատում է նաև Նեմեսիոսը՝ նկարագրելով դրանք. մեկը՝ շնչառական, մյուսը՝ ծննդական կամ սերմնական գործընթացներում:

Ստոիկյանների համար կենսական շունչը մաքուր, եթերային, տաք մարմնական սուբստանցիա է, որ բնատուր է մարդու համար: Պլոտինոսը կարծում էր, որ դա հոգու հատկությունների և արտաքին առարկաների հատկությունների խառնուրդն է: Գալենոսը հավատում էր, որ աշխարհը լի է այդ շնչով, որը շնչառության (ներշնչման) ժամանակ մտնում է օրգանիզմ՝ այդ կերպ պահպանելով կյանքը մարդկային մարմնում, իսկ երբ համաշխարհային շունչը կամ համաշունչն այլևս չի ներշնչվում, մարդը կամ կենդանի էակը վախճանվում է: Ըստ նրա՝ կենսական շնչի վերածնունդն ու բաշխումն օրգանիզմում կատարվում է հետևյալ կերպ. ներքին շունչը, որ զարգանում է սերմում, սննդի հետ միասին վերամշակման է ենթարկվում լյարդում՝ վերածվելով «բնութենական կամ ֆիզիկական շնչի» (*spiritus naturalis*): Լյարդից արյունը տեղաշարժվում է դեպի մարմնի բոլոր մասերը և դեպի սիրտը, որտեղ անցնում է աջ և ձախ սրտերը բաժանող թափանցելի¹⁷ միջնապատի միջով, ու խառնվում տիեզերական համաշնչի հետ՝ դառնալով «կենսական շունչ» (*spiritus vitalis*): Ապա ձախ փորոքից անցնելով շնչերակային համակարգ, իսկ հետո՝ ուղեղ, ընկնում է «հրաշալի ցանց» (*rete mirabile*) և իբրև «հոգեկան շունչ» (*spiritus animalis*) ողջ մարմնով մեկ բաշխվում է նյարդերով (տե՛ս Гален, Наз. част. чел. тела, 1971, сс. 45-48):

Անբանական հոգու բանականության ենթակայությունից դուրս (անհնազանդ, «անհաւան բանի») հատվածը պատասխանատու է օրգանիզմի հիմնական բնախոսական գործառույթների համար, մասնավորապես՝ կերակրական, շնչերակական և սերմնական կամ ծննդական:

«Կերակրական»

Կերակրականին բնորոշ է չորս տեսակի գորությունը՝ քարշող, պահող, փոփոխող և արտազատող («քարշողական, ունակական, այլայլական,

¹⁷ Ժամանակակից բժշկագիտությունը փաստում է, որ այդ միջնապատը թափանցելի չէ:

արտաքս վտարական»): Նրա գործարաններն են՝ բերանը, ստամոքսը, որովայնը, լյարդը, երակները, աղիքը, սև և դեղին մաղձերը, փայծաղը, երիկամները: Բերանը ատամների և լեզվի միջոցով մանրում ու նախապատրաստում է կերակուրը (լեզուն հավաքում է սնունդը և նետում ատամների տակ, որոնք երկանքի նման աղում ու մանրացնում են այն): Ապա կերակուրն ուղղվում է դեպի ստամոքս: Նեմեսիոսն այն համարում է ինչպես «կարաւտութեան գործարան», որից ազդակ է գալիս սննդի անհրաժեշտության մասին, այնպես էլ՝ կերակրի ճանապարհ, քանի որ կլանված սնունդն ընդունելով, առաքում է դեպի որովայն (աղիներ): Այստեղ առանձնացվում են պիտանին ու սնուցողը և փոխանցվում լյարդին՝ երակների միջոցով, որոնք ծառարմատների նման քաշում են կերակրահյուսվածք աղիներից և ուղարկում լյարդին «փորոյն երակ»-ով (լյարդի դռներակով. Տե՛ս ծնթ. 150): Լյարդը մարսում («ամոքում») է որովայնից եկած հյուսվածք և առնմանում իրեն: Իսկ քանի որ լյարդի հյուսվածքն իր կազմությամբ նման է արյանը, «վայելչաբար» կերակրահյուսված փոխարկվում է արյան: Փայծաղը, լեղապարկն ու երիկամները դասվում են կերակրականի գործարանների թվին, քանի որ նրանք ավարտում են մարսողության գործընթացը՝ մաքրելով արյունը փոխարկումների արդյունքում գոյացած ավելորդ նյութերից. փայծաղը «մրուրն» է քաշում և տարածում իր մեջ իբրև սնունդ իր համար, լեղապարկում հավաքվում է կերակրահյուսվածքից մնացած «դաժանը» (դառը, լեղին, սուրը), իսկ երիկամները վերցնում են «ջրագոյն արիւնն»՝ մնացորդային դառնության հետ միասին (տե՛ս ծնթ. 151, 152): Որից հետո միայն մաքուր և պիտանի արյունը բաշխվում է մարմնի բոլոր մասերին՝ նրանցում սփռված երակների միջոցով:

«Շնչերակական»

Շնչերակական գորությունը կամ շարժումն ապահովում է կենսական ջերմության բաշխումը մարմնի բոլոր մասերով: Ժամանակակից «գարկերակի» համար թարգմանիչներն օգտագործում են «շնչերակ» եզրը, քանզի համարվում էր, որ այն շնչի (պնևմայի) տեղափոխման համար նախատեսված անոթն է: Շնչերակական գորության սկիզբը ընդունելով սիրտը, և հատկապես նրա ձախ փորոքը, որ կոչվում է «շնչական», նեմեսիոսը նկա-

րագրում է, թե ինչպես է շնչերակների միջոցով մարմնի բոլոր մասերով տարածվում ու բաշխվում բնական, կենդանական ջերմությունը: Ճիշտ այնպես, ինչպես լյարդից երակների միջոցով բաշխվում էր սնունդը:

Զուգահեռ ընթացող երեք կազմատարրերը՝ երակը, շնչերակը և ջիղը, անջատվում են համապատասխանաբար կենդանու գործառույթները կարգավորող երեք սկիզբներից. երակը՝ լյարդից, որ երակների, արյան ու կերակրականի սկիզբն է, շնչերակը՝ սրտից, որ շնչերակների և կենսական շնչի սկիզբն է, ջիղը՝ գլխուղեղից, որ սկիզբն է շարժության ու գգայնություն: Ընթանալով միասին, նրանք օգնում են մեկը մյուսին. երակը կերակուր է հատկացնում մյուս երկուսին, շնչերակը բնական ջերմություն և կենդանական շունչ է հաղորդում, իսկ նյարդը՝ գրգռականություն: Այդ պատճառով էլ շնչերակն առանց արյան երեք չի լինում, և ոչ էլ երակն առանց գոլորչանման շնչի: Շնչերակն ընդարձակվում և սեղմվում է ըստ որոշակի «յաւղման և բանի» (23. [3]) շարժման սկիզբն ունենալով սրտից: Ընդարձակվելիս նա գուգահեռ ընթացող երակից «բռնութեամբ» քաշում է «նուրբ արիւն»-ը, որը գոլորչիանալով («վերածխեալ») սնունդ է դառնում կենդանական շնչի համար, իսկ սեղմվելիս՝ ազատվում է իր մեջ գտնվող թանձրույթից («բալատեսակ»-ից)՝ արտազատելով այն մարմնի բոլոր աներևույթ ծակոտիներով, այնպես ինչպես շնչելիս (իմա՝ արտաշնչման ժամանակ) սիրտը բերանի և ունգերի միջոցով ազատվում է իր մեջ կուտակված լորձանման, թանձր շնչից: «Բռնութիւն»-ը, որով «քարչէ գնուրբ արիւնն» (23. [3]), իրականում դիֆուզիան է, որի շնորհիվ իրականացվում է ինչպես արտաքին, այնպես էլ՝ ներքին կամ հյուսվածքային շնչառությունը, երբ զարկերակների թթվածնով հարուստ արյունից կամ թոքաբջջիկներից թթվածինն իր մեծաքանակ պարունակության պատճառով, թափանցում է երակային մազանոթների արյան մեջ: Իսկ նյութափոխանակության վերջնական արգասիք հանդիսացող ածխածինը գազի մեծ քանակը պարտադրաբար («բռնութեամբ») հյուսվածքներից դիֆուզվում է արյուն:

«Ծննդական կամ սերմնական»

Վերարտադրողական («ծննդական կամ սերմնական») համակարգը նույնպես հոգու բանականությունն անհնազանդ մասի ենթակայություն

տակ է: Սեռական հակումը բնական է և մարդու կամքից անկախ, բայց «գործն» մարդու կամքից է կախված, այն հոգեկան գործառույթ է և գտնվում է բանականության վերահսկողության տակ:

Մարդկային մարմնի կառուցման արմատը թաքնված է սերմի գոյացման խնդրի մեջ՝ իբրև մարդկային կյանքի մեկնակետ: Ինչից կազմված է սերմը, դրանից էլ ըստ էության կազմված է ամբողջ մարմինը: «Սերմնական զաւրութեան» գործարաններ են համարվում երակներն ու շնչերակները, որոնց մեջ արյան փոխակերպումից ձևավորվում է նախնական սերմնահեղուկը: Այն դեռ լիարժեք սերմ չէ, հում է և նոսր (հայ թարգմանիչները նկարագրական ձևով են ներկայացրել «սերմնահեղուկ»-ի իմաստը՝ «թանձրատեսակն, սպիտակաթոյրն խոնաւուտ»): Այդ վիճակում այն պարզապես կերակուր է անոթների համար, «քանզի սերմից է նրանց լինելությունը» (24. [2]): Այդ հում և անկատար հեղուկի ավելցուկն է, որ դառնում է «ծննդական» կամ «ծնչական», որն «ի ձեռն բազում շրջադաշտութեանց» արյան հետ բարձրանում է դեպի գլուխը, և այնտեղից իջնում երկու երակներով, որոնց զուգահեռ ընթանում են նաև երկու շնչերակներ: Այս չորսը ներքևում սեռական օրգանի մոտ գնդաձև հյուսվածքային ցանց են գոյացնում (գուցե խոսքը *plexus venosus pampiniformis*-ի մասին է): Ապա բաժանվելով մեկական երակի և շնչերակի (*vena testicularis* և *artetia testicularis*), մտնում են երկու ամորձիների մեջ, որտեղ սերմը ձևավորվում է վերջնականապես: Ամորձիներից արդեն այդ սերմը դուրս է գալիս՝ շնչով հանդերձ, քանի որ, ինչպես նշվեց, այնտեղ էր գտնվում ոչ միայն սերմով լի երակը, այլ նաև շնչերակը:

Ի նկատի ունենալով, որ *artetia testicularis*-ը սկիզբ է առնում ատրտայի որովայնային հատվածից, իսկ *vena testicularis*-ը թափվում է ստորին սիներակ, կարելի է ենթադրել, որ Նեմեսիոսի վկայակոչած անոթները, որոնք շրջանառում են դեպի գլուխ և ցած, հավանաբար ընդհանուր քնային զարկերակն (*arteria carotis communis*) ու ներքին լծային երակն (*vena jugularis interna*) են: Դրանք իրենց ճանապարհին ձևավորում են մի շարք անոթներ, որոնց մեջ պարունակվող արյան խառնումն ու վերաբաշխումը կատարվում է սրտում:

Նեմեսիոսը՝ Հիպոկրատեսի և Գալենոսի նման, վստահ է, որ կանայք նույնպես ունեն նույն սեռական օրգանները, ինչ և տղամարդիկ: Պարզապես դրանք տեղակայված են կնոջ մարմնի ներսում: Ընդդիմախոսելով

Արխատոտելին և Դեմոկրիտոսին, նա պաշտպանում է Գալենոսի կարծիքն այն մասին, որ պտղագոյացմանը մասնակցում է և՛ իգական, և՛ արական սերմը: Երկուսի խառնումից է լինում ծնունդը, այդ պատճառով էլ «զընդ միմեանս լինելն՝ խառնումն ասեն»(24. [3]): Սակայն կնոջ սերմը լիարժեք չէ, այլ «տակավին խոնաւուտ» և, ավելի շուտ, կերակուր է արական սերմի համար: Այնուամենայնիվ, այս երկուսից է արգանդի ծոցում գոյանում («մածանի») մանուկը:

Ապացուցելու համար իր այն կարծիքը, որ սերմնահեղուկը շրջանառում է երակներով՝ բարձրանալով մինչև գլուխ, ապա նոր միայն իջնելով սեռական օրգաններ՝ վերջնական ձևավորման համար, Նեմեսիոսը պնդում է, որ եթե հարականջային տարածքում, քներակին մոտ հատվի ինչ-որ «երակ», կենդանին կդառնա «անսերմն» (տե՛ս ծնթ. 157): 27-րդ գլխում նա կատարում է մեկ այլ հետաքրքիր դիտարկում. այն, որ ամորձապարկ մտնող երակներն անցնում են երիկամներով, և այնտեղից են վերցնում «դաժանութիւն իմն՝ յորդորիչ ցանկութեանն», ինչպես մաշկի քորի «դաժանութիւնն» է, որն առաջանում է մարմնի ներսից: Եվ քանի որ ամորձու «մարմինն» ավելի նուրբ է, քան մաշկը, այն «առուել ի դաժանութենէն խածեալ՝ մոլեցուցանէ զցանկութիւնն» (27. [3]):

Մարմնի խոռոչներում տեղակայված գեղձերն, ըստ Նեմեսիոսի հենք ու նստավայր են ծառայում անոթների համար, որպեսզի հարկադրված շարժումների պատճառով չչեղվի նրանց ընթացքը: Ոսկրերը՝ հատկապես ողնաշարը, ամբողջ մարմնի հենարանն են: Մազի գոյացումը նա համարում է հանգամանքներից կախված, քանզի այն կազմվում է մարմնից դուրս եկող ծխատեսակ հյուսվածքի պնդացման («մածման») արդյունքում:

Կամային շարժումներ

Հոգեկան (անձնական) գորությունները դրսևորում են նաև կամային («ըստ յարձակման») կամ կամավոր («ըստ յօժարութեան») շարժումները՝ սկիզբ ունենալով գլխուղեղն ու ողնուղեղը: Ողնուղեղը գլխուղեղի անմիջական շարունակությունն է և մասը: Նրանցից դուրս եկած ջղերը, կապաններն ու մկանները կամային շարժումների գործարաններն են: Մկանները կազմվում են մարմնից (մկանային հյուսվածքից) միահյուսված

Ջղուտ նյարդերի (τῶν νεύρων ἴνεσιν) և նյարդալարերի (τένων) հետ: Հայերեն բնագրում սրանով այս հատվածի վերլուծությունն ավարտվում է, սակայն հունարեն բնագիրը հավելում է, որ նյարդալարերը տարբերվում են նյարդերից. նյարդերը զգայուն են, գլանաձև, կակղանյութ և իրենց սկիզբն առնում են ուղեղի առաջնային և միջին փորոքներից, իսկ նյարդալարերն ավելի պինդ են, ոսկրային բնությամբ, ինքնին անզգա, բայց շարժող, դրանք դուրս են գալիս գլխուղեղի հետին մասից («փորոքից») և ողնուղեղից, ըստ որում որքան ողնուղեղի հատվածը հեռու է գլխուղեղից, այնքան ավելի պինդ է լինում նյարդալարը և «ջիլքն ի նման է բուսեալք» (26. [2]): Այստեղ ակնհայտորեն խոսքը զգայական և շարժողական նյարդերի մասին է, որոնք տարբերվում են իրարից և՛ կառուցվածքային, և՛ գործառութային առումով: Թեպետ Նեմեսիոսն այս երկրորդ տեսակն անվանում է τένων – ջիլ, սակայն հավելում է, որ ոմանք դրանք զգայական են կարծում նրանց միահայտարարելով ջղերի զգայնության պատճառով:

Յուրաքանչյուր ողից դուրս են գալիս զույգ նյարդեր՝ դեպի աջ և դեպի ձախ ընթացող: Եվ, ընդհանրապես, Նեմեսիոսը՝ կարևորելով, առանձնակի ուշադրություն է հրավիրում մարդու երկկողմ համաչափության վրա: Բացի շոշափելիքից, մյուս բոլոր զգայարանները կրկնակի կազմեց արարչագործը, և դրանց համապատասխան՝ գլխուղեղի առաջնային փորոքները նույնպես զույգ արարեց՝ «վասն գերազանցեալ հոգաբարձութեանն», որպեսզի՝ եթե զգայարաններից մեկը վնասվի, մյուսով հնարավոր լինի պահպանել զգայնությունը: Ձեռքը մարդկային մարմնի հրաշալի օրգան է: Արարիչն այն շնորհել է մարդուն՝ իբրև բանական և արվեստների տիրապետելու ունակ արարածի: Ոտքերը տարածության մեջ տեղաշարժվելու համար են: Նրանց հոդերի որոշակի առանձնահատուկ կառուցվածքի շնորհիվ միայն մարդը կարող է նստել առանց հենարանի, քանի որ նա կարող է ծալել ոտքը երկու ուղիղ անկյունների տակ՝ ազդրային և ծնկան հոդերում:

Բանական հոգու նստավայրը գլխուղեղն է («խելքն»), իսկ նրանում գտնվող հոգեկան շունչը՝ բոլոր զգացողությունների և շարժումների, բոլոր ճանաչողական ու կամային գործընթացների ակունքն ու սկիզբը: Ճանապարհները, որոնցով շունչը մարմնի բոլոր մասերին է փոխանցում զգացողություններ և շարժումներ, նյարդերն են:

Ծնչառության մասին

Նեմեսիոսը հոգեկան գործառույթների թվին է դասում նաև շնչառությունը՝ համարելով այն կամային շարժման տեսակ: Այն իրագործվում է անդադար շարժման մեջ գտնվող շնչերակներով, որոնք ապահովում են շնչառության անընդհատությունը: Ծնչի «տուր եւ առն» երեք պատճառունի՝ կարիքը, գորությունը և գործարանը:

Կարիքն ուղղված է բնական ջերմության պահպանմանը և հոգեկան շնչի սնուցմանը: Ներշնչումը սառեցնում և թեթևակի գրգռում է բնական ջերմությունը, իսկ արտաշնչումը հեռացնում է սրտից ծխատեսակ, թանձր շունչը: Հոգեկան շնչի սնուցումն իրականացվում է միայն ներշնչման միջոցով, երբ ընդարձակված սիրտ է մտնում օդի որոշակի քանակ:

Ծնչառական գորությունը հոգեկան ծագում ունի, քանի որ հոգին ինքն է մկանների միջոցով շարժման մեջ դնում շնչառական հիմնական գործարան համարվող ախոնդանքը (կրծքավանդակ), որի շնորհիվ և որի հետ միասին շարժվում են թոքերը:

Ծնչառական օրգաններ են նաև «խոշոր (անհարթ) շնչերակներն» (τραχεία ἄρτηρία), որոնք ևս թոքի մաս են կազմում: Խոսքը, հավանաբար, շնչափողի և բրոնխների մասին է, որոնց պատը ողորկ է, ինչպես զարկերակներինը, այլ ունի աճառային օղեր, բայց քանի որ նրանք նույնպես շունչը տեղափոխող անոթներ են, դարձյալ կոչվում են շնչերակներ, միայն թե այս դեպքում արդեն «խոշոր» կամ անհարթ շնչերակներ: Թոքի կազմի մեջ նույնպես բրոնխի աստիճանաբար փոքրացող ճյուղավորումները շարունակում են կոչվել «խոշոր շնչերակներ», ի տարբերություն զարկերակային ճյուղավորումների, որոնք կոչվում են «ողորկ շնչերակներ»: Այսպիսով, թոքը բաղկացած է չորս կառուցվածքային տարրից՝ խոշոր և ողորկ շնչերակներից, երակներից և թոքի փրփրանման մարմնից (հյուսվածքից), որը տեղակայված է շնչերակների և երակների արանքներում՝ դառնալով նրանց համար հենք և կապ: Թոքի մարմինն իր մեջ է քաշում օդն այնպես, ինչպես լյարդը՝ ստամոքսահյութը: Եվ ինչպես լյարդն է իր բլթակների ծայրերով գրկում ստամոքսը, որը կարիք ունի ջերմության, այդպես էլ թոքերը գրկում են սիրտը, որը կարիք ունի հովացման՝ շնչի միջոցով: Խոշոր շնչերակին, որ հավանաբար շնչափողն է, հպվում է երեք

մեծ աճառներից կազմված «քիմքը»: Այստեղ խոսքն, անկասկած, կոկորդի մասին է: «Քիմք» (βρόγχος) բառի աղբյուրն այս դեպքում կամ ձեռագրական վրիպակն է, կամ եզրույթի՝ ժամանակաշրջանին բնորոշ ա՛յլ իմաստը: Կոկորդը շարունակվում է խոչափողով (φάρυγγ), այսինքն՝ ըմպանով: Շնչառական ուղու սկիզբը ունգերն ու բերանն են: Մուտք գործելով օրգանիզմ, օդն անցնում է մաղանման ոսկրի միջով, որպեսզի առատ հոսքով ներշնչված օդի որակական ավելցուկները չվնասեն ուղեղը (27/[2]), քանի որ ունգերը նախատեսված են ոչ միայն շնչառության, այլ նաև հոտառության համար:

Կամքի ազատության մասին

Չափազանց տպավորիչ է Նեմեսիոսի՝ մարդու առանձին հոգեկան ունակությունների վերլուծությունը, և առանձնապես նրա ազատ ընտրության իրավունքի կամ ազատ կամքի դրսևորման եռանդուն պաշտպանությունը: Դա հատկապես կարևորվում էր երկի ստեղծման շրջանում, երբ կամքի ազատության և աստվածային նախախնամության մասին տարբեր կարծիքները սուր բանավեճերի առիթ էին ողջ քրիստոնեական աշխարհում: Կարծիքները խիստ բևեռացված էին՝ մարդկային կամքի բացարձակ ազատությունից մինչև աստվածային նախախնամության լիակատար տիրապետություն: Այդ բանավեճերին Նեմեսիոսը ոչ մի կերպ չի անդադրադառնում, այլ միայն հանգամանորեն վերլուծում է հարցի մասին իր մտեցումները:

Քանի որ կամքը դրսևորվում է մարդու կատարած որևէ գործողության ժամանակ, նա նախ և առաջ սահմանում է, թե ինչ է գործը: Դա «բանական ներգործություն» է, որին հետևում է կամ գովք կամ պարսավանք: Որոշ դեպքերում գործն առաջացնում է հեշտություն, երբեմն էլ՝ տրամոսություն: Երբեմն դրանք գործողին հաճելի են, երբեմն էլ՝ «փախչելիք»: Կան, որ միշտ են հաճելի (կամ փախչելի), կան, որ՝ երբեմն հաճելի են և երբեմն փախչելի: Բացի այդ, որոշ գործեր ներվում են և թողության են արժանանում, մյուսները՝ «ատեցեալ լինին և տանջին»(28. [1]) (այսինքն՝ պատժվում են):

Գործողութիւնները լինում են կամավոր և ակամա: Կամավոր գործողութիւնն այն է, որին հետևում է գովասանք կամ պարսավանք, կատարվում է հեշտությամբ, և այն միշտ, կամ գոնե գործելիս հաճելի է գործողին: Իսկ ակամա գործողութիւնն արժանանում է թողության կամ ողորմության, և առաջացնում է տրտմութիւն, ոչ թե հաճույք: Ակամա գործողութիւնը կարող է լինել հարկադրաբար կամ անգիտությամբ: Հարկադրաբար կատարված գործի դրդապատճառն «արտաքուստ է»: Այն առաջանում է մարդու ցանկութիւններից անկախ, արտաքին հանգամանքների դրդմամբ: Երբեմն էլ մարդը կարող է կամավոր իրականացնել որևէ գործողութիւն, սակայն չցանկանալով, այլ ստիպված լինելով: Ինչպես օրինակ, նավաբեկության ժամանակ նավավարը հարկադրված է ծովը նետել բեռը: Կամ էլ երբեմն հարկ է լինում անպատվաբեր, ամոթալի իրավիճակի մեջ հայտնվել կամավորաբար՝ հայրենիքի կամ ընկերոջ փրկության համար: Այսինքն, կամ մեծ չարիքի սպառնալիքից ավելի փոքր չարին ընդառաջ գնալ, կամ հանուն մեծ բարիքի՝ ավելի փոքր չարիք հանձն առնել: Ըստ էութեան, նման դեպքերում նա կամավոր է գործում կայացնելով սեփական որոշումը, բայց կատարում է մի բան, որ հաճելի չէ իրեն: Լինելով կամավորի և ակամայի խառնուրդ, նման գործերն այնուամենայնիվ, ենթարկվում են գովասանքի կամ պարսավանքի, բայց ըստ նեմեսիսի՝ դյուրին չէ որոշելը, թե որն է ավելի ընդունելի՝ ընտրել ամոթալին տրտմելի փոխարեն, թե՛ հակառակը: Իսկ սրանից ավելի վատ է «անթուլաբար չարչարելն», այսինքն՝ կտտանքներն ու տանջանքները: Այլ է, երբ զարհուրում ենք ակնկալվող չարից, և այլ՝ երբ այն արդեն վրա է հասել: Այդպես պատահեց մարտիրոսներից («վկայից») ոմանց հետ, որոնք սկզբում հանդուրժում էին, բայց հետո թուլացան տանջանքներից՝ «չարաչար խաւթացեալք»:

Ակամա գործողութիւնը կարող է առաջանալ նաև անգիտությամբ, որ երկու ձևով է արտահայտվում՝ «ոչ ի կամաց» (չկամենալով) և ակամա (պատահաբար): Ակաման, որ «ոչ ի կամաց» է, խառը բնույթ ունի: Նրա շարժառիթն արտաքին է, անկախ է մարդու կամքից, սակայն վախճանը կամավոր է, և դա որոշակի պատասխանատվութիւն է ենթադրում: Երբեմն էլ ակամայից գործում ենք՝ չգիտակցելով, թե ինչ ենք անում: Այստեղ էլ, եթե չգիտակցելու պատճառը մեր մեջ է (հարբածութիւն, բարկու-

թյուն), մենք դարձյալ պատասխանատվութիւն ենք կրում դրա հետեանքների համար: Ի վերջո, կարող ենք գործել չիմանալով, պատահաբար, երբ անգիտութեան պատճառը մեր մեջ չէ, այլ իրավիճակը ստեղծվում է հանգամանքների բերումով (նետաձգութեան վարժանքի ժամանակ պատահաբար նետահարել տեղանքում անսպասելի հայտնված մեկին): Սակայն դրա պատճառն էլ հաճախ անուշադրութիւնն է լինում, որ նույնպէս արժանի է պարսավանքի: Այսպիսով, լիովին ակամա գործողութիւնն իր ամբողջ ընթացքի մեջ, հազվադեպ է պատահում, իսկ ընդհանուր առմամբ՝ կամավորապէս ենք անգիտանում:

Եթե ակաման անգիտութեամբ էր և հարկադրաբար, կամավորը՝ հակառակը, լինում է ո՛չ հարկադրաբար, երբ գործողութեան դրդապատճառը, նախաձեռնութիւնը, սկիզբը գործողի մեջ է, և ո՛չ անգիտորեն՝ քանի որ նա գիտի գործի բոլոր մանրամասները:

Բնութեանական երևույթները (մարտողութիւնը, աճը) Նեմեսիոսը չի համարում ո՛չ կամավոր, ո՛չ էլ ակամա: Քանի որ դրանք մեզնից կախված չեն, այլ ինքնաբերաբար են կատարվում: Սրտմտութեան և ցանկութեան հետ կապված ամեն բան կամավոր է, քանի որ նախատեսածով ստացվելիս՝ հեշտութիւն է առաջանում, իսկ վրիպելիս՝ տրամութիւն: Երկու դեպքում էլ նրանց ուղղորդում է կիրքը, իսկ այդ երկու տեսակ կրքերի արանքում ինչ-որ տեղ գտնվում է բարոյական առաքինութիւնը: Դա այն ճիշտ ընտրութիւնն է, որն իր համար պարտավոր է կատարել յուրաքանչյուր բանական մարդ:

Ազատ կամքը կամ նախընտրութիւնը («նախայաւժարութիւն») միշտ կամավոր է, սակայն այն պարզապէս կամավոր գործողութիւն չէ, քանի որ կամավոր գործած ամեն բան չէ, որ նախընտրելի է (գործողի համար): Այն հարկավոր ցանկութիւն էլ չէ, քանի որ հաճախ բարկութիւնից կամ ցանկութիւնից դրդված անում ենք բաներ, որոնք բնավ նախընտրելի չեն մեզ համար: Այն նաև «ախորժումն» (ցանկալ, ուզել) չէ, քանի որ այն ամենը, ինչ ախորժում ենք, ոչ միշտ է պատշաճ նախընտրութեան համար: Ախորժել կարող ենք մեր կարողութիւններից դուրս գտնվող ինչ-որ բան, որը մեզնից չի կախված: Ախորժումը վերաբերում է գործողութեան ելքին (վախճանին) և ոչ դեպի այդ ելքը տանող ընթացքին: Իսկ նախընտրութիւնը կախված է մեզնից, և իր մեջ ներառում է նաև դեպի վերջնական արդիւնք տանող ճանապարհը:

Նախընտրությունը նաև կարծիք չէ, քանի որ կարծիքը ևս վերաբերում է ոչ միայն այն ամենին, ինչը մեզնից է կախված՝ մասնավոր և ժամանակավոր իրերին, այլ նաև հավերժականներին և մեր ենթակայությունից դուրս ու հեռու երևույթներին: Բացի այդ, կարծիքն ընդհանուր է և կարող է լինել ճիշտ կամ սխալ, իսկ նախընտրությունը վերաբերում է առանձին երևույթներին, և չենք կարող այն անվանել ճիշտ կամ սխալ, դա պարզապես մեր ընտրությունն է: Այն նաև խորհուրդ չէ (խորհրդածություն, քննարկում): Խորհուրդը ինչ-որ իրերի կամ խնդրի մասին քննություն է, իսկ նախընտրությունը վերաբերում է այդ քննության արդյունքներից («նախադատելոց») բխող եզրակացությունը: Հատկապես դրանով է հնարավոր լինում կատարել ընտրությունը:

Այսպիսով, նախընտրությունը խորհրդի, դատողության և հարկավոր ցանկության խառնուրդ է: Այն ինչ-որ մի բանի նախապատվությունն է մյուսի նկատմամբ («նախալուծարական է՝ մին քան զմիևսն յաւժարականն»): դա է մատնանշում նաև հունարեն բառի ստուգաբանությունը՝ προαιρετόν բառը կազմվում է αἰρετόν – «ընտրեալ, յաւժարեալ» գոյականացված ածականից և πρό-նախդրից, որ ունի «նախորդելու, առաջին հերթին արվելու» իմաստ): Ոչ ոք չի որոշում («դատէ»)՝ առանց քննելու կամ տրամաբանելու («խորհեսցի»), և չի ընտրում կամ վճռում («յաւժարի»)՝ առանց որոշում կայացնելու («դատեսցի»): Այս ամենից հետևում է, որ ընտրությունը տրամաբանված, վերլուծված ցանկություն է («ցանկութիւն խորհրդական») կամ ցանկալի միտք, խոհ («խորհուրդ ցանկական»), որ մեզնից է կախված, քանզի հակված ենք ընտրել նախընթաց դատմամբ գերադասելին («նախադատեսցես»):

Տարբերակելով «խորհուրդն» ու «խնդիրը» (քննումը և ուսումնասիրությունը), նեմեսիոսը նկատում է, որ թեև քննելիս նույնպես ուսումնասիրելով, հետազոտելով են քննում, բայց այս երկու հասկացությունները խիստ տարբեր են: Յուրաքանչյուր քննություն նաև ուսումնասիրություն է, քանի որ քննությունը հետազոտության ձև է: Երբեմն էլ «խորհրդի»՝ քննարկման, խորհրդակցության, փոխարեն ասում են՝ «նկատել» (այսինքն՝ գլխի ընկնել, ըմբռնել, մտմտալ), կամ «հայել» (դիտարկել, խորհրդաձեռել, մտորել): Մենք քննարկում, խորհրդակցում ենք («խորհում») այն ամենի առիթով, ինչը հայտնի է մեզ կամ մեզնից է կախված, մեր կա-

ըողությունների սահմանում է, բայց որի վախճանը (եւքը) դեռևս անհայտ է: Քանի որ եթե մի բան ակնհայտ և անկասկած է, մենք այլևս չենք խորհրդակցում և չենք քննարկում այն: Չենք քննարկում նաև տեսական կոչվող իմաստասիրությունների (Աստծո և այլն) և մշտական ու նույնօրինակ պահպանվող երևույթների (արևելքի, արևմուտքի և այլն), կամ էլ՝ բնական և սովորական երևույթներին վերաբերող որևէ գործողութայն վերջնական արդյունքի մասին: Եվ հիմնականում, ոչ էլ գիտելիքի կամ արվեստի գործերին է վերաբերում խորհուրդը, քանի որ նման բաները սահմանված են («սահմանեալ են»), բացառությամբ որոշ նպատակային գործերի, որոնք են «բժշկական»-ը, «կրթական»-ը և «ղեկավարական»-ը: Խորհուրդը չի վերաբերում արդյունքին, այլ դեպի արդյունք տանող ընթացքին: Իսկ վախճանը, եւքը կարող է լինել կա՛մ այսպիսին, կա՛մ դրա հակառակը:

Ճակատագրի մասին

Ճակատագրի մասին խոսելիս, Նեմեսիոսը խիստ քննադատում է այն մարդկանց, ովքեր կյանքում և տիեզերքում կատարվող ամեն ինչի առաջացման պատճառը վերագրում են աստղերի շրջաբերությունը: Այդ դեպքում, գտնում է նա, անտեղի են օրենքները, ավելորդ դատաստանները, որ պատժում են վնասողին, անիմաստ են գովասանքն ու պարսավանքը, անօգուտ են աղոթքները: Մի կողմ է մղվում նաև նախախնամությունը՝ բարեպաշտությունը հանդերձ: Ստացվում է, որ մարդը միայն գործիք է երկնային շրջաբերության համար, որով էլ ընթացքի մեջ են դրվում մարդու թե՛ մարմնական, և թե՛ հոգեկան գործողությունները: Այսպես կարծողները բացառում են, որ մեզանից, մեր կամքից որևէ բան է կախված, և այսպիսով լիովին ապականում և նվաստացնում են Համայնը, ողջ տիեզերքը: Քանզի անիրավ են նույն աստղերը, որ մեկին ստեղծել են այլասերված, մյուսին՝ մարդասպան: Նույն կերպ բացատրելի է չարի բնությունը մարդու մեջ: Այսպիսով, այս կարծիքի կողմնակիցներն ըստ էության արարչին են մեղադրում այն ամբողջ անկատարության համար, որ հատուկ է մարդուն և առկա է նրա գործողություններում: Ոմանք էլ (ստոիկյանները,

Քրիստիպապոսը, Փիլոպատոսը) կարծում են, որ կան բաներ, որ մեզնից են կախված, իսկ որոշ բաներ՝ ըստ ճակատագրի են, քանզի յուրաքանչյուր արարածի ճակատագիրը շնորհել է որակների ինչ-որ հավաքածու («քարի ի վայր բերումն, հրոյ ի վեր բերումն, իւրաքանչիւր տնկոց զայսպիսիսն բերել պտուղս, կենդանւոյ զհաւանելն և զյարձակելն»), և եթե արտաքինից ոչինչ չի խանգարում, նրանք ընթանում ենք ըստ ճակատագրի: Բայց այս դեպքում նույնպես ստացվում է, որ ամեն բան ըստ ճակատագրի է լինում թվալով, թե մեզնից էր կախված, և մենք սեփական կամքով այն իրականացրինք: Դարձյալ բացակայում է մարդու պատասխանատվությունն իր կատարած գործողությունների, իր մտքերի և ցանկությունների համար:

Եգիպտացի իմաստուններն էլ՝ համարելով, որ ճակատագիրն իրականացնում են աստղերը, կարծում են, որ այնուամենայնիվ հնարավոր է փոխել այն՝ «հաշտեցուցողականների» կամ «հանդարտացուցիչների» միջոցով, որոնց պետք է դիմել աղոթքներով և պատարագներով՝ հնարավոր դարձնելու համար հաշտությունը ճակատագրի հետ: Այսինքն, այս դեպքում արդեն ոչ թե հարկավորների, այլ հնարավորների շարքին են դասում ճակատագիրը, բայց մարդու իշխանությունն տակ են դնում միայն աղոթելն ու աստծուն ծառայելը, և ուրիշ ոչինչ: Այդ դեպքում որտեղի՞ց և ի՞նչ պատճառով են լինում մարդկանց մտավոր, հոգեկան և մյուս անհավասարությունները: Նաև այդ նույն ճակատագիրը ոմանց դարձնում է աստծո սպասարկու, ոմանց՝ ոչ: Այս ամենն, այսինքն՝ հավասարների միջև անհավասար բաշխումն, ըստ Նեմեսիոսի, անարդար է և անիրավ, և հետևաբար ոչ արժանի է, որ էլ անարժան շնորհի:

Հելլենացի իմաստասերներն էլ կարծում են, որ գործողությունների նախընտրությունը («յօժարութիւն») մեզնից է կախված, բայց ելքը կանխորոշված է ճակատագրով: Նեմեսիոսը մասամբ համաձայն է այս մտքի հետ, որ թեպետ մեզնից է կախված գործելը, միշտ չէ, որ մեզնից է կախված նաև այդ գործերի ելքը: Սակայն այս ամենն անմիջականորեն ճակատագրի հետ կապելն ընդունելի չի համարում: Նա կարծում է, որ գործողությունների ելքի համար ավելի շուտ պատասխանատու է նախախնամությունը, քան թե ճակատագիրը, քանի որ նախախնամությունն է՝ բաշխել յուրաքանչյուրին ըստ նրա օգուտի: Իսկ ճակատագիրը՝ լինելով անվերեպ պատճառների ինչ-որ «յարմարումն», համաձայնություն, ինչպես

սահմանում են այն ստորկյանները, այսինքն՝ անվրեպ պատճառների հերթագայում և կապակցվածություն, գործողությունն իր վախճանին է հասցնում ոչ թե ըստ գործողի օգուտի, այլ ըստ սեփական ընթացքի և անհրաժեշտություն («ըստ հարկի»):

Անդրադառնալով Պլատոնի դատողություններին ճակատագրի մասին, Նեմեսիոսը ներկայացնում է դիտարկումներ նրա մի շարք երկերից: Պլատոնն ընդունում է ճակատագրի երկու դրսևորում՝ 1. ըստ էության, որը համատիեզերական հոգին է, և 2. ըստ ներգործության, որ աստվածային անվրեպ օրենքն է, որից անհնար է փախչել: Այդ պատճառով էլ սա կոչվում է «անփախչելի դրուժիւն»: Իրականում, Պլատոնն այս օրենքն անվանում է Ադրաստեայի օրենք: Այդպես էին անվանում Նեմեսիսին՝ վրեժխնդրության (այս դեպքում՝ անխուսափելի (ἀδραστος) հատուցման) աստվածուհուն: Եվ այս օրենքն իսկզբանէ Բարձրագույն Աստուծոց տրվել է «Ամենեցունց անձին» (համատիեզերական հոգուն) որպես համընդհանուր կարգ, ըստ որի է «եղեալքս»: Սակայն ճակատագիրն ու նախանամությունը Պլատոնի մոտ միախառնվում են, քանի որ երկուսն էլ գործում են այդ նույն օրենքով և ներառված են նրա մեջ՝ երբեմն գործելով «ըստ ենթադրությունից» (καθ' ὑπόθεσιν – secundum propositum), իսկ երբեմն էլ՝ «յենթադրությունէ» (ἐξ ὑποθέσεως – a proposito), քանզի որոշ երևույթների նախնական պատճառը՝ սկզբունքի ձևով, «ըստ ենթադրությունից» է դրված մարդու մեջ, այնպիսիք, ինչպիսիք են մեր մեջ «հաւանութիւնք, դատողութիւնք, յարձակմունք», իսկ որոշ երևույթներ անհրաժեշտաբար հետևում են այս ենթադրյալներին: Գործերի «յօժարութիւնն», այսինքն՝ նախընտրություն կատարելու հնարավորությունը, որ մեր մեջ է, մեզնից է կախված, մեր տնօրինության տակ է՝ ըստ ենթադրության է, իսկ դրանից հետևող գործողությունների ելքը՝ ենթադրությունից, և հետևաբար, մեզնից չի կախված, այլ «հարկ»-ից: Դրանք հավերժից չեն ըստ ճակատագրի սահմանված մեզ համար, այլ առաջացել են մեր մեջ եղած «նախկնագոյն» պատճառից: Նեմեսիոսը համաձայն չէ Պլատոնի այն կարծիքի հետ, որ գործողությունների ելքը միշտ որոշվում է «ի հարկէ»: Այդ մտայնությունը չի համապատասխանում նաև Սուրբ Գրքին, քանզի նախանամությունը չի գործում «հարկ»-ից ելնելով («հարկաւորապէս»), այլ՝ հնարավորից («հնարավորապէս»): Հակառակ դեպքում կիմաստագրկվեր

աղոթքների մեծ մասը. չէ՞ որ այդ դեպքում իմաստ կունենար աղոթել միայն գործերի սկզբի համար, իսկ հետո արդեն աղոթքը «նանիր» է: Բայց մենք աղոթում ենք նաև գործողության ընթացքի և ելքի համար, քանի որ դրանց իրականացման պատասխանատվությունը նախախնամությունն ենք վերագրում, որը գործում է ոչ թե անհրաժեշտաբար (եթե նավարկում են, ուրեմն անպայման կենթարկվեն նավաբեկության), այլ հնարավորապես (կա՛մ կենթարկվեն նավաբեկության, կա՛մ ոչ): Քանզի Աստված Հարկի ենթակայության տակ չէ, ավելին, նա նաև Հարկի արարիչն է, հետևաբար, նա դուրս է ամեն Հարկից, նա տեր է և ստեղծիչ, նրա կամքը գերակա է ողջ տիեզերքում: Այս ապացուցելու համար նա նույնիսկ մեկ անգամ կանգնեցրեց աստղերի և արեգակի ընթացքը, որոնց մշտական և նույնօրինակ շարժումը Հարկով էր սահմանված, և այդ մասին գրված է Սուրբ Գրքում (Յէսու Ժ 13-14):

Ի վերջո Նեմեսիոսը փորձում է հստակեցնել, թե Համայնում ում վրա ինչ պարտականություն կա դրված:

Աստծո գործ է էությունը և նախախնամությունը:

Հարկինը՝ մշտապես նույնօրինակների շարժումը:

Ճակատագրինը՝ որ այն, ինչ Հարկով է պայմանավորված, իր միջոցով իրականանա, քանզի ճակատագիրն ինքը Հարկինն է:

Բնության գործը լինելությունն է, աճումը, ապականությունը, տունկերն ու կենդանիները:

Բախտինը՝ պակասն ու ակնկալիքը, քանի որ բախտը սահմանվում է իբրև երկու պատճառների հանդիպում և ընթացք, որոնք նախընտրությունամբ («յօժարությունամբ») ունենալով իրենց սկիզբը, բերում են բոլորովին այլ ելքի, քան բնականորեն նախատեսվածն էր (օրինակ՝ երբ մարդ գերեզման փորելիս գանձ է գտնում):

Իսկ ինքնամատուցը կարգավորում է այն դիպվածները, որոնք կատարվում են առանց բնության և արվեստի (այսինքն, բնականորեն սպասված չեն և ոչ էլ նրանց իրականացման համար որոշակի հնար է գործի դրված մարդու կողմից):

Այն, ինչ մարդու կամքից է կախված

Իսկ ի՞նչն է, որ մարդու տիրապետության տակ է և կախված է նրա կամքից:

Եթե մեր տիրապետության տակ են որոշակի ունակություններ, ապա դրանց համապատասխանող գործողությունների ընթացքը նույնպես մեր տիրապետության տակ է: Օրինակ՝ առաքինություններին համապատասխանող գործողությունները և առաքինություններն իրենք: Կարելի է նաև այսպես ասել՝ խորհելն ու մարզվելը մեր իշխանության տակ են («մեր մեջ են»): Իսկ դրանք պայմանավորված են որոշակի ունակություններով, որոնք նույնպես մեր իշխանության տակ են: Հետևաբար այդ ունակություններին համապատասխան բոլոր գործերը ևս մեզնից են կախված: Արդար ունակություն ունեցողը արդար կգործի, իսկ անիրավն՝ անիրավ: Այն, որ շատ բաներ մեզնից են կախված, այդ մասին վկայում են հորդորներն ու խրատները: Չէ՞ որ ոչ ոք չի հորդորում չծարավել կամ չթուչել: Որովհետև դրանք կախված չեն մեզանից: Ակնհայտ է, որ հորդորն ուղղված է մեզանից կախված երևույթներին: Բացի այդ, եթե ոչինչ մարդու տնօրինության տակ չէ, ավելորդ են դառնում բոլոր օրենքները: Քանզի ամեն ազգ վարվում է իր օրենքներին համապատասխան, իմանալով, որ իրավասու է վարվել այնպես, ինչպես օրինադրված է:

Ընդհանրացնելով՝ կարող ենք ասել, որ այն ամենը, ինչը կամավորաբար իրագործում ենք ինքներս մեր միջոցով, առաջ բերելով գովասանք կամ պարսավանք, և որոնց վերաբերում են հորդորներն ու օրենքները, մեր տնօրինության տակ են և մեզնից են կախված: Դրանց են պատկանում բոլոր հոգեկան երևույթները, և այն ամենը, որոնց մասին խորհում ենք՝ անե՞լ, թե՞ չանել: Ինչպես նաև արհեստները:

Ոմանք էլ կասկածի տակ են դնում մարդու անձնիշխանությունը՝ վկայակոչելով Սուրբ Գիրքը, թե՛ էլ ինչու է ասվում. «զոչ ի մարդոյն ի վերայ գոլ զճանապարհս իւր» (Յոբ Ա. 5) և «ի նանիր են խորհուրդ մարդկան» (Երեմիա Ժ. 23): Ոչ թե հարստանալու կամ աղքատանալու, բնութայամբ առողջ կամ ուժեղ լինելու կամ էլ պատահական բարիքների և նախախնամությունամբ իրենց վախճանն ունեցող գործերի վրա ունենք իշխանություն, կարծում է Նեմեսիոսը, այլ նրանց, որոնք կապված են առաքինության և չարության, նախընտրության (նախալուծարության) և չար-

ժուժների հետ, և որոնց հակադիրը նույնպես հնարավոր է իրականացնել: Բոլոր գործերի առաջնորդը, մեղքերի և արդարագործության սկիզբն ազատ կամքն է կամ նախընտրության հնարավորությունը, և ցանկացած գործի հետ միասին, նաև նա է ենթակա դատաստանի: Երբեմն էլ մարդու բնածին «չար» խառնվածքն է նրան մղում դեպի սխալ ընտրություն: Սակայն այն ևս փոփոխելի է ճիշտ դաստիարակությամբ, կրթությամբ և ճիշտ սննդակարգով: Իսկ ովքեր այդ չեն անում և չեն ուղղում իրենց ընթացքը, կամավորապես են մեղանշում:

Մարդու անձնիշխան էության հիմքում դնելով նրա բանականությունը, նեմեսիսը զարմանալի դիպուկ է նկարագրում բարեշրջման (էվոլյուցիա) պատճառն ու ընթացքը: «Եղական»-ներին (արարածներին) բնությունը է տրված փոփոխելիության ու փոխակերպման հատկությունը, հատկապես նրանց, որ ստորակա նյութից են ստեղծված, քանզի եղելության սկիզբը փոխակերպումն է, որովհետև ստորակա նյութի այլափոխումից է լինելությունը¹⁸: Այդպիսի բազմաթիվ փոխակերպումներ կարելի է տեսնել՝ հետևելով բույսերի, կենդանիների, թռչունների զարգացմանը: Այդ պատճառով մարդը ևս՝ բանական, անձնիշխան և իր գործերին տեր լինելով հանդերձ, նույնպես ստորակա նյութից է կազմված, որպեսզի ունակ լինի փոփոխությունների և զարգացման: Հետևաբար մարդն, «ի հարկէ» (անհրաժեշտաբար) և՛ անձնիշխան է, և՛ փոփոխելի: Փոփոխելի՝ որովհետև «եղական» է, և անձնիշխան՝ որովհետև բանական: Ստորակա նյութից կազմվածները փոփոխության են ենթարկվում երկու եղանակով՝ ըստ նյութի և ըստ լինելության: Իսկ որոնք ստորակա նյութից չեն, միայն մեկ եղանակով են փոփոխվում՝ ըստ լինելության: Վերջիններս (որ աննյութ են), որքան «յերկրաւորքս» են (իրենց լինելությամբ և գործունեությամբ մոտ են երկրայիններին) և մասնակից են մարդկային կյանքին, այնքան ավելի գործական են իրենց բնույթով, և ավելի փոփոխելի, քան մյուսները (մյուս աննյութական էակները): Իսկ որոնք իրենց բնության «ծայրութեամբ» Աստծուն են ավելի մոտ՝ ամենևին հեռանալով նյութից, մնում են անփոփոխելի լինելով անձնիշխան. անձնիշխան, որովհետև բանական են, և անփոփոխելի, քանի որ հեռու են ստորակա նյութից:

¹⁸ Տե՛ս 40. [1] «Եւ եղականացս՝ բնաւորակից լինել փոխադրութիւն եւ յեղումն, մանաւանդ՝ որք ի ստորակայիս նիւթոյ եղեալք, քանզի սկիզբն եղելութեանն՝ յեղումն է, զի յայլալութենէ ստորակայիս նիւթոյ է լինելութիւն»:

Եվ բնավ հարկ չկա մեղադրել Աստծուն, որ մարդուն չի ստեղծել չարութեան անընդունակ, այլ ստեղծել է անձնիշխան: Դա նույնն է, եթե մեղադրենք նրան, որ մարդուն բանական է ստեղծել, և ոչ անբան: Մարդն, ըստ Նեմեսիոսի՝ իսկզբանէ «հաճելի» է արարվել Աստծո կողմից, հեռու ամեն տեսակ չարութեանից: Եվ մարդու բնածին գորութեաններն այժմ էլ նույնն են: Մարդն ինքն է դրանք հոժարակամ փոխում իր կյանքի ընթացքում: Նույն մեկ գորութեանն է դրված երկու տարբեր ունակութեանների հիմքում, ասենք՝ ստելու և ճշմարտախոսելու, վավաչոտելու և պարկեշտանալու: Մարդն է որոշում, թե որ ուղղութեամբ կդրսևորի այդ գորութեանը: Հետևաբար, չարը, վատը, սխալը բնավ էլ բնածին գորութեանը չէ, այլ հոժարաբար ձևավորած, ձեռքբերովի ունակութեանն է: Զորութեանն անուսանելի է, իսկ ունակութեանն՝ ուսմամբ:

Նախախնամության մասին

Ի վերջո, նախախնամութեան իրավասութեան տակ է Համայնի հարամնայութեանը, է՛քրի դիրքն ու կարգը պահպանելը, միշտ նույնօրինակ աստղերի շրջաբերութեանը, տարվա, ժամերի պտույտը, գիշերվա և ցերեկվա համապատասխանութեանը, տարվա եղանակների հետ կապված նրանց համամասնորեն երկարելն ու կարճանալը: Ինչպես նաև՝ հանցանքին հետևող պատիժը կամ գաղտնի մեղքերի ի հայտ գալը հանգամանքների բերումով: Պատահական չէ նաև մարմինների կազմութեանը, դրանց մասերի չափակցութեանների և համապատասխանութեան մշտապես նույնակերպ պահվելը: Նախախնամութեան մասին «աղաղակէ» գույների այս զանազանութեանը: Այն բացահայտում են նաև աղոթքներն ու պատարագները: Քանզի Աստված բարերար է և, բարերար լինելով, բարեգործում է և հետևաբար նախախնամում: Նախախնամութեանն արարած չէ, որն ընդամենն ի վիճակի է լավագույնս ստեղծել ինչ-որ բան, այլ նա նաև հոգ է տանում իր ստեղծածի համար հետագայում: Նախախնամութեանն է նաև յուրաքանչյուր տեսակի ծնունդը միայն իր սերմից, և մարդկանց զանազանութեանը իրարից: Չէ՞ որ չփոթալի անգիտութեան և խավարի մեջ կհայտնվեին մարդիկ, եթե բոլորը նման լինեին իրար, ոչ յուրային ճանաչեին, ոչ թշնամի: Ոչ ոք չէր տարբերի իր մորը կամ քրոջը՝ գերծ մնալու

Համար արյունազդեթյունից, կարելի կլիներ հափշտակել և չար գործել ակնհայտորեն՝ առանց հայտնաբերվելուց և պատժից վախենալու: Մարդը նման կլիներ կույրի: Սակայն յուրաքանչյուր մարդ տարբերվում է մյուսներից ոչ միայն իր տեսքով, այլ ձայնով, կերպով, շարժումով: Այսպիսով, Նեմեսիոսը նախախնամությունը սահմանում է իբրև Աստծո էություն մեջ եղածներին հպատակվելը (յԱստուծոյ յէսս եղեալ հպատակումն-41. [8]), կամ Աստծո կամքը, որով բոլոր է՛երն ունենում են իրենց համար պատեհ արդյունքը (41. [8]): Իսկ քանի որ դա Աստծո կամքն է, ուրեմն պետք է և՛ ճիշտ լինի, և՛ գեղեցիկ, և՛ աստվածավայելուչ: Լավագույնս պետք է լինի:

Արդ Աստված նախախնամող է, իսկ նախախնամությունը՝ նրա կամքը: Բայց ինչպե՞ս է նա գործում՝ մասնավոր ձևով, յուրաքանչյուր իրավիճակին համապատասխան, թե՞ համընդհանուր և որոշակի կարգով: Հիմք ընդունելով Պլատոնի «Գիրք օրինաց»-ը և «Հասարակապետութիւն»-ը (Գլ. Ժ.), Նեմեսիոսը նկարագրում է վերջինիս մոտեցումն այս հարցին: Պլատոնն ընդունում է նախախնամության երեք տեսակ. 1. Առաջին, նախնական, Անստեղծ Աստուծուց եղած նախախնամությունը: Իսկ նա նախախնամում է նախատեսությունները, տիեզերական ողջ կառույցը՝ երկինքն ու աստղերը, և նախախնամում է նա համընդհանուր, նույն օրենքներով, որ հավասարապես բոլորի համար են, 2. Անհատ կենդանիներին, բույսերին և մյուսներին, որոնք լինելությամբ և ապականությամբ են, նախախնամում են երկնի շուրջ գոյող երկրորդային աստվածությունները: Արիստոտելն այսպիսի լինելություն է վերագրում արեգակին և կենդանատեսակների շրջագայությանը: 3. Երկրում մարդկանց գործերի պահպան կարգված են որոշ «գեղեցիկ» (ոգեղեն անմարմին էակներ), որոնք վերահսկում և առաջնորդում են գործականների ելքն ու վախճանը, ինչպես նաև կենցաղի բնական, նյութական և գործարանական կոչված բարիքները՝ իրականացնելով երրորդ նախախնամությունը: Երկրորդ և երրորդ նախախնամություններն, ըստ Պլատոնի՝ նույնպես կարգավորվում են Առաջին Աստծո կողմից, որը համարվում է ամենայնի կարգողը:

Առաջին Աստծո գործառույթների հետ Նեմեսիոսը լիովին համաձայն է: Բայց երկրորդը նա չի համարում նախախնամություն, այլ՝ ձակատագիր և Հարկ: Իսկ երրորդն, ըստ նրա՝ հիմնականում գտնվում է մարդու տնօրինության տակ՝ նրա ազատ կամքին երթակա:

Այս ոլորտը դիտարկողները հիմնականում սխալվում են տեսական երևույթների հարցում, մասնավորապես՝ հոգու անմահություն, քանի որ ավելի շատ խոսում են նյութական բարիքների մասին, դատողություններ են անում երկրային կյանքի երջանկության և երանելիության վերաբերյալ, մի կողմ թողնելով հոգու բարությունը, որը բազում անգամներ գերազանցում է մարմնական ու արտաքին բարիքները: «Քանզի առաքինություն և ըստ ինքեան բաւական է յերջանկութիւն» (42. [6]): Անգամ մեծագույն դժբախտությունները չի կարելի ասել, թե ինչու են ուղարկվում մարդուն, գուցե մեկ այլ՝ ավելի մեծ պատուհասից ձերբազատելու նրան:

Չնայած այսպիսի համապարփակ փիլիսոփայական քննարկումներին և արծարծվող թեմաների զանազանությունը, Նեմեսիոսի ոճն ամենուր չափազանց խիստ է, հակիրճ, անգամ չոր: Նրա սահմանումներն ու ձևակերպումները կոնկրետ են և ըստ էության: Դրանք իսկական գիտնականի դիտարկումներ են, որը փորձում է տարբեր ու հաճախ նույնիսկ անհամատեղելի կարծիքների խաչմերուկում գտնել կամ հուշել խելամիտ լուծումը: Արսեն Սուքրին գրում է. «Չի փնտռենք ի Նեմեսիոս ճարտասանական գեղեցիկ նկարագրություններ, նաև այն տեղերն, ուր հարկն պահանջ է. ինքն կը սիրէ փիլիսոփայական համառօտ անցումն՝ յիշելով ինչ որ կարևոր և անհրաժեշտ կը դատէ, և կը թողու ընթերցողին որ ինքն իրեն խելքովն խրատներ և յորդորակներ շինէ. եթէ չհամարինք զսա իբրև զՍ. Բարսեղ և ոչ իբրև գեղբայր նորա, որ շարագրեց «Պարգոյն կազմութեան» գիրքն, ճարտասան և պերճախօս, բայց կը ստիպենք յամենայն քայլափոխ խոստովանել՝ որ երևելի փիլիսոփոս մ' է, հանդերձ քրիստոնեական յստակ ու ողջամիտ տեսություններով» (Սուքրի 1880, էջ 327):

Նեմեսիոս Եմեսացու «Յաղագս բնութեան մարդոյ» երկը չափազանց կարևոր է հետազայում սկզբնավորված հայ ինքնուրույն բժշկա-բնագիտական մատենագրությունը ճիշտ հասկանալու և գնահատելու առումով: Որպես տեսական հիմնավոր գիտելիքների աղբյուր, այն հաճախ է հայտնվել հայ բժշկապետերի ուղադրության կենտրոնում և լրացրել գործնական բժշկությանը վերաբերող մատյանները, ինչպես վաղ շրջանում, երբ կատարվել է թարգմանությունը, այնպես էլ ուշ միջնադարում անփոփոխ և հանգամանորեն ընդօրինակվելով բազմաթիվ անգամներ, տարբեր գրիչների և պատվիրատուների ջանքերով:

Բժշկագիտական և բնագիտական բառապաշարը Նեմեսիոս Եմեսացու «Յադագս բնութեան մարդոյ» երկում

Հայերեն գիտա-փիլիսոփայական բնույթի գրականությունն ստեղծելու համար անհրաժեշտ էր ձևավորել իմաստի և կազմության առումով ճիշտ մշակված եզրույթների համակարգ: Ցանկացած գիտական գաղափարի ճիշտ ընկալումը կախված է այն բանից, թե որքան դիպուկ և ըստ էության են կազմված այն արտահայտող եզրերը, և ինչ ճշտությամբ են նրանք արտացոլում առարկաների և երևույթների էությունը, իհարկե՝ տվյալ ժամանակաշրջանի մարդկային իմացության մակարդակին համապատասխան: Եվ բնական է, որ հունաբան դպրոցի ներկայացուցիչները ձգտում էին՝ հունարենի առավելությունները հաղորդելով հայերենին, մշակել այն, հարստացնել և դարձնել բարդագույն հասկացություններ արտահայտող լեզու, ինչպիսին հունարենն էր, որն «իր լեզվական հատկություններով, իր նախդիրների զարգացած համակարգով ընդունակ էր արտահայտել բազմազան վերացական ու բարդ գաղափարներ: Մյուս կողմից զարգացման երկարատև շրջանը ստեղծել էր գիտա-փիլիսոփայական կայուն եզրեր՝ իմաստային նուրբ տարբերակումներով» (Ջահուկյան 1954, էջ 47):

Ամենադժվարը, հունարենի նմանությունը՝ առարկայի, հասկացության և նրանց անվանման հարաբերությունն է հայտ բերելն էր: Եվ հունաբան դպրոցի ներկայացուցիչները, որոնք իրենց ժամանակի առավել զարգացած և առաջադեմ մտավորականներն էին, ջանում էին իրականացնել դա: Բացի մասնագիտական եզրերից, նրանք ստեղծեցին «առհասարակ վերացական բառապաշար, և դրա շնորհիվ է, որ հայերենն այսօր ունակ է արտահայտելու ցանկացած ժամանակակից հասկացություն» (Գ. Մուրադյան 2010, էջ 15): Նրանք հավասարապես տիրապետում էին թե՛ հայերենին, թե՛ հունարենին և, գիտակցելով իրենց ձեռնարկած գործի լրջությունն ու գիտական նյութի ճշգրիտ վերարտադրման կարևորությունը, հետևողականորեն պահպանում էին միօրինակություն և ընդհանրություն: Այս նկատառումով, նրանք ոչ թե փոխառում էին օտար եզրը, այլ վերցնում էին նրա իմաստը և որոշակի սկզբունքով, հայերեն միջոցների օգտագործմամբ ստեղծում համապատասխան հայերեն բառը (Ջահուկյան 1954, էջ 69): Գ. Ջահուկյանն ապացուցում է, որ հայ թարգմանիչների և

մեկնիչների հայացքների բազմաթիվ տարբերությունները հույն մեկնիչներից մատնանշում են հայ քերականների քննադատական մոտեցումը: Այս նկատառումով նա, իրավացիորեն, այդ թարգմանությունները հաճախ համարում է ավելի շատ փոխադրություն, քան թարգմանություն (տե՛ս նույն տեղում, էջ 61): Հատկապես հունաբան դպրոցի խոր և հետևողական աշխատանքի արդյունքում հայ փիլիսոփայական մտքի ու բնագիտություն, իսկ դրանց հիման վրա էլ՝ բնափիլիսոփայության համար արագ զարգացման նախադրյալներ ստեղծվեցին:

Հայերենի գիտական եզրաբանության ձևավորման մասին շրջանառվում է նաև այն կարծիքը, որ հայերը մինչ հունաբան դարաշրջանն ունեցել են իրենց բավականաչափ հարուստ, կայուն, կազմակերպված և տարածված բժշկա-բնագիտական եզրաբանությունը, և հայ հեղինակները հաճախ նույնիսկ կարիք չեն զգացել բառեր փոխառելու օտար լեզուներից: Նորամուտ հունարեն եզրերն անգամ խորթ են թվացել և վտարվել, մերժվել, մոռացություն են տրվել հետագա շրջաններում: Խ. Մելիք-Փարսադանյանը սա խիստ կարևոր է համարում, քանի որ գիտական եզրաբանությունն իբրև հայելի արտացոլում է իր մեջ տվյալ գիտություն պատկերը, նշում է ունեցած սեփական գիտական փորձի չափն ու սահմանը (տե՛ս Մելիք-Փարսադանյան 1949, էջ 120): Նա որպես օրինակ ներկայացնում է Ե. դարում հայերեն թարգմանված Բարսեղ Կեսարացու «Յաղագս վեցօրեայ արարչութեան» աշխատությունը, որտեղ հայերեն բազմաթիվ բնագիտական բառերի կողքին կան քիչ քանակով փոխառություններ: Օրինակ՝ «խեցգետնի» փոխարեն՝ «կարկինոս», «հերձիի» փոխարեն՝ «սքինոս», և մի շարք այլ հունարեն բառեր՝ «կետ, փոկ, սպունգ, ոստր, պողիպոդ, կտինք, կոկղիք, սպինք» և այլն: «Սրանք հին հայ գրականության համար նորություններ էին, — կարծում է հոգևածագիրը, — և դա բնական է, որովհետև դրանք ծովային կենդանիների անուններ էին: Հայերն իբրև ցամաքային երկրի բնակիչներ չունեին դրանց հայերեն փոխարժեքները, ուստի ստիպված էին փոխառել հունարենից»¹⁹) (նույն տեղում, էջ 120): Այստեղ

¹⁹ Ավելացնենք, որ հետագայում պարզվեց, որ Բարսեղի «Վեցօրեան» թարգմանվել է ոչ թե ուղիղ հունարենից, այլ միջնորդ լեզվից՝ ասորերենից (Լ. Տեր-Պետրոսյան, «Բարսեղ Կեսարացու «Վեցօրեայքի» հայերեն թարգմանության նախօրինակը», Պատմա-բանասիրական հանդես, 1983, № 2-3. քք. 264-278), ուստի բնագրերի իրական հարաբերություններն ավելի բարդ են:

նկատվում է նաև մեկ այլ երևույթ՝ բույսերի անուններ գործածելիս հայ թարգմանիչը փոխառում է ոչ միայն հայերենում բացակայող հունարեն բառեր, այլև երբեմն գերապատվություն է տալիս հունարեն անվանումներին, թեև դրանց համարժեքը հայերենում կա: Միևնույն ժամանակ հոգվածագիրն ավելի անսպասելի է համարում «Վեցաւրեայ»-ի հայերեն բնագրում այնպիսի հին եզրերի կիրառումը, ինչպիսիք են՝ «տարր, մաղձ, մաղաս, մրուր, հիւթ, նիւթ»: Նրա կարծիքով բնական կլինէր, եթե սրանք չթարգմանվեին, քանի որ կապված են ժամանակաշրջանի հիմնական գիտական ուսմունքների հետ: Սակայն հայերեն եզրերի գործածությունը ցույց է տալիս, որ վերջիններս բավականաչափ տարածված և ընդհանրացված էին, ուստի և դրանք հունարեն բառերով փոխարինելը թարգմանիչն անհնարին է համարել: Ըստ հեղինակի՝ Նեմեսիոս Եմեսացու «Յաղագս բնութեան մարդոյ» երկում ևս թարգմանիչը գերադասել է գործածել հայերեն բառեր» (նույն տեղում, էջ 121):

Վերջապես, Ժ. դարից մեզ ժառանգություն է մնացել մի բառարան՝ «Բառք Գաղղիանոսի բժշկապետի»²⁰ անունով, որի մեջ մոտ 400 հունարեն բժշկական բառերը բացատրված են հին հայ եզրերով: «Այս դարաշրջանում հայ ամբողջ բառապաշարի մեջ բժշկա-բնագիտական արմատական եզրերի թիվը հասնում էր շուրջ 900-ի, որին եթե ավելացնելու լինենք բարդությունները, հարկ կլինի այն եռապատկել: Սակայն այդ պատկառելի եզրաբանությունը սոսկ բառաքանակ չէ, այլ լավագույն ցուցանիչ այն բանի, որ այդ բառերով արտահայտված են բժշկա-բնագիտական որոշ իմաստություններ՝ ձևավորված բժշկության և բնագիտության մեջ, գիտություններ, որոնք նախքան տառերի գյուտը զարգացած են եղել հայ ժողովրդի մոտ», – գրում է Խ. Մելիք-Փարսաղանյանը (նույն տեղում, էջ 123):

Սակայն ըստ ամերիկացի հայագետ Ջոն Գրեպինի ուսումնասիրության՝ ոչ թե Ժ., այլ Զ. դարում էր Հայաստանում ստեղծվել «Բառք Գաղղիանոսի» դեղաբանական բառարանը (Greppin 1985): Այն պարունակում էր 500 եզրեր, մեծ մասամբ դեղանուններ Գալենոսի *De simplicium*

²⁰ Հրատարակությունը՝ 24 ձեռագրի համեմատությամբ տե՛ս John Greppin (Editor), *Bark' Galianosi: The Greek-Armenian Dictionary to Galen (Anatolian and Caucasian Studies)*, 191 pp., Delmar, N. Y. : Caravan Books, 1985: Հավանաբար Զ. դարի գործ է:

medicamentorum temperamentis et facultatibus աշխատությունից, ինչպես նաև որոշ թռչունների և կենդանիների անվանումներ: Իսկ Ժ. դարից հետո նրա մեջ ներմուծվել են նաև արաբերեն եզրեր (թվով 75): Հետագայում, միջնադարյան բժշկարաններում դրանք շարունակել են զարգանալ ու կատարելագործվել՝ աստիճանաբար զրկվելով բազմիմաստությունից, երբեմն էլ ենթարկվելով իմաստափոխության կամ դուրս գալով շրջանառությունից ու պահպանվելով միայն կենդանի լեզվում որպես բարբառային ձև (Վարդանյան 1971, էջ 186-197):

Եզրաբանության բացառիկ դերը ցանկացած գիտության զարգացման համար անուրանալի է: Գիտատեխնիկական եզրաբանությունը տարբեր լեզուներում ունի իր պատմական արմատներն ու աղբյուրները, կազմավորման իր կերպն ու զարգացման իր յուրահատուկ ընթացքը: Անտիկ շրջանում հին հունարեն և լատիներեն լեզուներով ստեղծվել էին գիտական, տեխնիկական և քաղաքական բազմաթիվ եզրեր, որոնք դարերի ընթացքում մտան այլ լեզուների մեջ՝ աստիճանաբար ձեռք բերելով միջազգային բնույթ: Սակայն հայ գիտնական-թարգմանիչները չընթացան այդ հեշտ ճանապարհով: Օտար եզրերի փոխառության փոխարեն հայ թարգմանիչները կիրառում էին հունարեն բառերի, այդ թվում՝ եզրերի պատճենման միջոցը, մասնավորապես՝ հունարեն բազմաթիվ նախածանցավոր բառերի ճշգրիտ համարժեքները պատճենելու համար կերտելով մի շարք արհեստական նախածանցներ: Ուստի միայն հայերենի արմատների և բառակազմական միջոցների օգտագործմամբ, հետևողականորեն պատճենում էին հունարենի քերականական, ճարտասանական, փիլիսոփայական և տրամաբանական եզրերը՝ ստեղծելով այնպիսի դիպուկ բառեր, որոնցից շատերը կայունացել են և այսօր օգտագործվում են մեր լեզվում (տե՛ս Ա. Մուրադյան, 1971, էջ 75):

«Հունաբան թարգմանիչների՝ բառապատճենման եղանակին լայնորեն դիմելը սովորաբար բացատրում են տերմիններով հագեցած գիտական տեքստերը ճշգրիտ թարգմանելու ձգտումով... Սակայն բազմաթիվ բառերի քննությունը ստիպում է եզրակացնել, որ տերմիններ կերտելու եղանակները ոչնչով չեն տարբերվել սովորական բառերը թարգմանելու կամ պատճենելու եղանակներից... տերմինաբանական արժեքն արտահայտվել է միայն իմաստի մեջ» (տե՛ս Գ. Մուրադյան, 2010, էջ 33): Ընդ որում, բա-

ուստեղծման այս գործընթացում տեղ ունեին ինչպես բառերի իմաստային պատճենումները, այնպես էլ հունարենի կաղապարով կերտված նախածանցավոր նոր բառերը (տե՛ս նույն տեղում, էջ 14):

Սեն Արևշատյանը՝ լրացնելով հունաբան դպրոցի փուլերի վերաբերյալ Հ. Մանանդյանի առաջարկած խմբավորումը, Նեմեսիոս Եմեսացու «Յաղագս բնութեան մարդոյ» երկը տեղավորել է վերջին՝ չորրորդ խմբում, նշելով, որ այս խմբի թարգմանություններն ունեն ավելի ճոխ բառապաշար և ազատ են խրթին հունաբանություններից (տե՛ս *Арестованн*, 2016, с. 195): Սակայն, ինչպես Ա. Տերյանն է նկատել Փիլոնի թարգմանություններում (A. Terian, 1981, p. 10-12), մեկ հունարեն բառը կարող է ունենալ տարբեր հայերեն համարժեքներ, և միևնույն հայերեն բառը կարող է համապատասխանել տարբեր հունարեն բառերի: Նույնը նկատելի է նաև Եմեսացու «Բնություն» հայերեն բնագրում, ինչը հաճախ իմաստն ընկալելու դժվարություն է առաջացնում: Ընկալման դժվարություններ են ստեղծում նաև գրիչների թույլ տված վրիպակներն ու հունարենի շարահյուսության ընդօրինակումը:

Հունաբան դպրոցի մասին կարծիքները եղել են տարբեր ու հակասական: Եվ դա բնական է, քանի որ թարգմանական ծավալուն աշխատանքին և դրա անքակտելի մասը կազմող լեզվաշինարարական գործընթացին զուգահեռ, իր սկզբնական վիճակում արդեն կատարելության և արվեստի բարձրության հասած դասական հայերենը փոխվում էր որակապես: Սակայն կորցնելով իր նախկին գեղեցիկ կառուցվածքը, այն իմաստային և եզրաբանական առումով «փարթամորեն ուռճանում էր թարգմանական գրականության պարարտ և արգասաբեր անդաստանում» (Լ. Խաչերյան, 1964 թ., էջ 101): Բանն այն է, որ գիտա-փիլիսոփայական երկերի թարգմանության համար դասական հայերենն աղքատ էր՝ իր բառակազմական հնարավորություններով և միակողմանի՝ իր գրվածքների առավել կրոնական բնույթով, իսկ արհեստական նախածացներով բառերի ստեղծումը դարձավ փիլիսոփայական եզրաբանության կերտման հիմնական միջոց: Դիոնիսիոս Թրակացու քերականական երկի թարգմանության մեջ կերտված քերականական այդ եզրերն «հաջողությամբ օգտագործվեցին ավելի ուշ՝ փիլիսոփայական երկերի թարգմանության ժամանակ. օրինակ՝ «սեռ», «սեռական», «հմտություն», «ներգործական» և այլն» (Գ. Մուրադյան 2010, էջ 13):

Այս համառոտ ակնարկը մի փորձ է վերլուծելու Նևմեսիոսի «Յադագս բնութեան մարդոյ» երկի հայերեն թարգմանության մեջ գործածվող որոշ բառերը՝ հունարեն համարժեքների, ինչպես նաև արդի բժշկության մեջ կիրառվող հայերեն ձևերի հետ միասին: Դրանցում հաճախ բացահայտվում է հայ թարգմանիչների ազատ և ստեղծագործ մոտեցումը բնագրին՝ չնայած թարգմանության բառացիութանը:

Երկում ամենահաճախ հանդիպողներից են «ախտ» և «կիրք» եզրերը՝ παθός-ի փոխարեն: Այս երկուսն օգտագործվում են իբրև հոմանիշներ, սակայն ըստ մեր դիտարկման՝ «ախտ»-ի գործածությունն ավելի շատ վերաբերում է կրքի հիվանդագին և բացասական դրսևորումներին, իսկ «կիրք»-ն ընկալվում է ավելի ընդհանուր՝ ի հայտ բերելով հոգու պասսիվ, կրական վիճակը մարդու կամային տարբեր գործողությունների ժամանակ: Այս մտայնությամբ առկա է նաև «հաւանումն» πείσις եզրը, որն ենթադրում է ավելի թույլ մղում, և կարող է կամ տանել դեպի կիրք, կամ գսպվել ու մերժվել: Քանի որ միայն զգացմունք առաջացնող, մինչև զգայարաններ հասնող հոգեվիճակը կարող է կիրք համարվել, իսկ դրանից թուլերը՝ ոչ:

Նույն «ցանկութիւն» բառով են թարգմանվում ἐπιθυμία-ն և ὄρεξις-ը, սակայն դրանց մեջ տարբերությունն ակնհայտ է: ὄρεξις-ը «բնաւորական» կամ «հարկաւոր» ցանկությունն է, երբ «ի հարկէ ցանկացեալ» (15. [1]) ենք գործում: Հատկապես այս ցանկությունն է դրված շարժման և զարգացման հիմքում: Ցանկություն է նաև ἐπιθυμία-ն, սակայն առավելապես կամային ցանկություն, որը կարող ենք իրագործել, կամ ոչ:

Իրար լրացնող և մեկը մյուսին շարունակող երևույթներ են ներկայացնում տեքստում հաճախակի հանդիպող «զաւրութիւն» և «ներգործութիւն» եզրերը: «Զաւրութիւն»-ը՝ δόναμις (dynamis), ենթադրում է ներքին գորություն, ունակություն, հնարավորություն, այլ կերպ ասած՝ պոտենցիալ էներգիա, ի տարբերություն «ներգործութեան» ἐνέργεια-ի (energeia), որն այդ ունակության գործուն դրսևորումն է կամ կինետիկ էներգիան: Այս տրամաբանության մեջ նրանք գործում են իբրև եզրեր, իսկ որպես խոսակցական շարքային բառեր՝ առաջինը ἰσχός-ի (ischys) հետ միասին ժամանակ առ ժամանակ կիրառվում է զուտ ուժի կամ հզորության առու-

մով, իսկ երկրորդը՝ պարզապես գործելու, գործունեություն, ինչպես *πρᾶξις*-ը (*praxis*): Բացի «գալուստիան»-ից, *δύναμις*-ը երբեմն թարգմանվում է նաև «կարողություն» տարբերակով:

Ինչպես նշեցինք, հաճախ հունարեն մի քանի տարբեր բառերի փոխարեն հայ թարգմանիչները գործածում են նույն հայերեն բառերը: Օրինակ, իմաստային շատ նուրբ տարբերակումներով տարանջատվող *ἔργον* (*ergon*), *πρᾶξις* (*praxis*), *πρακτόν* (*practon*) և ավելի քիչ հանդիպող էլի մի քանի նմանիմաստ բառերի համար, որոնք սովորաբար վերաբերում են տարբեր կարգի գործողությունների, միշտ կիրառվում է «գործ» համարժեքը: Մասնավորապես, ըստ մեր դիտարկումների՝ *πρᾶξις*, *πρακτόν* եզրերը բնորոշում են պրակտիկ գործունեությունը, *μέθοδος* (*methodos*) բառով նշվում է գործի ընթացքը, կերպը, իսկ *ἔργον*-ն ավելի շատ ստեղծագործական, արարողական աշխատանքն է: Ի դեպ, «արարողական» ածականը ևս երբեմն զբղում է *πρακτόν*-ի դիմաց (որոշակի, տեսանելի, պրակտիկ գործողություն), երբեմն՝ *ποιητικός* (*ή*)-ի (արարող, գործուն, ստեղծագործ, կերտող), երբեմն՝ *δραστικός*-ի (*δραστήριον*) (գործուն, ակտիվ էություն զբաղող), երբեմն էլ՝ *γεννητικός*-ի (ծնող, վերարտադրող):

Նույն կերպ էլ՝ «հայել» բայը երբեմն գործածվում է հենց հայեցողության (17. [4]) (77. 11 *κατανοήσει τοῦ θείου*), երբեմն նայելու (*ὄρω*) կամ սևեռուն, ուշադիր դիտելու (*βλέπω, ἐπισκέπτομαι*), գննելու (*προσέχω*), երբեմն նկատելու, բացահայտելու (*καταγινώσκω*) կամ հասկանալու (*κατανοέω*) և կռահելու (*καταστοχάζομαι*) իմաստով: «Նկատել» բայը տարբեր տեղերում համապատասխանում է *κατανοέω* (մտածել կամ հայել), *εἰκάζω* (պատկերել), *σκέπτομαι* (ըմբռնել. ԲԹԺԽ ձեռագրերում տեղ գտած լուծմունքը մեկնաբանում է՝ «գնկատելն ի վերա խորհելոյն ու հաելոյն ասէ»), երբեմն էլ՝ *θεσπίζω* (գուշակել) բայերին: Բնագրում կարևոր նշանակություն ունեն «տեսություն», «տեսական», «տեսանել» եզրերը: «Տեսություն»-ն ի հայտ է գալիս որպես *θεωρία* (*theoria* – երևույթների խորիմացություն, հայեցողություն), *φαντασία* (*phantasia* – պատկերացում, երևակայություն) կամ *ὄψις* (*opsis* – «տեսություն ականն») բառերի համարժեք, իսկ «տեսական»-ը վերաբերում է միայն առաջին երկուսին: «Տեսանել»-ը և՛ *βλέπω*-ի, և՛ *ὀράω*-ի, և՛ *θεωρέω*-ի, և՛ *εἶδω*-ի գուգահեռն է: «Նոհեցողա-

կան»-ն օգտագործվում է βουλευτικός, διαλογιστική, λογιστικόν եզրերի դիմաց, մի տեղ էլ «խոհականութիւն» է նաև φρόνησις-ը (phronesis – ողջախոհութիւն) (40. [2] / 117. 20):

Որոշ հունարեն բառերը էլ հայերեն թարգմանութեան մեջ ունեն մի քանի համարժեք:

«Հոգի»՝ ψυχή-ն (psyche) ավելի հաճախ շարադրանքի մեջ փոխարինվում է «անձն»-ով, սակայն երբեմն պատահում է նաև «հոգի» տարբերակը (հատկապես, 1-ին և 42-րդ գլուխներում): Ենթադրում ենք, որ նպատակն իմաստը տարբերակելն է, երբ խոսքը ոչ թե զուտ կենսաբանական արարածի, այլ իրական «ներքին» մարդու մասին է:

Ինչ վերաբերում է πνεῦμα (pneuma) բառին, այն հայերեն է թարգմանվում բավական ազատ և զանազան տարբերակներով: Հիմնականում նրա համարժեքը «շունչ»-ն է, սակայն հանդիպում է նաև «ոգի», «հոգի», «աւղ»: «Հոգեւորական» πνευματικός (pneumaticos) բառը, որ բառացի կարելի է թարգմանել նաև «շնչական», նշանակում է՝ «ոգեղեն, աննյութական, spirabilis» («էութիւն հոգեւորական»՝ οὐσία πνευματική 7. [4] / 59. 4): «Աւղ»-ը կարող է փոխարինել πνεῦμα-ին կամ գործածվել իր իրական իմաստով՝ թարգմանելով ἀήρ (aer) բառը: Երբեմն էլ այն վերաբերում է քննարկվող նյութի գազային վիճակին: Այդպիսի իմաստ ունի նրանից ածանցյալ «աւղանամ»՝ ἐξαερώω բայը, որը պետք է հասկանալ՝ անցում գազային վիճակի: Որոշ դեպքերում «աւղ»-ը փոխարինում է περιέχον-ին, որ բառացի նշանակում է «պարունակող»՝ ենթադրելով շրջապատող, մարդկանց ու իրերը պարունակող օդային տարածքը: Վերջինս երբեմն հայերեն բառացի է թարգմանված՝ «պարունակող»: «Շունչ» – ἀναπνοή (anapnoe – respiratio) նշանակում է նաև «շնչառութիւն»:

Βουλή (boule) եզրը մերթ ներկայացվում է «խորհուրդ» համարժեքով (λογισμός (logismos)-ի հետ միասին), մերթ «կամք», մերթ էլ՝ «ախորժումն», որոնցով կարծես բացահայտվում են մարդու որևէ կամային ցանկութեան ձևավորման երեք փուլերը՝ խորհել, ախորժել, կամենալ: Այսպես էլ δόξα (doxa) երբեմն թարգմանվում է որպես «կարծիք», երբեմն «փառք»: Նույն ձևով, ὁμολόγος-ը, ըստ իմաստի՝ մեկ ներկայացվում է «հարթ», մեկ էլ՝ «հաւասար» տարբերակով, ինչպես նաև ἀνώμαλος-ը եր-

բեմն «անհարթ», երբեմն՝ «անհավասար»: *Ανωμαλία*-ի (*anomalía*) համար-
ժեքը «անհավասարություն»-ն է, իսկ *ἄμορφος*-ինը (*amorphos*)՝ «տգեղ»-ը:

«Հարկ»-ը *ἀνάγκη*, երկուսն էլ հաճախակի հանդիպող բառերն են: Այն տեղ ունի, ինչպես շարքային՝ «հարկավոր, անհրաժեշտ» իմաստով, այնպես էլ ճակատագրի և Նախախնամության հետ միասին նույն շար-
քում գտնվող Հարկի, որն աստվածային «անփախչելի, անխափանելի»
օրենքն է: Այն «անվրէպ» է գործում պատճառահետևանքային համա-
տեքստում ապահովելով արժանի հատուցում:

θεραπεία-ն (*therapia*) թարգմանվում է «բժշկություն», «ծառայու-
թիւն կամ սպասարկում», «աւզուտ», «ուրախացուցիչ» կամ «պատարագ»,
իսկ *τύχη*-ն (*tyche*)՝ երբեմն «բախտ» է, երբեմն «հանդիպում», երբեմն էլ՝
«դիպում»: «Դիպումն» եզրը բնութագրում է նաև *σύμπτωσις*, *σύμπτωμα*
(*sympnosis*, *symptoma* – բախում, հանգամանքների ընթացք) բառերը: Վեր-
ջինս որոշ դեպքերում թարգմանված է նաև «հիւանդություն», քանի որ
σύμπτωμα նշանակում է նաև «հիվանդագին ցնցում, նոպա», և ավելի ուշ
չըջանում փոխառվելով այլ լեզուներից, «սիպտոմ» տարբերակով այժմ ևս
կիրառվում է բժշկական բառատիրույթում: «Հիւանդություն» բառն ավելի
հաճախ համապատասխանում է *νόσος*-ին (*nosos*), որոշ դեպքերում էլ՝
ἄλγημα-ին (*algema*), սակայն վերջինս ավելի հաճախ համարժեք է «խաւ-
թութիւն» եզրին՝ «տկարություն, ալարկոտություն, տրտմություն, ցավ»
իմաստով: Այս երկու հոնարեն եզրերն էլ արտացոլված են արդի բժշկա-
կան եզրաբանության մեջ (նոզոլոգիա, միալգիա, նեւրալգիա և այլն):
«Խաւթութիւն»-ը դուրս է մղվել շրջանառությունից: Ներկայումս փո-
խառյալ տարբերակով է կիրառվում նաև «ընթացակցություն»՝ *συνδρομή*
(*syndrome*, սինդրոմ) բառը, թեպետ վերջինիս արդի կիրառումը գուցե լի-
ովին համարժեք չէ «ընթացակցություն» եզրույթին, քանի որ այն հայերե-
նում փոխառվել է ավելի ուշ՝ նոր լեզուներից: Այս շարքում կարելի է դի-
տարկել նաև «տկարություն»՝ *ἀσθένεια* (*asthenia* – ասթենիա) եզրը:

«Մակացություն»-ը *ἐπιστήμη* (*episteme*), ուսմամբ ձեռք բերված գի-
տելիքն է, ի տարբերություն «գիտություն»՝ *γνῶσις*-ի (*gnosis*), որը կարող է
ձեռք բերվել և՛ կյանքի ընթացքում, և՛ կարող է լինել «բնաւորական» (1.
[2]/1. 18), այսինքն՝ բնութիւնից ստացված: «Գիտություն» բառի մեկ այլ
համարժեք է հոնարեն բնագրում *διάγνωσις* (*diagnosis*) եզրը, որը նշանա-
կում է «տարանջատում, տարբերակում, նաև՝ ախտորոշում»: «Մակբեկու-

թիւն» կամ «մակբերութիւն» ἐπίκλασις (epiclasis – «թուլացում»՝ Նեմեսիոսի բացառիկ կիրառութիւնն ἐπικλάω – «կորացնել, ճկել» բայից) և «մակդարձութիւն» ἐπιστροφή (epistrophe – «շրջադարձ, անդրադարձութիւն») եզրերը ներկայումս չեն գործածվում:

Հոգու «յիշողական» ունակութիւնն՝ μνημονευτικόν (mnemoneuticon, memoria), երկու դրսևորումներին՝ μνήμη (mneme – հիշողութիւն) և ἀνάμνησις (anamnesis – վերհուշ) համապատասխանում են «յիշումն» և «վերստին յիշումն» համարժեքները: «Նախագիտութիւն»-ը πρόγνωσις-ի (prognosis) պատճենված տարբերակն է, սակայն այն երբեմն դրվում է նաև μαντεία-ի (manteia) դիմաց, որն այլ տեղում թարգմանված է «դիւթութիւն»:
«Բան»-ը λόγος-ի (logos) համարժեքն է, «միտք»-ը φησισարինում է νοῦς (nous), διάνοια (dianoia) եզրերին, իսկ «զմտաւ ածեմ»՝ ἐννοέω, διανοέω, ἀναλογίζομαι, λογίζομαι-ին: Եվ հայերեն, և՛ հունարեն բնագրում հստակ տարբերակում է դրվում «նիւթական»՝ ὕλικός (նյութից կազմված, կառուցված մարմին) և «նիւթաւոր»՝ ἔνυλος (նյութի մեջ պարունակվող, նյութը կազմող) բառերի միջև:

Հաճախ հանդիպող հիմնական եզրերից է ὄρμη-ն (horme – գրգռում, դրդում, բնագր, բնական մղում), հայերեն՝ «յարձակումն»: Որոշ տեղերում ὄρμη-ն թարգմանված է նաև «դիմել» բայով: Հավանաբար, այն պետք է ընկալել իբրև՝ ներքին մղում, ձգտում, ձերբազատում կամային կամ մտավոր զսպող կապանքներից: Իմաստային առումով այն համապատասխանում է արդի «բնագր» եզրին, սակայն ավելի լայն իմաստով: Այդ ներքին, «արձակված» շարժումն ավելի որոշակի դարձնելու համար, երբեմն կիրառվում է «բնաւորական յարձակում» (1. [17])՝ ὄρμη φυσική (13. 11) արտահայտութիւնը:

Հաջորդ կարևոր բառը «յաւզաւորութիւն»-ն է կամ «յաւզումն» (ἁρμονία – harmonia): Այն, ինչպես հունարենում, այնպես էլ հայերենում ի հայտ է գալիս բառակազմական նուրբ տարբերակներով: «Յաւզաւոր»-ով թարգմանված են և՛ ἁρμόνιος, և՛ ἔναρμόνιος բառերը, որոշ դեպքերում էլ այն հանդես է գալիս ἔναρθρος-ի դիմաց, որն այլ դեպքում թարգմանված է «պատկանաւոր» (հողաբաշխ առումով) (1. [6] / 4. 20): Իր հերթին ἁρμός (կապ) թարգմանված է «պատշաճիւր» (3. [6] / 42. 9), իսկ ἁρμοζόντως՝ «պատշաճ» (42. [12] / 133. 16): Երբեմն «յաւզումն», երբեմն էլ՝ «հարմարումն» է թարգմանվում նաև εἰρμός (կապակցում) բառը: Այս ամենի մեջ

«յաւղումն» եզրը կարծես բացահայտում է իր իրական իմաստը՝ ոչ միայն պարզապես ներդաշնակութուն, այլ կատարյալ հարմարման, պատշաճության և իդեալական փոխկապակցվածության մեջ ներդաշնակ գոյակցութուն:

«էութիւն» (οὐσία – ousia, ὄν), «գոյութիւն» (ὑπαρξις – hyparxis), երբեմն էլ՝ «բնութիւն» եզրերը հայերեն բնագրում փոխարինում են իրար. երբեմն οὐσία-ն է թարգմանվում «գոյութիւն», երբեմն էլ ὑπαρξις-ը՝ «էութիւն»: «Գոյութիւն»-ը հանդես է գալիս նաև «լինել» իմաստով τὸ εἶναι (1. [2] /1. 17): Հազվադեպ οὐσία-ի դիմաց կիրառվում է նաև «բնութիւն» բառը: Διαμονή (diamone – տեւականութուն) բառը ներկայացված է «յարամնայութիւն», «փոխանորդութիւն» և «տեւողութիւն» համարժեքներով:

Երկի հատկապես մարմնակազմական (սոմատիկ) մարդաբանությանը վերաբերող հատվածների ճիշտ ընկալման համար կարևոր է քննարկել «մարմին» բառը: Հունարենում այն ներկայացված է երկու տարբերիմաստ բառերով՝ σῶμα (soma) և σάρξ (sarx): Առաջինն ամբողջական մարմինն է՝ իր կառուցվածքային միասնության մեջ, իսկ երկրորդն, ամենայն հավանականութամբ վերաբերում է փափուկ հյուսվածքներին²¹ ոչ միայն արտաքին, այլ նաև՝ ներքին օրգանների, քանի որ այն Շարազրանքի մեջ հանդիպում է նաև հետևյալ արտահայտություններով՝ «զկակուղն մարմին» (4. [2]) ἀπαλωτάτη σάρξ (փափուկ հյուսվածք) (45. 11), «մարմին երկուորեացն» (27. [4]) σὰρξ ἀπαλωτέρα (92. 17), «փրփրատեսակ մարմին թոքոցն» (27. [2]) ἀφρώδης σάρξ τοῦ πνεύμονος (91. 5): Բնագրում գործածվում է նաև «մանուած» πλέγμα (plegma – հյուսվածք) բառը (27. [2] /91. 3), սակայն այն բնութագրում է միայն թոքի մանվածանման, ցանցատիպ հյուսվածքը:

Հայերեն բնագրում մեծ մասամբ «չնչերակ» թարգմանվող ἀρτηρία-ն (arteria) բնութագրում է տարբեր կազմախոսական տարրեր, սակայն «չնչերակ» նրա ընդհանուր անվանումն է, քանի որ բոլոր այդ անոթներով տեղափոխվում է շունչը (պնևման): Եւ՛ հայերենում, և՛ հունարենում կա տարբերություն սովորական շնչերակի և «խոշոր» կամ «խոշորագոյն շնչերակ»-ի (τραχεῖα ἀρτηρία) միջև, որի կողքին սովորական շնչերակը հստակեցվում է իբրև «ողորկ շնչերակ»: «Խոշոր» (τραχύς) նշանակում է

²¹ Այլ լեզուներում այդ բառն ունի հատուկ համարժեքներ՝ ռուսերեն՝ плоть, անգլերեն՝ flesh, գերմաներեն՝ Fleisch, ֆրանսերեն՝ chair և այլն:

անհարթ, անողորկ: Այս դեպքում խոսքն, ամենայն հավանականությամբ, շնչափողի, բրոնխների և բրոնխեոլների մասին է, քանի որ թոքի կառուցվածքում ևս դրանք ճյուղավորվելով և տարածվելով թոքի ողջ «փրփրաման մարմնի» մեջ՝ շարունակում են անվանվել «խոշոր շնչերակ»-ներ: Հետևաբար սովորական կամ «ողորկ» շնչերակը, ժամանակակից պատկերացմամբ, զարկերակն է, որը նույնպես, ինչպես և բրոնխները, համարվում է շունչը (պնևման) փոխադրող անոթ: Սակայն զարկերակի համար հունարենն ունի ևս մեկ եզր՝ σφύγγος (sphygmos), որ նշանակում է նաև «պուլս, զարկ»: Իր հերթին հայերեն բնագրում ἀρτηρία-ի փոխարեն, բացի «շնչերակ»-ից երբեմն գործածվում է նաև «խլրտկանք» բառը: Իսկ λάρυγξ (larynx – կոկորդ) և φάρυγξ (pharynx – ըմպան) բառերի դիմաց կիրառվում է «խոչափող»-ը՝ հավանաբար այս երկուսն ընկալելով իբրև հոմանիշներ (տե՛ս ծնթ. 163): Անհասկանալի է βρογχός (bronchus) բառի կիրառությունը և նրա թարգմանությունը հայերեն բնագրում «քիմք» (27. [2] /91. 12), չնայած այստեղ խոսքը կոկորդի մասին է: Իսկ իրական քիմքը՝ ὑπερώα-ն (hyperoa) թարգմանված է «վերնատուն» (որը համապատասխանում է ὑπερῶν «վերին հարկ» բառին):

«Ամփոփել» բառը συστέλλω (սեղմվել, կծկվել) եզրի համարժեքն է, իսկ «որոշել»-ը՝ διαστέλλω (ընդլայնել, գատանել): «Որոշել» կիրառվում է նաև διακρίνω, διορίζω և χωρισμός (տարանջատել, բաժանել) բառերի դիմաց: «Ըստ վազիցն» (15. [4]) արտահայտությունը՝ κατὰ τοὺς παλμούς (74. 16), որ բնութագրում է սրտի անկանոն աշխատանքը, կարելի է հասկանալ՝ «ցատկերով, հաճախացած, սրտխփոցով, առիթմիկ» (παλμός՝ դող, տատանում, ցնցում, առկայծում), այնպես, ինչպես սիրտն աշխատում է վազելիս: «Մածումն» πηξίς (pexis – թանձրացում, մակարդում, կպչելը) եզրը բնորոշում է յուրաքանչյուր ձևավորման գործընթացի նախնական փուլը, սկիզբը, երբ դեռևս անձև նյութը՝ մակարդվելով, թանձրանալով, սկսում է աճել ու ձև ստանալ:

Երբեմն «հյուլթ», երբեմն «շոգի», երբեմն էլ՝ «հոտ» է թարգմանված ἀτμός (atmos)-ը՝ դարձյալ կարծես էապես բացահայտելով իր բնույթը, այսինքն՝ գոլորշու միջանկյալ դերը հեղուկի և գազային վիճակի միջև: Թեպետ «գոլորշի» բառը հայերեն բնագրում գործածվում է այլ իմաստով αἰθάλη (aithale – ծուխ, մուր) (27. [1] // 90. 7): «Տամկատեսակ»-ն է համապատասխանում ἀτμῶδες (գոլորշանման) բառին, իսկ «լորձնատեսակու-

թիւն»-ը՝ *λιγνυῶδες* -ին, որը բառարաններում բացատրվում է որպէս «գոլորշանման, ծխատեսակ»: Բնագրում առկա է նաև հենց «ծխատեսակ» տարբերակը՝ *λιγνυῶδες* (27. [2] //90. 20) կամ *καπνῶδες*-ը (5. [5] // 50. 2), ինչպէս նաև «բալատեսակն»՝ *αἰθαλώδης* (մեգանման, ծխատեսակ) բառերի դեպքում:

«Լուծումն» բառը գործածվում է *λύσις* և *διάλυσις* (*lysis, dialysis* – լուծում և տարալուծում), «տեղողական»-ը՝ *τονικός* (լարված, դիմացկուն), «տրամադրութիւն»-ը՝ *διάθεσις* (*diathesis* – փոփոխական հոգեվիճակ), իսկ «փոփոխել»-ը՝ *μετάστασις* (*metastasis*) եզրերի փոխարեն: «Աճառ» կամ «աւճառ» (4. [3]) է թարգմանված *χόνδρος* (45. 20) բառը (*chondrus*), իսկ *χονδρώδης*-ը (71. 18) և *χόνδρος*-ը (91. 13) արտահայտված են «նեարդատեսակ» եզրով (14. [2]; 27. [2]):

Կարծում ենք, ուշադրութեան է արժանի «ըստ կալման»՝ *κατὰ σχέσιν* արտահայտութիւնը: Բառացի այն կարելի է հասկանալ բռնելու, պահելու, կապելու իմաստով, սակայն որոշ ձեռագրերում (*ԵԹԽ*) առկա լուծմունքը պարզաբանում է, որ այդ կապը ձևավորվում է «սիրով և խորհրդով, և ներգործութեամբ, և ըմբռնմամբ»: Այսինքն, ավելի շուտ իբրև կապվածութիւն կամ հակում:

«Ըստ պատահման»՝ *κατὰ συμβεβηκός* կապակցութիւնը հաճախ է հանդիպում հունարան շրջանի թարգմանութիւններում: Այն նշանակում է «հանգամանքների բերումով»:

Մարմնակազմական եզրերից *θώραξ*-ը (*thorax*) հիմնականում արտահայտվում է «խոնդանք»-ով, երբեմն էլ՝ «կուրծք»-ով, որը «լանջ»-ի հետ միասին թարգմանում է նաև *στήθος* (*stethos*) բառը: «Ստամոքս»-ը համապատասխանում է *στόμαχος* (*stomachos*)-ին, իսկ *γαστήρ* (*gaster*) եզրը, որն այժմ ընդունված է համարել ստամոքսի համարժեք, վերաբերում է ամբողջ որովայնին: Վերջինս՝ *κοιλία* (*coelia* – խոռոչ) տարբերակի դեպքում, փոխարինվում է «փոր» կամ «քաղիք» բառերով, իսկ *κοιλία*-ն թարգմանվում է նաև «փորուած»: Որովայնի պարունակութիւնը (*έντερον* – *enteron*) արտահայտված է «ընդերք», կամ «աղիք», մի տեղ էլ՝ «փորոտիք» տարբերակներով: Լեղապարկը՝ *χοληδοχός* (*choledochos*), հայերեն բնագրում ունի «մաղձրնկալ աման» համարժեքը: Ընդհանուր առմամբ «աման»-ով է փոխարինվում *ἀγγεῖον* (*angium* – անոթ) եզրը:

«Երակ»-ը դրվում է, ինչպես *φλέψ-ի* (*phlebs*) դիմաց, այնպես էլ որոշ դեպքերում՝ *νεῦρον-ի* (*nervus*). «Երակն տեսողական» 7. [4] τὸ νεῦρον τὸ ὀπτικόν (59. 1), «զգայականքն երակք» 8. [1] αἰσθητικὰ νεῦρα (63. 8; 64. 11): Այլ տեղերում *νεῦρον*-ը թարգմանվում է «նեարդ-նիարդ» կամ «ջիլ-ջիլ» ձևերով, որոնց մանրամասն անդրադարձ կա ծանոթագրություններում: «Փոխադրություն» բառը *μεταβολή-ի* (*metabole*) համարժեքն է, ժամանակակից պատկերացմամբ՝ նյութափոխանակությունը կամ մետաբոլիզմը: Այս իմաստով կիրառվում է նաև «փոխարկել» բայը, որը որպես *ἐκπέσσω* (եփել, մարսել) բայի համարժեք վերաբերում է հենց նյութափոխանակությանը: «Գործարան»-ը համապատասխանում է *ὄργανον* (*organum*) բառին, ժամանակակից բժշկագիտական եզրաբանություն մեջ այն այժմ առկա է փոխառյալ՝ «օրգան» տարբերակով, ինչպես և «գործարանական»-ը *ὄργανικός*՝ «օրգանական»: «Երեսք»-ը հունարեն *ὄψις-ի* (*opsis*) նման նշանակում է և՛ «աչք», և՛ «տեսողություն»:

«Զգալի», «զգայական», «զգայություն» բառերն օգտագործվում են *αἰσθητής*, *αἰσθητικός*, *αἰσθησις* (*aesthetes*, *aesthesia*, *aestheticus*) եզրերի փոխարեն: Ներկայումս մենք կիրառում ենք՝ և՛ հայերեն եզրերը, և՛, ավելի ուշ շրջանում միջազգային եզրաբանությունից փոխառած՝ հունարեն ծագմամբ «պարէսթեզիա», «էսթետիկա» և այլ բառեր: «Սրունքներ» եզրը՝ *ὀξύτης* (*oxytes*), պետք է հասկանալ գրգռվածության, բարձր լարվածության իմաստով, սակայն ունենում է նաև ավելի մասնավոր իմաստ, օրինակ՝ կծու համ, բարձր ձայն և այլն: «Սրտմտություն»-ը *θυμός* (*thymos*) նույնպես գրգռվածության, ցասման բնութագրիչ է, այն պարզապես բարկություն կամ զայրույթ չէ, այլ ներքին պոռթկում, իսկ «բարկություն» բառը համապատասխանում է մեկ այլ եզրի՝ *ὄργη* (*orge*):

Եթե *μαίνομαι* (մոլեգնել, խելագարվել) բառի դիմաց դրվում են «մոլիմ», «մոլեգնիմ» բայերը, ապա *μελαγχολῶν* (մելանքոլիկ, մաղձոտած՝ *μελαγχολάω* բայի ներկա դերբայը) թարգմանվում է «մոլեգնոտ»: Հոգեկան հիվանդությունների ոլորտից երկում հանդիպում է նաև *φρενίτις* (*phrenitis* – մտաբխություն, խելագարություն) անվանումը, որը չի թարգմանվել, այլ տառադարձվել է «փոենիտոս» (13. [3] / 70. 12):

Եռաչափ, տարածական մարմին բնութագրելիս գործածվում է «եռաչափ տարրորոշ» *τριχῆ διαστατός* արտահայտությունը, այսինքն մարմինը շրջակա միջավայրից առանձնացվում (տարրորոշվում) և հստակեցվում է

երեք չափորոշիչներով: Չունենալով *κορύζα* (*coryza* – հարբուխ) (56. 16) բառի համարաժեքը, հայ թարգմանիչներն այն փոխարինել են բացատրական թարգմանությունը՝ «ըռընգացն ծանրաշնչութիւն» (6. [2]): Իսկ *λίμμα* (նախադրույթ) բառի դիմաց պարզապես նշում են «իմն ասացեալք» (2. [6] / 21. 9): Նաև նույնացվում են «անանձն» և «անշունչ» (հունարեն բնագրում երկու դեպքում էլ՝ *ἄψυχος* – *apsychus*), ինչպես նաև՝ «անձնաւոր» և «շնչաւոր» (*ἔμψυχος* – *empsychus*) բառերը:

Պատոնյան *ἀναλογία*-ն (*analogia*) թարգմանվում է՝ «համեմատություն, համեմատք»: Իսկ պլուտինյան *ἄπειρον* (*apeiron* – «ապեյրոն»՝ անսահմանություն) եզրը հայերեն բնագրում ստանում է «անբաւ», «անբաւութիւն», «անբովանդակելիք», մի տեղ էլ՝ «յոլովակի» համարժեքները: Դրան զուգահեռ բնագրում գործածվում է նաև *ἀορίστος* մակբայը, որ թարգմանված է «անսահմանաբար»: *ὁμοιομέρης*-ի (*homoiomeres*) դիմաց «նմանամասն» եզրն է, իսկ *ὁμογενής*-ի (*homogenes*)՝ «նմանասեռն»:

«Դատեմ» – *κρίνω*. այս բայից հունարենում ածանցյալ է *κρίσις* (*crisis*) տարբերակը, որտեղից էլ *ἐπίκρισις* (*epicrisis*)՝ «դատողութիւն» բառը: «Դարձեալ», «դարձումն» բառերն ունեն հետադարձ շարժման, շրջվելու իմաստ, հետևաբար բացի *παλινδρομία* (14. [2] / 71. 18)՝ «հետադարձ շարժում» կամ *ἐστραμμένος* (= *στρέφω*) (40. [3] / 118. 17)՝ «շրջվել, հեռանալ» համարժեքներից, դրանք համապատասխանում են նաև *ἀποκατάστασις*՝ «վերականգնում» (41. [2] / 121. 3) բառին:

Հայերեն բնագրի ընդօրինակություններում կա որոշակի շփոթ «խիտ» և «խիստ» բառերի միջև: «*խիտ*»՝ *πυκνός* (*խիտ*, հոծ, թանձր), ունի նաև *παχύς* համարժեքը, որ թարգմանվում է «թանձր»: Իսկ «*խիստ*»՝ *σκληρός*, նշանակում է պինդ, ամուր: Այս շարքում է նաև «խոշոր» եզրը՝ *τραχύς*, որ նշանակում է «կոպիտ, կոշտ, անողորկ, անհարթ»: Մեկ այլ դեպքում «խոշոր»-ը գործածվում է *γλίσχος*-ի դիմաց՝ «թանձր, կպչուն» նշանակությամբ: Իսկ «կարծր» բառով թարգմանվում է *στερεός*-ը: Վերջինս տեղ ունի նաև «հաստատություն»՝ *στερεώμα* (ամրություն, հենարան, նեցուկ) և «հաստատուն»՝ *στερεά* (պնդություն, նաև՝ երկրաչափական մարմին, որ ունի 3 չափում՝ երկարություն, լայնություն, բարձրություն կամ խորություն) եզրերով: «Կարծր»-ի փոխարեն երբեմն օգտագործվում է «պինդ» բառը՝ «պնդագոյնք»՝ *στερεώτερα*, սակայն «պինդ» բառով թարգմանվում է նաև *στρυφνός* (թթվային) եզրը:

Հայերեն բնագրում շատ են նաև հունարենից պատճենված բազմա-
կան հաջող հունաբանությունները՝ «տեսակարար»՝ εἰδοποιός, «աշխարհա-
գործություն»՝ κοσμοποιία, «աշխարհական»՝ κοσμικός, «բարեխառնություն»՝
εὐκρατος, «բարետոհմություն»՝ εὐγένεια, «դառնամաղձեայ»՝ πικρόχολος,
«զգայակցություն»՝ συναίσθησις, «ինքնամատոյց»՝ αὐτόματος, «կրակից»՝
συμπαθής, «ճաճանչակցություն»՝ συναύγεια, «երկտրեքն»՝ δίδυμος և այլն:

Հանդիպում են նաև հունարենից փոխառված կամ, ավելի ճիշտ, տա-
ռադարձված բառեր: Դրանք շատ չեն՝ կամ կենդանիների անվանումները՝
«պինայ» (1. [5]/4. 6), «կարկինոս» (2. [4] /19. 23), «աստաքոս», «տելթիե-
դէսք եւ սիպէք» (2. [4] /19. 21, 22) (տե՛ս ծնթ. 8), «կոտկոզիլոս» (2. [6]) –
κροκόδειλος (21. 13), կամ երկրաչափական եզրերը՝ «իկոսաէդոն» (5. [7]) –
εἰκοσάεδρον (51. 3) (քսանանիստ), «կիւբիկոն» (5. [7]) – κυβικόν (51. 1)
(խորանարդ), «կոնս» (7. [1]) – κώνος (57. 21) (կոն), «ոքտաէդոն» (5.
[7]) – ὀκτάεδρον (51. 4) (ոլթանիստ), պիւււամիդ (5. [7]) – πυραμοειδές (51.
3) (բուրդ), «սկալինէանցն եռանգիւն» (5. [7]) – σκαληνῶν τριγώνων (51. 8)
(անհավասարակողմ եռանկյուն):

Գրքի վերջում ներկայացված «Եզրեր և կարևոր հասկացություն-
ներ» կոչվող բառարանում ընդգրկել ենք ավելի լայն բառացանկ, քան
զուտ բնագիտական-բժշկական եզրաբանությունը: Այսպես ներառել ենք
առավել հաճախ հանդիպող հասկացություններ, նաև հունարենից պատ-
ճենված ուշագրավ նորակազմություններ: Որոշ հունարեն բառերի կցել
ենք իրենց ճշգրիտ հայերեն թարգմանությունը: Դրանք հիմնականում
այն բառերն են, որոնք իմաստով տարբերվում են թարգմանական բնագ-
րում տեղ գտած համարժեքներից:

Լուսանցագրերի մասին

«Յաղագս բնութեան մարդոյ» երկի հայերեն ձեռագրերի մի ստվար
մասում բնագիրը սկսվում է ոճավորված կենաց ծառ պատկերող լուսան-
ցագրերով²²: Ընդ որում, որոշ ձեռագրերում լուսանցագրեր կան ոչ
միայն սկզբում, այլև հաջորդող գլուխների վերնագրերի կողքին, և, թվում է,

²² ՄՄ 552, թ. 5ա, ՄՄ 463, թ. 3ա, ՄՄ 620, թ. 152ա, ՄՄ 2708, թ. 3ա, ՄՄ
1500, թ. 576բ և այլն:

առնչվում են բնագրի բովանդակությունը: Խորագրի մոտ գետեղված լուսանցազարդերի մեծ մասը կառուցված է նույն ձևով. երկու ոճավորված բույս՝ ներքևում միահյուսվելով, պատկերում են պտղաբերության խորհրդանիշը, իսկ վերևում նույն խորհրդանիշն արտահայտված է նրանց սաղարթների միացումով: Կարելի է ենթադրել, որ բույսն իբրև միջնորդ օրգանական և անօրգանական բնությունների միջև, այստեղ խորհրդանշում է մարդու բնությունը, որն ինքը միջաստիճան է նյութական և հոգևոր, բանական և անբանական բնությունների միջև:

Գաղափարապատկերի հիմնական առարկան հատիկն է, որն արտահայտում է ողջ բուսա-կենդանական աշխարհների սերմի կամ նախասկիզբ միավորի գաղափարը: Ասատուր Մնացականյանի մեկնաբանմամբ՝ յուրաքանչյուր ծաղիկ և պտուղ հենց սկզբից իր մեջ կրում է սերմը և նրա գաղափարական իմաստը, իսկ յուրաքանչյուր հատիկ կամ սերմ ոչ այլ ինչ է, քան պտուղ կամ նրա կորիզը, որն իր մեջ կրում է ապագա բույսի, ուստի նաև՝ նրա ծաղիկի ու պտղի սաղմը և նրանց իմաստը²³: Սա կարող է խորհրդանշել նաև մարդու բնությունը՝ իբրև փոքր աշխարհ, որն իր մեջ ամփոփում է մեծ աշխարհի պատկերը:

Կարևոր դերակատարում ունեն նաև չորս տարրերի գաղափարանշանները, քանի որ հատիկը կամ սերմը կարող է աճել ու զարգանալ միայն չորս տարրերի շնորհիվ: Իսկ քանի որ այդ չորսն են համարվում և՛ տիեզերքը, և՛ մարդու մարմինը կառուցող սկզբնատարրերը, դրանց վերագրվել է հզոր ստեղծագործ ուժ: Հետևաբար, հասկանալի է, թե ինչու են զարդարվեստում այնքան առատորեն հանդիպում չորս նշաններով օժտված հատիկների գաղափարաձևերը, և ինչու այդ չորս նշանները հենց չորս տարրերի իմաստն են դրսևորում: Մեր բնագրում նույնպես տարրերի մասին գլուխը որոշ ձեռագրերում²⁴ սկսվում է չորս տարրերը բնութագրող երկրաչափական ձևեր ներառող լուսանցազարդերով՝ քառանկյունիներ, քառակուսիներ, շեղանկյուններ (ռոմբեր), քառաթև զարդեր և այլն:

Հոգու մասին գլուխը մի տեղ սկսվում է չորս շեղանկյունաձև նախշեր պարունակող լուսանցազարդով (ՄՄ 1500, թ. 579ա), մեկ այլ դեպքում՝ թռչնագրով (ՄՄ 2708, թ. 8ա) կամ ոճավորված կենսաց ծառի կենտ-

²³ Տե՛ս Ա. Մնացականյան, Հայկական զարդարվեստ, Երևան, 1955, էջ 83:

²⁴ ՄՄ 620, թ. 172ա, ՄՄ 2708, թ. 18ա, ՄՄ 1500, թ. 585ա:

ըոնում ներդրված պտտախաչով (ՄՄ 620, թ. 159ա): Պտտախաչն առանձին հանդիպում է «Հոգու և մարմնի միավորման մասին» գլխի լուսանցազարդի տեսքով (ՄՄ 620, թ. 168բ):

«Մարմնի մասին» գլուխը ՄՄ 1500 ձեռագրում ներկայացված է սխեմատիկ կառուցվածքով լուսանցազարդով, որտեղ ենթադրաբար մարմինը խորհրդանշող գծագրի վրա պատկերված է տասնչորս կետ (ՄՄ 1500, թ. 584բ): Մեկ այլ ձեռագրում «Մարմնի մասին» գլխի լուսանցազարդը հեքսագրամմայի տեսք ունի՝ երկու հակադիր եռանկյուններով կառուցված վեցազագաթ աստղի (ՄՄ 620, թ. 171ա):

Նմանօրինակ լուսանցազարդեր կան նաև մյուս գլուխների վերնագրերի կողքին²⁵, սակայն դրանց ավելի մանրամասն քննարկումը դուրս է մեր խնդիրների շրջանակից:

²⁵ Տե՛ս ՄՄ 2708, թ. 15բ, 18ա, 38ա (Վասն ճակատագրի), 43բ (Յաղ. նախախնամութեան՝ թուչնագիր): ՄՄ 1500, թթ. 583բ, 586բ (Յաղ. տեսողականի), 591բ, 598բ (Յաղ. նախախնամութեան) և այլն:

Համեմատված ձեռագրերի նկարագրություն

«Բնութեան» քննական բնագրի կազմման համար հիմք ենք ունեցել Մատենադարանի ԺԲ. - ԺԷ. դարերի 13 հնագույն գրչագրերը (ՄՄ 51, 468, 469, 470, 552, 620, 844, 1013, 1500, 1649, 2508, 3184, 3463), որոնք համեմատվել են նաև Երուսաղեմի ԺԱ. դարի հնագույն օրինակի (1862), վենետիկյան հրատարակության տպագիր տարբերակի (Նեմեսիոս, Վ 1889) և հունարեն երկու բնագրերի հետ (PG 40; Nem [Morani] 1987):

Ա – ՄՄ 1013 (հիմք-ձեռագիր). Ժողովածու, 216 (1227 թ.), 242 թերթ:

Սպլենդան վանք, գրիչ՝ Սիմէոն կրոնավոր: Պարունակում է Գրիգոր Նյուսացու «Ժողովողին մեկնութիւն», «Յաղագս երգոյ երգոց», «Խաւսք», «Խաւսք յինն երանութիւնսն», «Ի հայր մեր որ ի յերկինս», «Յորդորումն մանգանց ի կուսութիւն» երկերը:

Թթ. 200բ-41բ՝ «Յաղագս բնութեան մարդոյ», 200բ՝ ցանկ (ա-խբ), 201ա՝ վերնագիր (կարմիր թանաքով). «Գրիգորի Նիւսացույ. Յաղագս բնութեան մարդոյ», որից վեր նույն թանաքով և գրչութեամբ ավելացված է «Գիրքս Նեմեսոյի եպիսկոպոսի Եմեսիոյ է»: Զեռագիրն ամբողջական է, բոլոր գլուխները վերնագրված են և համարակալված:

Օրինաչափություններ. «Օ»-ն ամենուր գրվում է «աւ», «արդեօք»-ը՝ «արդեւք», «մեօք»-ը՝ «մեւք»: Հաճախ ի հայտ է գալիս «գ-ս», «պ-բ» կամ «կ-զ» լծորդությունը: «Զգալ», «զգեստ», «անկանել», «տունկ», «ցանկութիւն», «օգտին» և նման այլ բառերի փոխարեն մեծ մասամբ գրվում է՝ «սգալ», «սգեստ», «անգանել», «տունգ», «տնգոց», «ցանգութիւն», «ակտի»: Նկատվում է անցյալ և անորոշ դերբայների շփոթ: Վերջակետը նշանակում է նախադասութեան ավարտ: Կետադրությունը երբեմն շատ տարբեր է մյուս օրինակներից, և իմաստ է փոխում: Լուծմունքներ գրեթե չկան:

120բ. Յաւելագրութիւն բնագրի ավարտից հետո. «Փառն սուղ ինչ նուազ առնէ գիմացումն ամենայնիս. որոյ անուն բաւական է առ ի յամալթն պիհռոնացոցն եւ այլոց չարեացն, որք ծաղր եւ այլն առնէին զասացեալս ի Տեառնէ»:

Բ – ՄՄ 470. Ժողովածու, 1260-1270 թթ., 290 թերթ: Գրիչ՝ Վարդան Կիլիկեցի, ստացող՝ Յովհաննես արքեպիսկոպոս (Եսայի Նչեցի):

Թթ. 2ա-115ա՝ «Յաղագս բնութեան մարդոյ», 2աբ՝ «ցանկ գրոցս» (ա.-խբ.), 3ա՝ վերնագիր (կարմիր տառերով). «Գրիգոր եպիսկոպոսի Նիւսացո Յաղագս բնութեան մարդո»: Թերթերի շփոթ՝ 73բ -74բ -74ա - 75բ, ապա՝ հերթական:

Օրինաչափություններ. Համառոտագրություններն ու լուծմունքները՝ քիչ: Տեքստում կան գաղափարագրեր՝ աշխարհ, երկիր, երկինք, լուսին, արեգակ բառերի համար: 88բ-ի վերջում («Պատունը՝ ճակատագրի մասին» գլխում) գրված է «մարդոյն գէութիւնն զնախագիտութիւնն Գ այն ունի»: «Արդեօք» բառն ունի ուղղագրական տարբերակներ՝ «արդիւք, արդեաւք, արդւք», բառավերջի և բառամիջի «յ»-երը չկան: Հաճախ է հանդիպում «լ-դ» տարբերակներով գրություն՝ «այդ», «այդայդել», «թոյդ» և այլն:

Գ – ՄՄ 1500. Ճառընտիր, ՉԼԲ. (1282 թ.-ից առաջ), 1189 թերթ: Գեղարդայ վանք, գրիչ, ստացող՝ Մխիթար Այրիվանցի, ծաղկող՝ Սարգիս գրիչ:

Թթ. 576ա-602ա՝ «Յաղագս բնութեան մարդոյ»: Յանկը՝ չիք:

Օրինաչափություններ. գլուխները համարակալված են և վերնագրված, յուրաքանչյուր վերնագրի մոտ լուսանցապատկերներ կան՝ հավանաբար բովանդակությանը համապատասխան: Միջին մասում կան խառնակ թղթեր: Բառամիջի «յ»-ն սովորաբար չի գրվում, բառավերջինը՝ երբեմն գրվում է, երբեմն՝ ոչ («գո», «գոական», «աժմ», «միո»), բաղաձայնի արժեք ունեցող «ու»-ի փխ՝ «ւ» («խառնւած», «նւազ», «արւեստ»), «օ»-ն «աւ», «արդեօք»-ը՝ «արդւաւք»: Գրեթե ամենուր անցյալ դերբայը փոխարինված է անորոշով, «-եալ»-ի փոխարեն՝ «-ել», «-եաց»-ի փոխարեն «-եց»/«-էց» («բարեաց»՝ «բարէց», «կարծեաց»՝ «կարծեց», «աղեաց»՝ «աղէց»), «-եանց»՝ «-ենց»/«-էնց» («միմեանց»՝ «միմէնց»), «-եանս»՝ «-ենս»/«-էնս» («միմեանս»՝ «միմէնս»), «կեանք»՝ «կէնք», «ինքեան»՝ «ինքէն» և այլն: Լուսանցքներում բազմաթիվ լուծմունքներ:

Դ – ՄՄ 469. Ժողովածու, 1260 թ., 294 թերթ: Մեծքար անապատ, գրիչ՝ Ստեփանոս քահանայ, կազմող՝ Առաքել Հնազանդեհնց, ստացող՝ Գրիգոր Բժնեցի (Խոր Վիրապ, 1271):

Առաջարկ

ԹԹ. 9ա-117ա՝ «Յաղագս բնութեան մարդոյ»: 8բ՝ ցանկ (ա. -խբ.): ԺԸ. դ. լրացուած՝ 8բ-10բ: Գրեթե բոլոր գլուխներն առանց գլխահամարների են, բայց վերնագրերը գրված են կարմիրով: Կան թերի և խառնակ էջեր:

Օրինաչափություններ. բառամիջի և բառավերջի «յ»-ն սովորաբար չի գրվում, «օ»-ն՝ «աւ», «արդեօք»՝ «արդեք», «անդէն»՝ «անտէն», «մեօք»՝ «մեաք կամ մեաւք», «բարւոք»-ը՝ հիմնականում «բարիոք», «նիւթ»-ը՝ հաճախ «նւթ», «նւթո», «նւթաւոր», «-ւոյ» վերջավորության փոխարեն՝ «-ո» («կենդանո», «հոգո»): Լուսանցքներում լուծմունքներ:

Ե – ՄՄ 844. Ժողովածու, 213 թերթ, 1158 թ. (2/ց ՄՄ, հատոր Ա., էջ 423), գրիչ՝ անհայտ:

ԹԹ. 3ա-79ա՝ «Յաղագս բնութեան մարդոյ», ցանկ՝ չիք: Առաջին գլխի սկիզբը չկա: Սկսվում է՝ «(յառաջադիմութէնէ) կատարեալ անմահ լինել, այսինքն զօրութեամբ անմահ լինել...»:

Օրինաչափություններ. բազմաթիվ համառոտագրություններ: «Օ»-ն խառնագիր՝ երբեմն՝ «աւ», երբեմն՝ «օ»: Երբեմն էլ «աւ»-ի փոխարեն՝ «օ» («կարգօրիլ», «ցուցօ», «ասացօ», «մանօանդ»): Երբեմն բացակայում է բառամիջի «յ»-ն («գգաութիւն», «գոութիւն», «ծառաութիւն»): Գաղտնավանկ «ը»-եր՝ «բժըշկութիւն», «վերստին», «ծնընդական»: Բազմաթիվ լուծմունքներ:

Զ – ՄՄ 468. Ժողովածու, ԺԲ.-ԺԳ., 283 թերթ: Գրիչ՝ Գրիգոր կամ Առաքել⁶:

ԹԹ. 117ա-283բ՝ «Գրիգորի եպիսկոպոսի նիւսացւոյ Յաղագս բնութեան մարդոյ»: 116ա-7ա՝ ցանկ: Չիք՝ յիշատակարան թարգմանչի: Որոշ էջերի հերթականության չփոթ:

Օրինաչափությունները. «օ»-ն միշտ գրվում է «աւ», «ւ»-ը՝ «եւ», «արդեօք»-ը՝ «արդեւք», «մեօք»-ը՝ «մեւք», «իմացական»-ի փոխարեն՝ «իմանալիք», գաղտնավանկ «ը»-երը գրվում են:

է – ՄՄ 51. Ժողովածու, ԺԳ.-ԺԴ. դդ., 296 թերթ:

ԹԹ. 166ա-236ա՝ «Գրիգորի եպիսկոպոսի նիւսացւոյ Յաղագս բնութեան մարդոյ», ցանկ՝ չիք: Յիշատակարան թարգմանչի՝ 236ա: Օրինաչա-

փոլթյունները. հաճախ բառավերջի «յ»-ն բացակայում է, «օ»-ն հիմնականում գրվում է «օ»: Առկա է «կ-գ» տարբերակներով գրուլթյուն, նաև գրվում է՝ «ընտերք», «կանկուն»:

Ը – ՄՄ 552. Ժողովածու, Ժէ. դ., 262 թերթ:

Թթ. 3ա-120բ՝ «Երանելոյն Գրիգորի Նիւսացւոյ ասացեալ՝ Վասն բնութեան մարդոյ», ցանկ՝ 3ա-4ա (ա-խբ): 227ա-240ա՝ Նեմեսիոսի «բնութեան» երկից ևս մի քանի գլուխ՝ Ա. (227ա-233բ), ԺԳ. (236բ), ԺԶ. (235բ-236բ), ԺԹ. (236բ), ԻԲ. (236ա-238ա): Օրինաչափությունները. առկա է և՛ «և», և՛ «եւ» գրությունը (օրինակ՝ «դեւք» և նման մի քանի բառ), «օ» գրություն չկա, ամենուր՝ «աւ», «արդեօք»-ը՝ «արդեաւք»: Հաճախ են բառամիջի գաղտնավանկ «ը»-երը: Գրվում է՝ «ընդանի», «կանկուն», «սգաստ», «սգայութիւն»: Նախածանցները երբեմն առանձնացված են՝ «նախ յաւժարութիւն», «վերայ ծխութիւն»: Կան պակասող բառեր, արտահայտություններ:

Թ – ՄՄ 3463. Ժողովածու, ԺԴ.-Ժէ. դդ., 323 թերթ: Գրիչ՝ Կիւրոն, ստացող՝ Մխիթար քահանայ:

Թթ. 1ա-129բ՝ «Յաղագս բնութեան մարդոյ»: Առաջին հինգ գլուխները՝ տեղ-տեղ վնասված և դժվարընթեռներ:

Օրինաչափություններ. երբեմն «կ-գ» տարբերակներով գրություն: Առկա է նաև՝ «ընդանի», «սպունկ», «ընդրել» և որոշ այլ ուղղագրական տարբերակներ, սակայն առանց հստակ միօրինակության:

Ժ – ՄՄ 620 . Ժողովածու, 1494 թ., 298 թերթ, Երզնկայ, Կապոսի անապատ (ի համալսարանս Կիւրոսի): Գրիչ՝ Մաղաքիա Բաբերդացի:

Թթ. 152ա-212ա՝ «Գրիգորի եպիսկոպոսի Նիւսացւոյ Յաղագս բնութեան մարդոյն»: Ցանկ՝ չիք: Յիշատակարան թարգմանչի՝ 150աբ:

Օրինաչափություններ. բոլոր գլուխները վերնագրված են, կարմիր տառերով, «օ»-ն՝ «աւ», «և»-ը՝ «և»: Երբեմն բացակայում են բառամիջի «յ»-երը: Հանդիպում է «կ-գ» ձևերով գրություն: Նաև՝ «ըմբել», «խնծոր», «սպունքն»: Լուսանցքներում՝ լուծմունքներ:

Ի – ՄՄ 2508. Ժողովածու, ԺԵ. դ., 308 թերթ: Գրիչ՝ Ոհաննէս, ստացող՝ Սարգիս սարկավագ:

Թթ. 1գ-130ա՝ «Գրիգորի եպիսկոպոսի Նիւսացոյ Յաղագս բնութեան մարդոյն»: Ցանկ՝ չիք: Յիշատակարան թարգմանչի՝ 130ա:

Օրինաչափութիւններ. «օ»-ն՝ հիմնականում «ա», կան եզակի բացառութիւններ՝ «գօրութեան», «շօշափման»: Ամենուր՝ «և», «արդեաւք»: Առկա է «կ-գ» տարբերակներով գրութիւն, ինչպես նաև այնպիսի սակավադեպ ձևեր, ինչպիսիք են՝ «խնծոր», «մախճ», «իշումն», «պնտել»: Երբեմն նշվում են բառամիջի գաղտնավանկ «ը»-երը: Լուսանցքներում տեղ-տեղ ուղղումներ եւ լուծմունքներ:

Լ – ՄՄ 1649. Ժողովածու, ԺԴ., ԺԵ., ԺԶ. դդ., բաղկացած է երեք տարբեր ձեռագրերից: Ձեռ. Բ՝ ԺԵ. դ., 255 թերթ (141-395), ստացող՝ Յոհաննէս:

Թթ. 143ա-252բ՝ «Յաղագս բնութեան մարդոյ»: Ցանկ՝ չիք: Առաջին գլուխը՝ չիք: Սկսվում է երկրորդ գլխի վերջին հատվածից: Էջերի որոշ շփոթ: Յիշատակարան թարգմանչի՝ 252բ:

Օրինաչափութիւններ. գրվում է «օ», «և»: Որոշ բառերում մշտապես նշվում է գաղտնավանկ «ը»-ն՝ «վերըստին», «ծնընդական», «անդընդոց»: Նկատելի է «կ-գ» տարբերակներով գրութիւն, հիմնականում՝ «ցանգութիւն», «անգեալ», «մանգութիւն» բառերում: Լուսանցքներում լուծմունքներ:

Խ – ՄՄ 3184. Ժողովածու, ԺԵ., ԺԶ. դդ., 430 թերթ: Գրիչ՝ Ներսէս, Ստացող՝ Մինաս Վրդ.: Թթ. 1ա-82բ՝ Նեմեսիոսի «Յաղագս բնութեան մարդոյ»:

Օրինաչափութիւններ. հաճախ բացակայում են բառամիջի «յ»-երը, ամենուր գործածվում է «ընդանի», երբեմն՝ «ընդըութիւն», «ըմբել», «վաղճան», «կանկնէ»: Հանդիպում է «կ-գ» ձևերով գրութիւն: Նախածանցները հաճախ առանձնացված են՝ «նախայ յօժարութիւն», «վերայ ծխութիւն»: Հաճախակի են լակունաները՝ նախադասութեան մեջ բացակայող բառեր, հատվածներ կամ բացակայում է ամբողջական նախադասութիւն: Լուսանցքներում լուծմունքներ:

Ծ – Երուսաղեմի Հնագույն օրինակը. **Ձեռ. Եղմ. 1862** (Ձ/Յ Եղմ., էջ 255), 1047 թ. (ՆՂԶ.), 243 թերթ: Գրիչ և կազմող՝ Գէորգ, ստացող Խաչիկ Եպիսկոպոս, վերանորոգող՝ Յովհաննես Սարկավազ:

Թթ. 1ա-243բ՝ «Գրեգորի եպիսկոպոսի Նիւսացւոյ Յաղագս բընութեան մարդոյ»: 1ա, բ – ցանկ. ձեռագիրն ամբողջական է, գլուխները վերնագրված են: 126բ-127ա, 155բ-156ա և 232բ-233ա թերթերի արանքում պակասում են մեկական թերթեր: Լուծմունքներ գրեթե չկան, բայց Հանդիպում են լուսանցքում կամ տողավերևում նույն ձեռագրով և թանաքով գրված և բնագրի անկապտելի մասը կազմող բառեր ու արտահայտություններ, որոնք կամ գրելու ընթացքում մոռացվել են և հետո ստուգման ժամանակ ավելացվել, կամ ի սկզբանէ այդպես են նշվել՝ տեղի տնտեսման նպատակով (65ա, 79բ, 96բ, 120ա, 126ա և այլն):

Օրինաչափություններ. «օ» գրություն չկա, ամենուր գրվում է «աւ», «և»-ը՝ «եւ», «արդեօք»-ը՝ «արդեւք», «մեօք»-ը՝ «մեւք»: Հատկապես բնագրի սկզբնական հատվածում շատ են գաղտնավանկ «ը»-երը՝ «բընութիւն», «բընաւորական», «գընայուն», «գըլուխ» և այլն: Աստիճանաբար դրանց քանակը նվազում է, և բնագրի երկրորդ կեսում հազվադեպ են հանդիպում: Ժամանակ առ ժամանակ առկա է «լ-ղ» տարբերակներով գրություն, հատկապես «այլ» բառի պարագայում:

Ընդհանրություններ ունի **Ձ** ձեռագրի հետ:

Ա, Գ և Զ, Ծ ձեռագրերն ունեն նմանություններ:

Ե, Է բնագրերը մոտ են Վենետիկյան տպագիր օրինակին:

Նեմեսիոս Եմեսացու «Յաղագս բնութեան մարդոյ» երկի հայերեն թարգմանությանն առնչվող մեզ հայտնի ձեռագրերի համառոտ ժամանակագրական ցանկ

*-ով նշված են մեր կազմած բնագրի հիմքում ընկած և վերը նկարագրված տասնչորս ձեռագրերը:

°-ով նշված ձեռագրերը նույնպես մասնակի հետազոտված են և որոշ հատվածներ համեմատված:

- 1*. **Եղմ. 1862, 1047 թ. (Մ),** Յաղագս բնութեան մարդոյ, Գրիչ և կազմող Գէորգ, ստացող *Խաչիկ Եպիսկոպոս, վերանորոգող Յովհաննես Սարկավագ:* Թթ. 2ա-243բ. «Գրիգորի եպիսկոպոսի Նիւսացւոյ Յաղագս բնութեան մարդոյ»:
- 2*. **ՄՄ 844, 1158 թ. (Ե),** Ժողովածու, պակասավոր, Ժ. Դարում վերանորոգված: Թթ. 1ա-79ա. *Նեմեսիոսի «Յաղագս բնութեան մարդոյ»:*
- 3*. **ՄՄ 468, ԺԲ.-ԺԳ. դար (Զ)** Ժողովածու, Գրիչ՝ Գրիգոր (անընթեռնելի փակագիր) կամ Առաքել⁶: Թթ. 117ա-283բ. «Գրիգորի Նիւսացւոյ Յաղագս բնութեան մարդոյ» (Գիրքս Նեմեսոյի՝ եպիսկոպոսի Եմեսիոյ է):
- 4*. **ՄՄ 1013, 1227 թ. (Ա),** Ժողովածու, տեղի՝ Սպլենդազան վանք, գրիչ՝ Սիմէոն կրոնաւոր (Պղնձահանեցի): Թթ. 200բ-241բ. *Նիւսացի «Յաղագս բնութեան մարդոյ» (Նեմեսոյի եպիսկոպոսի Եմեսոյ է գիրքս /201ա/):*
- 5*. **ՄՄ 469, 1260 թ. (Դ),** Ժողովածու, Մեծքար անապատ, գրիչ՝ Ստեփանոս քահանայ, ստացող՝ Գրիգոր Բժնեցի (Խոր Վիրապ, 1271), կազմող՝ Առաքել Հնազանդեցի: Թթ. 9ա-117ա. *Նեմեսիոսի «Յաղագս բնութեան մարդոյ» (Գ, Զ, ԼԹ, Խ գլուխները՝ թերի):*
- 6*. **ՄՄ 470, 1260-1270 թ. (Բ),** Ժողովածու, Գրիչ՝ Վարդան Կիլիկեցի, ստացող՝ Յովհաննէս արքանդբայր, 1675թ. նորոգվել է և լրացվել թերին (Ներսէս Նորոգող): Թթ. 2ա-115ա. «Գրիգորի եպիսկոպոսի Նիւսացո Յաղագս բնութեան մարդոյ»: Լուսանցքներում՝ տեղ-տեղ լուծմունք:
- 7*. **ՄՄ 1500, 1282 թ.-ից առաջ (Գ),** Ճառնտիր, տեղի՝ Գեղարդայ վանք, գրիչ, ստացող՝ Մխիթար Այրիվանցի, Ծաղկող՝ Սարգիս գրիչ, նորոգված Ի. դարում: Թթ. 576ա-602ա. «Գրիգորի եպիսկոպոսի Նիւսացւո Յաղագս բնութեան մարդոյ»:
- 8°. **ՄՄ 422, ԺԳ. դար,** Մեկնութիւն բնութեան գրոցն Նեմեսիոսի՝ Թթ. 1բ-44ա (ամբողջ ձեռագիրը):
9. **ՄՄ 5254, 1280 թ.,** Ժողովածու, տեղի՝ Դեղձուտի վանք (Մահկանաբերդ), գրիչ՝ Աւետիս, Գէորգ քահանայ, ստացող՝ Գէորգ քահանայ (գրիչը): Թթ. 75ա-6ա՝ «Պատճառ բնութեան գրոցս Նեմեսիոսի»:

10. ՄՄ 5596, ԺԳ. դար, Ժողովածու, Գրի^օչ, ստացող՝ Աստուածատուր:
Թթ. 69-72. «Պատճառ ի բնութիւն մարդու գրոցն Նեմեսիոսի»
(միայն գլուխ Ա-ի վերլուծությունն):
11. Վնտկ. 1294 (2637), 1239-1244 թթ., Դաւիթ Անյաղթ Ա. եւ Ժողովածոյ,
տեղի՝ Ատանա, գրիչ՝ Ստեփանոս, ստացող՝ Սմբատ սպարապէտ: Թ.
180ա. «Գրիգորի Նիւսացւոյ Յաղագս բնութեան մարդոյ»: Թթ.
180ա-187ա՝ «Ի չորից գոյացեալ մարդն ասի...», թթ. 187բ-197բ.
«Յաղագս տարերց», «Վասն Յիշողականին», «Վասն սրտմտու-
թեանն», «Վասն կերակրականին», «Վասն մարմնոյ» գլուխները:
Թթ. 198ա-350ա՝ «Երանելոյն Գրիգորի Նիւսացւոյ ասացեալ վասն
բնութեան մարդոյ», ամբողջական բնագիրը:
- 12*. ՄՄ 51, ԺԳ.-ԺԴ. դդ. (է), Ժողովածու, Գործք Առաքելոց: Թթ.
166ա-236ա. «Գրիգորի Եպիսկոպոսի Նիւսացւոյ Յաղագս բնու-
թեան մարդոյ»:
- 13°. ՄՄ 6848, ԺԳ.-ԺԶ. դարեր, Ժողովածու, Գրիչ՝ Յովհաննէս: Թթ.
1ա-150ա՝ Նեմեսիոսի «Յաղագս բնութեան մարդոյ»: Էջերի մեծ
մասը վնասված է և տարբեր թանաքներով ուղղված:
14. ՄՄ 598, 1303 թ., Ժողովածու, Գրիչ՝ աշակերտ Յովհ. Երզնկացւոյ,
1419 թ. և 1745 թ. մասամբ վերանորոգված: Թթ. 122ա-140ա.
«[լուծումն] Վասն բնութեան գրոցն»:
15. Վնտկ. 1516 (1128), 1318 թ., Գրիգոր Նիւսացի Ա, տեղի՝ «յաշխարհս
արեւելից, ի գաւառիս Սիւնեաց, ի հրեշտակաբնակ մենաստանիս,
որ կոչի Գլաճոր, զոր համարձակիմ զսա կոչել երկրորդ Աթէնս եւ
մայրաքաղաք ամենայն իմաստից, ընդ հովանեաւ սուրբ Ստեփա-
նոսի եւ կենսակիր աստուածաբարձ սուրբ Նշանիս, որ ճմարիտ ի
կենաց փայտէն և դամբարանի սուրբ Վարդապէտին Ներսէսի»,
գրիչ, ստացող՝ Յակոբ Թագորցի: Թթ. 1-356. «Գրիգորի Եպիսկո-
պոսի Նիւսացւոյ Յաղագս բնութեան մարդոյն»:
16. Վնտկ. 1517 (1129), ԺԴ. դար, Գրիգոր Նիւսացի Բ, Գրիչն՝ անհայտ,
գրեթէ ամբողջապէս նույնն է նախորդի հետ: Թթ. 1-186 «Գրիգո-
րի Եպիսկոպոսի Նիւսացւոյ Յաղագս բնութեան մարդոյ»: Լու-
սանցքներում լուծմունքներ:

17. Եղմ. 390, նախքան 1383 թ., Մատենագրութիւնք 1, Գրիգոր Նիւսացի, տեղի՝ Կիլիկիա ?, գրիչ՝ Բասիլ: Թթ. 596բ-800ա՝ «Յաղագս բնութեան մարդոյ»: Թթ. 804ա-840բ՝ «Լուծումն բնութեան գրոցն» ըստ առանձին արտահայտութիւնների:
- 18*. ՄՄ 1649, ԺԴ., ԺԵ., ԺԶ. դդ. (Լ), Ժողովածու, 6 տարբեր գրիչներ: Թթ. 141ա-252բ՝ Նեմեսիոսի «Յաղագս բնութեան մարդոյ»:
- 19*. ՄՄ 3463, ԺԴ.-ԺԶ. դդ. (Թ), Ժողովածու, Գրիչ՝ Կիւրոն, ստացող՝ Մխիթար քահանայ: Թթ. 1ա-129բ՝ Նեմեսիոսի «Յաղագս բնութեան մարդոյ»:
- 20*. ՄՄ 620, 1494 թ. (Ժ), Ժողովածու, տեղի՝ Երզնկայ, Կապոսի անապատ (ի համալսարանս Կիպրոսի), գրիչ՝ Մաղաքիա Բաբերդացի: Թդ. 152ա-212ա՝ «Գրիգորի եպիսկոպոսի Նիւսացւոյ Յաղագս բնութեան մարդոյն»: Լուսանցքներում լուծմունքներ:
- 21*. ՄՄ 2508, ԺԵ. դար (Ի), Ժողովածու, գրիչ՝ Ոհաննէս, ստացող՝ Սարգիս սարկավագ: Թթ. 1գ-130ա՝ «Գրիգորի եպիսկոպոսի Նիւսացւոյ Յաղագս բնութեան մարդոյն»:
- 22*. ՄՄ 3184, ԺԵ., ԺԶ. դդ. (Խ), Ժողովածու, գրիչ՝ Ներսէս, ստացող՝ Մինաս Վարդապէտ: Թթ. 1ա-82բ՝ Նեմեսիոսի «Յաղագս բնութեան մարդոյ»:
23. ՄՄ 55, 1489 թ., Ժողովածու, տեղի՝ Երզնկայ, գրիչ՝ Գրիգոր Տարօնացի, ստացող՝ Յովհաննէս Համշենցի: Թթ. 162ա-303բ. «Մեկնութիւն գրոցն բնութեան»:
24. ՄՄ 3275, 1494 թ., Ժողովածու, տեղի՝ Կապոսի վանք (Երզնկա), գրիչ՝ Մաղաքիա Բաբերթացի: Թթ. 152ա-219բ՝ «Մեկնութիւն գրոցն բնութեան»:
- 25°. ՄՄ 417, ԺԶ. դար, Ժողովածու, Գրիչ՝ Բասիլ: Թթ. 1ա-79ա՝ «Գրիգորի եպիսկոպոսի Նիւսացւոյ Յաղագս բնութեան մարդոյ»: Թթ. 144բ-169ա՝ «Լուծումն բնութեան գրոցն» (գլուխ առ գլուխ):
26. ՄՄ 463, 1628 թ.-ից առաջ, Ժողովածու, Գրիչ՝ Բասիլ: Թթ. 2բ-80ա. «Գրիգորի եպիսկոպոսի Նիւսացւոյ Յաղագս բնութեան մարդոյ»: Թթ. 140բ-164բ՝ «Լուծումն բնութեան գրոցն» (մեկնաբանութիւն ըստ առանձին արտահայտութիւնների)

- 27°. ՄՄ 465, Ժէ. դար, ժողովածու, Գրիչ՝ Դաւիթ, ստացող՝ Յովհաննես քահանայ: Թթ. 1բ-104բ՝ «Գրիգորի եպիսկոպոսի Նիւսեա Յաղագս բնութեան մարդոյ»: Լուսանցքներում՝ բազմաթիւ լուծմունքներ:
- 28°. ՄՄ 466, 1628 թ., ժողովածու, տեղի՝ ԼէՎ (թէ՞ ԼՈՎ), գրիչ՝ Պողտանի Խաչքո, Եռաքոյի Միսքո, Մերիկի Հանգոյ: Թթ. 2ա-88բ՝ «Գրիգորի եպիսկոպոսի Նիւսեա Յաղագս բնութեան մարդոյ՝ Խորին խորհրդով»: Թթ. 88բ-115ա՝ «Լուծմունք բնութեան գրոցն Նեմեսիոսի» (անանձին արտահայտութիւնների բացատրութիւնների ձևով):
- 29°. ՄՄ 467, Ժէ. դար, ժողովածու, Գրիչ՝ Միքայէլ Դպիր: Թթ. 2ա-94բ՝ Նեմեսիոսի «Վասն բնութեան մարդոյ»: Բազմաթիւ լուծմունքներ՝ ինչպես լուսանցքներում, այնպես էլ բնագրում:
- 30*. ՄՄ 552, Ժէ. Դար (Ը), ժողովածու, Թթ. 3ա-120բ՝ «Երանելոյն Գրիգորի Նիւսացւոյ ասացեալ Վասն բնութեան մարդոյ» բնագիրն ամբողջութեամբ: Թթ. 217ա-227ա՝ «Յաղագս բնութեան մարդոյ» (ի չորից գոյացեալ. . .): Թթ. 227ա-240ա՝ «Յաղագս բնութեան մարդոյ» խառը հերթականութեամբ 6 գլուխ՝ Դ (238ա-240), Ե (227ա-233բ), ԺԳ (236բ), ԺԶ (235բ-236բ), ԺԹ (236բ), ԻԲ (236ա-238ա):
- 31°. ՄՄ 2095, Ժէ. դար, ժողովածու, Թթ. 220ա-320բ՝ «Արբոյն Գրիգորի եպիսկոպոսի Նիւսացւոյ յաղագս բնութեան մարդոյն ասացեալ»:
- 32°. ՄՄ 2103, Ժէ. դար, ժողովածու, Թթ. 306ա-384ա՝ Նեմեսիոսի «Յաղագս բնութեան մարդոյ»: Լուսանցքներում՝ լուծմունքներ:
- 33°. ՄՄ 2509, Ժէ. դար, ժողովածու, ստացող՝ Յակոբ Կարնեցի: Թթ. 1-111ա՝ «Գրիգորի եպիսկոպոսի Նիւսացւոյ Յաղագս բնութեան մարդոյ»:
- 34°. ՄՄ 1480, 1615-1617 թթ., ժողովածու, Գրիչ՝ Վարդան Հիզանցի, Ստեփանոս, ստացող՝ Բարսեղ Բաղիչեցի, Յոհան, կազմող՝ Գրիգոր: Թթ. 304ա-342ա՝ «Մեկնութիւն բնութեան գրոցն Գրիգորի Նիւսացւոյ»: Թթ. 357բ-368ա. «Լուծմունք բնութեան գրոցն»: Թթ. 372աբ «Լուծմունք ծաղկաքաղ Վարդան վարդապետի արարեալ Յաղագս անձին» (անմիաբան է հնոցն ամենեցուն. . . .):

35°. ՄՄ 6622, Ժէ. դար, Ժողովածու, գրիչ՝ Պօղոս Գաւրուցի-Սասնցի, ստացող՝ Վարդան Բաղիշեցի: ԹԺ. 92ա-168ա՝ «Գրիգորի եպիսկոպոսի Նիւսացւոյ Յաղագս բնութեան մարդոյ»: Բազմաթիւ լուծմունքներ:

36°. ՄՄ 7135, 1640 թ., Ժողովածու, Գրիչ՝ Աւետ: Յանկը ներկայացված է խառը՝ «Բնութեան» և «Կազմութեան» երկերի գլուխների վերնագրերով ըստ այբբենական կարգի: Թղ. 1ա՝ «Նախածանօթութիւն. Ով ուսումնասէր՝ զցանկս գայս, որ է երկուց գրոցն [գլխոց] Գրիգորի Նիւսացւոյն, այսինքն՝ բնութեան և կազմութեան մարդոյս այսպէս վարեա. Զի կարմրագոյն բենն՝ զոր տեսանիս ի ցանկոջդ՝ նշանակէ զբնութեան գիրսն, իսկ կենն ցուցանէ զգիրսն կազմութեան. և հետեւեալ՝ բ «սևագոյն տառքն, առաջինն ցուցանէ զթղթահամարն՝ և երկրորդն՝ զգլխահամարն»:

Թղ. 4բ՝ «Ի զրաւ Յանկիս Մատենական,

որ է երկուց գրոցն պատուական:

Մարդոյս Բնութեան և Կազմութեան,

Գրիգորի տեսչի Նիւսեայն:

Զայնիւ գոհաբանողական,

օրհմենք զԵրրեակն հոմաբնական:

Ամմէ---, , ---ն

քանզի բանքն ի սկզբանէն մինչև ցվախճանն իւր

մի գմտօք՝ և դիտուրբք [դիւրութեամբք??] ընթանան»:

ԹԺ. 6ա-173բ՝ «Սրբոյ Գրիգորի եպիսկոպոսի Նիւսացւոյ Յաղագս բնութեան մարդոյ ասացեալ»:

37°. ՄՄ 9427, Ժէ. դար, Ժողովածու: ԹԺ. 4ա, 5ա կնիք՝ «ակադեմիկոս Հակոբ Մանանդյան»: ԹԺ. 5ա-121ա՝ «Երանելոյն Գրիգորի Նիւսացւոյ ասացեալ վասն բնութեան մարդոյ»:

38°. ՄՄ 621, Ժէ. դար, Գիրք պատճառաց եւ լուծմանց: ԹԺ. 35ա-51բ՝ «Լուծմունք մեկնութեան բնութեան գրոցն»: Վերլուծված է գլուխ-գլուխ, ըստ առանձին արտահայտութիւնների: ԹԺ. 80ա-166բ՝ «Մեկնութիւն բնութեան գրոց»:

Ընդհանուր վերլուծութիւն է՝ առանձին գլուխների հերթական մեկնաբանմամբ:

39. ՄՄ 1919, 1683 թ., Գրիչ՝ Պետրոս, Ղուկաս վարդապետք, Վարդան Յունանեան, ստացող՝ Բարսեղ եպիսկոպոս, Նահապէտ Վրդ.: ԹԺ.

142բ-145բ՝ «Տեսութիւն ըստ մասին բնութեան մարդոյ, որ ի Նիւսացոյ եպիսկոպոսն է պետս մեր» («Յաղագս բնութեան մարդոյ» Ա գլխի մեկնութիւնն է):

40. ՄՄ 4765, 1695 թ., Ժողովածու. Ճառք, տեղի՝ Պօլիս, գրիչ՝ Կարապետ երէց: Թթ. 73ա-74ա՝ «Պատճառք գրոցն Նեմեսիոսի»:
41. Եղմ. 1781, 1636 թ., Յաղագս բնութեան մարդոյ, տեղի՝ Սուրբ Աստուածածնի վանք, գրիչ՝ Թորոս: Թթ. 1ա-195ա՝ բնագիրը:
42. Եղմ. 1084, 1604 թ., Ոսկեփորիկ, Ժողովածու, տեղի՝ Լով, գրիչ եւ ստացող Ղազար դպիր: Թթ. 552ա-622բ՝ «Գրիգորի եպիսկոպոսի Նիւսեա Յաղագս մարդոյ բնութեան»:
43. Եղմ. 1122, Ժէ. դար, Ժողովածոյ. Գրիգոր Նիւսացի եւ Դաւիթ Ներգինացի, Ստացող Յովհ. Առաջնորդ Երուսաղեմի: Թթ. 2-266՝ «Յաղագս բնութեան մարդոյ»:
44. Եղմ. 1177, թիվ ?, Յաղագս բնութեան մարդոյ, Թթ. 3-162՝ բնագիրը («... աւարտեցաւ բնութեան գիրքս Գրիգոր անուն կոչեցելոյ»):
45. Եղմ. 757, 1677 թ., Մատենագիրք, տեղի՝ Պրուսա, ստացող՝ Սուքիաս Վարդապետ, գրիչ՝ Նիկողայոս Սարկաւազ: Թթ. 566բ-695ա՝ Գրիգոր Նիւսացի, «Յաղագս բնութեան մարդոյ»: Թթ. 794բ-833ա՝ «Լուծմունք բնութեան գրոցն» (առանձին արտահայտությունների մեկնաբանմամբ):
46. Եղմ. 820, 1677 թ., Մատենագրութիւնք, տեղի՝ Պրուսա, գրիչ՝ Նիկողոս Սարկաւազ, ստացող՝ Սուքիաս Վարդապետ: Թթ. 169ա-337բ՝ Գրիգոր Նիւսացի, «Յաղագս բնութեան մարդոյ»: Թթ. 338բ-366ա՝ «Լուծումն բնութեան գրոց» (առանձին արտահայտությունների մեկնաբանմամբ):
47. Վնտկ. 1518 (58), 1619, Գրիգոր Նիւսացի, տեղի՝ «յերկիրս Իլխայ, ի քաղաք Լով, առ դրան ննջման սուրբ Աստուածածնին», գրիչներ՝ Խաչքոյ Տոմաժիրսքի, Բասիլ, Գրիգոր Տոմաժիրսքի, ստացող՝ Տէր Զաքարիա (որդի պարոն Տէր Գասբար աւագերեցի), պատկանել է Ստեփանոս Ռոշքային: Թթ. 2ա-203բ՝ «Գրիգորի եպիսկոպոսի Նիւսացոյ Յաղագս բնութեան մարդոյ»: Թթ. 204ա-237ա՝ «Լուծումն բնութեան գրոց»:

48. **Վնտկ. 1519 (2119)**, 1643 թ., Գրիգոր Նիւսացի, տեղի՝ անյայտ, գրիչ՝ Ներսէս, ստացող՝ մահաբախ Մուրատջան: Թթ. 1ա-175ա՝ «Վասն բնութեան մարդոյ» բնագիրը:
49. **Վնտկ. 1520 (1241)**, 1656 թ., Գրիգոր Նիւսացի, տեղի՝ անյայտ, գրիչ՝ Աբրահամ, ստացող՝ Թովման Վարդապէտ՝ «ի Գողթն Գաւառէ եւ ի գեղկեն Վանատայ»: Թթ. 1ա-230բ՝ «Վասն բնութեան մարդոյ»:
50. **ՄՄ 419**, 1777, ժողովածու: Գրիչ՝ Գրիգոր Դպիր: Թթ. 6ա-11ա՝ «Յաղագս բնութեան մարդոյ» (Ի չորից գոյացեալ ասի. . .): Թթ. 12ա-65բ՝ «Նիւսացոյ ասացեալ Վասն բնութեան մարդոյ»:
51. **ՄՄ 421**, ժԼ. դար, ժողովածու: Թթ. 3ա-48բ՝ «Գրիգորի եպիսկոպոսի Նիւսեա՝ Յաղագս բնութեան մարդոյ»: Լուսանցքներում լրացումներ գրչի ձեռքով:
52. **ՄՄ 2708**, 1785 թ., ժողովածու: Տեղի՝ Կ. Պոլիս, ստացող՝ Իսահակ եպիսկոպոս Գեղամացի: Թթ. 3ա-49ա՝ «Գրիգորի եպիսկոպոսի Նիւսեա Յաղագս մարդոյս բնութեան»:
53. **ՄՄ 9604**, ժԼ. դար, ժողովածու: Թթ. 2ա-48ա՝ «Գրիգորի եպիսկոպոսի Նիւսեա. Յաղագս բնութեան մարդոյ»:
54. **ՄՄ 861**, 1717 թ., Գրիչ՝ Մելքիսէթ: Թթ. 322ա-456ա՝ «Մեկնութիւն բնութեան գրոցն»:
55. **ՄՄ 6562**, 1771 թ-ից առաջ, Թթ. 168ա-190բ՝ «Մեկնութիւն բնութեան գրոցն»:
56. **Եղմ. 172**, 1756-1759 թթ., Մեկնութիւն եւ լուծմունք, Գրիչ՝ Սարգիս Երուսաղեմցի, ստացող՝ Սիմեոն Վրդապէտ Նջեցի, թթ. 391-463՝ «Մեկնութիւն գրոցն բնութեան»:
57. **Եղմ. 1810**, 1788 թ., Մատենագիրք: Տեղի՝ Կ. Պոլիս, գրիչ՝ Յարութիւն Միքայէլեան, ստացող՝ Տիր. Համբարձում: Թթ. 3-98 Գրիգոր Նիւսացի, «Յաղագս բնութեան մարդոյ»:
58. **Վիեն. 330 (90)**, ժԼ. դար (բայց քիչ մը ավելի կանուխ կրնա ըլլալ), «Գրիգորի եպիսկոպոսի Նիւսացոյ Յաղագս մարդոյն բնութեան»:
59. **Վնտկ. 1521 (294)**, 1753 թ., Գրիգոր Նիւսացի: Տեղի՝ Պասրա, գրիչ՝ Հ. Գէորգ Վարդապէտ Պաղտատեան (Նախագաղափար՝ Զուղայի

առաջնորդ Գէորգ Վարդապէտի անթուական օրինակը): ԹԹ. 1-243 «Գրիգորի Եպիսկոպոսի Նիւսացւոյ Յաղագս բնութեան մարդոյ»:

60. Վնտկ. 1217 (1332), 1732 Թ., Տօնապատճառ ԺԲ: Տեղի՝ Երուսաղէմ, գրիչ եւ ստացող՝ Աբրահամ: ԹԹ. 284բ-291ա՝ «Պատճառ բնութեան գրոցս»:
61. ՄՄ 418, 1818 Թ., Ժողովածու: Տեղի՝ Կ. Պոլիս, գրիչ՝ Գրիգոր Հոճայ: ԹԹ. 1ա-74բ՝ «Գրիգորի Եպիսկոպոսի Նիւսացւոյ Յաղագս բնութեան մարդոյ»: Լուսանցքներում նույն գրչով լուծումներ:
62. ՄՄ 2790, ԺԹ. դ., «Նեմեսիոսի Յաղագս բնութեան մարդոյ», ԹԹ. 2ա՝ «Նիւսացւոյն Գրիգորի Եպիսկոպոսի ասացեալ վասն մարդակազմութեան թարգմ. ի յունէ ձեռամբ Ստեփանոսի Սիւնեաց Եպիսկոպոսին – ԺԹ. դ. Մ[Եսրոպ] Եպ[իսկոպ]»: ԹԹ. 3ա-60ա՝ բնագիրը:
63. Վնտկ. 1525 (1601), ԺԹ. դար, Գրիգոր Նիւսացի (Մատեանս Հաւատարիմ ընդօրինակութիւնն է «Գրիգոր Նիւսացի Ա» օրինակին՝ ձեռ. 1516 (1128)):
64. Տյուրք. XIII 75, Թիվ ?, ԹԹ. 2ա-127ա՝ «Նեմեսիոսի Յաղագս բնութեան մարդոյ», ԹԹ. 228բ-267ա՝ «Լուծումն բնութեան գրոց»²⁶:
Լեոն Հովհաննիսյանը հիշատակում է նաև ԺԷ.-ԺԸ. դարերի իր անձնական օրինակը:

²⁶ F. N. Finck und L. Gjandschezian, Systematisch-Alphabetischer Hauptkatalog der Königlichen Universitätsbibliothek zu Tübingen, Tübingen, 1907, էջ 113-114:

Կրկնվող տարրնթերցվածներ և համեմատված ձեռագրերի ուղղագրական առանձնահատկություններ

1. Բառավերջի և բառամիջի «յ»-ի գրությունն անկանոն է. «-այ», «-ոյ» վերջավորությամբ բառերի սովորական դիրքում անհրաժեշտ «յ»-ն երբեմն չկա (Բ, Գ, Դ ձեռագրերում զանգվածաբար բացակայում են բառամիջի «յ»-երը, հաճախ էլ նաև բառավերջինը, Ե, Ժ, Խ՝ ավելի շատ նկատվում է բառամիջի «յ»-երի պակաս, հատկապես՝ «գգառութիւն», «գգառուն», «գնառուն», «մնառուն», «երկնաին» և նմանատիպ այլ բառերում, իսկ Է-ում՝ բառավերջի): Երբեմն էլ հակառակը՝ որոշ ցուցական և անձնական դերանունների ու մակբայների վերջում «յ» կա (օր.՝ Ա ձեռագրում հանդիպում են «նորայ», «նոսայ», «նմայ», «նայ», «ապայ» ձևերը): Ընդունված կանոններին համապատասխան (Խաչերյան 1962, էջ 61) միօրինակության ենք բերել՝ պետք եղած տեղերում ավելացնելով անհրաժեշտ «յ»-երը, և լրացուցիչ անգամ չնշելով դրանք տարրնթերցվածներում:

2. Ամենուր պահպանել ենք «աւ» գրությունը, որն առկա է հատկապես հնագույն գրչագրերում: Երբեմն էլ «աւ» երկհնչյունի փոխարեն «օ» է, եթե անգամ այդ «աւ»-ի ա-ն և լ-ը պատկանում են երկու հաջորդական վանկերի (օրինակ՝ Ե ձեռագրում կան «կարգօորիլ», «ցուցօ», «ասացօ», «մանօանդ» և այլն): Նմանատիպ տարրնթերցվածներն անտեսել ենք:

3. «Եւ» մեծ մասամբ գրված է մեկ տառով՝ «ւ», սակայն դարձյալ ընդունելով, որ բնագրի թարգմանություն հեղինակներ Ստեփանոս Սյունեցու և Դավիթ Հյուսիստոսի ժամանակ (Ը. դար) այն դեռևս չէր գործածվում, ամենուր դրել ենք «եւ»՝ չնշելով տարրնթերցվածներում:

4. Որոշ ձեռագրերում հատկապես շատ է գաղտնավանկ «ը»-երի գրությունը: Երբեմն դրանք և՛ բառասկզբի «ը»-եր են, և՛ բառամիջի (Ա, Բ, Ծ՝ «ըզհոգին», «ըստացեալ», «ըստացուածոյ», նաև՝ «հանգըստեան», «հըպել»), մյուսներում նշվում են միայն բառամիջի «ը»-եր (Ե, Զ, Ը, Ի՝ «բժըչկաց», «բժըչկութեան», «հըպաբար», «տըւեալ»): Սակայն կան բառեր, որոնց մեջ «ը»-ն կանոնավորապես գրվում է գրեթե բոլոր ձեռագրե-

ըում (օրինակ՝ «սնընդական», «ծնընդական», «եղընգունս», «ռընգունս» կամ «ըռընգունս», «վերըստին», «կորընչի», «մարտընչին», «անըընդոց»): Բնագրում դրանք անտեսել ենք՝ առանց նշելու տարընթերցվածներում:

5. «Արդեաւք» բառի գրությունն անկանոն է: Նույն ձեռագրում կարող են հանդիպել՝ «արդեւք», «արդեաւք», «արդաւք» ձևերը: Սակայն քանի որ հնագույն է համարվում «արդեւք» ձևը (Եղնիկ, Հ 1, 1992, էջ 45; Դուրյան, Այբուբենք, 1928, էջ 10), որն առկա է նաև մեր հիմք-ձեռագրում և մյուս հնագույն գրչագրերում (ԺԲ.-ԺԳ. դարեր), միօրինակության ենք բերել՝ ամենուր ներկայացնելով «արդեւք»՝ առանց հատկանշելու հետևողականություն:

6. Անկանոն է նաև «երկիւղ» («երկեղ», «երկեւղ», «երկիղ»), «լեարդ» («լէրդ», «լիարդ»), «արիւն» («արէն»), «կարծեաւք» («կարծեւք», «կարծեանաւք»), «բիւրք» («բեւրք», «բւրք») և նմանատիպ այլ բառերի գրությունը: Բերել ենք միօրինակության՝ նշելով առավել հաճախ հանդիպող ձևերը:

7. Ըստ դասական գրաբարի կանոնի, որն ամրագրված է նաև «գրչության արվեստի» լեզվա-քերականական տեսության հիմնադիրները համարվող Արիստակես Գրչի և Գևորգ Սկևռացու աշխատություններում, «ի»-ով վերջավորված բառերի թեքման ժամանակ «ի»-ն վերածվում է «ւ»-ի (բարի-բարւոյ, որդի-որդւոյ, հոգի-հոգւոյ): Ինչպես նաև արգելվում է «ւ» դնել այնտեղ, որտեղ քերականորեն չի պատճառաբանվում (օր.՝ մարդւոյ, ցորենւոյ, գիշերւոյ ձևերի փխ պետք է լինի՝ մարդոյ, ցորենոյ, գիշերոյ) (Խաչերյան 1962, էջ 84): Ձեռագրերի մի մասում այս հարցում կա անկանոնություն, իսկ երբեմն էլ՝ այն համընդհանուր ձևով խախտվում է, ուստի ամենուր կարգում ենք՝ «բարո(յ)», «հոգո(յ)» (Գ, Դ, Ի ձեռագրերում): Հաշվի առնելով այս օրենքը, բնագրում հանդիպող բոլոր նմանատիպ բառերը դրել ենք ճիշտ ձևով՝ առանց լրացուցիչ անդրադարձի:

8. Ձեռագրերում հաճախ են կապգրությունները: Արիստակես Գրչիը համառոտված բառերի նախնական գործածությունը վերագրում է մեր առաջին թարգմանիչներին, որոնք անհրաժեշտ են համարել սահմանադատել և միայն համառոտված գրել այն անունները, որոնք ճանաչված են

գերագույն սրբություն և անեղծանելի (աստուած, Հիսուս, Քրիստոս, տէր, սուրբ) հնարավոր աղավաղումներից դրանք գերծ պահելու համար (Խաչերյան 1962, էջ 86): Սակայն այս օրենքը հետագայում ընդհանրացավ ընդգրկելով բազմաթիվ բառեր: Դա մեծ մասամբ վերաբերում է «ութիւն», «-ութեան» վերջածանցներ ունեցող գոյականներին («-ութի», «-ութե»), որը միշտ չէ, որ ենթարկվում է հստակ կանոնների: Երբեմն էլ գաղափարագրեր են դրվում «աշխարհ», «արեգակն», «լուսին», «երկիր» բառերի փոխարեն (Բ): Քննական բնագրում բոլոր այդ ձևերը ներկայացրել ենք բացված:

9. Որոշ բառեր հանդես են գալիս ուղղագրական տարբերակներով «գ-ս»-ով, «պ-բ»-ով կամ «կ-գ»-ով (դա հաճախակի է հանդիպում հատկապես Ա, Գ գրչագրերում, սակայն առկա է նաև Դ, Ե, Ժ, Ի -ում) «սգայականացն», «սգայութիւն», «անսգայսն», «սգեստ» կամ «ըմբել», «ըմբեմք» կամ «անգանել», «տունգ», «ցանգութիւն», «մանգունք», «խորամանգութիւն», «աւկտի», «աւքտի», «կանկուն», «սպունկն»: Այդ տարբերակները զանց ենք առել: Միայն հազվադեպ օգտագործված ձևերը նշել ենք տարբերակներով:

10. Անկանոն գրություն ունի նաև «ընտանի» բառը, որը գալիս է այդ բառի նախնական կառուցվածքից. «ընտանի»= ընդ տանի»: Սղվում է տ-դ բաղաձայններից որևէ մեկը՝ առաջ բերելով գրություն տարբերություն՝ «ընտանի» / «ընդանի»: Վերցրել ենք ներկայումս ընդունված ձևը:

11. «Վախճան» բառի գրությունը Ա և Գ գրչագրերում «վաղճան» է, իսկ Խ-ում՝ «վաղճան»: Ա-ում հաճախ է հանդիպում «աւգ» բառի «ող» գրությունը, Գ-ում «սկզբանց»-ը գրվում է «սկսբանց», Ա, Գ, Զ, Խ -ում «գէջ» -ի փոխարեն «գէճ» է, Ի-ում առկա են «խնծոր», «մախճ», Գ, Ի-ում երբեմն «յիշման»-ի փոխարեն «իշումն» ձևն է, Գ-ում «սրամտութիւն» ձևի փոխարեն կարգում ենք «ստամտութիւն»: Հիմնականում զանց ենք առել թողնելով ներկայումս ընդունված ձևերը:

12. Երբեմն էլ նկատվում է անցյալ և անորոշ դերբայների շփոթ, ըստ որում ավելի հաճախ անցյալ դերբայը փոխարինվում է անորոշով: Գ ձեռագրում դա համընդհանուր բնույթ է կրում՝ ամենուր «-եալ» վերջա-

վորութիւնը փոխարինված է «-ել»-ով, բայց ոչ միայն: Միաժամանակ «-եաց»-ի փոխարեն «-եց» է կամ «-էց» («բարեաց/ բարէց», «կարծեաց/կարծեց», «աղեաց/աղէց»); «-եանց»՝ «-ենց» կամ «-էնց» («միմեանց/միմէնց»), «-եանս»՝ «-ենս» կամ «-էնս» («միմեանս/միմէնս»), ինչպես նաև «կեանք/կէնք», «ինքեան/ինքէն» և այլն: Քանի որ այս կրկնվող տարրնթերցվածները վերաբերում են Գ ձեռագրի ողջ ընթացքին, այդ պատճառով այլ ձեռագրերում ավելի հազվադեպ հանդիպող նմանատիպ տարրնթերցվածները նշելով հանդերձ, զերծ ենք մնում Գ-ի համար դասնելուց: Իսկ Ա ձեռագրում բավական հաճախ հանդիպում է հակառակ երևույթը, երբ անորոշ «-ել» վերջավորութիւնն է ներկայացվում «-եալ» ձևով, ինչը չենք արտացոլել տարրնթերցվածներում:

13. Ձեռագրերում «լ-ղ» լծորդութիւնը ևս հաճախ է հանդիպում, հատկապես՝ «Ջիլ-Ջիղ», «լողակ-ղողակ», «Պլատոն-Պղատոն», «թոյլ-թոյղ» տարբերակներով: Սակայն վերը նշվածի նման, այս անգամ Բ ձեռագրում է այն համընդհանուր բնույթ կրում, հատկապես «այլ» բառի պարագայում՝ «այղ», «այղայղել», «այղագգ», «այղայղակից»: Էդ. Աղայանի «Գրաբարի քերականութիւն» (1964, էջ 357) գրքում կարդում ենք. «Մասնաւոր ուղղագրական կանոնն այն է, որ «յ» և «լ» ձայնորդներից հետո միշտ գրուել է «ղ» և ոչ մի դեպքում «լ» (գայղ, այղ, շիւղ): Հետագայում այս կանոնը փոխվել է հնչիւնափոխական երևույթներին համապատասխան»: Այսինքն մեր հին ձեռագրերում պահպանված այս կարգի գրութիւնները հնագույն վիճակն են ներկայացնում: Սակայն ի նկատի ունենալով, որ հազվադեպ ձեռագրերում է այդպես զանգվածաբար պահպանվել գրութիւնն այս ձևը, և քննական բնագիրն առավել դժվարնթերցելի չդարձնելու համար, այլևս դրան չենք անդրադառնա: Գրութիւնն այս տարբերակների առկայութիւնը բոլոր ձեռագրերում առաջ է բերում նաև «Ջիլ-Ջիղ» շփոթը (տե՛ս ծնթ. 6):

14. Գ և Դ ձեռագրերում բաղաձայն «ու» -ի փխ դրվում է «լ», հատկապես Գ-ում այն կրում է ընդհանուր բնույթ («թւի», «թւեցալ», «պատւեսցէ»):

15. Անտեսել ենք նաև անտեղի բառաբաժանումները կամ հակառակը՝ բառամիացումները, սխալ տողադարձերը, ակնհայտ վրիպակները:

16. Կետադրությունը նշանակել ենք ներկայումս ընդունված կանոններով՝ ըստ իմաստի և ըստ մեր ընկալման, հաշվի առնելով նաև, ինչպես գրչագրերում առկա, այնպես էլ՝ հունարեն բնագրի կետադրությունը: Պարբերութունները ևս առաջարկել ենք՝ ելնելով իմաստից, ինչպես նաև հիմք-ձեռագրում, Վենետիկյան տպագիր օրինակում և հունարեն բնագրում առանձնացված պարբերութուններից:

17. Շաղկապված համադաս անդամների նույն, սովորաբար՝ «-ն» հոգի դրվելը երկու անդամների կամ միայն դրանցից մեկի վրա ոչ մի կանոնի չի հետևում: Թեպետ դասական գրաբարում սովորաբար համադաս անդամներից միայն առաջինն է հոդ ստացել (Եզնիկ, Հ. 2, 1992, էջ 8), ինչը մեծ մասամբ առկա է նաև մեր հիմք-ձեռագրում, սակայն ի նկատի ունենալով երկի նյութական թարգմանության փաստը, քերականական կառույցների տարընթերցումների դեպքում նախընտրելի ենք համարել հունարեն սկզբնագրով հաստատվողները: Դասական գրաբարում պահպանվում էր նաև հոգնակի ենթակայի ստորոգելիական վերադրի թվային համաձայնութունը, ինչը ևս հիմնականում փորձել ենք պահպանել:

18. Բնագրին հարազատ մնալու և հունարենի հնչողութունը պահպանելու համար հատուկ անունների փակ վանկերում Օ-ն արտահայտվել է «ու» գրությամբ՝ «Մովսէս», «Պղատովն», «քրիստովնեա», «Ամովնեա» և այլն: Այս նախնական ձևը հիմնականում պահպանված է Ա ձեռագրում: Սակայն ձեռնպահ ենք մնացել դրանք իբրև տարընթերցված նշելուց, այլ գործածել ենք ընդունված ձևերը:

Կարինե Մոսիկյան

Հապավումներ և պայմանական նշաններ

1. բառի վերևում նշված թիվը՝ տարընթերցված
2. բառի ներքևում, փակագծի մեջ նշված թիվը՝ ծանոթագրություն
3. չիք՝ չկա
4. լուս՝ լուսանցքում
5. ^ տողավերևում
6. փխ՝ փոխարեն
7. +՝ հավելյալ բառ կամ արտահայտություն
8. լծ՝ ձեռագրային լուծմունքներ
9. թարգմ.՝ բնագրում բացակայող կամ աղճատված թարգմանությունը
նոր թարգմանություն հունարեն բնագրից
10. * վերականգնված ընթերցում
11. < > հայերեն բնագրերում բացակայող բառ կամ արտահայտություն, որն առկա է հունարեն բնագրում
12. \Rightarrow հաջորդող հունարեն բառը համարժեք է հայերեն տարբերակին
13. \neq հաջորդող հունարեն բառը համարժեք չէ հայերեն տարբերակին
14. *Nem x. y*՝ *Nemesius Emesenus, Nemesii Emeseni De natura hominis, ed. Moreno Morani, Leipzig: BSB B. G. Teubner Verlagsgesellschaft, 1987. էջը և տողը*
15. *PG 40 p.*՝ *Nemesius Emesenus, De natura hominis graece et latine, Migne, Patrologiae cursus completus, series graeca, t. 40, 1858. էջը*
16. Ա – Մ՝ համեմատված հայերեն ձեռագրերը
17. Վ՝ Նեմեսիոսի փիլիսոփայի Եմեսացույ Յաղագս բնութեան մարդոյ, հրատարակիչ Ա. Տիրոյան, Վենետիկ, 1889, Վ (x, ծ. y)՝ էջը և ծանոթագրության համարը, Վ (x, ծ. y, լծ)՝ ձեռագրային լուծմունք՝ նշված հրատարակության ծանոթագրության մեջ
18. x. [y]՝ քննական բնագրի գլուխը և պարբերությունը
19. Շեղ գծերի մեջ //, նշվում է Ա ձեռագրի (ՄՄ 1013) էջահամարը:



ԲՆԱԳԻՐ

**ՅԱՂԱԳՍ ԲՆՈՒԹԵԱՆ ՄԱՐԴՈՅ
ՓԼՈՒԽ Ա. (1)**



ՄՄ 1500, 0576բ

[1] /201ա/ Ջմարդն¹ ի հոգւոյ իմանալոյ եւ ի մարմնոյ՝ գեղեցիկ կազմեալ, եւ այնպէս բարւոք, որպէս ոչ հնար² այլազգ³ լինել կամ հաստիլ⁴, թուեցաւ բազմաց եւ արանց բարեաց: Իսկ իմանալի⁵ ասել զհոգին⁶ երկբայութիւն⁷ ունելոյն⁸, թերեւս արդեւք հպեալ միտք ի հոգի, որպէս⁹ ա՛յլ ոք յա՛յլ, իմանալի¹⁰ արար զնա, եւ կամ թէ գիմանալին գոլ յինքենէ եւ բնութեամբ ունիցի հոգի ստացեալ¹¹, եւ այս է նորա գեղեցիկ մասն¹², որպէս ակն ի մարմնի: Ոմանք¹³, յորոց եւ Պղոտոնիոս¹⁴(2), ա՛յլ գոլ¹⁵ ասացին¹⁶ զհոգին¹⁷ եւ ա՛յլ¹⁸ զմիտս¹⁹. յերից հաստիլ²⁰ զմարդն՝ ի մարմնոյ²¹ եւ ի հոգւոյ եւ ի մտաց, որոց²² հետեւեալ <եւ> Ապաւղինարիոս²³ Լաւողիկեց-

1 ԲԴ մարդն Գ զմարդ
 2 Nem 1. 2 + καλῶς («բարւոք») / Բէիւ + գոլ
 3 Խ + ազգք ժ այլ Վ գոլ այլ
 4 Բիւ հաստատել ժ հաստատիլ
 5 Գ յիմանալ Մ իմանալին
 6 Գ զհոգի
 7 ԱԳԶԺԽՄ յերկբայութիւն Բ երկբայութեան
 8 ԲԴԷԼԺԻՎ ունելով է լուս ունելոյն ժ ունելով յերկբայութիւն Ի լուս ունելոյ
 9 ժ + եւ
 10 Մ իմանալի
 11 Դ գիմանալի ստացեալ
 12 ԳԴԷԼՎ գեղեցիկ մասն նորա փիւ նորա գեղեցիկ մասն
 13 Բիւ որոք ժ ոմանց (^ոմանք)
 14 Nem 1. 9 Πλωτίνος | ԲԶԷԼԽՄ պղատիոնիոս Գ պղոտոնիոս ժ պղատոնիոս (^պղոտոնիոս | լուս «չէ մեծ պղատոն, բայց կարծեաւք է») Ի լուս պղոտոնիես
 15 Դ այլազգ փիւ այլ գոլ
 16 Nem 1. 10 δογματίσαντες / Բ ասաց
 17 ԱԶՄ զհոգի
 18 Դ այլազգ
 19 ժ + եւ
 20 ԲԴԷԺԻԽ հաստատել (ժ^ հաստատիլ) Գ հաստել | Nem 1. 11 + βούλονται («կամենում են»)
 21 Բ զմարմնոյ Լ իմանալոյ փիւ ի մարմնոյ
 22 Մ որոյ
 23 ԲԷԼԺԻՎ ապողինարէս Զ ապողինարիոս

ւոցն²⁴ եղեալ եպիսկոպոս(3), քանզի զայս կառուցեալ²⁵ հիմն իւրոցն²⁶ կարծեաց²⁷, եւ շինեալ զայլսն²⁸ ի սորին վերայ՝ ըստ իւրոյ²⁹ աղանդոյ³⁰: Բայց ոմանք ո՛չ որոշեցին ի հոգւոյ զմիտսն³¹, այլ նորին³² էութեանն³³ իշխանական գոլ զիմացականն համարին:

[2] Իսկ Արիստոտելէս զգաւրութեամբ³⁴ միտսն՝ ընդ³⁵ մարդոյն կագմիլ ասէ, բայց³⁶ զներգործութեամբն ի դրուստ մտեալ ի մեզ, ոչ ի³⁷ գոյութիւն³⁸ եւ յէութիւն³⁹ մարդոյն կատարեալ, այլ⁴⁰ յաճումն բնաւորականացն գիտութեան եւ տեսութեան⁴¹ նպաստ եղեալ⁴²: Ամենեւին յոյժ սակաւուց ի մարդկանէ եւ միայն իմաստասիրացն ունել զներգործութեամբ⁴³ միտսն⁴⁴ հաստատէ(4):

Իսկ Պղատոնի⁴⁵ ո՛չ թուեցաւ ասել զերկաքանչիւրսն գոլ զմարդն⁴⁶ զհոգին⁴⁷ եւ զմարմինն⁴⁸, այլ զհոգին՝ մարմնով⁴⁹ այսպիսեալ վարեալ⁵⁰

24 Բիւ լաւոտիկեցոցն Գ լաւոդիկեցոց ԶԾ զաւոդիկեցւոցն ԸԻ լաւոդիկեցոցն Ժ լաւրդիկեցոցն
25 Ժ կարծեցեալ
26 ԱԾ իւրոյն ԲԴԷԺԻԽ իւրոյ ԸՎ իւրոց
27 ԲԷԺԻՎ կարծեացն
28 Nem 1. 13 τὰ λοιπὰ («մնացածը») / Բ
29 ԴԶԷԺԻԾ իւրոյն Ը իւրոցն
30 Ը աղանդոց Վ աղանդոյն
31 ԳԶԾ զմիտս
32 Բ նորն ին նոր
33 ԲԴԷԺԻՎ ինքեան էի լուս էութեան Ը էութեան
34 Բ գաւրութեամբ Գ զգաւրութէն
35 Դ ըստ
36 Ծ իսկ
37 ԸՎ չիք
38 ԲԴԷԸՎ զգոյութիւն
39 Nem 1. 17 εις τὸ εἶναι καὶ τὴν ὕπαρξιν («յէութիւն եւ ի գոյութիւն») / Բ զէութեան
40 Գ + ի
41 Բիւ + նորա Ժ տեսութիւն
42 Գ նմա ստեղծել փիւ նպաստ եղեալ
43 Գ զներգործութեամբն
44 ԳԸԺ միտս
45 ԸԻ պղատովնի Ժ լուս մեծն է
46 ԲԴԷԽ զմարդւոյն ԳԾ զմարդ Ի լուսոյն Վ զմարդոյն
47 Բիւ հոգին Գ զհոգի
48 ԸԻն զմարմին
49 Ծ մարմնովն
50 Դ վարեցեալ ԻՎ վարելով

Յաղագրա Բնութեան մարդոյ

(8) Հայերեն թարգմանություն մեջ հունարենից փոխառված են մի շարք փափկամարմինների անվանումներ՝ «պինս» (1. [5]), «կարկինոս», «աստակոս», «սիպեք», «տեթիէդէսք», (2. [4]) և այլն: Դրանք հիմնականում խեցեգեոթինների և ծովախեցեգեոթինների տեսակներ են, որոնց հայերեն համարժեքները հաստակություն չունեցող կրկնություններ են: *Nem 3. 25 τὰς πίννας καὶ τὰς ἀκαλήφας* փոխարեն դնելով՝ «խեցեմորթան գեռունս», թարգմանիչներն այս դեպքում խոսափել են ճշգրիտ թարգմանությունից: Սակայն որոշ ձեռագրերի լուսանցքներում կան պարզաբանումներ (դրանք ևս պարունակում են հունարենից տառադարձված բառեր), մասնավորապես ձեռ. Ը-ում և Խ-ում՝ «այսոքիկ են խեցեմորթքն՝ պինայ, ոստր[.]իւղին, միւնդիկ, կա[տ]ենին (Խ կիէնին), կոքնիլէ (Խ կոնքքիլի), պանտոտոս

(*իս պնդուոս*), որ է *խեցգետի*, *կարկինոս*, *աստակոս* [պ]ատելինաս, *կոքիլոս* (*իս կոքիլոս*), *կովարդինոս*, *կրայ* (*իս կրես*), *կաղտակուր* (*իս գաղտակուր*)»: *Ջեռ. Ժ* «պինայ ոստրիւդին միւնդիկա կիենինա կոնքնելի. պնդուոս, որ է *խեցգետին*, *կարկինոս* *աստակոս* *ապելինաս*. *կոքիլոս*. *կովարդինոս* որ է *գաղտակուր*»:

Փորձենք պարզել, թե հատկապես ինչ փափկամարմիններ էին հայտնի ժամանակի հայ գիտական մտքին: Նախ հունարեն բնագրի տարբերակները.

**ἀκαλήφη* (*ortie de mer, sea-anemone, urtica marina*) – «ծովեղինջ, մեղուզա, ախլեֆա»: Ծովային աղեսուրճավոր է, որին դիպչելիս նույն այրոցի զգացողութունն է առաջանում, ինչ և եղինջին դիպչելիս:

**πίννα* (*pinna, pinne-marine*) – գպինսն, պինայ – «խեցեմորթ մեծ կրկնապատյան (երկփեղկանի)՝ երկայն եռանկիւնի, որ բերէ մազս իբրու մետաքս խոշոր կամ ասր կարմիր և գտանի խրեալ յաւազուտս և ի տղմուտս, ունի և մարգարիտս մեծամեծ» (ՆԲՀԼ):

Եվ լուսանցքներում տեղ գտած փոխառյալ անվանումները, որոնց մի մասն առկա է նաև հիմնական բնագրում.

*Ոստր[.]իւդին (ԸԽ Ի Լուս) անվանումը հավանաբար կազմված է «ոստրէ» և «իւդին» մասերից. «իւդին» կարող է հունարեն որևէ բառի աղավաղված ձև լինել, օրինակ՝ ὕδριός «ջրային», իսկ «ոստրէոս»՝ ὄστρεον կամ ὄστρειον (ոսկրուտ կամ ոսկրապատ), լատ.՝ *ostreum* կամ *ostrum* (խեցի կամ խեցեմորթ ծովային): «Ուստի՞ իցէ ոստրէոսն տկար գեռնոյ յղանալ ծնանիլ զմարգրիտն պատուական» (Բրս. Վեցօր., ՆԲՀԼ): «Ոստրէոս – ծովային խեցեմորթ, ոստրէ (բուն նշանակությամբ՝ ոսկրային)» (ՀԱԲ):

*Միւնդիկ և կիէնին (կատենին) (ԸԺԽ Ի Լուս) բառերն անհասկանալի են: Թեպետ «միւնդիկն» ինչ-որ նմանութիւն ունի «միւնդինէս» կամ «միւնդենէս» բառի հետ, որը փողոջների ընտանիքին պատկանող ձուկ է և ապրում է Միջերկրական ծովում՝ *muraena helena* (ՀԱԲ): Բարսեղ Կեսարացու «Վեցօրեայք»-ում հիշատակվում է «միւրիկէ» կենդանին, որը թարգմանվում է՝ «ջրարբին» (Կ. Մուրադյան, Բարսեղ 1976, էջ 196):

*Կոքնիլէ, կոնքքիլի, կոքիլոս, կոքիլոս, կոնքնելի (ԸԺԽ Ի Լուս) բառերը հավանաբար «կոքղի», «կոնքեղ», «կոնք» բառերի աղավաղումներ են: «Կոքղի» – *κοχλία* «ոլորուն պատեանով խեցեմորթ, *κογχη, concha*՝ «ազգ խեցեմորթի՝ գալարեալ որպէս խխունջ. Կոնքն բարբառեսցին

զծնունդն մարգարտին» (ՆԲՀԼ): «Կոնքեղ» (կոնքել, կոնքիւլ, կոնքիղոս) *κογχύλη, κογχύλιον, conchium* «ծիրանի ներկը տուող խեցեմորթ» (ՀԱԲ):

*Կարկինոս (*καρκίνος, cancer*) (2. [4]; Ժ Ի լուս.) – ամենուր նույն բացատրությունն ունի՝ «խեցգետին», «խաչափառ»: (ՆԲՀԼ):

*Աստակոս (*άστακός, cancer*) (2. [4]; Ժ Ի լուս.): «խեցգետին կամ խեցեմորթ ծովային, պասպայիճ» (ՆԲՀԼ): Աստակոսին զուգահեռ դրվում է «[պ]ատէլինաս» կամ «ապելինաս» բառը (Ժ Ի լուս.), որ նման է «ապելիոս» բառին (*άπηλιώτης, ventus subsolanus*) – «անուն հողմոց Ի կարգի եւրոսաց՝ արեւելյան հողմոյ» (ՆԲՀԼ): Գուցե՝ արեւելքում առավել տարածված խեցգետինն է:

*Պանտոսոս, պնդոոս, պնդուրոս (ԸԺԽ Ի լուս.) հավանաբար աղճատումն են «բնդեռն» կամ «բնդիռն» (փնդեռն, բնդերն) բառի, *κάθαρρος, Scarabeus, scarabelaphus* – «բզեզ աղտեղասեր, սևագոյն և այլ ճճիք նման նմին» (ՆԲՀԼ):

(9) Ի նկատի ունի Արիստոտելի «Կենդանիների մասին» երկը: «Ջրում շատերն ապրում են սերտաճած, ինչպես օրինակ, ոստրէների շատ տեսակներ: Ըստ երևույթին, սպունգը (*σπόγγον*) ևս օժտված է ինչ-որ զգացողությամբ: Դա երևում է այն բանից, որ նրան դժվար է պոկել, եթե շարժումը չկատարվի զգուշորեն, ինչպես պնդում են: Այլք և՛ ամրացած են, և՛ անջատվում են, այդպիսին է այսպես կոչված ծովեղինջը: Դրանցից որոշ տեսակներ գիշերն անջատվելով՝ արածում են, շատերն էլ՝ թեպետ անջատված, սակայն անշարժ են, ինչպես օրինակ, ոստրէները և այսպես կոչված հոլոտուրիաները: Բացի այդ, կան լողացող կենդանիներ, ինչպիսիք են ձկները, կակղամորթերն ու փափկապատիճները, օրինակ՝ լանգուստները: Կան քայլողներ, օրինակ՝ խաչափառների մի սեռ, որ լինելով ջրային՝ իր բնույթով, պատկանում է քայլողներին» (*Arist. Hist. an., cc. 73-74. թարգմանությունը մերն է ուսեսերենից*):

Ավ. Տեր-Պողոսյանը գրում է. «խեցեմորթ գեռուն» կոչված կենդանիներն այսօրվա այդ անունով հայտնի կենդանիները չեն, այլ աղբխորչավորները (*Coelenterata*) կամ հների «զոոֆիթներ» – «կենդանաբույսեր» կոչվածները: Սպունգ անվան տակ դրված կենդանին էլ սպունգը չէ, որովհետև նա չի «ամփոփվում և ծավալվում», այլ որևէ պոլիպ (թերևս կորալյան պոլիպ), կամ ակտինիա» (Ավ. Տեր-Պողոսյան, «Բիոլոգիական մտքի

զարգացումը Հայաստանում», Երևան, 1960, էջ 182): «Այս շփոթը մեզ չպետք է զարմացնի, եթե մինչև անգամ XVI դարի գիտնականներ (օր. Ռոնդելե, Բելոն) ջրային բոլոր կենդանիներին, ողնաշարավոր և անողնաշար (վերջիններին մեջ խեցեմորթներ, փափկամորթներ, փշամորթներ, որդեր) «ձկներ» անվան տակ են համախմբել» (նույն տեղում, էջ 183):

(10) Կենդանատուկը (ζωόφυτον, zoophytes) անողնաշարավոր կենդանիների որոշակի խմբերի ընդհանուր անվանումն է, հիմնականում ծառասնկերի (սպունգ) և աղեխորչավորների, որոնք ունեն և՛ բույսերին, և՛ կենդանիներին բնորոշ հատկություններ, և միջանկյալ դիրք են գրավում բույսերի ու կենդանիների միջև: Հայերենում բառն ունի «կենդանաբոյս» և «կառաբոյս» հոմանիշները (ՆԲՀԼ):

(11) Գրիգոր Նյուտոնը այս միտքը ձևակերպում է հետևյալ կերպ. «Ոչ էր վայելուչ իշխանին յառաջ քան յորոց իշխելոցն էր երեւել, այլ նախ իշխանութեանն յառաջագոյն պատրաստեցելոյ կարգաւորէր ցուցանել զայն, որ թագաւորեցելոց էր» (տե՛ս Նիւտոնի, Կազմ. 2008, էջ 51): Հովհաննէս Որոտնեցին նույն թեման արծարծում է նաև այլ տեսանկյունից՝ խոսելով զգացողութեան մասին, որն առաջանում է մարմնի հետ և գտնվում է մարմնում: Սակայն զգալին գոյություն ունեն նախքան մարմնի և նրա հետ կապված զգացողությունների առաջ գալը: Իբրև օրինակ նա ներկայացնում է Ադամին, որից ավելի վաղ ստեղծվել էին զգալի իրերը, և հետո նոր միայն ինքը՝ մարդը (տե՛ս Воротнеци 1956, с. 346):

(12) Տե՛ս Ծննդ. Գ. 19:

(13) Տե՛ս Սաղմ. ԽԼ. 13

(14) Տե՛ս Ա. Կորնթ. ԺԵ. 48:

(15) Այս թեմային ավելի հանգամանորեն է անդրադառնում Նյուտոնը.

«Գիտութիւն ոչ ամենայն ուրեք զհանճարն եւ զգիտութիւն, եւ այն, ինչ որ նշանակին պատմէ, այլ առ շնորհեալ տրամադրութիւնն: Զի «ծանեալ Տէր, որք իւրն էին» (Բ. Տիմ. Բ. 19), եւ առ Մովսէս ասէ, թէ «ծանեայ զքեզ առաւել քան զամենեսեան» (Ել. ԼԳ. 12), իսկ որք ի չարութեան են ըստգտեալ, ասէ՝ «որ զամենայն գիտէ», թէ «ոչ երբեք ծանեայ զձեզ» (Մատթ. է. 23): Ապա ուրեմն փայտն, յորմէ խառն գիտութիւնն պտղաբերի, ի հրաժարեցելոցն է: Եւ խառնեալ ի ձեռն ընդդիմացն պտուղն, այն որ

Չատագով ունի անձին իւրոյ զաւճն, ինձ այսպէս թւի, թէ ըստ բանիս այսմիկ, զի [չարն] ոչ մերկ յայտնի կայ ինքն յինքենէ՝ ըստ յատուկ ինքեան բնութեանն երեւեալ»։ Իսկ «ընտրել Հանճարաբար գեղեցիկն ի չարէ կատարելագոյն բնութեան ել, ասէ Առաքեալ, եւ կրթեցելոց զգայութեանցն (Եբր. Ե. 14)» (տե՛ս Նյուսացի, Կազմ. 2008, էջ 143-144)։ Իսկ Գրիգոր Տաթևացին՝ խոսելով դրախտում տնկված ծառի երկակի բնույթի մասին, այն անվանում է «առաջին արքայութիւն»՝ հավելելով, սակայն, որ «փայտս այս ասի գոյ տնկեաց մերձ յընթացս ջուրց, զի ի նմանութիւն մարմնոյ մեղաց երևեցաւ. և զամենայն նուաստութիւնս մեր յինքն ընկալաւ» (Գիրք հարցմանց 1993, էջ 755)։

(16) Բուսական աշխարհի պաշտամունք՝ կապվելով տոտեմական և ոգեպաշտական պատկերացումների հետ, դիտվել է երկրագնդի տարբեր ցեղերի և ժողովուրդների մոտ։ Հատկապես սրբացվել ու պաշտվել են կայծակնահար ծառերը։ Քրիստոնեական շրջանում այդ հավատալիքները վերաիմաստավորվեցին՝ միավորելով հեթանոսական և քրիստոնեական մոտեցումներ, ծեսեր ու սովորույթներ։ Այս առումով, հետաքրքիր օրինակ է Սուրբ Գրքում հագնի ἄγνος ծառատունկը (vitex, amerina, agnus-castus)։ «Այս բառը գտնում ենք Ս. Գրքում՝ յունարէն բնագրում, սակայն եբրայացին բոլորովին տարբեր է. . . դրուած է ուրի։ Հետևաբար, հայկականը միմիայն յունարէնից է յառաջացած։ Հայերեն բառին վրա աւելացել է «հ» ձայնը, թերևս նրա համար, որ մեր նախնիք իրենց օրինակում գտել են ἄγνος։ Յունարէն բառի ստուգաբանութիւնն լիովին պարզ չէ, սակայն հները շփոթած են յունարէն ἄγνος – «սուրբ, մաքուր, անարատ, ողջախոհ» բառի հետ, կարծում էին ծագած սրանից և բույսը համարում էին սրբութեան և ողջախոհութեան միջոց... Այդ պատճառով էլ լատիներեն դարձել է agnus-castus (առաքինի, ողջախոհ), ինչպես որ հետո էլ՝ agnus՝ կարծուելով լատիներեն Գառն» (ՀԱԲ)։ Քրիստոնեական ավանդություններում սուրբ ծառերը սկսում են կապվել Քրիստոսի և նրա առաքյալների հետ։

(17) Տե՛ս Ծննդ. Գ. 7։

(18) «Նախ ի զարմացման արար զնայ եւ յանգիտութեան ինքեան»։ «Զարմացումն» բառն այստեղ համապատասխանում է ἔκστασις (էքստագ) բառին։ Հավանաբար ցանկանում է ասել, որ մարդը, նախքան անկումը կամ առաջին մեղսագործությունը գտնվում էր ինչ-որ վերին անգիտակից

մտազմայլանքի, ոգեչնչման վիճակում՝ հեռու մարմնական և երկրային կարիքներից: «Յանգիտութեան ինքեան» (έν άγνωσίᾳ έαυτοῦ). հավանաբար՝ ինքնագիտակցությունից զերծ, ինքն իրեն չգիտակցող վիճակ:

(19) Այսպիսով, ըստ Նեմեսիոսի՝ ինչպես տարրերը, այնպես էլ նրանցից կազմված բոլոր մարմիններն անխուսափելիորեն ենթակա են երեք մարմնական «ախտերի» ազդեցությանը, որոնք են՝ 1. հատումն (τομή, sectio). ըստ ձեռագրերում առկա լուծմունքներին այն կարելի է հասկանալ նաև «մահ» իմաստով՝ «սպառում, ավարտ, վերջ», 2. փոխադրութիւն (μεταβολή, transmutatio). խոսքն, ըստ երևույթին, նյութափոխանակության մասին է (մետաբոլիզմ), 3. հոսումն (ρεύσις, fluxus, fusio). օրգանիզմում առկա հեղուկների շարժումն է, ներմուծումը և հեռացումը, խառնումն ու Փխրումը:

(20) «Ոգին» համապատասխանում է πνεῦμα-ին, և բազմաթիվ ձեռագրերի լուսանցքներում այս դեպքում մեկնաբանվում է նույնակերպ՝ «որ եւ աւղ», «աւղոյ ասէ», «գաւղղ ասէ»:

πνεῦμα բառը, որ նշանակում է «չունչ, քամի, ոգի, կյանք, գոլորշիացում, բուրմունք, հնչյուն, ոգեղեն սկիզբ» և այլն, բնագրի տարբեր հատվածներում թարգմանվում է «ոգի, շունչ, հոգի, օդ»: Սակայն ՆԲՀԼ-ում, ինչպես նաև ՀԱԲ-ում πνεῦμα-ն ներկայացվում է որպես «հազազ» -ի համարժեք, որի հոմանիշներն են՝ «հաչ, հառաչ, ոգել, ոգի, հոգի, πνεῦμα, spiritus, adspiratio»: «Շունչ՝ ձայնահասն և խոշոր ընդ շնչերակն ի վեր հնչեալ, որպէս ի հեալն, ի հառաչելն, յոգոց հանելն» (ՆԲՀԼ): «Հազազ ի ձեռն շնչափողացն ի շնչակալ անօթացն՝ ի վեր մղելով... « (Նիւսացի, Կազմ. 2008, էջ 78): «Հազազ» նշանակում է նաև՝ «շնչափող, կոկորդ»: Նարեկացին այն անվանում է՝ «Զէութիւն շնչոյ», «Կենդանութեան հազազաւ ազդէ» (ՆԲՀԼ): ՀԱԲ-ում «հազազի» հոմանիշը «չունչն» է:

(21) «Ուրախանայ»-ն այս դեպքում համապատասխանում է θεραπεύεται բային: θεραπεία նշանակում է՝ «կրոնական ծես, երկրպագություն, հարգանք, ուշադրություն, հոգածություն, խնամակալություն, բժշկական խնամք, բուժում», նաև՝ «թիկնազոր, պաշտպանություն, ծառայակազմ»: Հայերեն բնագրում նույնպես այս բառի համարժեքները տարբեր են (տե՛ս բառարանը):

(22) *Nem 8. 16 εὐαισθησία* («նուրբ զգացողություն») բառի փոխարեն թարգմանիչը գործածում է «բարևոք զգեստուց» (1. [11]) արտահայտությունը (այնինչ, օրինակ՝ Փիլոնի թարգմանիչն այն թարգմանել էր «քաղազայութիւն», Տե՛ս ՆԲՀԼ), ըստ երևույթին, բառի երկրորդ մասը (αἴσθησις) շփոթությամբ բխեցնելով էսթի՛ց «հագուստ» բառից (ալ երկհնչյունը հնչյունափոխվել և e էր արտասանվում):

(23) *Nem 9. 20 φύσει γὰρ συναγελαστικὸν καὶ πολιτικὸν ζῶον γέγονεν ὁ ἄνθρωπος*. Բացի Գ (ՄՄ 1500) եւ Ե (ՄՄ 844) ձեռագրերից, բոլոր մյուսներում կարդում ենք. «քաղաք է կենդանի եղեալ»: Մարդ-քաղաք համեմատություն գտնում ենք Գրիգոր Նյուսացու մոտ. «Այսպիսի իմն տեսանեմ եւ զմարդոյն [զմտացն] քաղաք, զայն որ ի ներքուստ ի մեզ բնակեալն է, քանզի ազգի-ազգի են, որք ի ձեռն զգայութեանցս մուտք լցուցանեն: Եւ զիւրաքանչիւր ոք ի մտելոցն տոհմ որոշ առնեն: Եւ հարցանելով եւ քննելով՝ միտքն զոյգ եւ համեմատ ի բարուցն [գիտութեան] տեղիս ի ներքս համբարէ: Եւ որպէս ըստ քաղաքին ինչ եցոյց տեսեան, քանզի է բազում անգամ համատոհմիկս ոմանս եւ ազգակիցս ոչ ընդ նոյն դուռն ի ներքս լինել, այլո՛՞ ընդ այլ մուտս, որպէս դէպ եղեւ ի ներքս ընթանալ: Բայց ոչինչ է նուազ ի ներքս ի բակին ի պարսպին եղեալք՝ դարձեալ առ միմեանս են, որք առ միմեանս ընտանութիւն ինչ ունին, եւ դարձեալ հակառակ նմին գտան եղեալ, քանզի որ անծանալթքն եւ աւտարքն են, եւ ոչ գիտեն զմիմեանս, եւ ընդ մի մուտ բազում անգամ դէպ լիցի նոցա մտանել ի քաղաք: Այլ ոչ ընդ միմեանս հարեալ՝ միաբանէ զսոսա առ միմեանս ըստ մտին հասարակութիւն, քանզի կարող են եւ ի ներքս եղեալք որոշել դարձեալ առ տոհմակիցս իւր: Այսպիսի իմն տեսանեմ եւ ի վերայ ըստ մտաց ընդարձակութեան, քանզի բազում անգամ եւ ի զանազան զգայութեանց մի գիտութիւն ի մեզ ժողովեալ լինի՝ նորին իրաց բազմամասնապէս առ զգայութիւնսն բաժանել» (Նիւսացի, Կազմ. 2008, էջ 82-83): Գրիգոր Տաթևացին ևս համեմատում է նյութական և մարդկային քաղաքները: Վերջինս՝ լինելով Աստծո բնակատեղի, նրա պատկերն ու արարչագործությունը, կենդանի է, անապական հոգով, «մշտնջենաւոր», և «զբնութիւնս քակեալ որ ստեղծն՝ նա շինէ յարութեամբ»: Ի վերջո՝ «մարդոյս քաղաքի է յերկինս ի բարձունս և քաղաքակից հրեշտակաց» (Մեկնութիւն սաղմոսաց 1993, էջ 70): Նույն խորհրդանշական կերպը պաշտպանում է նաև Հով-

Հաննես Երզնկացին. «Մարմին զինչ քաղաք մի՛ պարսպով և Ե. դուռն ի վերայ, մէկ դուռն աչքն է, մէկ՝ ականջքն, մէկ՝ քիթն է, և մէկ՝ բերանն, մէկ այլ ձեռքն է: Ամենայն չար և բարի յայս Ե. դուռս մտանեն և ելանեն: Հոգին բնակիչ է այս քաղաքիս, մարդոյն բարի գործն գանձ է, միտքն՝ թագաւոր է և այս գանձիս պահնորդ, և դեւք չարակամ են, որ զքաղաքս առնուն ու զհոգոյ բարին, որ գանձ է, գողանան, զմիտքդ ի վերայ գալ... Զայս գիտել պիտի, որ այն օձն սատանայ է, զամենայն մարդ ջանայ խաբել ընդ այս Ե դուռս: Իմաստուն մարդ պիտի, որ փակէ զականջն՝ գրոց խրատովն. զաչքն պահելով յարատ Հայելոյ, զլեզուն՝ ի չար խօսից արգիլելով, զձեռքն ի զրկելոյ ի ձեծելոյ...» (Սրապյան 1958, էջ 57): Գալենոսին վերագրվող ձեռագրախմբերից մեկում այդ քաղաքի տասներկու դռներով մտնում և դուրս են գալիս արտաքին, մարդու համար օտար իրերն ու կառուցվածքները. «Ասէ իմաստունն Գալիանոս թէ ստեղծ աստուած զմարդն որպէս քաղաք մի, որ լինի իւրն ժԲ. դուռն, և այն դռներուն մտանին դեղերն և կերակուրքն, և ելանեն յաւելուածքն, որ անձինն օգտուին յիրենցմէն լինի հանապազ: Եւ զայդ ԲԺ. դուռտ զոր ասասցաք՝ Բ. ի նոցանէ աչքն են և Բ. ականջն, և Բ. քնթափողն, և Ա. բերանն, և Բ. ծիծն, և Ա. պորտն, և Բ. արտաքս ելն՝ Ա. ջրհեղն, և մին վերջինն» (ՄՄ 464, էջ 56a): Մարդ-քաղաք համեմատութիւնն այլ տեսանկյունից է անցկացնում Ամիրդովլաթ Ամասիացին. «Մարդուն անձն որպէս քաղաք մն է, և բնութիւնն թագաւոր է, և հիւանդութիւնն չարկամ է այս քաղաքիս, որ կու ջանայ որ աւիրէ զքաղաքս: Եւ դեղերն որպէս սլէհ (զենք) է, որ ի կուվուն ժամն պիտանայ, և հաքիմն որպէս սլէհտար (զինվոր) է: Բայց պիտի որ սլէհտարն գիտուն լինի զպէտքն որպէս տան զսլէհն» (Ամիրդովլաթ 2014, էջ 11-12):

Սակայն Նեմեսիոսի հունարեն բնագրում πολιτικὸν ζῶον է «քաղաքական կենդանի»: Դա արիստոտելյան բնորոշում է, հմմտ. Arist. Pol. 1278b. 19:

(24) Մարդու այս սահմանումը նույնությամբ բերում է Դավիթ Անհաղթը. «Մարդ է կենդանի բանաւոր, մահկանացու, մտաց և մակացութեան (մի տեղ էլ՝ հանճարոյ) ընդունակ (Դաւիթ, Սահմանք 1960, էջ 26, 36): «Ասելով կենդանի, զատոյց յայնց, որք ոչ են կենդանի...ասելով բանաւոր, որոշեաց յանբանիցն, իսկ մահկանացու՝ յանմահիցն, իսկ մտաց և

մակացութեան ընդունակ ասելով, որոշեաց զնա յաներևութից և յանմահականացուաց արարածոց, որք և յաւերժական հարսուենք անուանին, որք և բնութեամբ ունին զգիտութիւն և ոչ ուսանելով, բայց միայն մարդն բնաւորեցաւ ընդունել ըստ ազդողականին զգիտութիւն» (նույն տեղում, էջ 36): Դավիթը նաև գրում է. «Թէ ասեմք մարդ միայն, ոչ ևս գիտեմք զբաղկացուցիչ զանազանութիւնս. իսկ եթէ ասեմք մարդ՝ կենդանի բանաւոր, մահկանացու, մտաց և մակացութեանց ընդունակ, գիտեմք զբաղկացուցիչ զանազանութիւնսն» (նույն տեղում, էջ 28): Ապա տալիս է նաև մեկ ուրիշ՝ ավելի մասնավոր սահմանում՝ «մարդ է ուղղորդագնաց, ծիծաղական, լայնեղունգն», սակայն նման սահմանումը լիարժեք համարվել չի կարող, «քանզի այսոքիկ զպարագայս բնութեանն յայտնեն և ոչ զբնութիւնն» (նույն տեղում): Հետևաբար ավելի ամբողջական կհամարվի «խառնակ» սահմանումը. «Թէ մարդ է՝ կենդանի բանաւոր, մահկանացու, մտաց և հանճարոյ ընդունակ, ուղղորդագնաց, լայնեղունգն, ծիծաղական» (նույն տեղում, էջ 32): «Սահմանք փիլիսոփայականք» բնագրում գտնում ենք ավելի հակիրճ մի բնորոշում. «Մարդ՝ կենդանի, բնութեամբ՝ քաղաքական» (Ритор, Определения 1960, с. 376): Ճարտասանի «Յաղագս բնութեան» աշխատանքում մարդկային կենդանին բնութագրվում է այսպես. «սկզբնաւոր, տեսանելի, սահմանելի, բանական, մտաւոր, այլայլելի, դիւրամեղ, մահկանացու», այն դեպքում, երբ՝ «կենդանի աստուածայինք անսկիզբ [են], անմարմին, անտես, անսահմանելի, բանական, մտաւոր, անայլայլելի, անփոփոխելի, անմեղ, անմահ», իսկ «կենդանիք սկզբնաւոր՝ այսք հրեշտակաց, անմարմին [են], սահմանելի, բանական, մտաւոր, այլայլելի, փոփոխելի, դժւարամեղ, անմահ» (նույն տեղում, էջ 374):

(25) Հնում «արհեստ» և «արվեստ» հասկացությունները հոմանիչներ էին՝ հավանաբար, ընդհանրապես՝ «մշակույթ» իմաստով. այն, ինչ ստեղծվում է մարդու ձեռքով: Սակայն տարբերակում էին արվեստի 2 տեսակ՝ բանական և գործնական: Բանական արվեստները չորսն են՝ փիլիսոփայություն կամ իմաստասիրություն, քերդողություն, ճարտասանություն, բանական բժշկություն: Վերջինս տարբերվում է սոսկ ներհմտությամբ առաջնորդող բժշկությունից, որը հասու չէ իր գործածած դեղերի ազդեցության պատճառին, ուստի և բանական համարվել չի կարող: Փիլիսոփայությունը քննում է երկնքի և երկրի բնությունը, իսկ բանական

բժշկությունը՝ մարդուն (Ջահուկյան 1954, էջ 126-127): Դավիթ Քերականն ասում է. «Արուեստ է ընդհանուր գիտությունն՝ հանդերձ պատճառաւ»: Նրա տարբերությունը գիտությունից, որ իմացութեան ավելի բարձր աստիճան է, այն է միայն, որ մինչդեռ արվեստի առարկան՝ նյութը, «հոսանում» է, ուստի և՛ սխալական, գիտության առարկան այդպիսին չէ: «Այսօրիկ զանազանին ի միմեանց արհեստ և մակացութիւն, վասն զի մակացութիւն և՛ ըստ իւրում բանին անսխալ է, և՛ ըստ ենթակային: Իսկ արհեստ ըստ իւրում բանին անսխալ է, իսկ ըստ ենթակային թուի սխալական» (նույն տեղում, էջ 183): Կամ արվեստի մեկ այլ տարածված սահմանում. «Արհեստ է բաղկացութիւն ի հասողութենէ ներհմտութեամբ նախակրթեալ առ ի կենցաղումս»: Ըստ Ադոնցի՝ Թրակացու հույն մեկնիչները ևս արվեստը դիտում են որպէս վարժանքներով, ներհմտութեամբ ձեռք բերված օգտակար բաները սերնդեսերունդ փոխանցելու արդյունք: Դավիթ Անհաղթն արվեստը բնութագրում է որպէս այնպիսի հասկացությունների համակարգ, որոնք ձեռք են բերվել կյանքի ընթացքում օգտակար բաներին ներհմտանալով՝ երկար վարժությունների ու փորձարկումների ճանապարհով: Այս բանաձևի հեղինակը ստորկյաններն էին, որոնք արվեստի հիմքում դնում էին էմպիրիզմի սկզբունքը (նույն տեղում, էջ 124-125):

(26) Հավերժահարս, *νύμφαι*՝ բնության զանազան ուժերը մարմնավորող, միշտ երիտասարդ, բայց ոչ անմահ դիցուհիներ(ԳԲ): «Ըստ քերթողաց՝ *νύμφαι, μακραι νύμφαι, nymphae, sponsae*. ուրուական և մտացածին չաստուածուհիք գուարճալի վայրաց, ե՛ն որ մահկանացու, և ե՛ն որ անմահ կարծեցեալք» (ՆԲՀԼ): Ըստ Դավիթ Անհաղթի՝ «աներեւոյթ եւ մահկանացու արարածներ, որք եւ զբնութեամբ ունին զգիտութիւն և ոչ ուսանելով» (Դաւիթ, Սահմանք 1960, էջ 36): «Յունաց դիցաբանութեան մեջ երկրորդական կարգի շատ երկարակյաց դիցուհիներ էին, որոնք հովանավորում էին անտառները, գետերը, դաշտերը» (ԲԲ): Հայկական հավատալիքներում նրանք նաև հղի կանանց հովանավորներն էին:

(27) Տե՛ս Առակք ԺԲ. 10:

(28) *Nem 12. 14 σαρκοφάγων*. «Մարմնակերք, որք առ գաղղիացիս կոչին *carnassiers* կամ *carnivores*» (Նեմեսիոս, Վ. 1889, էջ 22, ծ 1): Խոսքը գիշատիչների մասին է:

(29) Մարդու ուղղափառ կեցվածքին և նրա «անձնական» ունակությունների հետ դրա անմիջական կապին անդրադարձել են Գրիգոր Նյուսացին, Բարսեղ Կեսարացին, Գրիգոր Տաթևացին, Հովհան Որոտնեցին և այլք: Նյուսացին գրում է. «Ուղղորդ է մարդոյն ձեռն, եւ առ երկին ի վեր կոյս ձգտի, եւ ի վեր հայի: Իշխանական է եւ սա, եւ թագաւորական պատիւ նշանակէ: Քանզի միայն յէսն այսպիսի գոլ մարդոյն, իսկ այլոցն ամենեցունց ի խոնարհ կոյս հայել մարմնոցն, յայտնապէս ցուցանէ զպատուոյն զզանազանութիւնն այնոցիկ, որ ընդ զաւրութեամբն սորա անկանին եւ այնոցիկ, որ ի վերայ նոցա առնելոց է իշխանութիւնն: Քանզի այլոցն ամենեցունց առաջին անգամբն մարմնոյն ոտք են, վասն զի որ խոնարհեալն էր, պիտոյ էր նմա ամենայն իրոք նեցուկ: Իսկ մարդոյն կազմածի ձեռք՝ անգամք այն եղեն: Քանզի ուղղորդ է ձեռոյն բաւական էր առ ի պէտս մի հաստատութիւն նեցկի՝ երկուք ոտիւք անվթար անսխալ զկայն հաստատելով: Եւ մանաւանդ եւ բանին պիտոյից գործակից է ձեռացն սպասաւորութիւնն» (Նիւսացի, Կազմ. 2008, էջ 69): Հմմտ. նաև Բարսեղ Կեսարացու «Վեցաւրեայ»-ում. «Արար անասնոցն ամենեւին ի խոնարհ կախիլ եւ գլուխն յերկիր կորացեալ՝ ընդ երկիր պշուցեալ հայի, եւ տեսիլ իւր ընդ երկիր պատշաճեալ յորովայնն իւր հայի, եւ ամենայն իրոք եւ պիտոյիւք յերկիր կախի բերանն իւր: Իսկ մարդոյ գլուխ ի հանդիպութիւն երկնից բարձրացեալ ձգեալ կայ, աչքն իւր անդր նային, եւ երեսք իւր հանդերձ մտաւք անդր պատշաճեալ յաւրինեալ են... Այսինքն են անասունք, որ յերկրէ առ յերկիր խոնարհեալ հային, իսկ մարդ տունկ երկնաւոր է, որպէս եւ կերպարանքն իւրոյ ստեղծուածոյն յայտ առնեն, զի առ ստեղծիչն իւր նայեսցի» (Վեցաւրեայ 1984, էջ 293 -294): Կամ նրա «Հայեաց ի քեզ» ճառում. «Ուղղորդ զքեզ ետեղծ միայն ի կենդանեացն, որպէս զի նովիմբ ի ձեռովդ տեսես, թէ վերնագունացն ազգակից են կեանքդ քո: Քանզի չորքոտանիքն ամենայն առ որովայնն հային, իսկ մարդոյն ի վեր է պատրաստ յերկինս հայեցուածք, որպէս զի մի պարպեսցէ որովայնի եւ մի ընդ որովայնիւ ախտիցն, այլ զբովանդակ ունիցի զյարձակումնն առ ի վերին գնացսն: Եւ ապա զգլուխն ի վերայ բարձրագունիցն եղեալ, ի նմին զբազումս արժանապես զգայութեանցն հաստատութեանց» (Գիրք պահոց 2008, էջ 122-123):

ԺԴ. դարում այս միտքը շարունակում է պահել և զարգացնել Գրիգոր Տաթևացին. «Մարդն իշխան և տէր է ամենայն կենդանեաց, վասն որոյ ամենայն կենդանիք գլխիկոր են, իբրև զծառայ և Հնազանդ, և մարդն ուղղաձև, իբրև ազատ և թագաւոր: Ի վեր է գլուխն, զի լեզուն և ձեռն սպասաւորեսցեն բանի և գործոյ: Զի թէ կորագլուխ էր մարդն և երկոքին ձեռքն ի երկիր հաստատեալ, ոչ կարեր գործել: Եւ պիտանանայր լեզու երկայն և շրթունք ազատ, զի ժողովեսցէ զկերակուր, և յայնժամ ոչ կարեր սպասաւորել բանի, որպէս այժմ» (Գիրք Հարցմանց 1993, էջ 729):

(30) *θηριακάϊ* (*theracae compositions*). «գազանական դեղ կամ դեղ-թափ կազմեալ ի մարմնոյ օձի և այլոց գեռնոց» (ՆԲՀԼ): Մալխասյանը ևս նշում է, որ այն օձի և այլ գեռուների մարմիններից պատրաստված դեղ-թափ է կամ «դեղ թուլյնի դեմ» (հակաթուլյն): Թիւրակէի գլուտը վերագրում են Միհրդատ Մեծին (ԲԲ): Եզնիկը նույնպես օգտագործում է այս հունարենից փոխառյալ բառը (Եզնիկ, հ. 1, 1992, էջ 165-166), սակայն գործածելի է եղել նաև նրա հայերեն համարժեքը՝ «անդեղայ»: «Զայն տեսեա՞լ է քո, թէ եւ ի թունաւոր գազանաց իժից եւ քարբից անդեղայք ստեղծուն յաւգուտ եւ ի փրկութիւն մարդկան» (Կիւրեղ Երուսաղեմացի, Կոչումն ընծայութեան, 1823, էջ 155): «Թերիաքի մասին» (*De theriaca*) կոչվող դեղագիրտական աշխատությունն ունի նաև Գալենոսը:

(31) Տե՛ս Դան. Զ. 16-22 և Գործք ԻԸ. 3-6:

(32) Հնագույն հավատալիքներում հաճախ ենք հանդիպում աշխարհի մարդակերպ պատկերների: Հայտնի են Հնդկական պատկերացումներն աշխարհի մասին իբրև մարդանման գոյի: Ըստ Ա. Կիրխերի՝ Բրաման, որ կերպավորում էր տիեզերքը, գոյութուն ունեցող բոլոր տասնչորս աշխարհներն արարում է իր մարմնի մասերից: Առաջին աշխարհն՝ ուղեղից, մյուսներն՝ աչքերից, շուրթերից, ձախ ականջից, քիմքից և լեզվից, սրտից, որովայնից, վերարտադրողական օրգաններից, ձախ ազդրից, ծնկներից, կրունկից, աջ ոտքի մատներից, ձախ ոտքի ներբանից, իրեն շրջապատող օդից: Բոլոր մարդիկ ձևավորվում են այս տասնչորս աշխարհներում՝ փոխառելով դրանցից իրենց բնավորություններն ու հակումները, որոնք պահպանում են ողջ կյանքի ընթացքում: Այսպես, առաջին աշխարհից դուրս եկողները իմաստուն են, երկրորդից՝ խորաթափանց, ապա՝ պերճախոս, նրբամիտ և խորամանկ, նրբաքիմք, մեծահոգի և այդպես շարունակ

(Флоренский 1983, с. 235): Հայ մատենագրութեան համար ևս այս կարծիքն օտար չէ: Հովհան Որոտնեցին գրում է. «Իսկ վարդապետք եկեղեցւոյ ասեն, թէ մարդս ասի փոքր աշխարհ, և որպէս սայ ստեղծմանէ իւրմէ ունի ի շինուածս իւր իբր լերինք զբարձրագոյն մասունս, զտեղիս անյայտ վտառից, այսպէս և ի մեծ աշխարհիս ծանիր, զի ստեղծան յի սկզբանէ լերինք և բլուրք վասն շինութեան և օգտութեան աշխարհի մարդկան և անասնոց» (Որոտնեցի 1956, էջ 372): Մարդու և Համայնի զուգամիտությունն իբրև մեծ և փոքր աշխարհներ հանգամանորեն քննարկում է Հովհաննէս Երզնկացին: Բնութեանը նա նմանեցնում է հյուսիսի, երկիրքը կամ երկնային շրջանը՝ Փալաքը, որ ըստ նրա՝ աշխարհը շարժող հոգի է, դիտարկում է իբրև այդ հյուսիսի ձեռք, իսկ տարերքն՝ իբրև շինանյութ փայտ կամ երկաթ, որոնցից կառուցվում են մյուս իրերը (Երզնկացի 1958, էջ 309): Եվ ինչպէս մարդ է հոգուց և մարմնից, այնպէս էլ մեծ աշխարհն է, և ինչ կա վերջինումս «մարմնեղէն և հոգեղէն, կայուն և գնայուն, գոյացութիւն և պատահումն, չոր և դալար, ամենայն կայ և ի փոքր աշխարհ և փոքրովս մեծն իմանին» (նույն տեղում, էջ 310): Մեծ աշխարհի գլուխը երկիրքն է, ոտքերը՝ երկիրը, կարևոր անդամները յոթ մոլորակներն ու տասներկու կենդանակերպերն են, որոնք «խառնին գորութեամբ և բաժանին ներգործութեամբ» (նույն տեղում, էջ 311): Նույն կերպ, մարդու հիմնական անդամները, որ «ունին գորութիւն ի կենդանակերպիցն և մոլորականացն», նմանվում են և ներառում իրենց մեջ նաև ստորին բնութեան հատկանիշները: «Արար աշխարհ զսիրտն որպէս երկոտանի, զլերթն որպէս չորքոտանի, թոքն որպէս թռչուն, փայծեղն որպէս ջրային կենդանիք, զերկամուսնն որպէս ցամաքային սողունս: Եվ դարձեալ, մարմին մարդուն նման է հողոյն, արտասուքն ի ջուրն, երակքն ի քարանցն, ոսկերքն ի լերինսն, մազն բուսոց և տնկից. ջանք մարդոյն նման Հրատին, երեսն՝ արևելք, ծոծրակն՝ արևմուտք, աջ ձեռն՝ հարաւ, ձախն՝ հիւսիս: Եվ այսպէս, փոքր աշխարհ ունի զմեծին և՛ զգորութիւն, և՛ զբնութիւն, և՛ զներգործութիւն, և՛ զիմացականութիւն» (նույն տեղում, էջ 313):

(33) Կէտ (κῆτος) նախկինում նշանակում էր «ծովահրեշ», եբրայերեն *lev jatan* «լեխիթան», բառացի՝ «ոլորված, գալարված, փաթաթված»: Այն հանդիպում է Աստվածաշնչում իբրև վիթխարի ծովային կամ թռչող հրեշ (Ծննդ. Ա. 21, Նեեմ. ԺԴ. 5, Յոբ Թ. 13, Յովն. Բ. 1, Դան. Գ. 79): Եգիպտա-

ցիները մոտ այն փոխարինված է կոկորդիլոսով, որը հսկում է Նեղոսի արևելյան սահմանը: Ըստ հայկական ավանդույթյան՝ կա Լեխաթան անունով մի ձուկ, որ չորս կողմից շրջապատում է երկիրը, այնպես, որ գլուխը գրեթե հասնում է պոչին՝ գտնվելով հագիվ մեկ թղազափ հեռավորության վրա: Ձուկը չգիտի, որ իր առջև սեփական պոչն է, ուստի շարունակ թշնամաբար հետապնդում է նրան, ուզում է բռնել: Սակայն չի կարողանում հասնել, որովհետև աշխարհի ստեղծման օրից մինչև վախճանը Լեխաթանը մազաչափ անգամ չի աճում: Եթե հանկարծ նրան հաջողվի բռնել իր պոչը, այնժամ աշխարհը քարուքանդ կլինի: Իսկ երբ նա պոչը բռնելու նպատակով շարժումներ է անում, երկիրը ցնցվում է, և երկրաշարժ է առաջանում: Լեխաթանի գլխին մի մեծ աղամանդ կա, որ գիշեր-ցերեկ լույս է տալիս: Երբ նա շարժվում է ջրի մեջ, գլխի աղամանդի շողերը փայլատակում են աշխարհի տարբեր կողմերում (Հարույթյունյան 1987, էջ 10):

Գլուխ Բ.

(34) «Հոգի»՝ *ψυχή* բառին հայերեն տեքստում համապատասխանում է «անձն» բառը: «Բառը անձն ի թարգմանչէն ի գործ վարի աստ, որպէս և յընթացս մատենիս, իբր հոմանիչ հոգևոյ, որով կամի ասել, իբր անձին կամ հոգևոյ, որում ծառայէ մարմին», – գրում է վենետիկյան հրատարակիչը (Նեմեսիոս, Վ. 1889, էջ 14, ծ 4): «Անձն» նշանակում է «Ինքնութիւն իմացական և բանաւոր էակի՝ դիմաւ որոշելոյ, անհատն բնութենակից դիմաւորաց, որ և ասի դէմ կամ անձնաւորութիւն, ևս և հոգի: Ըստ բուն հայկաբանութեան՝ անձն է ինքն՝ յամենայն դէմս, որպէս՝ Ես ինքս, Դու ինքդ, նա ինքը, ինքեանք» (ՆԲՀԼ):

(35) Էպիկուրոս՝ *Ἐπίκουρος* (Ք. ա. 342–271 թթ.). հույն փիլիսոփա, որի գրեթե 300 երկերից պահպանվել են միայն պատառիկներ: Ըստ Էպիկուրոսի՝ հոգին նրբագույն մասնիկներից կազմված մարմին է՝ ցրված մեր ողջ կազմվածքով մեկ: Նա նման է քամու, որին ջերմություն է խառնված, սակայն ունի նաև երրորդ մաս, որ կազմված է ավելի նուրբ մասնիկներից, որոնք ավելի սերտ են փոխհարաբերվում մարմնի բոլոր մասերի հետ: Հոգին կազմված է ամենաոլորկ և ամենակլոր ատոմներից: Այն չի կարող անմարմին լինել, քանի որ ոչ մի անմարմին չի կարող մտածվել իբրև ինք-

նուրույն մի բան, բացի դատարկութունից, որը չի կարող ոչ գործել, ոչ էլ կրել իր վրա որևէ գործողություն, նա միայն թույլ է տալիս մարմինների շարժումն իր միջով: Իսկ հոգին և գործում է, և ազդվում է գործողություններից, հետևաբար անմարմին չէ (Էպիկուրոսի մասին տե՛ս *Διογεν* 1986, κη. 10, *Зан. Фил.* 2003, сс. 127-130, *Гассенди* 1966, *Ποσει*, τ. 5, 1979, сс. 217-241):

(36) Ըստ ստոիկականների՝ հոգին մեր մեջ ծնված տաք շնչառություն է, որը մեզ անձնավորում է և շարժում է հաղորդում: Հետևաբար նա մարմնական է: Հոգին կարող է ապրել մահից հետո, սակայն ենթակա է նաև ոչնչացման, և միայն ամբողջի, Համայնի հոգին, որի մասերն են կենդանի էակների հոգիները, անկործանելի է և մշտամնա (*Διογεν* 1986, κη. 7):

(37) *Կրիտիաս*՝ *Κριτίας* (Ք. ա. 460-403 թթ.). սոփեստ-փիլիսոփա: Նա գտնում էր, որ որ հոգին արյուն է, համարելով, որ զգացողություններն ամենից ավելի են բնորոշ հոգուն, իսկ դրանց էակցությունը կամ պատկանելիությունը հոգուն բացատրվում է արյան բնությունը (*Arist. De anima*, 405b, *Կրիտիասի մասին տե՛ս նաև Plato, Critias. Plato, Tim.*):

(38) «Ոմանք, ովքեր ավելի կոպիտ էին մտածում, նույնիսկ պնդում էին, թե հոգին ջուր է, ինչպես օրինակ Հիպպոնը (*Ἰππων δὲ ὁ φιλόσοφος. Ք. ա. Ե դար*): Նրանք այդպես էին կարծում, երևի նկատի ունենալով սերմը, որը բոլոր կենդանի էակների մոտ խոնավ է, քանզի նրանց, ովքեր կարծում էին, թե հոգին արյուն է, Հիպպոնն ընդգրիմախոսում էր՝ ասելով, որ սերմն է առաջնային հոգին, ոչ թե արյունը» (*Arist. De anima*, 405b): Հիպպոնի հասցեին Արիստոտելը բավական անհարգալից է արտահայտվում: Դարձյալ ջուրն ամենի սկիզբ համարող Թալեսի մասին նա չի ասում, որ կոպիտ է մտածում, ընդհակառակը նրան անվանում է փիլիսոփայության հիմնադիր: Սակայն Հիպպոնի կարծիքը կարծես նրան բնավ լուրջ չի թվում (նույն տեղում, 405b):

(39) Դեմոկրիտոսի (Ք. ա. 460-370 թթ.) փիլիսոփայական պատկերացումների մասին հիմնական աղբյուրն Արիստոտելն է: Դեմոկրիտեսն ուսուցանում է, որ հոգին հատուկ սեռի կրակ է և տաքություն՝ նույնպես կազմված մեծաքանակ ատոմներից, որոնք ունեն անսահման զանազան ձևեր (*σχήματα*): Այդ գնդաձև ատոմները նման են օդի մեջ գտնվող փոշեհատիկներին, որոնք նկատելի են նեղ ճեղքով ներս թափանցած արևի ճա-

ուսուցիչների տակ: Նրանց առաջացրած տարբեր սեռերի սերմերի խառնուրդը նա անվանում է ողջ բնության տարրեր: Գնդաձև ատոմները հոգի են, քանի որ այդպիսի ատոմներն ամենից ավելի կարող են թափանցել ամենուր, և լինելով շարժունակ՝ շարժման մղել և մնացյալը: Այդ ատոմները կենդանի էակներին շարժում են հաղորդում այն պատճառով, որ իրենք երբեք չեն հայտնվում դադարի վիճակում: Երբ շրջապատող օդը սեղմում է մարմինը և ճնշում ատոմներին, այդ ժամանակ շնչառության շնորհիվ դրսից մտնում են նոր ատոմներ, որոնք խոչընդոտում են մարմնի մեջ պարունակվողների արտահոսքին: Դեմոկրիտեսը հոգին նույնացնում է մտքի հետ: Միտքը կազմված է նախասկզբնական անհատ մարմիններից և իր մասերի մանրության ու ձևի շնորհիվ ունակ է շարժման: Բոլոր ձևերից ամենաշարժունը գնդաձևն է, իսկ և՛ միտքը, և՛ կրակն այդպիսին են (Arist. De anima, 404b): Ըստ Դեմոկրիտեսի՝ հոգին իրապես մաքուր և անխառն կրակ է, սակայն Նեմեսիոսի երկում դրված է *πῦρ τε καὶ ἄερα*, այսինքն՝ «կրակ և օդ», «քանզի ըստ Դեմոկրիտեսայ անձն կազմեալ է ի բաղադրութենէ գնդատեսակ հիւլէից՝ յորոց և օդ և հուր» (Նեմեսիոս, Վ 1889, էջ 26, ծ 2):

(40) Հերակլիտոս Եփեսացին (*Ἐράκλειτος*, Ք. ա. 544-483 թթ.) պնդում էր, որ հոգին վերածխություն է (գոլորշիացում), որից կազմվում է մնացած ամեն ինչ: Այն վերին աստիճանի անմարմին և մշտնիթաց մի բան է: Ընդհանրապես ողջ գոյը գտնվում է անդադար շարժման մեջ, քանի որ յուրաքանչյուր շարժուն գոյ իմացվում է (ճանաչվում է կամ դրսևորվում է) մեկ այլ շարժունով (Arist. De anima, 405a): Սակայն ամենայնի սկիզբ Հերակլիտոսը կրակն է համարում, որը լինելով առավել դյուրաշարժ տարր, կարծես Համայնի ճշգրիտ պատկերը լինի: Ամեն ինչ սկզբում կրակ էր, և ի վերջո կրկին կրակի է վերածվում: «Ամեն ինչ փոխարկվում է կրակի, և կրակն է փոխարկվում ամեն ինչի, նման այն բանին, ինչպես ոսկին փոխարկվում է ապրանքի, իսկ ապրանքը՝ ոսկու» (Γασσενθου 1966, cc. 30-33): Հոգին նույնպես ստեղծված է կրակից, բայց գտնվելով մարմնում, այն իր մեջ է վերցնում մարմնի հեղուկներից, ըստ որում, որքան մաքուր են այդ հեղուկները, այնքան ավելի է հոգին ունակ կրկին վերածվել կրակի, և նրա ուղին միշտ դեպի վեր է, իսկ անմաքուր հեղուկներով ծանրանալով հոգին ավելի հակված է իջնելու, որ ենթադրում է կամ կործանում,

կամ պարզապես՝ անկում նյութական կյանք (նույն տեղում): Այս մոտեցմամբ «վերածխութիւն» բառը չի կարելի ընկալել որպէս «գոլորշիացում», այլ մարմնական հավելյալ գոյացություններով ծանրաբեռնված (հրեղէն) հոգու շարժումը դեպի վեր (Հերակլիտոսի մասին տե՛ս նաև *Диоген* 1986, кн. 9, և *Ποσει*, т. 1, 1963, сс. 371-420):

(41) Ըստ Հերակլիտոսի՝ բնության մարմնական տարրերը ոգեղեն են և կապված են հավերժական գաղափարի՝ համայնական, համատիեզերական Հոգու հետ: Այդ «ամենեցունց» Հոգին «միջնորդավորող կապ է գաղափարների և մարմնական աշխարհի միջև, որը թափանցում է ողջ Համատիեզերական մարմնով մեկ և տալիս է նրան գնդի ձև: Այն կյանքի և շարժման սկզբունք է և կարգուկանոնի է բերում ամեն բան՝ ինքն էլ իր հերթին կարգավորվելով Հոր կողմից: Հնարավոր չէ խոսել նրա հատկանիշների մասին: Այն չար չէ, ոչ էլ բարի: Նրան հատուկ չէ ոչ տարբերակումը, ոչ որակը և ոչ էլ անորակությունը, քանի որ անմասն չէ այն որակներից, որ հետո են գալու: Նա ինչ-որ բանի մաս չէ, ոչ էլ մասեր ունեցող ամբողջություն: Նա ոչնչի նման չէ, ոչ էլ տարբեր է, ոչ շարժվում է, ոչ էլ անշարժ է» (տե՛ս *Ποσει*, т. 4, 1975, сс. 77-87):

(42) Թալես Միլետացի (*Θαλῆς ὁ Μιλήσιος*, Ք. ա 640/624 – 548/545 թթ.). «Ըստ երևույթին Թալեսը նույնպես հոգին համարում էր ունակ շարժելու (շարժում առաջացնելու), քանզի պնդում էր, որ մագնիսը հոգի ունի, քանի որ շարժում է երկաթը» (*Arist. De anima*, 405a): Ոմանք պնդում են, թե նա առաջինն էր, որ հոգին անմահ հայտարարեց: Նա գտնում էր, որ ջուրն է ամենի սկիզբը, և որ ամեն ինչի մեջ ջուր կա, և որ անգամ երկիրն է գտնվում ջրի վրա: Ըստ Արիստոտելի՝ Թալեսն այսպես էր կարծում, ի նկատի ունենալով, որ ողջ կենդանի բնության կերակուրը խոնավ է, իսկ հենց վերջինիցս է առաջանում ջերմությունը (էներգիա^օ): Ի վերջո, նրանով է հատկապես պահպանվում կյանքը կամ ապրելու ընթացքը, քանի որ ամեն ինչի սերմն ունի խոնավ բնություն, իսկ ջուրն ամեն խոնավի հիմքն է (տե՛ս *3an. Փալ.* 2003, с. 25, *Arist. Metaph.*, 983b, *Диоген* 1986, кн. 1):

(43) Պյութագորասն ընդունում էր թվերն իբրև սկիզբներ: Թիվը աշխարհում առկա հավերժական մշտակայունության իշխող, ինքնածին կապակցում է: Այնպես որ Աստված անբարբառելի և ինքնաշարժ թիվ է՝ կենսածին և հոգեծին: Թվի կարիք ունի մարդկային կյանքը, ինչպես նաև

արեգակը, լուսինը և յուրաքանչյուր կենդանի էակ: Պյութագորական էվրիստոսը, յուրաքանչյուր իր դիտարկելով իբրև թիվ, պատկերում էր այն որոշակիորեն դասավորված խճաքարերի ձևով: Օրինակ, Բուլսերի և կենդանիների ձևերը նա նմանեցնում էր զույգ թվով խճաքարերի: Թվերն ավելի խորն են, քան հենց իրենք՝ իրերը: Իսկ իրերի մեջ նրանք ավելի խորքային են, քան իրերին անմիջականորեն տրված որակականությունը, ավելին, նրանք այդ իրերի պատկերային կառուցվածքի սկզբունքն են, այդ պատճառով էլ՝ «ամենախմաստունը» (տե՛ս *Ποσειδ., τ. 1, 1963, cc. 538-542*): Արիստոտելը պյութագորականների մասին ասում է, որ նրանք հոգին ինչ-որ ներդաշնակություն (հարմոնիա) են համարում, քանի որ ներդաշնակությունը հակադրությունների խառնուրդ է և միավորում, իսկ մարմինը կազմված է հակադրություններից (*Arist. Metaph., 986a*): Այս նույն կերպ է մտածում նաև Հերակլիտոսը:

(44) Մի փոքր հատված է պակասում այստեղ՝ կիսատ թողնելով միտքը. *Πλάτων δὲ, οὐσίαν νοητὴν ἐξ ἑαυτῆς κινήτην* (*Nem 1987, p. 17. 3, «Իսկ Պլատոնը՝ իմանալի գոյ՝ ինքն իրենից շարժվող, հմմտ. Πλατων, τ. 4, Ο νόμοι, κη. 10, 894c*), որի վերջին հատվածին՝ *κατὰ ἀριθμὸν ἐναρμόνιον-ին համապատասխանող «ըստ թուոյ յաւգաւորի» խոսքերը դարձել են Պյութագորասին վերաբերող խոսքերի շարունակություն*

(45) «Կատարունություն» բառը ծագում է հունարեն *ἐντελέχεια*՝ «ամբողջական իրականություն»-ից, որ ստուգաբանվում է՝ *ἐντελής ἔχειν* - «կատարյալ ունենալը»: Վլադիմիրսկին այն բացում է *ἐν τῷ τέλει ἔχειν* ձևով՝ թարգմանելով իբրև «ամբողջություն, լիություն ունեցող ինչ-որ բան, ավարտունություն, ինքնանպատակություն, այլ կերպ ասած՝ լիարժեք, բացարձակ և ավարտուն իրողություն» (*Немецуй 2011, гл. 2, прим. 196*): Հմմտ. «կատարուն (τέλειος, perfectus). կատարեալ, լրացեալ, ունակ կատարելության, լիակատար» (ՆԲՀԼ):

Ըստ Արիստոտելի՝ ներքին ուժը (կամ գորությունը) ներունակաբար իր մեջ ամփոփում է և՛ նպատակի ուղին, և՛ ավարտուն արդյունքը: Հետևաբար, հոգին առաջին կատարունությունն է այն բնական մարմնի, որն ունի ավրելու գորություն (ներքին կարողություն): Իսկ այդպիսին կարող է լինել միայն «գործարաններ» (օրգաններ) ունեցող մարմինը: Շարժումն Արիստոտելն անվանում է ունակության կատարունություն

կամ իրագործում, քանի որ շարժման մեջ իրակացվում է այն, ինչ առարկայում կար իբրև գործություն (ուղեկցություն, պոտենցիալ էներգիա) (տե՛ս Arist. De anima, 412 b): Լեյբնիցը էնտելեկտուալներ է անվանում Մոնադներն: Այդ պարզ, անմաս գոյերը, որոնք լինելով ինքնաձավալվող, ինքնուրույն և ինքնագործ ուժեր՝ շնորհիվ ինքնագիտակցություն, շարժման են բերում բոլոր նյութական իրերը: Նրանք ձևավորում են մտահաս աշխարհը, որի ածանցյալն է ֆիզիկական տիեզերքը: Մոնադներն ունակ են փոփոխվել, բայց նրանց բոլոր բնական փոփոխությունները բխում են նրանց երկու ներքին սկզբունքներից՝ ընկալումից և ձգտումից, և նրանց համար բնականոն է միայն «Մոնադներ կամ էնտելեկտուալներ» ընդհանուր անվանումը: Այն մոնադները, որոնց հատուկ է ավելի հստակ ընկալումը, կոչվում են հոգիներ (տե՛ս Лейбниц 1982, сс. 413 -429):

(46) Հայերեն բոլոր ձևագրերում «Դինարքոս» տարբերակն է: Այդպես է նաև Մորանիի բնագրում (Nem 1987, p. 17. 5 Δείναρχος): Իսկ Մատթի բնագրում մեկ այլ անուն է՝ «Դիկեարքոս» (PG 40, p. 552 Δικαίαρχος): Դինարքոսը՝ Δείναρχος (Ք. ա. 361 թ.) հռետոր էր, Աթենքի տաս ամենաշքեղ հռետորներից մեկը: Նա մտերիմ էր ճեմական փիլիսոփայական դպրոցի շատ ներկայացուցիչների հետ, գրում էր դատական և քաղաքական ճառեր: Հիշատակում են նրա 60-160 ճառ, բայց մեզ է հասել նրա միայն մեկ ամբողջական ճառ:

Դիկեարքոսը Մեսսենից՝ Δικαίαρχος (Ք. ա. 365-300 թթ.) հույն ճեմական փիլիսոփա էր և գիտնական. Արիստոտելի այն աշակերտներից էր, որոնք գերադասում էին հետազոտել մասնավոր խնդիրներ: Նրա հետաքրքրությունները հիմնականում վերաբերում էին հոգեբանությունը, մշակույթի պատմությունը, բանասիրությունը, քաղաքագիտության տեսությունն ու աշխարհագրությունը: «Հոգու մասին» տրամախոսություն մեջ նա գալիս է այն եզրահանգման, որ հոգին մեռնում է մարմնի հետ միասին, քանի որ այն մարմնի չորս հիմնական որակներին՝ ցրտի, տաքի, խոնավի և չորի ներդաշնակությունն է (Αφονασιη 2015, сс. 226 -243):

(47) Ամմոնիոս Սակկաս՝ Ἀμμωνίος Σακκάς (175-242 թթ.) քիչ տեղեկություններ են պահպանվել այս փիլիսոփայի մասին: Հայտնի է, որ նա Ալեքսանդրիայի նորպլատոնական դպրոցի հիմնադիր Պլոտինոսի ուսուցիչն է: Նա «հետամուտ գտաւ ի համաձայնութիւն ածել զվարդապետու-

թիւնս Պլատոնի և զԱրիստոտելեայ» (Նեմեսիոս, Վ. 1889, էջ 27, ծ. 2): Նա նորպլատոնականութեան մեջ ներմուծեց հոգու անմարմնականութեան մասին պլատոնական գաղափարների և մաքուր տիեզերական նախաշարժ Մտքի ու նրա ինքնահայեցողութեան մասին արիստոտելեան ուսմունքի համադրումը (տե՛ս Յոն. Փառ. 2003, շ. 157): Ստեղծելով փրիսոփայական համակարգ, որի նպատակը հայտնի կրոնական ուղղութիւնների հաշտեցումն էր և մեկ ընդհանուր համակարգի բերելը՝ ըստ միասնական, համապարփակ բարոյական սկզբունքների, Ամմոնիոս Սակկասը և նրա աշակերտներն առաջին անգամ ներմուծեցին «թեոսոֆիա» եզրը, որը նշանակում է «աստվածային իմաստութիւն»: Նեղ իմաստով այս եզրույթը հետագայում կիրառվեց Ե. Պ. Բլավատսկայայի և նրա հետևորդների ուսմունքները բնորոշելու համար (ԿՓՇ, շ. 34-35):

(48) Նումենիոս Ապամեացի՝ *Νουμηνίος ὁ ἐξ Ἀπαμείας* (Բ. դարի երկրորդ կես), նորպլատոնական հույն փրիսոփա: Նրա բազմաթիվ երկերից պահպանվել են զուտ պատառիկներ, որոնցում ի հայտ է գալիս նրա պլատոնա-պլատոնական փրիսոփայութեան էությունը: Նա փորձում էր Պլատոնի փրիսոփայութեան մեջ բացել պլատոնական ուսմունքն ու Արևելեան իմաստասիրութիւնը, հատկապես, հրեականը, որը բերում էր աշխարհի երկակի պատկերի: Պլատոնին անվանելով հունարեն խոսող Մովսես, նա փորձել է ցույց տալ Պլատոնի և Պլատոնական փոխադրական մտքերի և հին եգիպտացիների ուսմունքների և խորհրդապաշտութեան հետ: Նա նաև փորձում էր մեկնել Հոմերոսին (ՓՅՇ, շ. 442): «Նումենիոս Ապամեացին ընդգրկեաց զվարդապետութիւն աննիւթականութեան հոգւոյ և զանմահութեան նորին» (Նեմեսիոս, Վ. 1889, էջ 27, ծ. 4):

(49) «Եռակի տարրոշք», իմա՝ եռաչափ:

(50) Նեմեսիոսն այս կերպ ներկայացնում է Քսենոկրատես Քաղկեդոնացու (Ք. ա. 396-314 թթ.) մտքերը: Վերջինս երկակիութիւնն էր համարում բոլոր իրերի սկիզբը, իսկ հոգին բնութագրում էր իբրև իմացութեան ընդունակ ինքնաշարժ թիվ: Այն նաև շարժող սկիզբ է կենդանի էակի համար: Հոգին, ըստ Քսենոկրատեսի՝ անմարմին է, ինչն ապացուցվում է վերգգայական հաճույքներով: Հոգին սնվում է մաքուր գիտելիքով, որն անմարմին է: Անկասկած է, որ այն հաղորդակից է մտքին, որն ըստ Քսեն-

նոկրատեսի՝ արտաքուստ է մուտք գործում մարդու մեջ (Քսենոկրատեսի մասին տե՛ս *Ποσειδ.*, *տ.* 3, 1974, *cc.* 445-456; նաև՝ *Διογεν* 1986, *κθ.* 4): Վենետիկյան բնագրի հրատարակիչն այսպես է ծանոթագրել. «Քսենոկրատե՛ գլուխ ձեմականացն դպրոցի, որ ջանահնար եղև միաբանել զվարդապետութիւնս Պղատոնի՝ վարժապետին իւրոյ, ընդ որոց ի Պիւթագորայ» (Նեմեսիոս, Վ 1889, էջ 42, ծ. 1):

(51) Հայ թարգմանիչները կարծես ձեռնպահ են մնացել *τὰ σελάχη και μαλάκια, οἶον* (*Nem* 19. 21) արտահայտությունը թարգմանելուց:

* *σελάχη* (աճառածուկ), ոսկրերի փոխարեն աճառներ ունեցող ձուկ: Ըստ ոմանց՝ լորձնամոլյուսկ, մաղասէակ, լորձնէակ, կակղամաշկ կենդանի (տե՛ս *Arist. Hist. an.*, 489b. 2, 6, 11, 492a. 27, 505a. 1, b. 3 և այլն):

* *μαλάκια* (*molliocak*)՝ բառացի, թույլ, նուրբ, փափուկ: Այսպես են կոչվում անողնաշարավոր ջրային կենդանիները:

(52) *սիպէքն՝ *σηπίαι* – դարչնագույն ներկ ունեցող կակղամորթ, թանաքածուկ, ծանրաշարժ ծովային մոլյուսկ:

* *տեւթիէդէսքն՝* *τευθίδες* -*τευθίς* (*loligo vulgaris*, կաղամար), *τεῦθος* (*sepia officinalis*, թանաքածուկ):

* Հունարեն բնագրում հավելած *σύνλοι*. կամ *ὀσύνλοι* -ն (*οσմիլα*) ուժեղ հոտ արձակող ծովային պոլիպ է: Հունական *ὀσύνλοι* տարբեր կերպ է ընկալվում: Որոշ բնագրերում *σύνλοι* ձևն է: Տարբնթերցվածներում առկա է նաև *մύροι*, *μυραίναι* (*μυρενα*, *օճածուկ*), *ինչպես* նաև *σύνροι*, *σμυραίναι* (*смур* – մուրենայի արուն, *օճածկան տեսակ*) (տե՛ս *Arist. Hist. an.*, 489b. 28, 504b. 34, 506b. 16 և այլն): Սակայն չի կարելի ենթադրել, թե այստեղ խոսքը *օճածկան* որևէ տեսակի մասին է, քանի որ նրանք չեն պատկանում անարյուններին, ավելին՝ հայտնի է, որ եթե *օճածկան* արյունը ներարկվի կաթնասուններին արյան մեջ, այն ունենում է ուժեղ թունավոր ներգործություն: Ավելի տրամաբանական է Մատթէի կարծիքը, ըստ որի՝ *ὀσύνλοι*-ն պոլիպի տեսակ է:

* *ὄστρακόδερμα* (պատյանավորներ, զրահապատներ):

* *ἀπαλόστρακα* (բառ.՝ փափկագանգ, փափուկ պատյանով, թեփուկավոր): Արիստոտելը դրանց անվանում էր *μαλακόστρακα*, որ նույն նշանակությունն ունի (տե՛ս *Arist. Hist. an.*, *κθ.* 1, 6. 31, *κθ.* 4, 2. 16):

* *κάραβος* (1. խաչափառ, ծովախեցգետին, 2. բնդիռ):

* *καρκίνος* (1. խեցգետին, 2. շնածանծ):

* *άστακός* (ծովախեցգետին, օմար):

(53) *Կլեանթես Կլեάνθης* (Ք. ա. 331-230 թթ.) – հույն ստոիկյան փիլիսոփա: Նրա բազմաթիվ երկերից՝ զանազան փոքր պատառիկներից բացի, պահպանվել է «Ձոն կամ փառաբանություն Ջևսին» երկը, որը հնագույն Ստոյայից մեզ ասած ամենաերկար տեքստն է: Ըստ *Կլեանթեսի* բոլոր հոգիները պահպանվում են մինչև տիեզերական շրջանի ավարտը: Նա մեծ նշանակություն էր տալիս գործնական էթիկային, որի հիման վրա հետագայում ձևավորվեց ուշ ստոիկյան բարոյագիտությունը (Дюоген 1986, кн. 7):

(54) *Քրիսիպոս Տարսոնացի* (*Χρύσιππος*, Ք. ա. 281-208 թթ.) ակադեմիկոս ստոիկյան փիլիսոփա: Կենսագրական տեղեկությունները քիչ են, եղած հաղորդումները՝ հակասական: Թողել է մոտ 700 աշխատություն: Միայն «Բնություն մասին» նրա երկը կազմում էր 37 գիրք և համարվում էր իր ժամանակի խոշորագույն գործը փիլիսոփայության ոլորտում: Չնայած աշխատանքներն ամբողջությամբ մեզ չեն հասել, սակայն դա ևս բավականաչափ գաղափար է տալիս նրա փիլիսոփայական հայացքների մասին: Որպես բնագետ նա ուսուցանում է, որ սկզբնական նյութը հուրն է եղել: Որպես հոգեբան ընդունում է հոգու մարմնական լինելը, քանի որ միայն մարմիններն են ներգործում իրար վրա, սակայն ընդունում է նաև հոգու անմահությունը: Ասում են, որ Քրիսիպոսը հաճախ էր գրում անպարկեշտ և անվայելուչ արտահայտություններով: Ըստ *Դիոգենես Լաերտի* նրա մահը վրա է հասել անվերահսկելի ծիծաղի հետևանքով առաջացած շնչահեղձությունից (Дюоген 1986, кн. 7):

(55) Համեմատությունն *ἀνάλογον* եզրը հաճախակի էր գործածում Պլատոնը, իսկ Մարկոս Տուլլիոս Կիկերոնը (Ք. ա. 106-43 թթ.) հետագայում հորինեց նրա շատ հաջող լատիներեն համարժեքը՝ *proportio* (բարեհասկացություն, համամասնություն կամ բնական համաչափություն) բառով:

Տարածություն չափումներն առաջ են գալիս աստիճանաբար, մեկը մյուսի հետևից. կետից՝ գիծ, գծից՝ երկչափ հարթություն, ապա՝ եռաչափ մարմին: Չափումները հասկացվում են նաև որակական առումով: Մարմինները կարող են լինել անսահմանորեն բազմազան, բայց պետք է ունենան ինչ-որ միասնական կառուցվածք, որը համամասնական օրինաչափությամբ կընդգրկի նրանց բոլոր բազմատեսակ դրսևորումները: «Սա-

կայն միայն երկուսը չեն կարող լիարժեք միավորվել առանց երրորդի, որովհետև այդ երկուսի միջև պիտի գոյանա դրանք միավորող կապը: Իսկ լավագույն կապն այն է, որն առավելագույնս ի մի է բերում ինքն իրեն և կապակցյալին: Ամենալավը դա անում է բնական համաչափությունը, որովհետև՝ երբ երեք թվերից, ինչպես քառակուսի, այնպես էլ խորանարդ, ցանկացած միջին թվի պարագայում առաջին թիվը հարաբերվում է միջինին այնպես, ինչպես միջինը՝ վերջինին, և վերջինը դարձյալ հարաբերվում է միջինին, ինչպես միջինն՝ առաջինին, այդժամ միջին թվի՝ առաջին և վերջին թվերի տեղում, իսկ առաջին և վերջին թվերի՝ միջին թվի տեղում հայտնվելու դեպքում ստացվում է, որ դրանք անհրաժեշտաբար նույն հարաբերություն մեջ են, և եթե այդպես է, ապա դրանք բոլորը կազմում են միասնություն» (Plato Tim. 31c-32a):

(56) Կոկորդիլոսի օրինակը պատահաբար չի ընտրված: Այն համարվել է տարօրինակ և կենդանական տարբեր տեսակներ իր մեջ ներամիոփոզ կենդանի: Հերոդոտոսը գրում է. «Կոկորդիլոսի բնույթն այսպիսին է: Ձմռան չորս ամիսների ընթացքում նա ոչինչ չի ուտում: Թեև չորքոտանի, բայց և՛ ցամաքային է, և՛ լճային, որը ձու է դնում հողի վրա և թուխս նստում: Օրվա մեծ մասն անց է կացնում ցամաքի վրա, իսկ ամբողջ գիշերը՝ գետում, քանզի ջուրն առավել տաք է, քան օդը և ցողը: Մեզ հայտնի բոլոր կենդանիներից այս մեկը փոքրագույնից դառնում է մեծագույն: Նրա ձվերը քիչ են խոշոր սագի ձվերից, իսկ նորածին ձագը լինում է ձվի մեծությունը համապատասխան, բայց աճելով, հասնում է 17 և ավելի կանգուն երկարության: Նա խոզի աչքեր ունի, խոշոր ատամներ և ժանիքներ, իր մարմնին համեմատ: Միակ կենդանին է, որ լեզու չունի: Նրա ստորին կզակն անշարժ է, և միակ կենդանին է, որն իր վերին կզակը բերում է դեպի ստորին կզակը: Նա ուժեղ ճանկեր ունի և կռնակին՝ խոշոր թեփուկավոր մաշկ: Ջրի մեջ կույր է, բայց բաց օդում շատ սրատես: Քանի որ ապրում է ջրում, նրա բերանը ներսից լի է շատ տզրուկներով: Բոլոր հավքերն ու գազանները խուսափում են նրանից, բայց տրոքիլոս թռչունը նրա հետ հաշտ ապրում է և ծառայություն մատուցում: Քանզի կոկորդիլոսը ջրից դուրս է գալիս ցամաք և բերանը բացում, երբ փչում է արևմտյան քամին, այնժամ տրոքիլոսը մտնում է նրա բերանը և կուլ տալիս տզրուկներին: Կոկորդիլոսին հաճելի է այդ ծառայությունը, և նա ոչ մի վնաս չի հասցը-

նում տրոբիլոսին: Եգիպտացիների մի մասը կոկորդիլոսին սրբազան է համարում, մյուս մասը՝ ոչ, և նույնիսկ թշնամաբար վերաբերում» (Հերոդոտոս 1986, էջ 114-115):

(57) «Յաւերումն» բառով թարգմանվում է *ἀρμονία* -ն, որ նշանակում է «համաձայնութիւն, երաժշտական կառուցվածքի համակարգ, համաչափութիւն, կապ»: Իսկ «յօդումն՝ շողկապումն և բարեյօդ յարմարութիւն իրաց և ձայնից» (ՆԲՀԼ): Գրչագրերի լուսանցքներում նշվող լուծմունքների մեջ մեկնաբանվում է. «Յօդումն ասի դաշնակումն ձայնի, որպէս աղեաց քնարի յօդանալ ընդ միմեանս»: «Հարմոնիա»-ն հակադրութիւնների խառնումն է և համադրումը, բազմազանութիւն համաձայնութիւնը, դաշինքն ու բարեհարմարութիւնը, ինչպես նաև խառնված մասերի բարեչափ փոխհարաբերութիւնը: Սա առավելապես պլուրալորական կարծիք է (Arist. *De anima*, 408a): Ըստ նրանց՝ հարմոնիայի սկզբունքը թիվն է: Թիւի մեջ են միավորվում և ձևավորվում հակադրութիւնները: Քանի որ գոյի հիմքում ընկած են երկու սկիզբ, որոնք նման չեն և ոչ էլ հարազատ են իրար, ակնհայտ է, որ նրանցով հնարավոր է չէր ձևավորել տիեզերքը, եթե նրանց չմիանար ինչ-որ կերպ առաջացած հարմոնիան: Իրոք, նմանն ու հարազատը հարմոնիայի կարիք բնավ չունեն, իսկ օտարն ու տարբերն՝ ըստ քանակի անհրաժեշտաբար պետք է միավորվեն այնպիսի դաշնութիւնը, որն ի վիճակի կլինեն պահել նրանց տիեզերքում: Այսպիսով, հարմոնիան առաջանում է հակադրութիւններից, որոնց խառնման և միավորման մեջ առկա է համաձայնութիւն: Հարմոնիայի շնորհիվ նույնացվում են անսահմանութիւնն ու սահմանը, երբ անտարբերակելի անսահմանութիւն ֆոնի վրա հստակ սահմանագծվում է ձևավորվող առարկայի կառուցվածքը: Այն ապահովում է առարկայի հստակ կամ պարզ զգացողութիւն հնարավորութիւնը, նրա որոշակիութիւնը: Հոգիներն ու բոլոր առարկաներն իրենց մեջ ներունակաբար պարունակում են քանակական-ներդաշնակ կառուցվածքը (տե՛ս *Ποες m.* 1, 1963, cc. 295-323):

(58) Միմիխսը՝ *Συμμία* (Ք. ա. Դ.-Ե. դդ.) Սոկրատեսի աշակերտն էր: Նրա մասին խոսվում է Պլատոնի «Ֆեդոն», «Կրիտոն», «Ֆեդր» տրամախոսութիւններում: «Ֆեդոն»-ում փիլիսոփայական արծարծումները բերվում են համեմատութիւնների ձևով: Օրինակ՝ «քնարը և լարերը մարմնավոր են, այսինքն՝ բաղադրյալ, հողեղեն և մահկանացուին ազգակից»

(տե՛ս Plato Phaedo, 86a): Ուրեմն, երբ քնարը ոչնչանում է (քանի որ ապականացու է), երաժշտութիւնը կամ ներդաշնակութիւնը, «որ բնութ-
յամբ նման և ազգակից է աստվածայինին ու անմահին, պետք է վերանա
նախքան մահականացուն» (նույն տեղում, 86b): Կարող են ասել, որ «ներ-
դաշնակութիւնը կշարունակի գոյութիւն ունենալ, նաև մինչև իրեն
ինչ-որ բան պատահելը, նախ կփտեն փայտն ու լարերը» (նույն տեղում):
Բայց «ամենից հաճախ այդպիսին ենք համարում հոգին: Եթե մեր մարմի-
նը կապակցում և պահում են ջերմութիւնը, ցուրտը, չորութիւնը և նման
այլ բաներ, ապա այն (հոգին) դրանց խառնուրդն է և ներդաշնակու-
թիւնը, երբ դրանք լավ և համաչափ են խառնված իրար: Իսկ եթե հոգին
ինչ-որ ներդաշնակութիւն է, ապա ակնհայտ է, որ երբ մեր մարմինը չա-
փից դուրս թուլանում է կամ լարվում հիվանդութիւններից կամ այլ
արատներից, հոգին նույնիսկ աստվածային լինելով՝ անհրաժեշտաբար
պետք է կործանվի, ինչպես կործանվում է ձայների կամ արվեստագետի
երկերի ներդաշնակութիւնը, իսկ մարմնավոր մնացորդները կարող են եր-
կար ժամանակ պահպանվել, մինչև չայրվեն կամ չփտեն» (նույն տեղում,
86 c, d): Սովորաբար հակադարձելով՝ բերում է իր փաստարկները: Ներ-
դաշնակութիւնը բաղադրյալ բան է: Եթե հոգին ներդաշնակութիւն է
(հարմոնիա, յողումն), ապա այն առաջ է գալիս մարմնի տարրերի ձգմամբ,
քանի որ այն չէր կարող բաղադրված լինել նախքան այն, ինչից պետք է
բաղադրվեր (տե՛ս նույն տեղում, 92b): «Յուրաքանչյուր ներդաշնակու-
թիւնն ի բնե այնպիսին է, ինչպիսին ներդաշնակվել է... Եթե ավելի լավ է
ներդաշնակված և ավելի լրիվ, արդյո՞ք ավելի լավը չի լինի ներդաշնա-
կութիւնը և ավելի լրիվ, իսկ ավելի վատ և քիչ ներդաշնակված լինելու
դեպքում ավելի նվազ ու թույլ... Իսկ հոգու դեպքում դա հնարավոր է:
Կարո՞ղ է մի հոգին մյուսից ավելի լավը և լրիվ կամ ավելի վատը և թույլ
լինել» (նույն տեղում, 93b): Քնարը (իր ներդաշնակութիւնը) կարող է
լարված լինել ավել կամ պակաս չափով, ապա ուրեմն հոգին էլ կարող է
լինել ավել կամ պակաս լարված: Առաքինութիւնը հոգու պատշաճ լա-
րումն է: Բայց եթե հոգին ինքնին լարում է, ապա առաքինութիւնն ու
չարիքը կլինեն այդ լարման երկու հակադիր մասերը, և հետևաբար՝ «եթե
ճիշտ դատենք, ոչ մի հոգի հաղորդակից չէ չարիքին, եթե հոգին ներդաշ-
նակութիւն է» (նույն տեղում, 94a), քանզի չարիքն ինքնին աններդաշ-

նակություն է, իսկ ներդաշնակությունը չի կարող հաղորդակից լինել ան-
ներդաշնակությանը: Հետևաբար, եթե հոգին իդեալական լարում է, այն
չի կարող լինել առաքինություն կամ չարիք: Հոգին մարմնի ուղղորդող,
կառավարող սկզբունքն է, իսկ լարումը պայմանավորված է երաժշտական
գործիքի նյութով: Նույն տրամաբանությամբ էլ մարմինը կարող է դառ-
նալ հոգու կառավարիչը: Հետևաբար Միմիասի փաստարկը հիմնավոր չէ
(տե՛ս Plato Phaedo, 94a-d):

(59) «Մարդու համեմատումը քնարի հետ հին ակունքներ ունի: Հու-
նական մշակույթի մեջ քնարն, ի տարբերություն սրնգի, համարվում էր
կատարյալ գործիք, որը նվագում էր Ապոլոնը՝ հաղթելով Միդիասին
(Մարսիասին): Այս գործիքի համադրումը մարդու մարմնի հետ որոշ հո-
գեւոր իրողությունների խտացման խորհուրդ էր կրում... Կղեմես Ալեք-
սանդրացին համեմատում էր գործիքները նաև ընդհանուր հոգեւոր իրո-
ղությունների հետ. փողը՝ հարության, սաղմոսարանը՝ լեզվի, կիֆարան՝
շուրթերի, ծնծղաները՝ եկեղեցու, երգեհոնը՝ մարմնի, լարերը՝ երակների,
կիմվալը՝ լեզվի հետ, ողջ մարդը կառուցված է խաղաղ երաժշտական գոր-
ծիքի պես: Եւ կատարյալ աղոթքի մեջ մասնակցում էին մարդու մարմնի
բոլոր հատվածները, նրա բոլոր ոլորտները՝ բերվելով մի լարվածքի եւ ամ-
բողջության, իր գոյության լրիվությամբ նվիրաբերվելով Աստծուն» (Յոթ-
նագրեանք 2008, էջ 146 -148): «Ըստ հին ուսմունքների մարդու մարմինը
մի լար էր: Եթե այն ճիշտ լարվածքի բերվեր, նրա վրա Ոգին կարող էր
նվագել իր աստվածային հնչումները: Հովհաննես Երզնկացին մարդկային
մարմինը նույնպիսի երաժշտական գործիք էր համարում, ինչպես քնարը
կամ փողը: «Են գործիք երաժշտականին՝ ի նիւթական, կազմածոյ ան-
շնչից, որպէս քնար և փող, և մարմին բանաւոր կենդանւոյն, յորում ծած-
կեալ կա ձայնն անմարմին և ի շարժեալ արուեստաւորին բացակատարէ
զհնչումն» (Թահմիզյան 1967, էջ 98):

(60) Ձգեալ (ἐπιτεινομένη). «Նվագարանների լարումը երաժիշտների
ուշադրության կենտրոնում գտնված լուրջ և կարևոր խնդիրներից էր, և
համարվում էր երաժշտի շնորհքի և ճարտարության գլխավոր ցուցանիշ-
ներից մեկը: Այս պատճառով Երզնկացին ասում է. «Ոչ ասին նաւաստի
կամ բժիշկ կամ երաժիշտ, այլ որ ոչ են հմուտ այնոցիկ գիտութեան

արուեստից: Իսկ որ զղեակ նաւին հմտաբար ուղղէ, և զխառնուածս զեղոց և սպեղանեաց կազմէ, և զփողս և զքնարս յարմարէ, նոքա ասին՝ նաւաստի, և բժիշկ, և երաժիշտ» (Թազմիգյան 1967, էջ 108):

(61) Հունարեն բնագրում (*Nem* 1987, p. 24. 4) այստեղ (***) պետք է հետևեն Գալենոսի խոսքերը՝ «Ապացույցների մասին» (ἐν τοῖς ἀποδεικτικοῖς) ստեղծագործությունից: Սակայն դրանք չկան Նեմեսիոսի հրատարակություններից ոչ մեկում: Դրանք բացակայում են նաև հայկական ձեռագրերում: Օքսֆորդյան հրատարակիչը գրում է, որ Գալենի *De demonstratione* գիրքն ինքը ոչ մի տեղ չի կարողացել գտնել: Ըստ Վլադիմիրսկոն՝ մյուս հրատարակիչները ևս չեն գտել այդ տեղը Գալենոսի երկերում (*Hemезий* 2011, нр.м. 183): Բառացի ἀποδεικτικός նշանակում է «ցուցադրական, համոզիչ, դեմոնստրատիվ, փաստերի վրա կառուցված, հիմնավոր»: Իսկ «մակացուցական»-ը համապատասխանում է ἐπιδεικτικοῖς տարրնիթերցմանը և ըստ ՆԲՀԼ-ի՝ նշանակում է «ապացուցական»: Որոշ դեպքերում ἐπιδεικτικός նշանակում է «ցուցադրման համար նախատեսված, տեսարժան, տպավորիչ»: Գալենոսի ձեռքով խմբագրված իր գրքերի ցանկն ակնառու վկայում է, որ նա ունեցել է ոչ թե մեկ, այլ մի քանի գիրք, որոնք օգտագործվել են «ապացույցների համար»: Այդ ցանկը ներառում է. 1. Բուժական գրվածքներ, 2. Կանխատեսման մասին, 3. Մեկնություններ Հիպոկրատեսի երկերի, 4. Ընդդեմ էրասիստրատոսի, 5. Ասկլեպիոսի մասին, 6. Գրքեր՝ նվիրված տարբեր բժշկական մեթոդների, 7. Գրքեր, որ օգտագործվում են ապացույցների համար, 8. Բարոյափրկիսոփայական երկեր, 9. Պլատոնի, 10. Արիստոտելի փրկիսոփայության մասին, 11. Ստոիկյան փրկիսոփայության հետ տարածայնությունների մասին, 12. էպիկուրոսի փրկիսոփայության, 13. Քերականական և ճարտասանական փաստարկների մասին (*Зан. Фил.* 2003, с. 166):

(62) Խառնուած (*κρᾶσις, temperamentum*) բնութենական տարրերի, օրգանական որակների և հեղահյութերի համաչափ խառնուրդն է, «այլ յորոց ասէն՝ երևի յաւեստ զխառնուած բնութեանն հոգի առդնել» (Նեմեսիոս, Վ 1889, էջ 34, ծ. 4): Նեմեսիոսը նշում է խառնվածքի իննը տեսակ, ըստ որում, այդ իննից միայն մեկն է բարեխառն (*εὐκρατος* – «բարեչափ խառնված, բարեխառն, չափավոր»), մյուսները «վատախառն» են (*δυσκρατος*). *δυσκρασία* նշանակում է վատ խառնուրդ: Խառնվածքի մասին

ուսմունքի հեղինակը Հիպոկրատեսն է: Նա պնդում էր, որ մարդիկ տարբերվում են չորս հեղահյութերի տարբեր չափակցություններով: Հիպոկրատեսի ուսմունքի հիման վրա իր De temperamentis երկում Գալենոսը մշակեց խառնվածքների տիպաբանությունը: Ըստ նրա, խառնվածքի տիպը կախված է օրգանիզմում հեղահյութերից որևէ մեկի գերակշռումից: Գալենոսը տարբերակում էր խառնվածքի 9 մասնավոր և 4 ընդհանուր տիպ: Այդ չորսը շարունակեցին հետագայում կոչվեցին սանգվինիկ (արյան գերակշռումով պայմանավորված), Ֆլեգմատիկ (լորձի), խոլերիկ (լեզու) և մելանխոլիկ (սև մաղձի) (տե՛ս Гален, т. 1, 2014, «О запусимости свойств души от темперамента тела», сс. 339 -376 [Galenus, De temperamentis, I. 8]): Այս տեսակետը դարեր շարունակ, և նույնիսկ այժմ մեծ հեղինակություն է վայելում գիտնականների շրջանում: Սակայն հետագայում հետազոտողները՝ դիտարկելով վարքի նշանակալի բազմազանությունը տարբեր մարմնակազմություն ունեցող մարդկանց մոտ, փորձեցին խմբավորել դրանք: Արդյունքում առանձնացվեցին խառնվածքի տիպեր, որոնք համարվելով ժառանգական կամ բնածին, կապվեցին մարմնակազմական առանձնահատկությունների հետ՝ հենց այդ կերպ էլ անվանվելով՝ մարմնակազմական (կոնստիտուցիոնալ) տիպեր: Բ. Մ. Տեպլովը (1896-1965 թթ.) խառնվածքը սահմանում է իբրև տվյալ մարդու համար հոգեկան առանձնահատկությունների ամբողջություն, որը կապված է զգայական գրգռելիությամբ, այսինքն՝ զգացողությունների առաջացման արագություն և դրանց ուժի հետ: Ըստ Պավլովի՝ նյարդային գործառույթների հիմնարար հատկանիշներն են՝ գրգռականության ուժը, արգելակումը, դրանց հավասարակշռությունը և շարժունությունը, որոնց ավել կամ պակաս ինտենսիվությունը պայմանավորվում են նյարդային համակարգի չորս հիմնական տիպերը, որոնք իրենց բնութագրերով մոտ են Հիպոկրատեսի չորս խառնվածքներին: Նյարդային համակարգի տիպ ստելով Պավլովը հասկանում էր բնածին և շրջապատի ու դաստիարակության համեմատաբար քիչ ենթակա հատկանիշները: Նյարդային համակարգի այս որակները կազմում են խառնվածքի բնախոսական հենքը: Ներկայումս գիտության մեջ կուտակվել են նյարդային համակարգի վերաբերյալ բազմաթիվ փաստեր, որոնք համոզում են, որ յուրաքանչյուր մարդ ունի նյարդային համակարգի խիստ որոշակի տիպ, որի դրսևորումները (այսինքն, խառնվածքի

առանձնահատկությունները) կազմում են նրա գործունեություն մեջ ի հայտ եկող անհատական հոգեբանական տարբերությունների կարևորագույն կողմը (տե՛ս Μακλαков 2001, сс. 553 -558):

(63) Տե՛ս ծնթ. 4:

(64) Ներգործություն (ἐνέργεια – էներգիա, ուժ գործողություն կամ գործի մեջ, իրականացված իրողություն, գործունեություն, ակտիվություն, ներուժ, հզորություն): Արիստոտելն ասում է՝ նյութը կարող է գոյություն ունենալ հնարավորության մեջ, երբ նա դեռ չունի ձև, բայց ունակ է ստանալ, և իրականության մեջ, երբ նա ստացել է ձև (Arist. De anima, 412a): Այդ անցումն իրագործվում է ἐνέργεια-ի շնորհիվ: Նեմեսիոսն այդպես էլ բացատրում է այն՝ «շարժություն արարողական», որ «ըստ բնութեան» է (գլ. 15, [3]), ի տարբերություն ախտի, որ «արտաքոյ բնութեան է»: Հայերեն «ներգործություն» նշանակում է «գործողություն՝ բնական, զօրաւոր, ազդոյ, գործունեայ, աջողակ, առնելութիւն, ազդեցութիւն, զօրութիւն գործողական»(ՆԲՀԼ): Ընդհանրապես, «զօրութիւն» և «ներգործութիւն» եզրերը ժամանակակից պատկերացումներով, հավանաբար, կարելի է ընկալել իբրև պոտենցիալ և կինետիկ էներգիա:

(65) Այս դեպքում արտաքուստ նման բառերը՝ ἄποιός («անորակ») և ἀποίητος («անարար») շփոթմունքի առիթ են դարձել, որը ձեռագրերում երբեմն ուղղվել է տեքստում կամ լուսանցքում: «Ըստ այսոցիկ որակութեանց եւ ջուրն անարար (իմա՝ անորակ) ասի» (9. [2]):

(66) Որպես δοξάζειν բառի համարժեք, որ նշանակում է «համարել, կարծել, խորհել, փառավորել» հանդես է գալիս «փառաւորել»-ը. «գիարդ զմտաւ ածելն, փառաւորելն և դատիլ, կարէ թեթեւութեան եւ ծանրութեան գործ լինել»: Ըստ վենետիկյան հրատարակչի՝ բառը կիրառված է «վրէպ թարգմանությամբ» (Նեմեսիոս, Վ 1889, էջ 41, ծ. 1), և իր տպագիր օրինակում նա այն փոխարինում է «խորհել» բառով: Դիոնիսիոս Արեոպագոս (որի գործերը ևս թարգմանել է Ստեփանոս Սյունեցին) գտնում է, որ մտքի և սրամտության միջև ընկած վզի հատվածում բնավորված է կարծիքը (δόξα), և հայերեն թարգմանության մեջ դարձյալ գտնում ենք «գփառսն» (The Armenian Version of the Works Attributed to Dionysius the Areopagite, translated and edited by Robert W. Thomson, Lovanii, 1987, Յաղագս աստուածայնոցն անուանց, էջ 206): Անտիկ համակարգում կարծիքը մի-

Չանկյալ դիրք էր զբաղեցնում հստակ գիտելիքի և զգայությունների միջև. «գլուխը գմիտան, իսկ պարանոցը՝ զփառան եւ որպէս [ի] մէջ բանի և անբանություն, իսկ լանջս գսրտմտութիւնն...»: Իսկ Գրիգոր Տաթևացին գրում է. «Մասունք հոգւոյս ո՞րպէս ճանաչին: Պատասխան՝ որպէս արարածս Աստուած ճանաչի, այսպէս եւ ի մարմնոյս զհոգին օրինակաւ իմանալ մարթի: Մարմնոյս՝ գլուխն, հոգւոյն՝ գլուխ՝ միտքն: Փառքն՝ պարանոց, արիւնն՝ սիրտ, սէրն՝ թոք, խնդութիւնն՝ լեարդ, ստուգութիւնն՝ փածեղ: Հանճարն՝ երիկամն, բնութիւնն՝ ոտք, բանն՝ ձեռք, հոգին՝ կեանք, տեսութիւնն՝ ակն, լսողութիւնն՝ ունկն, խոհականութիւնն՝ խորհուրդ» (Տաթևացի, Գրք հարցմանց, հատ. 5, պր. ԺԶ.): Եվ քանի որ ծօ՛ձն շանակում է և՛ կարծիք, և՛ փառք, այս երկու հասկացությունները կարող են նույնանալ, ինչպես և տվյալ թարգմանության մեջ է (Թամրազյան 2013, էջ 50 և 355): Ի դեպ, ծօ՛ձն բառը, որ հաճախ է հանդիպում Նեմեսիոսի բնագրում, թարգմանվում է և՛ «կարծիք», և՛ «փառք»:

(67) Եվնոմիոսը (Դ. դար, մահացել է 394) հույն մեկնիչ է, հերձվածող, ծայրահեղ արիստակաճություն ներկայացուցիչ: Ծնունդով Կապոդոկիայից: «Ապոլոգիա» երկի հեղինակն է, որտեղ պնդում է, որ Հայր Աստված և Որդին չեն կարող նույն էությունն ունենալ, որովհետև առաջինն Անծին է, իսկ երկրորդն՝ արարված: Այս երկին ի պատասխան Բարսեղ Կեսարացին գրել է «Ընդդեմ Եվնոմիոսի» աշխատությունը (Антология 2009, сс. 696-767; 970):

(68) Տե՛ս Ծննդոց Բ. 2:

(69) Տե՛ս Յովհ. Ե. 17:

(70) Տե՛ս Բ. Թագ. ԺԱ. 3-27:

(71) «Ունակական կենդանություն» (2. [22]), ἐκτικὴ ζωή (34. 10) (vita, quae in habitu est) – կյանք՝ պարզ գոյություն (կամ կապի) իմաստով: Ապրելը բոլորինն է, գրում է Նեմեսիոսը, բայց ոչ բոլոր գոյություն ունեցողներն են կենդանի: «Եւ կեալ ասեն և զամենեկին անշունչսն՝ ունակական կենդանություն, ըստ որում շարակալեալ լինի յամենեցունց անձնէ՛ ի գոլն միայն և ոչ լուծանել» (2. [22]): Ասում են, որ ապրում է նաև ամենեկին անշունչը՝ ունակական կենդանություն, ըստ որում շարունակված լինելով համատիեզերական հոգուց միայն գոյության համար, և ոչ քայքայման» (փոխ. Կ. Մ.): Նմանատիպ կարծիք է արծարծում նաև Լեյբնիցն

իր «Մոնադոլոգիայում»: Նա գտնում է, որ չկա բացարձակապես չանձնավորված կամ անանձն բնություն, քանի որ գոյի հիմքը կազմող պարզ էությունները (սուբստանցիաները) կամ մոնադները երբեք չեն կարող ոչնչանալ, և հետևաբար որևէ բնություն չի կարող վերջնականապես զրկվել ներքին կյանքից: Լեյբնիցն ասում է, որ անշունչ (չանձնավորված) բնության երևույթներն իրականում գտնվում են խորը քնի վիճակում: Հանքանյութերն ու բույսերը նա համարում է քնած մոնադներ՝ անզիտակից պատկերացումներով: Յուրաքանչյուր մոնադի մեջ ներունակաբար ամփոփված է ամբողջ Համայնը: Կյանքն ի հայտ է գալիս այն ժամանակ, երբ ատոմներն արթնանում են: Այդ նույն քնած մոնադներն այդ դեպքում կարող են հասնել ինքնագիտակցության ամենաբարձր մակարդակի (Լեյբնից 1982, cc. 413-429):

(72) Կրոնիոսը Բ. դարի երկրորդ կեսի նշանավոր հույն փիլիսոփա է: Ենթադրվում է, որ նա պլատոնականության միջանկյալ փուլի ներկայացուցիչ է՝ ազդված նորպլատոնականությունից: Նույնիսու ժամանակակիցն է: Նա ևս Նույնիսուի պես ընդունում էր, որ գաղափարներին առնչակցվում է ոչ միայն զգայականը, այլև իմացականը: Նրա միակ հիշատակված երկը՝ *Μετενωμάτωσις (περὶ παλιγγενεσίας – De iterato ortu)* «Վասն վերստին լինելութեան» (Նեմեսիոս, Վ 1889, էջ 47, ծ. 3) գործն է, ըստ որում այդտեղ Կրոնիոսը մերժում է մարդկային հոգիների անցումը կենդանիներին (Դուոցեն 1986, «Πορφυρή, Ζηζνή Πλωτυνα»):

(73) Թեոդորոս Պլատոնական (Θεόδωρος ὁ Πλατωνικός) ըստ երևույթին Թեոդորոս Ասինեան է (Θεόδωρος ὁ Ἀσινεύς) (275-360 թթ.) նորպլատոնականության ներկայացուցիչ, Պորփյուրիոսի, ապա նաև Յամբլիքոսի աշակերտը: Նրա կենսագրական տվյալները խիստ աղքատիկ են և մոտավոր: Հայտնի են նրա երկու չպահպանված աշխատանքի վերնագրերը. «Անունների մասին» և «Այն մասին, որ հոգին բոլոր տեսակների է (էյդոս)»: Նա ընդունում էր Յամբլիքոսի շատ գաղափարներ, դրանց մի մասն էլ քննադատում էր՝ վերադառնալով Պորփյուրոսի սահմանումներին: Անդրանցիկ (տրանսցենդենտալ) աշխարհի ծագման և կառուցվածքի մասին իր երկու ուսուցիչների միավորյալ դրույթները Թեոդորոսը ներառեց իր երրորդության մեջ և դրանով դրեց նորպլատոնականության վերջնական կառուցվածքի հիմքը, որն ավելի ուշ մշակեց և ավարտին հասցրեց Պրոկլոսը (տե՛ս Ποσει, т. 7, 1988, с. 305):

(74) Ըստ Պորփյուրիոսի (232/233 - 301/305) հոգին գոյում է մարմնում իր գորությամբ (պոտենցիայով), որով էլ կարողանում է փոխհարաբերության մեջ մտնել մարմնի հետ: Դա բնավ չի նշանակում ինքնին հոգու անկում: Հոգին ունի իր սեփական կյանքը որպես այդպիսին, և միաժամանակ նրան հատուկ է կյանքը՝ մարմնի հետ ունեցած փոխհարաբերության արդյունքում: Պորփյուրիոսը կարևոր դեր է հատկացնում կենսական շնչին (պնեմա), որն ըստ նրա, տեղակայված է հոգու և մարմնի արանքում՝ դրանով դառնալով մի տեսակ միջանկյալ աստիճան Լինելության այդ երկու մակարդակների միջև: Հոգու գոյությունն, ըստ Պորփյուրիոսի, պայմանավորված է նրա իմացականությամբ: Նրա վերջնական նպատակը վերառաքումն է դեպի միտք, իբրև բարձրագույն նպատակ, որի իրականացումն ապահովել կարող է միայն մարդու ազատ կամքը: Միտքն, ըստ նրա, միշտ հավասար է ինքն իրեն, և այն հոգու նման չի ընկղմվում մարմնի մեջ, այլ միշտ գործում է մտահայեցողական, մտահաս աշխարհում: Պորփյուրիոսը դեմ է վերամարմնավորման գաղափարին: Ըստ նրա՝ մարմնի մահից հետո հոգին անջատվում է մարմնից վերջնականապես՝ դառնալով լիակատար ազատ (տե՛ս *Ποσει, m. 7, 1988, cc. 22 -31*):

(75) Համաձայն Յամբլիքոսի (Բ. դար) ուսմունքի՝ մաքուր մտքերն ու հոգիները վերտիեզերական աստվածներ են: Նրանցից ցած, տիեզերքում՝ երկնային աստվածներն են: Նրանք իշխում են 12 տիեզերական ոլորտների վրա՝ չորս սկզբնատարրերի, յոթ մոլորակների և եթերի: Դրանցից էլ ցած ստորերկնային պահապան աստվածներն են և առանձին մարդկանց ու ազգերի չար ոգիները: Յամբլիքոսի մասին կենսագրական տվյալների միակ աղբյուրը Եվնապիոսի «Փիլիսոփաների և սոփեստների կյանքը» երկն է: Նա սերում է Եմեսացի քուրմ-առաջնորդի ընտանիքից: Աշակերտները նրան դիմում էին «Աստվածային ուսուցիչ» բառերով: Նրա մասին առասպելներ էին պատվում, իբր նա ունակ է՝ հաղթահարելով երկրի ձգողականությունը, սավառնել օդում, մինչև հինգ մետր բարձրության վրա (լեխտացիա), որի ժամանակ նրա մարմինն ու հանդերձանքը առկայծում էին ոսկե փայլով: Յամբլիքոսի ուսմունքի առանձնահատկությունը պլատոնականության և պլուրազորականության համատեղումն է քաղդեական գուշակների խորհրդապաշտության և հեթանոսական պաշտամունքի տարրերի հետ: Նա զբաղվում էր նաև աստղաբանությամբ, մո-

գուլթյամբ, գուլշակուլթյամբ և դեպի վերգգայական ոլորտներ մտազմայլական (էքստատիկ) վերառաքման փորձերով: Յամբլիքոսը մեկնում էր Պլատոնին էգոտերիկ ոգով, դրանով մեծապես նպաստելով օկկուլտիզմի զարգացմանը: Նա տարբերակում էր ոչ միայն էգոթերիզմն ու կրոնը, այլև էգոթերիզմն ու փիլիսոփայությունը (տե՛ս Ποσειδ, τ. 7, 1988, cc. 155-166):

(76) *Տե՛ս* Galen, *Наз. част. чел. тела*, 1971, 1. 1, 2 (2), с. 28 [*Gal. de usu part I. 1*]:

(77) *Տե՛ս* Galen, *Наз. част. чел. тела*, 1971, 1. 22 (80), с. 43 [*Gal. de usu part. I. 22*]:

Գլուխ Գ.

(78) *Ἑλλήνων οἱ πολλοὶ γέλωτα ποιοῦνται* (*Nem* 1987, p. 43. 13) արտահայտության մեջ *πολλοί*-ն տարօրինակ կերպով միացել է հաջորդ բառի հետ և ստացվել է «բազմածիծաղելիս» կամ «բազմաց ծիծաղելիս»: Հավանաբար աղավաղվել է բնագիրը, որ նախապես եղել է «հեթանոսացն է բազմաց, որք ծիծաղելիս առնեն...»:

(79) *Օրիգենեսը* (185 -254 թթ.) ուսուցանում էր մարդկային հոգու նախագոյության տեսակետը, որը սկզբունքորեն տարբերվում է հնդուիզմում կամ պլատոնականության մեջ առկա վերամարմնավորման (ուերնկառնացիայի) գաղափարից: Համաձայն նրա ուսմունքի՝ հոգիները ոչ թե վերամարմնավորվում են կենդանիների կամ բույսերի մեջ, այլ ընթանում են դեպի կատարելութուն՝ մարդկային կյանքի տարբեր ձևերում ընդունելով ավելի ու ավելի լուսավորյալ մարմիններ: Օրիգենեսը կարծում էր, որ անկյալ հոգիները վերամարմնավորվում են հրեշտակների մարմիններում, երկրի վրա՝ մարդկային մարմիններում, և կյանքի ավելի ցածր՝ դիվական ձևերում, աստիճանաբար բանական էակների պայմանական «հիերարխիկ սանդուղքով» անցնելով վերամարմնավորման հերթագայումները: Օրիգենեսը ենթադրում էր, որ Աստված է ստեղծել աշխարհների այս անվերջանալի հերթափոխը, սակայն յուրաքանչյուր աշխարհ վերջավոր է և սահմանափակ: Աշխարհները գոյությունն ունեն ոչ թե զուգահեռ, այլ մի աշխարհի ավարտի հետ, սկիզբ է առնում մյուսը (տե՛ս *Ο αρχαλαχ* 1993, cc. 304-310):

Գլուխ Դ.

(80) Օրգանիզմում առկա հեղահոսություններից յուրաքանչյուրը նախկինում նմանեցվում էր տարվա եղանակներից որևէ մեկին: Տարվա եղանակներից կախված չորս հիմնական հեղահոսությունների որակական և քանակական փոփոխություններն օրգանիզմում հանգամանորեն վերլուծված է Հիպոկրատեսի *De natura hominis* երկում: Քանի որ ձմռանն օրգանիզմում գերակշռում է լորձը, գարնանը՝ արյունը, ամռանը՝ դեղին մաղձը, իսկ աշնանը՝ սև մաղձը, ապա դրանք համեմատելի են (տե՛ս *Γυννοκρατ* 1994, cc. 201-209): Հմմտ. «Ի չորից գոյացեալ» բնագրում ՄՄ 3710, էջ 534-535. «Արդ, զի չորք են տարերք, հուր և աւղ, ջուր և հող. և չորք եղանակք՝ գարուն, և ամառն, աշուն, և ձմեռն. և չորք բնութիւնք մարդո՞ հաւասարք միմեանց, և ունին այսպէս զհաւասարութիւնն (զհաղորդութիւնն). արիւնն, որ ի լերդէն գոյանայ՝ խոնաւ է և ջերմին և զնմանութիւն ունի զաւղոյ, զի և աւղ գիջին է և ջերմին՝ նմանեալ գարնան եղանակիդ, զի և գարունն գիծին է և ջերմին, վասն այսորիկ յուզմունք արեան և շարժմունք գարունն լինի, իսկ խարտեաչ մաղձն, զոր լեղին գոյացուցանէ, ջերմին է և չորին, նման հրոյ, զի և հուր ջերմին է և չորին (նման ամարայնո, զի և ամառն ջերմին է և չորին), և պարտ է զդեղ խարտեաչ մաղձոյն ամառն առնուլ: Իսկ սեաւ մաղձն, զոր փայծաղն գոյացուցանէ, ցրտին է և չորին, նման աշնանային եղանակիդ, և հողոյ, զի և հող ցրտին է և չորին, և աշունն ցրտին է և չորին: Այլ մաղասն, որ բլղամ, ընդ ամենայն անդամսն մեր սփռեալ է, և գիծին և ցրտին՝ զնմանութիւն բերէ զջրոյ, զի և ջուր ցրտին է և գիծին և ընդ ամենայն արարածս սփռեալ է, և է նման ձմերայնոյ: Այլ զի մաղձ և բլղամ և սեաւ մաղձ ընդ երակսն սփռեալ են և ի հատանել երակացն յայտ է, զի երբեմն ի հոսմանէ լինի խարտեաչ մաղձոյ, և երբեմն սև մաղձոյ և բլղամի»:

(81) Այստեղ կարծես խոսքը նյութի երեք ազդեցատային վիճակների մասին է պինդ, հեղուկ, գազային:

(82) «Ի հոսմանն» բառը *Matth*-ի բնագրում համապատասխանում է *τοῦ ὀρρώδους բառին* (PG 40, p. 609): Հմմտ. *ὀρρώδεω* «վախենալ, երկյուղել», *ὀρρώδία* «վախ, սարսափ»: Վլադիմիրսկին *ὀρρώδης φλέγμα* արտահայտությունը ծանոթագրում է «չիճուկանման լորձ, արնաջուր, արյան

Հետ հոսող դեղնագույն հեղուկ (κυκροβιμα)» բառերով: Բառն ունի նաև թարախի, շարավի իմաստ (Hemezui 2011, որսմ. 302): Իսկ ի՞նչ դեր ունի այստեղ «վախենալ» բառը: Արդյո՞ք պատահական համընկնում է «արյունը վախից ջուր դառնալ» արտահայտությունը:

Morani-ի քննական բնագրում *ὀρώδους φλέγματος* (Nem 1987, p. 45. 16) ընթերցումն է: Սակայն տարրնթերցվածներում առկա է նաև *ῥοώδους* (Nem 1987, p. 45) բառաձևը, որ նշանակում է «ուժգին հոսող, սաստիկ հոսքերով հարուստ», որին հայերեն բնագրում համապատասխանում է «ի հոսմանն»: Այս բառը հանդիպում է նաև «Յաղագս կերակրականի» գլխում (22. [3])՝ «Երիկամանցն՝ զջրագոյն արիւնն»՝ τῶν δὲ νεφρῶν τὸ ὀρρώδης (PG 40, p. 696), τῶν δὲ νεφρῶν τὸ ὀρῶδες (Nem 1987, p. 84. 14): Այս դեպքում Վլադիմիրսկին *τὸ ὀρρώδης-ին համարժեք է համարում humorum serosum-ը*, որ նշանակում է շճային հեղուկ (Hemezui 2011, որսմ. 662): Տարրնթերցվածներում (Nem 1987, p. 84) առկա է նաև *οὐρῶδες = urinale* (միզային, միզանման) *οὐρον* (մեզ) բառից:

(83) Նմանամասն՝ *ὁμοιομερῆς* եզրն առաջին անգամ ներմուծել է Անաքսագորասը: Դրանք այն մասնիկներն են, որոնք իրենց էությունը բացարձակապես նույնական են ամբողջի հետ, այնպես, որ յուրաքանչյուր մասնիկ այդ ամբողջի հետ միասին կրում է նույն անունը: Ըստ Անաքսագորասի՝ գրեթե ամեն բան, որ կազմված է նմանամասն մասերից, ծնվում և ոչնչանում է միայն միավորման և տարանջատման միջոցով, հակառակ դեպքում դրանք ոչ կծնվեն, ոչ կոչնչանան, այլ այդ վիճակում կմնան հավերժ (տե՛ս Arist. *Metaph.*, 984a): Նեմեսիոսը մարմնի մեջ ևս տարբերում է *ὁμοιομερῆ* (նմանամասն) և *ἀνομοιομερῆ* (աննմանամասն) մասեր: Նմանամասն են.

- * «ուղիղ գլխոյ» – *ἐγκέφαλος* – 1. գլխուղեղ, 2. միջուկ,
- * «քուն» – *μήνινγες* – թաղանթ, թմբկաթաղանթ (Hemezui ուղեղաթաղանթ),
- * «ջիղք» (ջիլք) – *νεῦρον* – 1. ջիլ, 2. թել՝ նյարդաթել, մկանաթել, 3. լար,
- * «ուղիղ» – *μυελός* – 1. ոսկրածուծ, 2. ողնուղեղ,
- * «ոսկր» – *ὀστέον*,
- * «ատամն» – *ὀδούς*,

Ծանոթագրություններ

- * «աւճառք» – χόνδρος – 1. կտոր, փշուր, բեկոր, 2. աճառ, 3. աղ, 4. խոշորհատիկավոր,
- * «գեղցք» (երբեմն էլ՝ դեղձք) – άδένες,
- * «շաղկապք» – σύνδεσμοι – 1. կապան, ջիլ, 2. կապ, 3. ուղիներ, համաձայնություն, (Ημεζιւի՛ սβιαζκι),
- * «պարուտակք» – ύμένες – թաղանթ, միջնաթաղանթ, մաշկածալք (ժամանակակից բժշկության մեջ ύμῶν նշանակում է «կուսաթաղանթ»),
- * «նիարդք» – ἴνες (ἴς, ἶνός – 1. մկան, մկանաթել, 2. ջիլ, 3. թելավոր, 4. անոթ) (Ημεζιւի՛ փιῶρυ, βολοκνα),
- * «մազ» – τρίχες,
- * «եղունգ» – ὄνυχες,
- * «մարմինք» – σάρκες (σάρξ, σαρκός – միս, մարմին) – հավանաբար խոսքը փափուկ հյուսվածքների մասին է,
- * «երակք» – φλέβες,
- * «չնչերակ» – ἀρτηρίαί – 1. շնչափող, 2. գարկերակ, 3. արյունատար անոթ,
- * «վտառք» – πόροι – 1. անցք, ծակոտի, 2. հոսք, ընթացք, 3. կամուրջ, 4. ելք, միջոց,
- * «ճարպ» – πιμελή,
- * «մորթի» – δέρμα,
- * «Ղղուտ նիարդք» – νευρωδῶν ἰνῶν – խոսքը նյարդաթելերի մասին է:

Աննմանամասն են.

- * «գլուխ» – κεφαλή,
- * «կուրծք» – θωραξ,
- * «ձեռք» – χεῖρες,
- * «ոտք» – πόδες:

Գլուխ Ե.

(84) «Սահմանք փիլիսոփայականք» բնագրում տարրն այն է, «որ ժողով է և քակտ է գշարագիրսն» (Ριτορ, Οπρεδελενια 1960, էջ 388): Նեմեսիոսն Արիստոտելից է վերցրել տարրերի որակական հակադրությունների մասին միտքը, ըստ որի՝ մի որակից մյուսին անցումը կատարվում է միջանկյալ որակի միջոցով: Հենց բնորոշումը՝ «աշխարհական տարր»

(στοιχεῖον κοσμικόν) Արիստոտելին է, չնայած նմանատիպ բնորոշում ունեն նաև ստոիկյանները: Տիեզերքում մշտական շրջապտույտի մասին կարծիքը, մարմնի կազմավորումը տարրերից, և ընդհակառակը՝ մարմինների տարալուծումը տարրերի, որի շնորհիվ պահպանվում է իրերի գոյությունը (մեկի առաջացումը՝ մյուսի կործանումն է, և հակառակը), Նեմեսիոսը նույնպես վերցրել է Արիստոտելից (տե՛ս Arist. Meteor.): Այս ամենն, ինչպես նշեցինք, ընդհանուր գծեր ունի նաև ստոիկյան պատկերացումների հետ: Վերջիններս լինելուծյան կառուցվածքի մեջ տարբերում էին սկիզբ (ἀρχή) և տարր (στοιχεῖον): Սկիզբն իրականում գոյություն ունեցող իրերի էությունն է, իսկ տարրերը՝ այն, ինչից ձևավորվում և ինչի մեջ լուծվում է լինելությունը: Սկզբներից մեկն ակտիվ է, արարող, մյուսը՝ պասսիվ, կրական: Առաջինը որակ է, որ տեսակագործում է նյութը, կամ բանականություն է: Իսկ երկրորդը՝ անորակ նյութ կամ էություն (սուբստանցիա) (տե՛ս Ποσει, т. 5, 1979, сс. 97-106):

(85) Ծայրք որակութիւնքն՝ ἄκραι αἱ ποιότητες (summae qualitates; элементарные качества). ἄκρος – 1. բարձրագույն, 2. ծայրագույն, 3. Լավագույն, ποιότης – որակական որոշակիություն:

(86) Ըստ մակբեկութեան՝ κατ' ἐπίκλασιν («ըստ թեքման»), ածանցյալ է ἐπικλάω («ճկել, թեքել») բայից. «ըստ մակդարձությունեան»՝ κατ' ἐπιστροφῆν («ըստ շրջադարձի, վերադարձի»): Հմմտ. վենետիկյան հրատարակչի մեկնաբանությունը՝ [մակդարձություն] «շրջան առեալ՝ դառնալով անդէն ի նոյն կարգ տարերացն» (Նեմեսիոս, Վ 1889, էջ 62, ծ. 3):

(87) «Այսպես կոչված օդը՝ երկրի շուրջ, խոնավ է և տաք՝ ջրային գոլորշու և երկրից այլ գոլորշիացումների պատճառով, իսկ ավելի վեր՝ տաք և չոր: Քանզի եթե ջրային գոլորշու բնությունը խոնավ է և սառը, ապա երկրից գոլորշիացումների բնությունը տաք է և չոր, և ջրային գոլորշին կարծես ջուր է՝ իր ներքին ունակությամբ, կարողությունամբ, իսկ գոլորշիացումն ասես կրակ է իր ներքին հնարավորությամբ» (Arist. Meteor. 340b):

(88) Չորեքդեղեանն (τετραφάρμακον, tetrapharmakon). բառացի՝ չորս բաղադրամասերից կազմված դեղ: Ըստ օքսֆորդյան հրատարակչի՝ այսպիսի բաղադրությունը լինում է երկու տեսակի՝ հատուկ դեղորայք՝ կազմված չորս բաղադրատարրերից, որոնց մեջ մտնում են՝ դափնու պտուղներ, գենցիանոս և այլն, կամ՝ քսուք՝ դարձյալ չորս բաղադրատար-

ըերով մեղրամոմ, խեժ, ճարպ, կուպր, որը կոչվում էր βασιλικόν -արքայական: Ավելի ուշ դեղագիտություն մեջ գործածվում էր նմանատիպ մի քսուք ևս, որը նույնպես կոչվում էր «արքայական»՝ կազմված ձիթայուղից, մեղրամոմից, բևեկնախեժից, ճարպից և բևեկնից (Немецун 2011, стр. 333): Վենետիկյան հրատարակիչը տալիս է ձեռագրական մի լուծմունք, որտեղ «չորեքդեղեան»-ը վերլուծվում է իբրև նկարիչների համար նախատեսված չորս ներկերի խառնուրդ՝ սպիտակ, սև, կարմիր, կապույտ (Նեմեսուն, Վ 1889, էջ 64, ծ. 1):

Փիլիսոփայության մեջ այս եզրույթով անվանում են չորս հակիրճ վարքականոնները, որոնք էպիկուրյան ուսմունքի հետևորդ Դիոգենեսը (Էնոանդեցի) Բ. դարում հրամայել էր փորագրել պատին՝ ի ցույց անցորդներին և սերունդներին: Արձանագրությունը հայտնաբերվել է ԺԹ. դարում, և այդ ժամանակից ի վեր հաճախ է նշվում իբրև էպիկուրոսի ուսմունքի լավագույն լուսաբանում: Այդ վարքականոնները մեջբերվում են էպիկուրոսի «Նամակ Մենեկեսին» գրվածքում, ինչպես նաև հիշատակվում են «Գլխավոր վարքականոններ» շարքում: Այսպիսով «Աստվածներից պետք չէ վախենալ, մահից պետք չէ վախենալ, ցավը տանելի է, երջանկությունը հասանելի է»: Խոսքն, իհարկե, փիլիսոփայական դեղորայքի մասին է: Փիլիսոփայությունն այս դեպքում դիտվում է իբրև հոգեբանական ապաքինող միջոց: Հետևաբար, նշված վարքականոնները պետք է ոչ թե կրկնել, ինչպես մանտրա, այլ դրանց մասին պետք է խորհել: Էպիկուրոսն ինքը հատկապես այդ է խորհուրդ տալիս իր «Նամակ Մենեկեսին» գրվածքում (ՓՇ 2012, շ. 621):

(89) «Պլատոնական փիլիսոփայության դասագիրք» խորագիրը կրող ձեռագրում, որ վերագրվում է Ալբինոսին (Բ. դար), կարդում ենք հետաքրքիր բնորոշում. «Այս չորս ոչ թէ տառով, Ձևսով եմ երգվում, այլ վանկով, տիեզերական Արարիչը գծագրեց Բուրգը, Խորանարդը, Ութանիստ մարմինը (օկտաէդրոն), Քսանանիստ մարմինը (իկոսաէդրոն), և բոլորը միասին տեղադրեց տասներկու նիստ ունեցող մարմնում (Դոդեկաէդրոնում)՝ մեկ ամբողջության մեջ» (Платон, т. 4, 1994, Учебник Платон. Философ., 13. 1): Այսպիսով, ինչպիսիք են այն չորս ծնված սքանչելի մարմինները, որոնք նման չեն մեկը մյուսին, սակայն ունակ են քայքայվելով վերածնվել մեկը մյուսի մեջ: Այս կառուցվածքներն ու նրանց հա-

մապատասխան չափումները ենթադրվում են նաև որակական առումով: Մարմինը կարող է լինել անասնամանորեն բազմազան, բայց նրանում պետք է լինի ինչ-որ միասնական կառուցվածք, որ որոշակի բարեհաստատության կրող է: Ամեն նյութ կյանքի է բերվում շարժմամբ: Իսկ շարժումը բնության մեջ միշտ իրականացվում է հակադրությունների փոխազդեցությամբ:

(90) Եթե այն տարրն է, որ ընդգրկում է ամեն ինչ, նրանով է լցված անշարժ աստղերի ոլորտը: «Այնտեղ, որտեղ աշխարհը վերածվում է երկնքի, այն լցված է եթերով: Այսպես կոչված եթերը հնուց է ստացել իր անունը, և ինձ թվում է՝ Անաքսագորասը կարծում էր, որ այդ բառը նույն բանն է նշանակում, ինչ և կրակը, քանզի համարում էր, որ վերին ոլորտները լի են կրակով, և որ հները «եթեր» էին անվանում այնտեղ թևածող ուժը, և այստեղ Անաքսագորասը ճիշտ էր: Երևում է, նրանք այդ մարմինը համարել են մշտաշարժ (aei theon) և միաժամանակ օժտված որոշակի աստվածային բնությամբ, և որոշել են անվանել այդպիսի մարմինը «եթեր» (aither), քանզի այն չի կարելի նմանեցնել մեր աշխարհում ոչնչի հետ» (Arist. Meteor., 340b):

Եթերը Հոմերոսի և ընդհանրապես անտիկ մտածողության տեսակետից՝ այն նյութն է, որից ստեղծվել է գեղեցկությունն՝ իր հիմնական սկզբունքներով, այսինքն՝ Աստվածները: Հոմերոսի մոտ այն հստակ առանձնացվում է երկնքից: Զևսը կոչվում է «եթերաբնակ»: Նա դուրս է գալիս եթերից, նա եթերային է, ինչպես և մյուս աստվածները, քանի որ Հոմերոսը նրան բնութագրում է ոչ նրա մասնակի, այլ ավարտուն կառուցվածքով: Այսպիսով, եթերը բարձր է ամպերից և գրեթե նույնական է երկնքի հետ: Գուցե եթերն այն նյութն է, որից կառուցված է երկինքը, բայց ոչ Ֆիզիկական իմաստով, այլ ըստ էության: Այսինքն, դա այն նյութն է, որից արարվել են իրենք՝ աստվածները (տե՛ս Поев, т. 1, 1963, сс. 150; 223): «Եւ Արիստոտէլ հինգերորդ տարր ասաց, որպէս թէ հուր և ջուր, երկիր և օդ և արփի. և զարփիս այս օտար ի չորիցս էութեանց, որպէս թէ աստուածոց բնակարան լինել զնա ասաց. զոր բազումք հաւանեալ հինգերորդ ասութեան էիցս, զոր արփի ասէ շրջապատող» (Հերմէս Եռամեծ 1956, էջ 312 -313):

Հովհան Որոտնեցին գրում է. «Արիստոտել ասէ՛ այլ գոլ զնիւթ երկնային մարմնոցն և կոչի հինգերորդ տարր ի վերայ չորից տարերց ի մեկ փոխեին, որպէս երկրաւորքս... Արիստոտելէս չորս կերպիւ հաստատէ, զի այլ է նիւթ երկնային մարմնոց: Նախ, զի ամենայն որ զմի նիւթ ունի, հարկ է, զի զմի շարժումն ունիցի, իսկ երկնային մարմինն անուած և շրջագայի: Երկրորդ, զի տարերքս մեկ ի մեկոյ ծնանի և մի առ մի փոփոխի, և թէ էին նոքա յայսմ տարերց՝ կարէին և նոքա ի տարրականս փոխարկիլ և տարերքս ի նոսա, բայց ոչ փոփոխին: Երրորդ՝ թէ էին նոքա ի ներհակ որակաց, տարրականաց ի ներհակ շարժմանց կրէին ապականութիւն: Չորրորդ՝ զի տեսակ երկնային մարմնոյն այնքան յագեցուցանէ զնիւթն իւր մինչ ոչ ցանկա մերկանալ գտեսակն իւր, իսկ տարրական մարմինն միշտ ցանկա մերկանալ գտեսակն իւր և զգենուլ այլ տեսակ: Եվ մինչ առաջին տեսակն ոչ ապականի, զերկրորդն ոչ կարէ զգենուլ՝ յայն սակս ապականի: Իսկ երկնային մարմինն ոչ բնաւ մերկանայ, վասն այն և ոչ ապականի, յայտ ուրեմն, եթէ այլ է նիւթ երկնային մարմնոյն» (Βορομηου 1956, էջ 356):

(91) Ամենայնի մարմին՝ παντὸς σῶμα: Ըստ Պլատոնի՝ Տիեզերքը կենդանի օրգանիզմ է, որ ունի հոգի և մարմին: Նրա հոգին, որ անտեսանելի և անշոշափելի է, ձգվում է կենտրոնից դեպի եզրեր՝ իրենով ծածկելով, զսպելով և կապելով Տիեզերքի մարմինը: Այդ մարմինը նա գծագրեց այնպես, որ պատշաճ և հարազատ լինի Համայնին: Եվ իսկապես կենդանի էակին, որն իր մեջ ամփոփում է բոլոր մյուս կենդանի էակներին, վայել է այնպիսի ձև, որն իր մեջ ունի բոլոր մյուս ձևերի գծագիրը: Եվ նա պտտման միջոցով կլորացրեց տիեզերքը, մինչև գունդ, որի մակերևույթի բոլոր կետերը հավասար հեռավորության վրա են կենտրոնից: Այսինքն՝ ձևերից առավել կատարյալը, որ նման է հենց իրեն: Գունդը կատարելապես ողորկ էր ու հարթ, քանի որ Համայնն ինքնաբավ էր, չկար ոչինչ, որ նրանից դուրս լիներ, և նա կարիք ունենար զգայարանների միջոցով ճանաչել կամ ստանալ այն: Շարժման յոթ սեռերից շնորհեց նրան այն մեկը, որն առավել մոտ է մտքին և մտածողությանը: Այսինքն, շարժում նույն տեղում, ինքն իր մեջ, շրջան՝ շրջանի հետևից: Իսկ այդպիսի շարժման համար պետք չէին ոտքեր: Գնդի կենտրոնում տեղավորեց հոգին և տարածեց այն բոլոր ուղղություններով, միաժամանակ նրանով կապելով Համայնի մարմինը: Այսպես նա ստեղծեց երկինքը՝ զնդած և պտտվող, ունակ ինքն

իր հետ շփման, ինքնաբավ ինքն իր ճանաչմամբ և ինքն իր ընկերակցությունում: Այս բոլոր առավելություններով հանդերձ արարիչը տվեց նրան երանելի աստծո կյանք (տե՛ս Plato Tim. 33b-34b):

(92) Տե՛ս Plato Tim. 31c-32a:

(93) Ենթակա է նիւթոյ համապատասխանում է *προῶποκειμένης ὄλης*-ին (*προῶποκειμαι* բայից՝ «դրված լինել հիմքում, նախորդել, նախապես տրված լինել իբրև գրավ կամ փոխարինաբար»): Այսինքն, այս արտահայտությունը կարելի է թարգմանել նաև՝ «նախապես պարտքով տրված նյութից»: Նման արտահայտություն կա նաև Պլատոնի «Տիմեոս»-ում: «Նա նոր աստվածներին փոխանցեց մահկանացու մարմիններ կերտելու և մարդկային հոգիներին պակասողն ավելացնելու գործը... Նրա զավակները, անսալով հոր հրամանին, սկսեցին կատարել այն: Նրանք վերցրեցին մահկանացու էակի անմահ սկիզբը և, նմանակելով իրենց արարչին, փոխառեցին տիեզերքից հրի, հողի, ջրի և օդի մասերը, հետագայում վերադարձնելու պայմանով: Այդ մասերը նրանք միացրին, բայց ոչ այն անբակտերի շղթաներով, որոնցով իրենք էին կապակցված, այլ փոքր չափի պատճառով անտեսանելի շղթաներով, որոնք բաղկացած են բազում օղակներից, այնպես որ յուրաքանչյուր մարմին բոլոր չորս տարրերի միասնություն է, իսկ անմահ հոգու շրջապատությունը նրանք կապեցին մարմնի մեջ մակընթացություն և տեղատվություն հետ» (Plato Tim. 42e-43a):

(94) Տե՛ս Ծննդոց Ա. 1:

(95) *ἀβύσσος* – «1. անդունդ, 2. անվերջ, անհատանելի, անիմանալի, անքնին». և *անդունդի անունն է τῆς ὄλης ἀπειρον* – «նիւթոյն անբաւութիւն»: Պլատոնական ուսմունքի ինքնազգացի անդունդն անանուն է: Այն մարմնական է, բայց ոչ անձնական, ինչպես և անտիկ աստվածները, որ կիսով չափ անձեր էին, կիսով չափ՝ տարրեր:

(96) Իրականում, Հոբի գրքում նման արտահայտություն չկա, սակայն անդունդի արարված լինելու մասին ակնարկ կա Առակաց գրքում. «Ես անդունդները չեղած եմ ծնուել, ջրառատ աղբիւրները չեղած» (Առակաց Ը. 24):

(97) Յոչընչէ բառը համապատասխանում է հունարեն բնագրի *ἐξ οὐκ ὄντων* արտահայտությանը, որ կարելի է թարգմանել՝ «ոչ էությունից»:

Պլատոնը կարծում է, որ Աստված աշխարհը ստեղծեց ոչ թե անմիջապես իր էությունից, այլ տարբեր էությունների խառնուրդից (տե՛ս Plato Tim. 35a -37a): Այն, որ Աստված անհատ է, և որ պարզապես չէր կարող իր էությունից մասնաբաժին հատկացնել որևէ մեկին, ավելի հստակ է երևում Եվնոմիոսի մտքերում: Ըստ նրա՝ Աստված անստեղծ, անարար, ինքնագոյ էություն է, անսկիզբ, անծին, միեղեն և միակ, պարզ և ոչ բաղադրյալ: Նա բոլորի աստվածն է, ստեղծիչն ու արարիչը՝ Միածնից նախկին և գերակա, բայց Միածնով մուտք գործած Լինելություն: Քանզի իր Որդուն ամենից վաղ, ամեն արարվածից նախկին՝ իր գորությունամբ և ներգործությունամբ ծնեց, ստեղծեց և արարեց՝ ոչինչ չհատկացնելով նրան իր Ինքնությունից, որովհետև Աստված անապական է և անհատ և երբեք չի բաշխում իր էությունը: Միայն նա է անստեղծ և անծին, իսկ անծին էությունամբ ծնվելն անհնար է: Եվնոմիոսը հստակ տարանջատում է ներգործությունը (էներգիան) էությունից: Որդու ծննդի համար Աստված օգտագործեց ոչ թե իր էությունը, այլ գորությունը կամ կամքը, իսկ իր իշխանությունամբ ու հրամանով, և Որդու ներգործությունամբ և գորությունամբ, նա արարեց Սուրբ Հոգուն: Նրանից հետո արդեն մնացած ամենն արարեց Որդու միջոցով (Ан-тология 2009, cc. 696 -767 [Eunom. Apol., PG 30, col. 868]:

(98) *St'us Hippokratam 1994, cc. 193-213 (Hippocrates, De natura hominis 2. 11, p. 34):*

(99) *St'us Galen, m. 3, 2016, cc. 555-641 (Gal. in Hipp. de nat hom. I. 5):*

(100) *Ἀναξιμένης Ἀναքսիմենես Միլետացին (Ք. ա. 585/560-525/502 թթ.) գտնում էր, որ ի սկզբանէ եղել է օդը և անսահմանությունը, և որ լուսատուները շարժվում են ոչ թե Երկրի վերևում, այլ Երկրի շուրջ: Համայնական նախասկզբի հատկանիշները բնութագրելու համար նա օրինակ էր բերում օդի որակները: Օդը Անաքսիմենեսի պատկերացմամբ անսահման է (ἄπειρος), սակայն նախասկիզբը նա հասկանում է իբրև լրացում այլ որակների, որ բնորոշ են օդին: Համապատասխանաբար, նախասկզբի շարժումն ու հանգստի վիճակը բնութագրվում են այդ որակներով: Անաքսիմենեսի օդի մասին պատկերացումները միաժամանակ նման են և՛ Թալեսի գաղափարներին (վերացական նախասկիզբ, որն ընկալվում է իբրև որոշակի բնութենական տարր), և՛ Անաքսիմանդրեսի կարծիքին (վերացական նախասկիզբ, որն ընկալվում է որպես անորակ ինչ-որ գոյ): Դա բոլոր*

նյութական տարրերից ամենաանորակն է՝ թափանցիկ և անտեսանելի: Այն չունի գույն և սովորական մարմնական որակներ: Դրա հետ մեկտեղ օդը որակական նախասկիզբ է, թեպետ երբեմն այն համընդհանուր տարերայնություն օրինակ է լի վերացական, համապարփակ պարունակություն: Ըստ Անաքսիմենեսի աշխարհն առաջացել է «անսահման» օդից, և իրերի այս ողջ բազմազանությունն իրականում օդ է՝ իր տարբեր վիճակներում: Տաքացման հետևանքով նրա նոսրացմամբ առաջանում է կրակը, սառեցման հետևանքով նրա խտացմամբ ձևավորվում են քամին, ամպերը, ջուրը, հողը և քարերը: Նոսրացված օդը ծնում է հրային բնությունը երկնային լուսատուները: Ըստ որում, խտացումն ու նոսրացումն այստեղ հասկացվում են իբրև հիմնական, փոխադարձաբար ներհակ, սակայն հավասար գործառույթային գործընթացներ, որոնք մասնակցում են նյութի տարբեր վիճակների ձևավորմանը: Անաքսիմենեսի կողմից օդի ընտրությունը որպես տիեզերաստեղծ նախասկիզբ և տիեզերքի կենսական հենք հիմնված է փոքր և մեծ աշխարհների զուգահեռության սկզբունքի վրա. «Այնպես, ինչպես օդը մեր հոգու տեսքով միացնում և ամրացնում է մեզ, այդպես շունչն ու օդը պարուրում են ամբողջ երկիրը»: Անաքսիմենեսի անսահման օդը ընդգրկում է ողջ աշխարհը և բոլոր կենդանի էակների կյանքի և շնչառության ակունքն է: Ավարտելով աշխարհի ամբողջական պատկերումը, անսահման օդի մեջ Անաքսիմենեսը գտնում է թե՛ հոգու, թե՛ մարմնի սկիզբը: Աստվածները ևս առաջանում են օդից, հոգին էլ է օդեղեն, իսկ կյանքը շնչառություն է (տե՛ս *Диоген 1986, кн. 2, տե՛ս նաև՝ Фрагменты 1989, сс. 129 -135*):

(101) *Ἰππαρχος (Ἰππασος) ὁ Μεταποντιῖνος* (Ք. ա. 574-522 թթ.). Պյութագորական Հիպարքոսն ապրել է Ք. ա. 2 դարի վերջին, Ե դարի սկզբին: Նրա կարծիքով գոյություն ունի աշխարհակառույցի փոփոխությունների համար սահմանված ժամանակ, և որ Համայնը մշտաշարժ է ու սահմանափակ: Նրա ոչ մի աշխատություն չի պահպանվել, փիլիսոփայական ուսմունքների մասին տվյալները խիստ աղքատիկ են: Արիստոտելը վկայում է, որ Հիպարքոսը և Հերակլիտոսն ամենայնի սկիզբ էին համարում կրակը (*Arist. De anima 405a*): Անտիկ ավանդույթը հաճախ է միավորում այս երկու փիլիսոփաների ուսմունքները, և դժվար է տարանջատել, թե հատկապես որ մտքերն են պատկանում Հիպարքոսին: Դեմ արտահայտվելով

Պյութագորասին, Զ. դարի վերջին Հիպարքոսը դավաճանի պիտակ ձեռք բերեց և հետագայում մեղադրվեց ուսուցչի հայտնագործություններն իրեն վերագրելու և իռացիոնալության գաղտնիքը հրապարակելու մեջ: Իրականում Հիպարքոսն ինքն էր իռացիոնալության գյուտի հեղինակը, և այն խորը հետք թողեց անտիկ մաթեմատիկայի վրա (Fritz 1945, 46, pp 242 -264): Տարածաչափության մեջ նրան է պատկանում քսանանիստի կառուցումը: Նա մաթեմատիկական բնագիտության նախակարապետներից է: Պյութագորասի հետ միասին համաչափության տեսությունը համապատասխանեցրել է ներդաշնագիտության համակարգին և իրականացրել ձայնային փորձարկումներ: Ըստ երևույթին նա առաջինը տատամումների հաճախությունը կապեց ձայնի բարձրության հետ, նաև հեղինակն էր այն սխալ կարծիքի, իբր ձայնի բարձրությունը կախված է նրա շարժման արագությունից (տե՛ս Жмыдс 2012, сс. 237-246; նաև Фрагменты 1989, сс. 151-155): Այդպես էր կարծում նաև Պլատոնը (տե՛ս Plato Tim. 67b):

Գլուխ 9.

(102) Վենետիկյան հրատարակիչը ծանոթագրում է. «φανταστικόν, որ է տեսողական զօրություն, երևակայություն, զոր և աւանդէ անբանական մասն գոլ հոգևոյ, քանզի առանձինն շնչական կենդանութեան է այս գործ» (Նեմեսիոս, Վ 1889, էջ 69, ծ. 1):

(103) Քրիստիպոսի սահմանմամբ՝ φαντασία τύπωσις ἐν τῇ ψυχῇ «տեսությունը դրոշմ է հոգու մեջ» («Հոգու մասին», գիրք II, տե՛ս Диоген 1986, кн. 7): Ընդհանրապես, այս մոտեցումը հատուկ է ստոիկյաններին: Ըստ նրանց՝ տեսությունը կամ մտապատկերն առաջանում է իրականում գոյություն ունեցող ինչ-որ առարկայից կամ երևույթից, որը տպավորվում, դրոշմվում և կնքվում է հոգում՝ առաջացնելով նրա մեջ որոշակի փոփոխություններ: Այդ մտապատկերները կարող են լինել զգայական, որոնք ընկալվում են մեկ կամ մի քանի զգայարաններով, և ոչ զգայական, որոնք ընկալվում են մտքով, ինչպես օրինակ անմարմին գոյերի և երևույթների մտապատկերները: Սակայն մտապատկերներ կարող են առաջանալ նաև իրականում գոյություն չունեցող ինչ-որ երևույթից՝ լինելով ինքնին անհասկանալի և անհստակ (ինչպես, օրինակ, երազատեսությունն է):

(104) Տեսականն այն է, ինչը ենթակա է պատկերացմանն այնպես, ինչպես զգացողությունը ընկալվողը՝ զգացողությունը: Դա այն է, ինչը ծառայում է իբրև նյութ տեսողականի (φανταστικόν) գործունեության համար. «ամենայն ինչ, որ կար է շարժիլ զանձն»: Վենետիկյան հրատարակիչը ծանոթագրում է «իսկ տեսականն համեմատի ընդ տեսողականի՝ ըստ որում զգալին ընդ զգայութեան» (Նեմեսիոս, Վ 1889, էջ 69, ծ. 1):

(105) Անտեղի, անհիմն «տեսումն»՝ առանց որևէ պատկերացվող իրի առկայության, հավանաբար, զգայախաբուցությունը կամ հալյուցիանացիան է, որ պատահում է «մոլեգնոտացն» (μελαγχολώντων – մելանքոլիկներին, սևամաղձություն ունեցողներին և «ափշեցելոց» (τών μεμηνότων – խելացնորներին, բթամիտներին) (Nem 1987, p. 55. 22):

(106) Տեսողականի գործության օրգաններ է համարում գլխուղեղի առաջային փորոքները (πρόσθιοι τοῦ ἔγκεφάλου κοιλία), նրանցում գտնվող անձնական շունչը (ψυχικὸν πνεῦμα), նրանցից դուրս եկող նյարդերը՝ ներծծված այդ շնչով, և արտաքին զգայարանները: Վենետիկյան հրատարակիչը մեկնաբանում է. «փորոքած խելացն, որ ի ճակատն, և անձնական օդն, այսինքն՝ շնչական կենդանութիւնն, և խոնաւուտ նիարդն, այսինքն՝ խելապատակքն և ջլառու ճանապարհն ի զգայութիւնսն» (Նեմեսիոս, Վ 1889, էջ 70, ծ. 2): Իսկ Նյուսացին ընդհանրապես «ամենայն զգայութեանցն իբրու հիմն եւ արմատ գոյ սսէ զխելապատակն, քանզի այսպէս անուանեն զպարունական խելացն զպարունակ» (Նիւսացի, Կագմ. 2008, էջ 88):

(107) Ի յաւգ բախումն (ἀερος πληγή) ժամանակակից մտածողությունը կարելի է ընկալել իբրև ձայնային ալիքներ: «Ընդհանուր առմամբ, հնչյունը օդի հարվածն է, որն ականջների միջով ուղղվում է ուղեղին ու արյանը և հասնում հոգուն, իսկ դրա շարժումը, որ սկիզբ է առնում գլխից և ավարտվում է լյարդի մոտ, լսողությունն է» (Plato Tim. 67b): «Սահմանք փրիսոփայականք» բնագիրը հայտնում է. «Ձայն է, ըստ Պլատոնի, վիրավորումն օդոյ, անպատկան և անմարմին: Իսկ, ըստ ստոիկեանց՝ օդ վիրավորյալ, լսելեաց զգալի և մարմին: Իսկ, ըստ Արիստոտելի՝ ճայթիւն և շարժութիւնն օդոյ, արգելուլ առ ի փխրիլ: Իսկ ձայն անասնոց է անպատկան՝ ի ձեռն ստուար շնչերակի: Իսկ մարդոյ ձայն է յօգաւոր, որ ի գրոյ յայտնի» (Ритор, Определения 1960, с. 378):

(108) «Ի բնե դյուրաշարժը տպավորվում է անգամ թույլ ներգործության շնորհիվ, քանի որ շրջանաձև տարածվում է՝ որոշ մասերից անցնելով մյուսներին, մինչև որ հասնելով բանական սկզբին՝ չի հաղորդում ներգործող իրի որակի մասին: Իսկ դժվարաշարժն, ընդհակառակը, լինելով հաստատուն, չի տարածվում շրջանաձև, այլ միայն կրում է ներգործութունը և չի շարժում իրեն մոտ գտնվողին: Ուստի, եթե առաջին ներգործութունը որոշ մասերից չի փոխանցվում, այլ մնում է անշարժ, և կենդանի էական ընդհանուր առմամբ մնում է առանց զգայություն... Բնությանը հակառակ և բունի սաստիկ ներգործությունը մեզ համար ցավազին է, իսկ վերադարձը բնական վիճակին՝ շատ հաճելի: Հանդարտ և քիչ-քիչ ներգործողը զգայելի չէ, այլապես՝ հակառակն է: Հեշտորեն կատարվողը շատ զգալի է, սակայն հաղորդակից չէ ոչ ցավին և ոչ հաճույքին» (Plato Tim. 64b-d):

(109) Այսպիսով, անձի (հոգու) զորություններն են.

- * սպասաւորականք – ὑπουργικά (սպասավորներ, ծառայողներ, օգնականներ)
- * ընծայաբերք – δорυφορικά (δорυφόρος – նիզակակիր, թիկնապահ, որ աղավաղված ընթերցում է, որ սկզբնապես եղել է δωροφορικά – ընծայաբեր),
- * պետականք – τὰ ἀρχικα,
- * իշխանականք – ἡγεμονικά (ἡγεμονικόν – ղեկավարող սկզբունք),
- * իմացողական և մակացողական – τὸ διανοητικὸν և τὸ ἐπιστημονικόν,
- * ըստ յարձակման շարժութիւն – καθ' ὁρμὴν κίνησις (շարժում ըստ ներքին մղման),
- * զգայականք – αἰσθητικά,
- * ձայնականք – φωνητικά, այսպես է նաև Matth. բնագրում, իսկ Մորանիի մոտ՝ φανταστικόν, արաբերեն տարբերակի հետ համընկնող ընթերցումն է, սակայն տարբերումներում նշվում է նաև φωνητικὸν տարբերակի առկայությունը հայերեն, Ալֆանուսի լատիներեն և մի քանի այլ բնագրերում (Nem 1987, p. 57):

Գլուխ Է.

(110) «Թարգմանիչն երեսք դնէ ի հայունմս՝ փոխանակ յունական օψις բառի, որ արդարեւ զերկոսին ևս նշանակէ, այսինքն և զաչս, և զգօրութիւն տեսանելոյ. լաւագոյն լինէր ի հայունմս ասել տեսողութիւն, որ հոմանունակի զերկոսին ևս իմաստս բերէ յինքեան, զի երեսք սովորաբար համանիշ դիմաց կամ մակերևութի լսի» (Նեմեսիոս, Վ. 1889, էջ 72, ծ. 1):

(111) Հիպպարքոս Նիկեացի (*Ἰππαρχος*, Ք. ա. 190-120 թթ.) հույն աստղագետ, մեխանիկ, աշխարհագրագետ և մաթեմատիկոս: Համարվում է անտիկ շրջանի մեծագույն աստղագետ: Նրա հիմնական ավանդն այն է, որ նա երկնային շարժվող մարմինների համար հին բաբելոնյան աստղագիտութեան կանխատեսական ճշգրտությունը ներմուծել է հունական տարածաչափական համակարգ, հաշվարկել է Երկրի հեռավորությունը Լուսնից, կազմել աստղային երկնքի առաջին ճշգրիտ քարտեզը, տարբերակել է աստղերն ըստ մեծության՝ հիմնվելով նրանց պայծառության վրա: Այդ համակարգը կիրառվում է նաև մեր օրերում (տե՛ս Бронштэн 1988, շա. 3: “Астрономические исследования Гиппарха”):

(112) Տե՛ս Arist. *De anima*, 419 a:

(113) Տեսողական ճառագայթների հանդիպումը լուսային ճառագայթների հետ (*συναύγεια*) նկարագրում է Պլատոնը. «Գործարաններից նախ ստեղծեցին լուսակիր աչքերը և տեղադրեցին դեմքի վրա. դրա պատճառը հետևյալն է: Նրանք հորինեցին մարմին, որի բերած հուրը չէր այրում, այլ արձակում էր ցերեկայինի նման մեղմ լույս: Չէ՞ որ մեր ներսում ապրում է այդ լույսին եղբայրակից մի հուր, և նրանք այնպես արեցին, որ հենց այդ հուրը հարթ ու խիտ հոսանքով անցնի աչքերի միջով: Ամենից խիտ նրանք ստեղծեցին աչքերի հյուսվածքի կենտրոնը, որպեսզի դրա միջոցով ավելի կոպիտ ոչինչ չանցնի, այլ՝ միայն մաքուր հուրը: Եվ երբ կեսօրվա լույսը պարուրում է տեսողության արձակած հոսանքը, նմանը միտվում է նմանին և միաձուլվում նրա հետ՝ կազմելով մեկ մարմին աչքերի տեսողության ուղղությամբ, այն տեղում, ուր ներսից հորդող հուրը բախվում է դրսից եկողի հետ: Եվ ամբողջապես համասեռ լինելով՝ այդ մարմինն ամեն ինչ կրում է համասեռ կերպով, այնպես որ երբ դիպչում է մի բանի կամ երբ նրան ուրիշ ինչ-որ բան է դիպչում և այդ շարժումները

փոխանցվում են ամբողջ մարմնին, հասնելով հոգուն, գոյանում է զգայություն, որ մենք կոչում ենք տեսողություն: Իսկ երբ արտաքին հուրը թաքնվում է գիշերվա մեջ, ներքին հուրը հատվում է: Հանդիպելով իրեն ոչ նմանին, այն փոխվում և մարում է, երբեք չխառնվելով մոտակա օդին, որը զուրկ է հրից: Տեսողությունն այդ կերպ դադարում է գործել և առաջ է բերում քուն» (Plato Tim. 45b-d):

(114) Համաձայնութեան՝ *τῆς συμφωνίας: Խոսքը, հավանաբար, Գալենոսի De Hippocratis et Platonis decretis (տե՛ս Гален, т. 3, 2016) աշխատության մասին է:*

Գալենոսի տեսողության մասին տեսությունը կառուցված է մաթեմատիկական սկզբունքի վրա: Ակնագունդը շրջանաձև է, տեսանելի առարկան ընկալվում է տեսողական ճառագայթի ուղիղ գծով: Որպիսի առարկան չկրկնապատկվի, տեսողական կոնի առանցքները պետք է լինեն մեկ հարթության մեջ: Գալենոսը կարծում էր, որ տեսողությունն առաջանում է «տեսողական կամ լուսային ոգու (պնեմա)» շնորհիվ, որը գտնվում է ոսպնյակի և ծիածանաթաղանթի արանքում: Այն անդադար հոսում է այնտեղ գլխուղեղից՝ տեսողական նյարդի միջոցով, և ընկալում է լուսային ճառագայթները: Այդ միաձուլումից ձևավորված զգացողությունները անցնում են կենտրոնական տեսողական օրգանին (տեսաթմբերին): «Որպեսզի ստեղծվի զգացողություն, – գրում էր նա, – յուրաքանչյուր զգայություն պետք է ենթարկվի փոփոխության, որը հետո կընկալվի ուղեղի կողմից: Ոչ մի զգայություն չի կարող փոփոխության ենթարկվել լուսի ազդեցությամբ, բացի տեսողությունից, քանզի այն ունի մաքուր և փայլուն զգայական օրգան՝ ոսպնյակային հեղուկ: Բայց փոփոխությունը կմնար անօգուտ, եթե չհասներ ուղղորդող սկզբի գիտակցությանը, այսինքն՝ պատկերացման, հիշողության և բանականության տեղակայման վայրին: Ահա թե ինչու է ուղեղն առաքում դեպի ոսպնյակային հեղուկ ինքն իրենից մի մասնիկ, որպիսի իմանա նրանով ստացված տպավորությունը: Եթե ուղեղը չլիներ մեկնակետ, որտեղից դուրս են գալիս և որին վերադառնում են յուրաքանչյուր զգայարանում կատարված փոփոխությունները, կենդանին կմնար զգացողություններից զուրկ: Աչքերում գունային տպավորությունները արագ հասնում են աչքում ամփոփված ուղեղային հատվածին՝ ցանցաթաղանթին»: Մի կողմ թողնենք այն, որ լուսագ-

գայնության գործառույթը վերագրված է միայն ոսպնյակին, ոչ թե ցանցաթաղանթին. դա տարածված տեսակետ էր հնագույն բժշկագիտության համար: Այլ նկատենք, թե ինչ համոզիչ կերպով է բացահայտվում ուղեղի իրական դերը, որն այլևս հետագայում ոչ ոքի կողմից չվիճարկվեց: Աչքը ուղեղի անբաժանելի մասն է: Բնականանորեն առաջանում է ևս մի հարց՝ ինչպես են փոքրիկ բիբ մտնում պատկերները, որոնք առարկաներից թռչում են դեպի աչքը՝ ըստ որում պահպանելով իրենց բնական չափերը: Պահպանվել է Գալենոսի աչքի աշխատանքը պատկերող պատմության մեջ առաջին գծագիրը, որում տեսողության օրգանը նման է ժամանակակից տեղորոշիչին (լուստոր): Գալենոսը համաձայն էր էմպեդոկլեսի և Պլատոնի հետ՝ աչքերից, իրոք, առաքվում են ճառագայթներ, սակայն նրանք ոչ թե միավորվում են առարկայից թռչող պատկերներին, այլ բարակ, անտեսանելի շյուղերով ասես շոշափում են առարկան: Որքան էլ մեծ լինի այն, փոքրիկ բիբը կարողանում է իր ճառագայթով զգալ և ընկալել նրա ձևը (տե՛ս *Προβιδение Галена 1979, сс. 23-82*):

(115) Վենետիկյան հրատարակիչը ներկայացնում է հունարենից թարգմանության իր տարբերակը. *«Զի որպէս լոյս արեգական թափանցեալ ընդ վերին կողմն օդոյ, ընդ բովանդակ թանձրութիւն օդոյն զզօրութիւն լուսոյն հասուցանէ, այսպէս և լոյսն՝ որ հեղեալ սփռէ ընդ տեսողական երակունս՝ օդային իմն ունի բնութիւն, և ի հանդիպել անդ օդոյ՝ առաջին բախմամբն ընդհարեալ մխի ի նոյն և յեղափոխէ, մինչև հասեալ զկայ առնու առ մարմին ինչ խափանարար ընթացիցն» (Նեմեսիոս, Վ 1889, էջ 73, ծ. 1):

(116) «Լուսերակք՝ երակք լուսարանաց. ջիղք յուղղոյ իջեալք յաչս ի պէտս տեսութեան» (ՆԲԼՀ): Այս երկու եզրերը՝ «երակք տեսողական» (7. [4]) (*τὸ νεῦρον ὀπτικόν*) և «խելացն լուսերակք» (7. [4])՝ *ἐν ἐγκεφάλῳ τὸ νεῦρον* (59. 8), եթե նույնիսկ չեն վերաբերում նույն կազմախոսական տարրին՝ տեսանյարդին (ինչն ավելի հավանական է), ապա գոնե կարող են բնութագրել երկու զուգահեռ ընթացող գոյացություններ՝ տեսանյարդը (*nervus opticus*) և ականային զարկերակը (*arteria ophthalmica*), քանի որ զարկերակները համարվում են պնեման փոխադրող անոթ: «Տեսողական երակներով» բերված «ճաճանչն» ունի «հոգևորական էություն» (*οὐσίαν πνευματικήν*), իսկ «խելացն լուսերակք» նույնպիսի միջնորդ են գլխուղեղի

Համար, ինչպես արևի ճառագայթներով «անձնավորված» օդը՝ աչքի: Երկու դեպքում էլ օգտագործվում է $\nu\epsilon\delta\rho\omicron\nu$ եզրը: Հնարավոր է խոսքը երկու դեպքում էլ տեսանյարդի մասին¹⁷ է: Ի՞նչ է այն իրենից ներկայացնում: Տեսանյարդը գանգուղեղային նյարդերի երկրորդ գույգն է, սակայն իր կառուցվածքով տիպիկ գանգուղեղային նյարդ չէ, այլ ուղեղային սպիրտակ նյութ, որը դուրս է բերված դեպի ծայրամաս և կապված է միջանկյալ ուղեղի կորիզների, և դրանցով էլ՝ ուղեղի կիսագնդերի կեղևի հետ: Ցանցենու հանգուցային բջիջներից մինչև գանգի խոռոչ մտնելը, այն կոչվում է պարզապես տեսողական նյարդ: Արդեն գանգի խոռոչում, ուղեղի հիմքի մոտ տեղի է ունենում տեսանյարդի մասնակի խաչվածք (*chiasma opticum*): Նրա ներսային հատվածները անցնում են հակառակ կողմեր և, միավորվելով այդ կողմերի դրսային հատվածների հետ, նրանց հետ միասին ձևավորում են տեսողական ուղիներ՝ տրակտ (*tractus opticus*), որոնք ավարտվում են ենթակեղևային տեսողական կենտրոններում: Այդտեղից նրանք հովհարաձև բաժանվում են դեպի գանգուղեղի քունքային մասեր, ապա հավաքվում ներքին պատիճի (կապսուլա) մեջ՝ ամբողջացնելով տեսողական ուղին, որն ավարտվում է գանգուղեղի ծոծրակային բլթի կեղևում, տեսողական գոտում (տե՛ս *Хьюбел* 1990, *cc.* 30-36): Իսկ ակնային զարկերակը ներքին քներակի ճյուղն է: Այն քներակից առանձնանում է գանգի խոռոչում և տեսողական անցքով մտնում ակնախոռոչ՝ տեսողական նյարդի հետ միասին՝ հավելվով նրա ներքին մակերևույթին: Ապա շրջանցելով տեսողական նյարդը դրսային կողմից, ակնային զարկերակը ձևավորում է աղեղ, որից դուրս են գալիս նրա ճյուղերը՝ արցունքային զարկերակը, ցանցենու կենտրոնական զարկերակը, մկանային ճյուղեր և այլն: Ցանցենու կենտրոնական զարկերակը՝ առանձնանալով ակնային զարկերակից, ակնագնդից 10-12 մմ հեռավորության վրա բաժանվում է ճյուղերի, որոնք սնում են ցանցենու ուղեղային շերտը: Արյան հետհոսքն ապահովում են երակները, որոնք ուղեկցում են զարկերակներին (նույն տեղում, *cc.* 40-44): Բացի «երակք տեսողական» ու «խելացն լուսերակք» անվանումներից Միսիթար Հերացին տեսանյարդի համար գործածում է նաև «լուսենի» կամ «լուսենիօն» և «փող ջեղ» եզրերը (Աբուսայիդ 1974, էջ 16-24, 45-47, 178-190):

(117) *Տե՛ս Լոսե, m. 7, 1988, cc. 22-31 [Porphyrus, Sent 17, p. 8, 6]:*

(118) Ըստ վենետիկյան հրատարակչի՝ «Յունաբանութեամբ խրթին և անիմանալի մնան միտք բանին: Ըստ բնագրին պարզելի են իմաստքն այսպէս. Պորփիւռ Համարի զի հոգին ի յարաբերութեան անդ իրաց տեսանելեաց՝ ինքն զանձն իւր ցուցանէ ի նոսին, որք և ոչ այլ ինչ են, բայց եթէ նոյն ինքն հոգին, քանզի հոգին զայսոսիկ զամենեսեան յինքեան բովանդակէ, և որ կանս համանգամայն հոգի է՝ յինքեան ունելով զամենայն ազգս մարմնոց. և զի մի միակ կարգէ հոգի (պորփիւռ) ամենայն էիցս, իրաւամբք ուրեմն հաւաստէ հոգւոյ՝ յամենայն տեսանելիս՝ զանձն կամ զինքնութիւն իւր տեսանել» (Նեմեսիոս, Վ. 1889, էջ 74, ծ. 1):

Գլուխ Թ.

(119) Ըստ Պլատոնի՝ «Հյուսիսի ներգործութիւնը լեզվի վրա առաջ է գալիս որոշ կծկումների և ընդարձակումների արդյունքում, մինչդեռ մյուսներն ավելի շատ կախված են անհարթութիւնից և հարթութիւնից: Հոգի մասերը մոտք են գործում երակների մեջ, որոնք ասես լեզվի շոշափուկներն են և ձգվում են մինչև սիրտ, հպվում են խոնավ մարմնին և հեղվում նրա վրա, այնպես, որ երակները սեղմվում և չորանում են: Եթե այդ մասերն անհարթ են, դրանց համը դառն է, իսկ եթե պակաս անհարթ են, տտիպ են: Երակները մաքրող նյութերը, որոնք ողողում են ամբողջ լեզուն, գործելով չափից ավելի ուժգին և վնասելով լեզվի բնութիւնը, օրինակ՝ հիմքերը, կոչվում են դառը: Հիմքերից ավելի թույլ նյութերը, որոնք չափավոր են մաքրում լեզուն, աղի են, զուրկ են դառնութիւն անհարթութիւնից և թվում են ավելի հաճելի: Իսկ բերանի ջերմութիւնը հաղորդակիցները և դրանից ջրիկացածները, որոնք տարածվում են բերանի ողջ հարթութիւնը, բռնկվելով այրում են այն, ինչից ջերմացել են, և իրենց թեթևութիւն շնորհիվ վեր են բարձրանում դեպի գլխի զգայարաններ և կտրում են իրենց հանդիպող ամեն բան: Ահա այս հատկութիւնների պատճառով դրանք կոչվում են կծու: Իսկ երբ նույն այդ նյութերը քայքայվում են փտումից և մոտք են գործում բարակ երակների մեջ, այնտեղ գտնում են հողեղեն և օղեղեն մասերի համաչափութիւն, այնպես, որ շարժման մեջ են դնում դրանք և ստիպում են միախառնվել ու փրփրել, և փրփրելով՝ ներխուժած մասերի շուրջ կազմում են խոռոչներ: Իսկ խոնա-

վուծյունը, որ մերթ հողակերպ է, մերթ մաքուր, ամփոփում է օդը՝ կազմելով ջրային գնդեր, որոնց ներսում օդ է: Սրանց մի մասը, որ կազմված է մաքուր հեղուկից, թափանցիկ է. դրանք կոչվում են պղպղակներ: Մյուս մասը հողակերպ է, ինչի արդյունքում դյուրաշարժ է և բարձրանում է վեր. սա մենք կոչում ենք եռք և մաճառացում, իսկ այդ վիճակների պատճառը թթուն է: Սակայն ներգործությունը, որ հակադիր է նշվածներին, ունի նաև հակադիր ծագում: Երբ մուտք գործող հեղուկի կազմությունը ազդակից է լեզվի բնությունը, այն ծածկում և հարթեցնում է խորդուբորդությունները և հավաքում կամ արձակում է անբնականորեն կուտակվածը՝ հնարավորինս կարգավորելով այն համաձայն իր բնության: Եվ բուն ներգործությունների դեմ գործող այդ հակամիջոցը բոլորին էլ հաճելի և ցանկալի է, ուստի կոչվում է քաղցր» (Plato Tim. 65c-66c): Համի զգացողության կախվածությունը մասնիկների ձևից մանրակրկիտ մշակված է Լուկրեցիուսի «Իրերի բնության մասին» (Лукреций 1983, 3, II, 308-477) պոեմում:

Ըստ Նեմեսիոսի՝ համային որակներն են.

Վ le doux, l acide, l acerbe, l acre, l apre, l amer, le sale, l onctueux

1. քաղցրություն – γλυκύτης,
2. սրություն – όξύτης,
3. կծուություն – δριμύτης,
4. թթուություն – στρυφνότης,
5. խստություն – αὐστηρότης,
6. դառնություն – πικρότης,
7. աղիություն – ἀλμυρότης,
8. գիրություն – λιπαρότης (խոսքը ճարպոտության մասին է):

Գլուխ Ժ.

(120) Չային բնորոշ որակներն են.

1. սրություն – όξύτης (սրություն, երաժշտական բարձրություն),
2. ծանրություն – βαρύτης (ծանրություն, ցածր տեմբր),
3. ողորկություն – λειότης (հարթություն, նրբություն),

4. խոշորութիւնն – *τροχούτης* (անհավասարութիւն, կոշտութիւն, կոպտութիւն),

5. մեծութիւն – *μέγεθος* (հզորութիւն):

Նեմ. էջ 82, ծ. 1, լծ «գստերն [ձայն] որպէս զպլպլի, եւ զծանր՝ որպէս գոմիչի, զողորկութիւնն՝ որպէս ծովու, եւ խոշոր՝ որպէս իշոյ»:

Գլուխ ԺԱ.

(121) Նեմեսիոսը գոլորշի և հոտ հասկացութիւնները նույնացնում է *ἀτμός* (գոլորշի) բառով, քանի որ, ինչպէս բացատրում է Գալենոսը՝ «Հոտի էութիւնը գոլորշին է» (տե՛ս *Γαλεν, τ. 3, 2016*; [*Galenus, De Hippocratis et Platonis decretis, VII, 5, 6*]). *ἀτμός γὰρ ἢ ὀδμών ὄυσία*: Պլատոնի բացատրութիւնն այսպիսին է. «Բոլոր բույրերն իրենց տեսակով կիսատ են, որովհետեւ նրանց հատուկ չէ այնպիսի ձև, որ համաչափորեն կապված լիներ որևէ բույրի հետ: Համապատասխան երակները չափազանց նեղ են հողի և ջրի [մասնիկների] համար, բայց չափազանց լայն են հրի և օդի համար, ահա ինչու ոչ ոք երբևէ չի զգացել դրանցից որևէ մեկի հոտը, այլ՝ միայն դրանց խոնավացման, փոման, հալոցքի կամ գոլորշիացման հոտերը: Սրանք գոյանում են միջանկյալ վիճակներում, երբ ջուրը փոխվում է օդի կամ օդը՝ ջրի: Բոլոր բույրերը կա՛մ գոլորշիներ են կա՛մ էլ մառախուղ, որովհետեւ մառախուղը կեսճանապարհին է օդից դեպի ջուրը, իսկ գոլորշին՝ կեսճանապարհին ջրից դեպի օդը: Ահա ինչու դրանք ավելի նուրբ են ջրից, բայց ավելի կոպիտ են օդից: Դա երևում է, երբ ուժով ներշունչ են կատարում որևէ արգելքի միջով: Այդժամ ոչ մի ուղեկցող բույր չի անցնում ներս, և օդը մուտք է գործում առանց որևէ հոտի: Բույրերի բազմազանութիւնը մնում է անանուն, քանի որ այն պարզ ձևերի մեծ բազմութիւն չէ, այլ միայն երկու տեսակ՝ հաճելի և տհաճ: Վերջինը կոպիտ և բռնի է ներգործում ողջ խոռոչի վրա, որը ծոծրակից ձգվում է մինչև պորտը, իսկ առաջինը (հաճելի հոտը) փափկացնում է խոռոչը և կրկին հաճելիորեն վերադարձնում բնական վիճակին» (*Plato Tim. 66 d-67a*):

Գլուխ ԺԳ.

(122) Այս դեպքում հայերեն բնագիրը համընկնում է Մատթէի տարբերակի հետ, որը մեջբերված խոսքերը վերագրում է Օրիգենեսին: Մորանիի բնագրում այս արտահայտության հեղինակն Արիստոտելն է, ինչը համապատասխանում է իրականությանը: Հղումը կատարված է Արիստոտելի «Հիշողության և վերհիշման մասին» աշխատությունից, որը նրա «Հոգու մասին» երկի տրամաբանական շարունակությունն է: Հիշողությունը պատկանում է հոգու այն մասին, որին պատկանում է նաև պատկերացումը (տեսությունը): Եվ հիշողության առարկա է այն ամենը, ինչը կարելի է պատկերացնել: Իսկ եթե չի կարելի պատկերացնել, ապա կարելի է կապել պատկերացումների հետ (տե՛ս Arist. De mem. 450 a):

(123) Փրկութիւն՝ σωτηρία, բառացի՝ պահպանումը զգացողությունների և մտածողության, այլ կերպ ասած՝ գիտելիքի, որ ստացվել է փորձառությունից արտաքին զգայարանների միջոցով և մտավոր գործունեություն ճանապարհով: «Երբ հոգին ինչ-որ բան է կրում մարմնի հետ համատեղ և այնուհետև առանց մարմնի, ինքնուրույն, լավագույն ձևով վերարտադրում, մենք դա կոչում ենք հիշողություն: Իսկ երբ հոգին զրկվում է զգայության կամ իմացության հիշողությունից, ու այնուհետև դարձյալ այն վերականգնում ինքնուրույն, մենք դա կոչում ենք՝ վերհուշ» (տե՛ս Plato Philebus, 34b, c):

Նեմեսիոսը շարունակում է վերլուծել թեման. «Քանզի անձն՝ զգալեացս ի ձեռն զգայարանացս լինի ընդունակ, եւ հաստատի ինքն, իսկ իմացականացն՝ ի ձեռն մտացն լինի իմացումն» (13. [1]): Այսինքն, հոգին զգայարանների միջոցով է զգալի առարկաներն ընկալում և «հաստատի ինքն» (γίνεταί δόξα), իմա՝ ձևավորում, հաստատում է կարծիք, պատկերացում, թվացյալ գիտելիք: Ըստ Պլատոնի՝ արտաքին աշխարհի առարկաների մասին անիրական գիտելիքն է, որը հիմնված է արտաքին զգացողությունների սուբյեկտիվ և ոչ հավաստի չափանիշների վրա: Νόησις, որն այստեղ ներհակ է δόξα-ին, կարող է նշանակել «իրական գիտելիք, գաղափարների հայեցողություն»: Խոսքի ընթացքի հետ կապված, այն (νόησις) այստեղ կարող է թարգմանվել՝ «մտածողություն»: «Պղատոն բառիւս νόησις ոչ կամի ասել զտիրապէս իմացումնն, այլ զմտածելն (διανόησις)» (Նեմեսիոս,

Վ. 1889, էջ 83, ծ. 5, լծմ): Այս բառն առկա է Մատթէի և Մորանիի տարբեր-
թերցվածներում: Մտածողութեան արգասիքը հասկացողութունն է, իսկ
ըստ Պլատոնի, գաղափարը մաքուր հայեցողութեան արգասիքն է:

(124) «Ի բնաւորական իմացմանէ» (φυσικῆς ἐννοίας) ասելով, կարելի
է հասկանալ «բնութիւնից տրված կամ բնութենական հասկացողութուն-
ներից», ըստ Պլատոնի՝ դրանք գաղափարներ են՝ բոլորի համար ընդհա-
նուր, բոլորին հատուկ, բայց ոչ բնածին: «Գտնել որևէ գիտելիք ինքն իր
մեջ, նշանակում է՝ վերհիշել այն, ինչ արդեն ունեցել է... բայց ոչ այս
կյանքում: Իսկ ե՞րբ. Գուցե այն ժամանակ, երբ նա դեռ մարդ չէր: Իսկ
եթե դեռ մարդ չէր, նրա մեջ պետք է լինեին իրական կարծիքներ, որոնք
կարող են արթնանալ հարցերով և դառնալ գիտելիք, և այդ ընթացքում
այդ (նախնական) գիտելիքի կրողը պետք է լիներ հոգին... Այսպիսով, եթե
ամենայն գոյի մասին ճշմարտութիւնն ապրում է մեր հոգում, իսկ հոգին՝
ինքն անմահ է, ուրեմն, չպե՞տք է արդյոք փնտրենք և վերհիշենք այն,
ինչ հիմա չգիտենք, կամ ավելի շուտ՝ չենք հիշում» (Plato Menon, 85d –
86b): Պլատոնի ուսմունքը գիտելիքի մասին իբրև մտաբերում, հանգամա-
նորեն շարադրված է «Մենոն կամ առաքինութիւնների մասին» (Plato
Menon, 81c-86 c), «Ֆեդոն կամ հոգու մասին» (Plato Phaedon, 72 e-76c)
տրամախոսութիւններում:

(125) Հունարեն բնագրում հավելված արտահայտութիւնը (Nem
1987, p. 69. 19, տե՛ս տողատակում), որ նշանակում է՝ «որը նաև ուղեղիկ
են անվանում», PG 40 (p. 663) լատիներեն տարբերակում (Ant.) թողնված
է առանց թարգմանութեան, սակայն Վլադիմիրսկին նշում է (Hemezui
2011, нр. 518), որ Basileae (1548 թ.) հրատարակութեան մեջ դրված է
occipitium («ծոճրակային») բառը: Ըստ ժամանակակից պատկերացումների՝
հետին ուղեղը կազմվում է երկարավուն ուղեղից և վարոլյան կամրջից,
որի խոշոր ելուստն է համարվում ուղեղիկը: Երկարավուն ուղեղի ստորին
մասը ծոճրակային մեծ անցքն է (գուցե դա է հետին փորոքի տպավորու-
թիւն ստեղծել, ինչպես և Basileae հրատարակութեան մեջ է): Այստեղ են
գտնվում գանգուղեղային ութ գույգ նյարդերի կորիզները, որոնք կարգա-
վորում են լեզվի, ըմպանի, կոկորդի, վահանագեղձի, խոշոր արյունատար
անոթների, ներքին օրգանների գործունեութիւնը: Այստեղ տեղակայված
այլ կորիզներ ապահովում են շնչառական, սիրտանոթային, մարսողական

Համակարգերի գործունեությունը, արգելակում և դրդում մեծ կիսազնդե-
րի կեղևի ու ողնուղեղի գործառույթները: Այստեղ են գտնվում համի, ծա-
մելու, կլլման, ծծելու ռեֆլեքսների կենտրոնները: Իսկ ուղեղիկը կազմված
է բազմաթիվ գալարներ ունեցող երկու կիսազնդերից ու դրանք միացնող
որդից: Ուղեղիկի գորշ ու սպիտակ նյութերը տպավորիչ պատկեր են առա-
ջացնում, որը կոչվում է «կենաց ծառ»: Սակայն ուղեղիկը դասվում է
շարժումները կարգավորող համակարգի մեջ: Այն մեծ դեր ունի կեցվածքի
ու մկանային լարվածության կարգավորման, արագ, նպատակաուղղված
շարժումների կազմակերպման ու ղեկավարման գործում: Ուղեղիկի վնաս-
վածքի դեպքում նկատվում են համաձայնեցված շարժումներ կատարելու
ընդունակության կորուստ, մկանների դող, մկանային կծկումների մեծու-
թյան և կատարվելիք շարժման միջև անհամապատասխանություն: Ինչպես
տեսնում ենք, այս դեպքում, ավելի հավանական է, որ խոսքը ոչ թե ուղե-
ղիկի, այլ երկարավուն ուղեղի մասին է: Գուցե այդ պատճառով էլ հայ
թարգմանիչները բաց են թողել այս հատվածը («որը նաև ուղեղիկ են ան-
վանում»): Կամ գուցե այս հատվածը հետո է ավելացվել:

Գլխուղեղի փորոքների մասին գրեթե նույն ձևով գրում է նաև Հով-
հաննես Երզնկացին. «Եւ է տեղի բանականին ուղեղ գլխոյն, որ յերիս բա-
ժանի փորուածս. առաջին է տեսողականն, որ է զօրութիւն անբանութեան
անձին, ի ձեռն զգայարանացն ի ներգործել առ զգալին և կամ կրել ի
զգալեացն, իսկ միջինն սորա խելապատակ, որ է իմացողականն, որ ընդու-
նելով ի տեսողականէն, դատէ քննութեամբ և հաւանի իրին, և ապա զ'ի
բաց փախչելն կամ ի վերա դիմելն առնէ, իսկ երրորդ՝ սորա յետուստ կու-
սէ յիշողականն: Արդ տեսողականն աւանդէ իմացողականին զտեսեալն,
իսկ իմացողականն, որ է խոհեցողական ասի, յինքն առեալ և դատեալ,
առաքէ առ յիշողականն և է գործարան սորա յետուստ կուսէ փորուած
խելացն: Եւ արդ է տեղի բանականին միջին սորա փորուած» (Սրապյան
1958, էջ 57: Տե՛ս Մոսիկյան, 2018):

(126) Galeni, De locis affectis, cap. II (տե՛ս Псυχуатрия 2011, с. 47):
Ցելսուսը «փռենիտ»-ը բնութագրում է իբրև սուր հիվանդություն, որն
ուղեկցվում է տենդով, հոգեկան գործառույթների խանգարմամբ և
զրսևորվում է տարբեր կլինիկական նշաններով թեթև, զվարթ գրգռվա-
ծությունից՝ մինչև խորը թախիծ և խիստ գրգռվածություն, երբ հարկ է

լինում կապել հիվանդին և պահել մթան մեջ (Καθησυχ 1928, շ. 2, շ. 34): Բառացի փրկող նշանակում է «ստոծանի», որը հույները համարել են հոգու և մտքի նստավայր: Միջնադարում «փռենիտ» ասելով հասկանում էին գիտակցության խանգարում կամ երկարատև հալուցինացիաներով և տենդով ուղեկցվող խելացնորություն: Ավելի ուշ այն ընկալվում էր իբրև գլխուղեղի և նրա թաղանթների բորբոքում: Իսկ այժմ այն փոխարինված է «մենինգիտ» և «էնցեֆալիտ» եզրերով (նույն տեղում, շ. 48):

Գլուխ ԺԴ.

(127) Ընդ կրունկն դարձեալ երակքն (παλινδρομοῦντα νεῦρα՝ παλινδρομία – «հետադարձ շարժում» բառից), լատիներեն թարգմանվում է *nervi recurrentes* (PG 40, p. 667): Ըստ երևույթին խոսքը *nervus laryngeus recurrens* նյարդի մասին է, որ թափառող նյարդի (գանգոլեղային X գույգ) ճյուղն է: Այն ապահովում է կոկորդի շարժումներն ու զգայականութունը, այդ թվում նաև՝ ձայնալարերի: Կոչվում է հետադարձ, քանի որ անջատվելով գանգից դեպի կրծքավանդակ իջնող թափառող նյարդից, աորտայի աղեղի հետ հատման մակարդակի վրա, այն կրկին բարձրանում է դեպի կոկորդ:

(128) Նեմեսիոսը խոսքի գործարաններ է համարում՝

- * բերանը (στόμα)՝ որտեղ ստեղծվում, ձևավորվում և կերպարանք է առնում բառը,
- * լեզուն և որկորը (γλῶσσα, γαργαρέων)՝ նման են կնտնտոցին (πλῆκτρον – նրաժշտական գործիքին հարվածելու փայտիկ, աղեղ),
- * քիմքը, որ թարգմանված է «վերնատուն», նմանեցվում է հնչման ἡχείου (ἡχεῖον – «ծնծղա, դափ»), ոուսերեն թարգմանության մեջ *λυταερωι* – «թմբուկներ, գոսեր» (ἦχώ նշանակում է ձայն, աղմուկ),
- * ատամները (ὀδόντες) և բերանի տարբեր բացվածքները նմանեցնում է քնարի (ἐν λύρα) և լարերի (χορδῶν):

(129) Հունարեն բնագրերում հաջորդող հատվածն առանձնացված է իբրև առանձին գլուխ: Սակայն հայերեն ձեռագրերից ոչ մեկում նման

բաժանում չկա: Առանձնացված գլուխը կոչվում է Έτέρα διαίρεσις τῆς ψυχῆς (Nem 72. 3), իսկ դրեգդենյան մի օրինակում՝ ἄλλως περὶ τῶν μερῶν τῆς ψυχῆς, որի հետևությունը վենետիկյան տպագիր օրինակում «Այլ ազգ տարրորոշումն անձին»: Սակայն կան նաև հունարեն ձեռագրեր, որտեղ, ինչպես հայերենում, այս բաժանումը բացակայում է, տե՛ս Nem 1987, p. 72, տարընթերցումներ:

(130) Մատթէն կարծում է, որ παθητικόν՝ «կրական»-ի փոխարեն ճիշտ կլինի կարգալ αἰσθητικόν («աճական»), ինչպես Արիստոտելի մոտ է (Arist. Ethic Nicomach. I, 7 և 13), որովհետև τὸ φθικόν-ը, որը հատուկ է և՛ կենդանիներին, և՛ բույսերին, չի կարող կոչվել παθητικόν (PG 40, p. 669, n. 15):

(131) Դիոգենես Լաերտիոսը Ջենոնի (Ք. ա. 336-264) անձի ութմասանի կառուցվածքի վերաբերյալ դասակարգումը ձևակերպում է հետևյալ կերպ՝ հինգ զգայարաններով ընկալվող զգայությունները, սերմանող բանականությունը, խոսքային մասը և խելքային մասը (Διογεν 1986, κη. 7):

(132) Պանետիոսը Παναίτιος ὁ φιλόσοφος (Ք. ա. 180-100), մեծ աշխատանք է կատարել Հռոմում ստոիկյան փիլիսոփայության տարածման գործում: Թողել է փիլիսոփայական մեկ աշխատանք՝ «Պարտականության մասին» վերնագրով, որն ամբողջովին չի հասել մեզ: Այն գրված է ստոիկյաններին ոչ հատուկ հոստորական ոճով: Ի տարբերություն Ջենոնի՝ Պանետիոսը գտնում էր, որ մարդկանց պետք է պարտաճանաչություն սովորեցնել: Նա մեղմացրել է ստոիկյան փիլիսոփայության ծայրահեղությունները և փոփոխել այն՝ ներդնելով Արիստոտելի և Պլատոնի ուսմունքների տարրեր (տե՛ս Ποσει, m. 5, 1979, cc. 783-805):

(133) Տե՛ս Arist. De anima, 414b-415a, 432b, Arist. Ethic Nicomach., κη. 1. 7, 13: Պլատոնի մոտ նույնպես տարբեր տեղերում հանդիպում է այս դասակարգումը (օր. տե՛ս Plato Tim., 69d-70 b): Ըստ երևույթին, Նեմեսիոսն Արիստոտելից փոխառել է հատկապես այս վերջին բաժանումը, որովհետև դրան համապատասխան է տանում իր հետագա ուսումնասիրությունը: Բանական հոգու վերաբերյալ (գլ. 5) հիմնական դասակարգումը Նեմեսիոսը կարող էր վերցնել Գալենոսից, որը τὸ ἡγεμονικόν-ը բաժանում էր՝ φανταστικόν, διανοητικόν և μνημονευτικόν (Hemezui 2011, ηριμ. 548): Ջենոնի և ստոիկյանների դասակարգման մասին տե՛ս Plutarchus De placit. philosoph. IV, 4 և PG 40, p. 669:

Այս գլխի (գլ. 14) բոլոր դասակարգումները հոգու ունակությունների և գորությունների վերաբերյալ, որոնք մեծ մասամբ պատկանում են Արիստոտելին, բերում է նաև Գրիգոր Նյուսացին (տե՛ս Նիւսացի, Կազմ. 2008, գլ. 8):

Գլուխ ԺԵ.

(134) Կրքի վերը նշված բնորոշումն իբրև շարժում, որ կատարվում է *ἐν ἑτέρῳ ἐξ ἑτέρου*, ինչպես նաև ներգործության կամ գործունեության բնութագրումն ու բնութենական գործառույթների և կրքերի տարբերությանը վերաբերող բոլոր քննարկումները Նեմեսիոսը քաղել է Գալենոսից (Գալեն, m. 3, 2016 [de Hip. et Plat. Decr.], կն. 4. 1):

(135) Նյուսացին նույնպես գտնում է, որ բնական, բնութենական գործառույթները տարբերվում են կրքերից: Նա կիրք (*πάθος*) է անվանում միայն այն, ինչը շեղվում է բնականոնից, կատարվում է հակառակ բնության: Իր «Հակառակ եփնոմիոսին» աշխատությունում նա գրում է. «Ոչ չինչ իրականում կիրք չէ, եթե չի տանում դեպի մեղք: Ոչ ոք իրապես կիրք չի համարի բնության անհարաժեշտ երևույթները: Իրական կիրք մենք համարում ենք միայն այն, որը հասկացվում է առաքինությանը բնորոշ անխռովությանն ու անվրդովությանը հակառակ» (տե՛ս *Αἰτιολογία* 2009, c. 970, [Contra Eunom., lib. V]): Այս կարծիքների հիմքում ընկած է ստորիականների՝ բնությանը համաձայն ապրելու, այսպես կոչված՝ ապատիայի ուսմունքը:

(136) Ըստ շնչերակացն շարժությունը *κατὰ τοὺς σφύγμοὺς κίνησις*, նշանակում է «անոթազարկ կամ արյան պուլսացիա»:

Վաղից՝ *κατὰ τοὺς παλμοὺς*, արտահայտությունը Վլադիմիրսկին թարգմանում է՝ «ըստ հաճախացած զարկերի» (Hemezui 2011, nр. 570), սակայն *παλμός* նշանակում է «դող, տատանում, ցնցում, դողէրոցք, արագող շարժում, առկայծում, թարթում», և հավանաբար խոսքը ոչ թե՛ «հաճախակի», այլ «անհավասար» զարկերի՝ առիթմիայի, ստենոկարդիայի կամ շողացման մասին է:

Գլուխ ԺԷ.

(137) Տեսութիւն՝ θεωρία (cognitio rerum) բառն օգտագործվում է «երևույթների խորիմացութիւն», «հայեցողութեան կարողութիւն» իմաստով:

(138) Հունարեն μετιτέον («հետեւի է») (Nem 77. 6) բառը թարգմանիչը հավանաբար կարդացել է μετατιθέον:

(139) Տե՛ս Plato Philebus, 42a-42c, 51a-52d:

(140) Տե՛ս Arist. Eth. Nic. 1153a:

Գլուխ ԺԸ.

(141) Նեմեսիոսը տարբերակում է տրամութեան չորս տեսակ.

«խաշիւն» – ἄχος («ցավ, վիշտ, տխրութիւն, տաղտուկ»),

«տագնապ» – ἄχθος («ծանրութեան զգացում, հոգս, վիշտ, թախիծ»),

«նախանձ» – φόβος («նախանձ, անբարյացկամութիւն»),

«ողորմ» – ἔλεος («կարեկցանք, խղճահարութիւն»):

Գլուխ ԺԹ.

(142) Հայերեն ձեռագրերի մեծ մասում «առ իմանալոյն» (19. [1]) տարբերակն է, սակայն հունարեն παρὰ τὸ μένειν (Nem 81. 8) նշանակում է «մնալուց»: Իսկ ամբողջ արտահայտութիւնը կլինի՝ «հնուց մնացած»: Վլադիմիրսկին այն որակում է՝ «խրոնիկ», միաժամանակ հիշատակելով Հովհան Դամասկացու «հիշաչարութիւն» բնորոշումը (Hemezian 2011, որսմ. 645): Վենետիկյան տպագիր օրինակում «առ իմանալոյն» ուղղված է ըստ հունարեն բնագրի և ծանոթագրված (Նեմեսիոս, Վ 1889, էջ 99, ծ. 2). «զի μένειν «մնալ, տոկալ» ըսի: Եվ է ողջ իմաստ բանին: Իսկ քէնք ասի բարկութիւնն, որ յերկարեալ ձգի (ἀγομένη) ժամանակս ինչ, և առնու զկոչումնն ի մնալոյն (παρὰ τὸ μένειν) և յաւանդելոյն առ յիշողութիւնն (τῆ μνήμη παραδεδοσθαι)»:

Գլուխ Ի.

(143) Նեմեսիոսը տարբերակում է երկյուղի 6 տեսակ.

«պակումն» – ὄκνος («անվճռականութիւն, վախվորածութիւն»),

«խորշումն» – αἰδώς («ամոթի զգացում, պատվախնդրություն, եկ-
յուղածություն»),

«ամալթ» – αἰσχύνη («ամոթ, խայտառակություն, անփառունակու-
թյուն»),

«հիացումն» – καταπλήξις («շփոթմունք, հիացում»),

«զարհուրումն» – ἔκπληξις («հոգեկան ցնցում, ապշություն»),

«տափնապ» – ἄγωνία («հոգեկան պայքար, անհանգստություն, թա-
խիծ»):

(144) Մածումն արեան, եւ ընդարմացումն ոգւոյ արտահայտու-
թյունն առկա է միայն հայերեն բնագրում: Մորանին իր բնագրի տարըն-
թացվածներում այն թարգմանում է լատիներեն՝ *coagulatio sanguinis et languor spiritus* (Nem 1987, p. 81):

(145) Վախի նման բնախոսական բացատրությունն իբրև հոգեվի-
ճակ, որ առաջանում է մարմնի մակերևույթի ջերմության իջեցմամբ, նրա
սառեցմամբ (κατὰ περίψυξιν τοῦ θερμοῦ) և սրտում պնեմայի ու արյան
կենտրոնացմամբ, գտնում ենք նաև Գալենոսի մոտ (տե՛ս Гален, т. 3, 2016
[Gal. De Hipp. et Plat.], кн. 2. 7):

(146) Տե՛ս Гален, т. 3, 2016, кн. 2. 8, *De simptom. causis* 2. 5: Խոսքը
դարձյալ Գալենոսի համապատասխան՝ ապացույցներին (ἀποδεικτική) նվիրված
երկի մասին է:

(147) Միայն հայերեն բնագրում բացակայող այս հատվածը Մորա-
նին կասկածելի է համարում (Nem 1987, p. 82. 14 -19) + [ὡς Ἰπποκράτης,
καὶ Θουκυδίδης ἐν τῷ λοιμῶν λέγων οὕτως. ἦν ποτε εἰς τὴν καρδίαν στηρίζαι,
ἀνέστρεφέ τε αὐτὴν καὶ ἀποκαθάρσεις χολῆς πᾶσαι, ὁπόσαι ἀπὸ ἰατρῶν
ὠνομασμέναι εἰσὶν, ἐπήεσαν. τὸ γὰρ ἀναστρεφόμενον τὸ στόμα τῆς γαστροῦ
ἐστίν, ἀνακαζόμενον ἐμεῖν, οὐ τὸ σπλάγχνον ἢ καρδία] – «Հիպոկրատեսեսի
նման նաև Թուկիդիդեսը ևս [իր պատմության] ժանտախտի մասին հատ-
վածում այսպես է ասում. «և երբ [հիվանդությունը] հասնավ սրտին,
չրջեց այն և արտագատվեցին բոլոր լեղիները, որոնք անվանված են
բժիշկների կողմից»: Քանզի չըջվողը ստամոքսամուտքն է, երբ ստիպված
է փսխել, և ներքին մասը՝ սիրտը»:

Թուկիդիդեսը (Ք. ա. ≈ 460-385թթ) հույն խոշորագույն պատմիչ է:
Նրա երկը կոչվում է «Պելոպոնեսյան պատերազմի պատմություն», որտեղ

նա որպես ականատես նկարագրել է 22 տարվա իրադարձություններ: Թուրքիզիզեսը Աթենքում է եղել այնտեղ մոլեզնող ժանտախտի ժամանակ, հիվանդացել ու հրաշքով բուժվել է և հետո նկարագրել է ահավոր համաճարակը: Նա հանգամանորեն ցույց է տվել նաև հիվանդությունն նշանները, նկատելով, որ կրկնվելու դեպքում այն այլևս մահացու չի լինում (Φυ-
κιδουδ 1887, cc. 215-221):

Գլուխ ԻԲ.

(148) «Լորձնատեսակությունն ջերմութեան սրտին» այսինքն, սրտի ջերմության այն արգասիքը, որն ունի ծխի տեսք կամ բնույթ (τὸ λιγνυῶδες ἰλιγνός «ծուխ, մուր» բառից, հմմտ. լատ. uliginosus՝ «մրանման, ծխակերպ»): Ըստ երևույթին խոսքն այստեղ արտաշնչված և ջրային գոլորշիների մեջ լուծված ածխածին գազի մասին է:

(149) «Խորություն և ամփոփումն զկերակուրն ասէ, թէ ի նորա խորանալոյն և յամփոփելոյն յորովայնն, և ի խլրտմանէ նորա գնացից ընդ երակ արեանն՝ յամէն մարմինն աւելորդքն արտաքս ծխին ընդ կակղագոյն մորթան: Կամ խորություն ասէ զթանճրություն մարմնոյն, և ամփոփումն խլրտական զխոնաւություն գիջութեանն՝ որ յինքն ամփոփեալ է. ասէ՛ թէ զաւելորդս արտաքս հանէ ընդ մորթն: Եւ կամ խորություն ասէ զարձականալ մարմնոյն և ժողովել զխոնաւ գիջութեան ի կերակրոյն՝ նման սպընգի. իսկ ի խլրտմանէ՛ այսինքն ի փոքր կամ մեծ շարժմանէ և կամ յաշխատութեանէ՛ յիրար ժողովի և ամփոփի ի մարմինն, և գունեալն (իմա՛ զընկալեալն) գիջութիւն արտաքս մղէ ընդ անգայտն մորթ» (Նեմեսիոս, Վ 1889, էջ 101, ծ. 3 լծ):

(150) Նեմեսիոսի τῆς κοίλης φλεβός արտահայտությունը, որ թարգմանված է «ի փորոյն երակէն», լատիներեն տարբերակում (PG 40, p. 695) vena cava է: Տպավորություն է ստեղծվում, որ խոսքը ստորին սիներակի մասին է: Սակայն վիճելի է՝ այս դեպքում «սիներակն» է ավելի ճիշտ, թե հայ թարգմանիչների առաջարկած «փորի նրակը»: Շփոթմունքը կարող էր առաջանալ κοίλια բառից, որ նշանակում է «որովայնի խոռոչ, փոր, ստամոքս, ընդերք, արգանդ, խորություն», սակայն այստեղ κοίλος ածականն է՝ «դատարկ, սին, դատարկամարմին», բայց նշանակում է նաև՝ «խոռոչում, խորքում գտնվող, պաշտպանված»:

Հասկանալու համար դիտարկենք լյարդի արյունամատակարարման մասին ժամանակակից պատկերացումները: Լյարդի արյունատար համակարգը կարելի է պայմանականորեն բաժանել երեք մասի՝ դեպի բլթակները հոսող արյուն, բլթակներում շրջանառող և բլթակներից արտահոսող: Առհոսող համակարգը կազմված է դռներակից (*vena portae*) և լյարդային զարկերակից (*arteria hepatica propria*): Դռներակը, որովայնի խոռոչի կենտ օրգաններից հավաքելով աղիներից ներծծված սննդանյութերով, նաև տոքսիկներով հարուստ արյունը, այն հասցնում է լյարդին: Լյարդային զարկերակը թթվածնով հարուստ արյունը բերում է աորտայից: Լյարդի դռներակն ու լյարդային զարկերակը լյարդում բազմաթիվ անգամ բաժանվում են ավելի փոքր՝ միջբլթային և շուրջբլթային երակների և զարկերակների (*vv. և aa. Interlobulares, vv. և aa. perilobulares*), որոնք մշտապես ուղեկցվում են լեղածորաններով կազմելով տրիադաներ, նրանց կողքին են գտնվում նաև ավշային անոթները: Շուրջբլթային այս անոթներից սկսվում են արյունատար մազանոթներ, որոնք բլթակների ներսում միաձուլվելով առաջացնում են միջբլթակային սինուստիդ անոթներ: Դրանցով հոսող խառը արյունը բլթակի ծայրամասից հոսում է դեպի կենտրոն, որտեղ այդ անոթները ճառագայթակերպ մոտենում են կենտրոնական երակներին (*vena centrales*), և սկսում է ձևավորվել արյան արտահոսքի համակարգը: Կենտրոնական երակները լցվում են հավաքող կամ ենթաբլթակային երակների մեջ (*vena sublobulares*), որոնք առանձին են և տրիադաներ չեն կազմում զարկերակների և լեղածորանների հետ: Դրանք հավաքվելով առաջացնում են 3-4 երակային ճյուղեր, որոնք լյարդից դուրս գալով, բացվում են ստորին սիներակի մեջ:

Ըստ որում, Նեմեսիոսի *ή κοίλη φλέψ* կոչվող երակը դուրս է գալիս լյարդի «փորոլածոցն» (*κυρτών* «արտափքում, ծռոթյուն, սապատ»): Խոսքն, ըստ երևույթին, լյարդի դրոնքի մասին է, որտեղից էլ մտնում է դռներակը, որը հայ թարգմանիչներն անվանում են «փորի երակ», քանի որ այն դեպի լյարդ է բերում աղիներից ստացածը:

(151) Արյունը մաքրվում է փայծաղի (*σπλήν*), մաղձընկալ ամանի (*χοληδόχος κύστις*) և երիկամների (*νεφροί*) միջոցով: *κύστις* նշանակում է պարզապես «պարկ», ունի նաև «միզապարկ» իմաստը, իսկ *χοληδόχος*-ի հետ միասին կարելի է հասկանալ իբրև «լեղապարկ»: Փայծաղն իր մեջ է

Հավաքում «գմրուրն» (տὸ τρυγῶδες «նստվածքը»), որն օգտագործում է իր համար որպես սնունդ: Լեղապարկն իր մեջ է հավաքում կերակրից մնացած «դաժանը» (τὸ δριμύ «սուր, կծու, գրգռիչ»), իսկ երիկամները՝ «ջրագոյն արիւնն» (տե՛ս հաջորդիվ):

(152) «Երիկամացն ջրագոյն արիւնն» (Nem 84. 14 τὸ ὀρῶδες || PG 40, p. 696 ὀρῶδες | n. 30. οὐρῶδες = urinale): Տարընթերցվածներում (Nem 84) նույնպես նշվում է οὐρῶδες (= urinale «միզային, միզանման», οὐρον «մեզ» բառից) բառաձևը: Ռուսերենի թարգմանիչը ծանոթագրում է *humorem serosum* (շճային հեղուկ) (Hemezui 2011, нр.м. 662):

Գլուխ ԻԳ.

(153) «Ծննդական»՝ τὸ γεννητικόν, այսինքն՝ ծնելու ունակութուն:

(154) *θορῶδες ὑγρόν* արտահայտության դիմաց, որը նշանակում է «սերմնահեղուկ», կարգում ենք «սպիտակաթույրն թանձրատեսակն խոնաւուտ» նկարագրական թարգմանությունը: *θορῶδες*-ը ածական է *θορός* = *semen genitale* բառից: Հավանաբար, թարգմանիչները պարզապես չեն շտապել այն անվանել սերմնահեղուկ, քանի որ սերմը որպես այդպիսին ավելի ուշ է ձևավորվում, իսկ «սպիտակաթույր, թանձրատեսակն խոնաւուտն» միայն չհասունացած հումք է սերմի համար: Իսկ եթե ի նկատի ունենանք, որ «նախ» (*πρῶτον*) բառը կարելի է հասկանալ նաև «առաջին» իմաստով, ապա «նախ ծնանի սպիտակաթույրն խոնաւուտ» արտահայտությունը կարելի է հասկանալ որպես՝ «ծնվում է առաջին սերմնահեղուկը»:

(155) Ըստ Մատթէի՝ «աման» (*ἀγγεῖον*) ասելով, պետք է հասկանալ արյունատար անոթները՝ երակներն ու զարկերակները, իսկ «հյուս» (*χυμός*)՝ արյունը: Այդ պատճառով էլ «սերմ» բառի փոխարեն նա կարգում է «արյուն» (PG 40, p. 700, n. 66):

(156) *διὰ περιόδου πολλῆς* («ի ձեռն բազում շրջագայութեան»)۔ *πολύς* ածականը նշանակում է ոչ միայն «բազում, հաճախակի», այլև «ընդարձակ, երկար, հզոր», ուստի Վլադիմիրսկին այն թարգմանել է «մեծ»: *περίοδος* նշանակում է. «շրջանաձև շարժում, շրջապտույտ, պարբերական շարժում»: Թարգմանելով *большой окръжностью*, Վլադիմիրսկին հավանաբար ենթադրել է, որը խոսքը արյան մեծ շրջանառության մասին է: Հնարավոր է

նաև, որ Նեմեսիոսը պարզապես փորձել է նկարագրել արյան հետ միասին սերմնահեղուկի կրկնվող պտույտն օրգանիզմում: Համենայն դեպս, արյան մեծ շրջանառություն մասին այլ այսպիսի ակնարկ երկում չկա:

(157) Մերձ առ ականջսն եւ մերձ առ քներակն՝ τὰς φλέβας τὰς παρὰ τὰ ὦτα καὶ τὰς παρὰ τὰς καρωτίδας, իսկ ըստ մեկ այլ ընթերցման՝ καρωτίδας-ի փոխարեն՝ παρωτίδας (parotides հարականջային թքագեղձն է): Կան նաև καρωτίδας, περικαρωτίδας (Nem 1987, p. 86, տարրնթ.) տարբերակները: Պարզ չէ, թե խոսքն ինչի մասին է: Հատկապես, ո՞ր կազմախոսական տարրի հատումը հարականջային շրջանում քներակին մոտ, կարող է բերել կենդանու անպտղություն: Եթե փորձենք վերլուծել ժամանակակից պատկերացումները սեռական օրգանների և գլխուղեղի կապի մասին, անպայման պետք է անդրադառնանք ներզատիչ համակարգին, որի մեջ տարբերակում են երկու տեսակի գեղձեր՝ կենտրոնական (հիպոթալամոս, հիպոֆիզ, էպիֆիզ) և ծայրամասային (վահանագեղձ, ենթաստամոքսային գեղձ, սեռական գեղձեր): Կենտրոնականները տեղակայված են ուղեղի հիմային մասում և ուղղակիորեն կապված են կենտրոնական նյարդային համակարգի գործունեություն հետ: Նրանք արտադրում են նեյրոհորմոններ, ինչպես նաև ծայրամասային ներզատիչ գեղձերի գործառույթները կարգավորող հորմոններ: Կենտրոնական բոլոր երեք գեղձերը մասնակցում են սեռական գեղձերի աշխատանքի կարգավորմանը: Մասնավորապես հիպոֆիզը և էպիֆիզը (կոնաձև գեղձը) վերահսկում են սեռական հասունացումն ու երկրորդային սեռական նշանների առաջացումը: Էպիֆիզը, արգելակելով հիպոֆիզի գոնադոտրոպ հորմոնի վաղաժամ արտադրումը, թույլ չի տալիս նաև վաղաժամ սեռական հասունացում: Այս երկու գեղձերը գտնվում են հիպոթալամոսի վերահսկողության տակ: Գործնականում ամբողջ գլխուղեղն է մասնակցում վերարտադրողական համակարգի գործառույթների կարգավորմանը: Դա հաստատվում է նաև ընդարձակ կազմախոսական և գործառույթային կապերով, որ կան հիպոթալամոսի և կենտրոնական նյարդային համակարգի մյուս մասերի միջև: Այս գեղձերից ամենաքիչ ուսումնասիրվածը էպիֆիզն է (կոնաձև գեղձ, corpus pineale, epiphysis cerebri): Այն արտադրում է սերոտոնին և մելատոնին, ինչպես նաև՝ նորադրենալին և հիստամին: Մելատոնինը որոշում է գոնադոտրոպ երևույթների պարբերականությունը, այդ թվում՝ կանանց

մոտ ամսական ցիկլի տևողությունը: Լույսի ավելցուկն արգելակում է սերոտոնինի փոխարկումը մելատոնինի: Իսկ մթան մեջ, ընդհակառակը, մելատոնինի սինթեզն ակտիվանում է: Այդ պատճառով, գարնանը և ամռանը, երբ օրը երկար է, էպիֆիզի գործունեությունն ընկճվում է, իսկ կենդանիների սեռական ակտիվությունն՝ ավելանում: Երկար ժամանակ անհասկանալի էր, թե ինչ գործառույթներ ունի այս գեղձը: Այն համարում էին ուղեղի մեծ կեղևի մասնիկ: Խորհրդապաշտական գրականության մեջ հաճախ խոսվում էր նրա կապի մասին խորհրդավոր, աննյութական թելի հետ, որը գլխուղեղը կապում էր մարդու եթերային մարմին (աուրային): Ենթադրվում էր նաև, որ այդ օրգանը կարող է վերականգնել նախորդ կյանքի փորձն ու պատկերները, իրականացնել հեռագրացություն: Ֆրանսիացի փիլիսոփա Ռ. Դեկարտը (ԺԷ. դար) կարծում էր, որ կոնաձև գեղձը բանական հոգու նստավայրն է և, որ այն միջնորդող դեր է կատարում գույգ օրգաններից եկող պատկերացումների ընկալման համար՝ օրինակ, ձեռքերից, աչքերից, ականջներից (գուցե նաև ամորձիներից և ձվարաններից?): Նա կարծում էր, որ էպիֆիզում «արյան գոլորշիների» ազդեցության տակ ձևավորվում են գայրույթը, ուրախությունը, վախը, տխրությունը (տե՛ս Декарт 1989, сс. 481-573):

(158) Հավանաբար՝ *plexus venosus pampiniformis*:

(159) Մինն շնչերակ եւ մինն երակ՝ լի սերմամբ արտահայտությունը վերականգնել է Մատթէն իմաստից ելնելով (PG 40, p. 701, n. 75). «յուրաքանչյուր երակ լի է արյամբ, իսկ յուրաքանչյուր շնչերակ՝ պնևմայով»: Տեքստում «արյան» և «պնևմայի» փոխարեն կարողում ենք «սերմն», ինչը չի համապատասխանում Նեմեսիոսի հայեցակարգին, ըստ որի սերմառաջացումն իրականացվում է ոչ թե երակներում և զարկերակներում, այլ սերմնարաններում (և ձվարաններում) (տե՛ս ծնթ. 157): Մատթէի կարծիքով՝ խնդրո առարկա արտահայտությունը բացատրական ընդմիջարկություն է (սակայն նրա համարժեքի առկայությունը հայերեն բնագրում խոսում է նրա վաղեմության մասին), և վերաբերում է սերմարտադրման մեջ արյունատար անոթների մասնակցությանը: Իրականում սերմը պարզապես կատարելագործվում է անոթներում, ինչպես բացատրվում է անմիջապես դրանից հետո՝ «եւ ի սոսա բոլորովմբք սերմնանայ...»:

(160) Տողատակում նշված տարբերվող այս հատվածը սերմից արգանդի եղջյուրի մեջ խորեոնի (*χορίον*), ինչպես նաև՝ ալլանտոիսի

(*ἀλλαντοειδής*) ձևավորման մասին է, որը ծառայում է իբրև սաղմի արտաթորանքների տեղակայման վայր: Ե՛վ խորեոնը, և՛ ալլանտոիսը՝ դեղնուցապարկի, ամնիոնի և ընկերքի հետ միասին, համարվում են սաղմնային թաղանթներ կամ արտասաղմնային օրգաններ, որոնք ապահովում են սաղմի զարգացումը մինչև ծնունդ: Խորիոնը ձևավորվում է 7-8-րդ օրը՝ արտասաղմնային մեզոդերմալ բջիջներով տրոֆոբլաստի ներքին մակերևույթի պատման շնորհիվ: Խորիոնն ապահովում է սաղմի պատվաստումը կամ փոխտնկումը (իմպլանտացիան) և ձևավորում է ընկերքը՝ դառնալով վերջինիս պտղային մասը: Իսկ ալլանտոիսը (*allantoeides* – բառացի՝ «երչիկանման») բարձրագույն ողնաշարավոր կենդանիների մոտ սաղմնային շնչառական օրգան է, ձևավորվում է 16-րդ օրը սաղմի առաջնային հետնաղու արտափքմամբ՝ ամնիոնի և դեղնուցապարկի արանքում: Այն մասնակցում է գազափոխանակությանը սաղմի և շրջակա միջավայրի միջև: Այնտեղ կուտակվում են նյութափոխանակության ազոտական արգասիքները: Այն ծածկված է անցումային էպիթելով (ուերոէպիթել): Մարդու և կաթնասուն կենդանիների մոտ ալլանտոիսի մնացորդները գտնվում են պորտալարի հաստութային մեջ: Նրա անոթները դառնում են պորտալարի անոթները (տե՛ս *Афанасьев, Юрина 2012, շա. 21*):

Գլուխ ԻԶ.

(161) Տողատակում բերված հատվածը (*Nem 1987, p. 88. 8-13*) բացակայում է միայն հայերեն տարբերակում. «Այսպես, ջիլը կազմված է կապաններից և նուրբ ջղերից (կամ նյարդերից). ջիլը նյարդից տարբերվում է նրանով, որ ամեն նյարդ զգայական է և կլոր և ավելի նուրբ (կամ փափուկ) և սկիզբ ունի գլխուղեղից, իսկ ջիլը և՛ չոր է, և՛ ոսկրից է (սկիզբ առնում), և՛ անզգա է ըստ ինքեան, և՛ երբեմն՝ լայն (կամ հարթ)»:

(162) Տողատակում բերված՝ միայն հայերենում բացակայող հատվածի (*Nem 1987, p. 88. 18-20*) իմաստն է՝ միայն մարդը կարող է նստել՝ կարիք չունենալով հենարանի, քանզի միայն նա է երկու ուղիղ անկյունների տակ ծալում ոտքը՝ աճուկում և ծնկան հոդում, մեկը՝ դեպի ներս, մյուսը՝ դեպի դուրս:

Գլուխ ԻԷ.

(163) Ըստ Նեմեսիոսի՝ շնչառական օրգաններ են.

1. մկանները, որոնք լայնացնում են կրծքավանդակը (ախոնդանք)՝ շնչառության գլխավոր օրգանը (մկաններն իրենք չարժվում են «անձնական զօրութեամբ»),

2. թոքերը, որոնք ցանցանման օրգաններ են՝ կազմված չորս բաղադրատարրերից՝ խոշոր շնչերակից, ողորկ շնչերակից, երակից (φλέψ) և թոքի «փրփրատեսակ մարմնից» (ἀφρώδης σάρξ): Վերջինս, ըստ երևույթին, թոքի հյուսվածքն է, որում բաշխված է թոքի մազանոթային ցանցը՝ կազմված բրոնխոլներից, զարկերակային և երակային մազանոթներից. ἦτις σάρξ ἀναπληροῖ, δίκην στοιβῆς τὰς μεταξὺ χώρας τοῦ πλέγματος, τῶν τε δύο ἀτηριῶν καὶ τῆς φλεβός – «այդ մարմինը լցոնանյութի նման լցված է ցանցի, երկու շնչերակների և երակների միջև...»,

3. «խոշորագույնք շնչերակք» (αἱ τραχεῖαι ἀρτηρίαι). հնարավոր է խոսքը շնչափողի, գլխավոր բրոնխի և նրա ճյուղավորումների մասին է, որոնք վերևում հարում են երեք մեծ աճառներից կազմված «քիմք»-ին (βρόγχος՝ ըստ երևույթին ի նկատի ունի կոկորդը), որը միանում է խոչափողին (φάρυγξ՝ ըմպան): Բերանի և ուռնգերի շնորհիվ արտաքին օդը մտնում է օրգանիզմ՝ նախապես անցնելով մաղանման կամ սպունգանման ոսկրի (ἡθμοειδοῦς ἢ σπογγοειδοῦς ὄστον) միջով: Այդ ոսկրը միջնորդավորող և չափավորող դեր է կատարում, որպեսզի արտաքին օդի որակական ավելցուկները չվնասեն ուղեղը: ՆԲՀԼ-ում (և մյուս բառարաններում նույնպես) «խոչափող»-ը թարգմանվում է «կոկորդ, խոչակ»: Սակայն այստեղ խոսքն, ավելի շուտ, ըմպանի մասին է: Գուցե նախկինում պարզապես հստակ չեն տարանջատվել կոկորդն ու ըմպանը: Նյուսացին գրում է. «Եւ այտք, եւ լեզու, որ գկոկորդիւն է կազմած, ըստ որում սոսորդն (քիմք) եւ ի վայր կոյս թուլանայ հովտաբար, եւ շեշտ ոլորելով ձգտի» (Նիւս. Կազմ. էջ 78), մեկ այլ տեղում նա խոչափողը նկարագրում է իբրև կոկորդի մաս. «Եւ վասն զի բոլորակագոյնք են գկոկորդիւս մասունքն, եւ յոլով է ի սոսա ջղուտն, յորժամ եւ յայսմանէ ի բաց կորգել պէտք իցեն գոլորչոյն գլթանձրամասնութիւն, վասն զի անհնար է հանդէպ ուղիղ ի բաց գատուցանել զբոլորակաձեւ մասնն, եթէ ոչ ըստ բոլորակաձեւոյն եղեալ լիցի:

Վասն այսորիկ յաւրանչման շնչոյն, յորժամ կողկողիթն (*uvula*, քիմքի լեզվակ) ի ստորագոյն կողմն խոչափողիւքն գոգանայ, եւ ի ներքս ամենեցուն ի բոլորակի ձեւ եղելոց, լորձնին այս թանճրութիւնն ըմբռնեցեալն ի մասունսն, ի դուրս ելանէ ի ձեռն ելից շնչոյն» (Նիւս. Կազմ. էջ 101-102): Այս դեպքում ևս, ըստ տեղագրութեան, խոչափողին հատկացվում է կողկողի սկզբնական հատվածի, այսինքն՝ ըմպանի, կարգավիճակ: Ի դեպ, ինչպես հասկանալի է դառնում էջ 78-ի մեջբերումից, այստեղ Սյունեցին «քիմք»-ի փոխարեն գործածել է «սոսորդ» բառը, չնայած այլ տեղերում նույն «վերնայարկն» է: Ավելի ուշ Աբուսայիզը բերում է «առաստաղ բերնին» եզրը (տե՛ս Աբուսայիզ 1974, էջ 131, 159, 194), իսկ միջնադարյան հայկական բժշկարաններում «քիմք»-ը երբեմն փոխարինվում է «խոչակ» և «խոչափող» հոմանիշներով (տե՛ս Գրիգորիս 1962, էջ 104, 107, 112, Իշոխ 1979, էջ 97):

(164) Տե՛ս Plato Tim. 70 c, d:

(165) Հայերենում բացակայող հատվածը (*Nem 92. 25- 93. 2*) թարգմանվում է հետևյալ կերպ. «և՛ նուրբ մարմինն, և՛ մնացած ամբողջ ընդերքին. իսկ բնությամբ մարմինը (σάρξ)՝ շրջապատող օդի և հսկող մարմինների ազդեցութեան տակ կարծրացած է»: Վլադիմիրսկին *τλωθεῖσα* բառը թարգմանում է «կոշտակավոր»՝ նշելով, որ մաշկը (*δέρμα*) անվանվում էր նաև *σάρξ τλωθεῖσα* («կոշտակավոր մարմին») (*Немецуй 2011, нр. 737*):

Գլուխ ԻԹ.

(166) Պատմութեանը հայտնի են երկու Դիոնիսիոս բռնապետ՝ հայր և որդի, որ իշխում էին Սիկիլիայի Սիրակուզայում՝ Ավագը (Ք. ա. 431-367 թթ.) և Կրտսերը (Ք. ա. 397- 337 թթ.), ինչպես նաև՝ երկու Ջենոն անունով փիլիսոփա՝ Ջենոն Տարսոնացին (Ք. ա. Բ. դար) և Ջենոն Կիտիոնացին (Ք. ա. 334-262 թթ.): Ժամանակային առումով նրանցից ոչ մեկը չէր կարող ապրել երկու բռնապետերից որևէ մեկի օրոք: Իսկ լեզուն ծամելն ու թքելը կեղծ-Նոննոսը և Դավիթ Անհաղթը վերագրել են պլուրալ գործակալ կին փիլիսոփա Թեանոյին (Դաւիթ, Սահմանք 1960, գլ. Թ, Ակինյան 1904, էջ 139-146) [(Nonnos), *Die Scholien zu fünf Reden des Gregor von Nazianz, herausgegeben von A. Manandian, Marburg, 1903, p. 32*]:

(167) Անաքսարքոս Աբդերացին մտերիմ էր Ալեքսանդր Մակեդոնացուն և վատ հարաբերություններ ուներ Կիպրոսի բռնապետ Նիկոկոնոնի հետ: Մի խնջույքի ժամանակ Ալեքսանդրի այն հարցին, թե՞ հավանում է արդյոք հյուրասիրությունը, Անաքսարքոսը պատասխանում է. «Ամեն ինչ հրաշալի է, արքա, պարզապես կարելի էր նաև մի բռնակալի գլուխ հրամցնել»՝ ակնարկելով Նիկոկոնոնին: Ալեքսանդրի մահից հետո, երբ մի նավարկության ժամանակ Անաքսարքոսը ստիպված էր կանգ առնել Կիպրոսում, բռնակալը հրամայում է ձերբակալել նրան, նետել սանդի վրա և երկաթե սանդակոթերով կտոր-կտոր անել: Բնավ չվախենալով նման մահապատժից, փրկիստփան միայն բռնակալի երեսին է շարտում իր նշանավոր խոսքերը. «Կտոր-կտոր արա Անաքսարքոսի կաշին, բայց Անաքսարքոսին մանրել քեզ չի հաջողվի»: Իսկ երբ Նիկոկոնոնը հրամայեց կտրել նրա լեզուն, ասում են, նա ինքը կծեց, պոկեց այն և թքեց բռնապետի դեմքին (Dioegen 1986, кн. 9): Նեմեսիոսի մոտ, թվում է նա չարչարանքներ է կրում բարեկամներին չմատնելու համար՝ տարբերվելով Դիոգենեսի պատմությունից: Հնարավոր է՝ լեզուն ծամելու պատմությունը ևս այստեղից է վերցված, և թյուրիմացաբար է վերագրվել Չենոնին (տե՛ս նախորդ ծնթ.):

(168) Nem 95. 6 προδοῦναι («մատնելու») «տալոյն յառաջ»-ը տառացի պատճենում է, որը մթագնել է իմաստը:

(169) Տե՛ս Դան. ԺԳ. 22 (Ծննդ. ԼԹ. 7):

(170) «Չոհեալ» ἐπιθύσαζ. եթովպացիներն Օրիգենեսին ընտրություն էին պարտադրել՝ կամ պղծել սեփական մարմինն անառակությունամբ, կամ գոհ մատուցել կուռքերին, և նա նախընտրեց վերջինը (PG 40, p. 722, n. 59): Վենետիկյան հրատարակիչը լուծմունք է ծանոթագրում. «Դեկոս հրամայեաց սև առն ընդ նմա անկանել, զոր չէր պարտ ամաչել, այլ կրել, թէ և ամոթալի էր գործն», ապա հավելում է. «Չգիտեմ ուստի՞ առեալ թիբուտ՝ ի գաղղիական թարգմանությունեան իւրում՝ յարմարէ. Pour ne pas tomber dans les désordres des Ethiopiens, se rendit coupable de mutilation sur lui-même» (Նեմեսիոս, Վ 1889, էջ 115, ծ. 5): Խոսքը Ժան-Բատիստ Տիբոյի մասին է, որն առաջինը հին հունարենից Նեմեսիոսի երկը թարգմանեց ֆրանսերեն (Némésius, De la nature de l' home, traduit pour la première fois du Grec en Français par MJB Thibault, Paris: Chez Hachette, libraire, Rue Pierre-Sarrazin 19, 1844):

Գլուխ Լ.

(171) *Nem 97. 10 τῆς μοχθηρίας* («արատավորութեան»): Բառը շփոթված է *μόχθημα* («չարչարանք») բառի հետ:

Գլուխ ԼԱ.

(172) Այսինքն, սննդառութեան և աճի վերը հիշյալ գործառույթներով: Մատթէն նկատում է, որ Ֆիզիկական գործառույթները, որոնք կախված չեն մեր կամքից, չեն կարող կոչվել ոչ կամավոր և ոչ ակամա, անկախ այն բանից՝ մենք գիտենք արդյոք այդ գործառույթների բոլոր մանրամասներն ու առանձնահատկությունները (PG 40, p. 728, n. 16):

Գլուխ ԼԲ.

(173) «Ստուգաբանութիւնդ է ըստ յունին, զի προαιρετὸν կազմի τὴ αἰρετὸν բառէ, որ է ἔντορεσσι, ἰοσθρεσσι, և τὴ προ նախադրութենէ, որ նշանակէ փոխանակ, τὴ տեղի» (Նեմեսիոս, Վ 1889, էջ 122, ծ. 2):

Գլուխ ԼԳ.

(174) «Դիպողականաց» (στοχαστικῶν): Ըստ Վլադիմիրսկոն՝ *στοχαστικῶν* կարելի է թարգմանել «նպատակաուղղված», ինչը ենթադրում է որոշակի հայտնի նպատակ (*Немезий 2011, прим. 845*): Լատիներեն՝ *quae conjectura continentur* («որոնք հիմնված են կարծիքի կամ ենթադրության վրա») (PG 40, p. 739):

Գլուխ ԼԴ.

(175) Քրիստիպոսը (*Χρύσιππος*, Ք. ա. 281-208 թթ.) ընդունելի էր համարում միայն մարդու ներդաշնակ կյանքը բնութեան հետ, քանի որ մարդն ու բնությունը միասնություն են: Աստված, բանականություն, ճակատագիր և Զևս գաղափարները նրա մոտ նույնանում են: Աշխարհում ամեն ինչի ստեղծումը նա վերագրում է ճակատագրին, որն ամբողջ Գոյի պատճառական շղթան է, ըստ որի շարժվում է աշխարհը: Այն նույնն է, ինչ և բանականությունը: Իսկ քանի որ ամեն ինչ ըստ ճակատագրի է, ուրեմն կարևոր է նաև գուշակության արվեստը (*Диоген 1986, Кн. 7*):

(176) *Φιλοπάτωρ* (հայերեն տարբերակներում՝ *փիլիպատովր*, *փիլոպատոս*, *փիլոպատոս*, *փիլոպատիոս*): Պետք է ենթադրել, որ խոսքն ինչ-որ ստոիկյան փիլիսոփայի մասին է: Սակայն Փիլոպատորը («հայրասեր») սովորաբար արքաների մականունն էր՝ Պտղոմեոս Դ. Փիլոպատոր (Եգիպտոսի), Սելևկոս Դ. և Անտիոքոս Ժ. Եվսեբես Փիլոպատոր (Սելևկյան պետության արքաներ), Արքելաոս Փիլոպատոր (Կապադոկիայի արքա) և այլն: Իսկ Զենոնի աշակերտների թվում Անտիպատոր Տարսոնացի (Ք. ա. 200-129 թթ.) փիլիսոփայի անունը հաճախ է նշվում Քրիստիպոսի հետ միասին: Նրանք երկուսն էլ կարծում են, որ աշխարհը կառուցվել է մտքով և նախախնամությամբ: Քրիստիպոսն այդ թեմաներին անդրադառնում է իր «Բնություն մասին», «Նախախնամության մասին», «Ճակատագրի մասին» աշխատություններում, իսկ Անտիպատորը՝ իր «Աշխարհի մասին» և «Ճակատագրի մասին» երկերում (Διογεν 1986, կհ. 7):

Գլուխ ԼԵ.

(177) Աստժո սպասավորության մասին խոսելիս Նեմեսիոսը հաճախ օգտագործում է *θεραπεία բառը*: Այս դեպքում *τῶν ἀστέρων θεραπείας τὰς ἐκμειλισσομένης* արտահայտությունը կարելի է հասկանալ «աստղերի սպասավորություն, պաշտամունք, որի շնորհիվ մեղմանում է նրանց զայրույթը»: Իսկ ստորև *θεραπεία բառը* թարգմանվում է՝ «պատարագ»-ով (*θεραπείας τῶν θεῶν*):

(178) Բախտիցն պատմողք կամ «բաշխողք» էին համարվում, այսպես կոչված ծննդաբաշխերը (գենեթրիալոգները) (*τῶν καλουμένων γενεθλιαλόγων*) *τὰ γενέθλια* («ծննդյան օր») բառից, որոնք ծննդյան օրվան համապատասխանող աստղերի դասավորությամբ կանխագուշակում էին նորածնի ճակատագիրը:

Լատիներեն թարգմանությունն (PG 40, p. 747) ավելի լիարժեք է՝ «Հատկապես նրանց մարգարեությունը, ովքեր կանխատեսում են և ուրվագծում յուրաքանչյուրի կյանքը՝ ըստ ծննդյան օրվա, և որոնք կոչվում են *γενεθλιαλόγοι*»: Հայերեն որոշ ձեռագրերում կան նաև լուծմունքներ, օրինակ՝ Ժ-ում մեկնվում է. «աստեղացն ընթացքն, որ գչարն ու բարին տան»: Նրանք բոլորը համարվում էին «դիւթութեան» (*μαντεία*) արվեստի

գիտականեր: Նմանատիպ ծննդաբաշխության, աստղաբաշխության, աստղահամալուծությունների, մոլորակներին և կենդանակերպերին առնչվող գուշակությունների մասին գիրք ունի նաև Ամիրդովլաթ Ամասիացին, որը կոչվում է «Գիրք ռամկական» (տե՛ս Ամիրդովլաթ 2014, XVIII, նշում 4):

Գլուխ ԼԶ.

(179) Ըստ Նեմեսիոսի՝ *προαίρεσις*-ը հատուկ կամային գործողություն է: Այն հնարավոր բոլոր տարբերակների ընտրության, դրանց քննարկման և վերլուծության արդյունքն է, երբ ընտրությունը կանգ է առնում գերապատվություն ստացած որևէ տարբերակի վրա: Չնայած դրան, տարբերակելով հանդերձ *αἴρεσις* («ընտրություն») և *προαίρεσις* («նախընտրություն») հասկացությունները, Նեմեսիոսը հաճախ նույնացնում է դրանք: Նույն կերպ են վարվում նաև հայ թարգմանիչները, հիմնականում գործածելով «յաւժարութիւն» եզրը: Սկզբունքային տարբերություն կա «նախընտրել» և «կամենալ» (*βούλησις*) եզրերի միջև: Նախընտրությունը միշտ ենթադրում է նաև նպատակին հասնելու ուղիները, իսկ կամենալը, ըստ Նեմեսիոսի՝ միշտ չէ, որ ուղեկցվում է այդ ուղիների մասին պատկերացմամբ: Դա լինում է միայն այն դեպքում, երբ կամենալը վերաբերում է հնարավորին, դրանով իսկ տարբերվելով ավելի անորոշ կամային գործողությունից, որ կոչվում է ձգտում, մղում («յարձակումն»):

Գլուխ ԼԷ.

(180) Տե՛ս Plato *De republ. lib. X*, «Ի Հասարակապետութիւն մատենին, գլ. Ժ.» (Նեմեսիոս, Վ 1889, էջ 131, ծ. 1): Ճակատագրի և նրա երկակիության մասին Պլատոնը հանգամանալի վերլուծություն է ծավալում նաև «Օրենքների կամ օրենսդրության մասին» (*Πλατων, т. 4, 1994, Законы, 895e, 896 e*) երկում:

(181) Տողատակում նշված *δι' αἰτίαν ἀναπόδραστον* (*αἰτία* «պատճառ» բառը կարող է նշանակել նաև՝ «հիմք, առիթ, մեղադրանք», *ἀναπόδραστον*՝ «անխուսափելի») արտահայտությունը Վլադիմիրսկին թարգմանում է *непременный, в основании неизбежный* («իր հիմքում կամ ի սկզբանէ

անխուսափելի»): Ստորև՝ «Եւ կոչէ զայս դրութիւնս անփախչելիս», տարրնթերցվածներում նաև՝ «անխափանելիս», իսկ հունարեն՝ *θεσμὸν ἀδραστείας*. *θεσμός* նշանակում է «1. հինավուրց կարգ, սրբազան օրենք, 2. կարգ, օրենք, դրություն, 3. գանձ, հարստություն», իսկ *ἀδραστεία*՝ Ադրաստեա-Նեմեսիսի՝ վրիժառության աստվածուհու մականունն է: *θεσμὸν ἀδραστείας*, որ նշանակում է «Ադրաստեայի օրենք», անխախտելի արդարադատության օրենքն է, որը տրված է սկզբնական և բարձրագույն Աստծո կողմից՝ ամբողջի կարգավորման համար, որով ղեկավարվում են իրողությունները (*παρὰ τοῦ πρώτου καὶ ἀνωτάτου Θεοῦ εἰς διακόσμησιν τῶν ὄλων καθ' ὃν διεξάγεται τὰ γινόμενα*, *Nem 109. 13-15*):

(182) «Հնարաւորապէս»՝ *ἐνδεχομένων*. Ելնելով տեքստի բովանդակությունից, ստացվում է՝ «այնպես, ինչպես անհրաժեշտ է դառնում մարդու բարօրության և նախախնամության բարձրագույն նպատակների համար»: Օքսֆորդյան հրատարակիչն իր ծանոթագրություններում մեջբերում է Ամմոնիուսի խոսքերը. «Աստվածությունները գերազանցապես գիտեն հնարավոր ամեն բան. առանձին առարկաները՝ անբաժանելի և ոչ տարածական, բազմաբանակները՝ հավերժական և եղական, և անեղականները», ինչից էլ հետևում է, որ «նրանց կանխատեսումը իրադարձություններին չի պարտադրում ոչ մի անհրաժեշտություն» (*Oxon. 1671, p. 398*):

(183) Տե՛ս Յեսու ժ. 13-14:

(184) Տե՛ս Ծննդոց Ե. 24 և Դ. Թագաւորաց Բ. 11:

Գլուխ ԼԲ.

(185) Անձնիշխանական՝ *ἀντεξουσίον* («լիարժեք ազատություն, ինքնուրույնություն, ինքնորոշում»): Այլ կերպ ասած՝ անձնիշխանականը մարդու ազատ կամքի իրավունքն է (և պարտականությունը), նրա որոշում կայացնելու ազատությունը, ինքնուրույնությունն ու ինքնորոշումը, որ գտնվում է մարդու տիրապետության, նրա վերահսկողության տակ և ենթակա է նրա կամքին:

(186) Ինքնամատոյց բառով թարգմանվում է *τὸ αὐτόματον*-ը, որ նշանակում է պատահականություն, դիպված, ինքնագործ, ինքնաշարժ:

(187) Տե՛ս *Arist. Ethic Nicomach. 1114 a*:

(188) Դիոդորոս Սիկիլիացու (Ք. ա. 90-30) «Պատմական գրադարան» աշխատությունը, համեմատելով գոյություն ունեցող բազմաթիվ առասպելներ և ժողովրդական ավանդություններ, մանրամասն վերլուծում է հին աստվածների դերն ու նշանակությունը մարդկանց կյանքում: Նրա վեցերորդ գրքում հատվածներ են պահպանվել էվհեմերոս Մեսենացու (Ք. ա. 340-260 թթ.) «Սրբազան պատմություն» երկից, որտեղ նա նկարագրում է իր ճամփորդությունը դեպի աստվածների սրբազան Պանքեա կղզին: Այնտեղ նա գտնում է զարմանալի մի արձանագրություն, որտեղ ներկայացված էր բոլոր աստվածների ծագումն ու դերը: Ըստ այդ արձանագրության նրանք երկրային էակներ էին՝ օժտված հզոր ուժով և կարողություններով: Դիոդորոսի հինգերորդ գրքում իբրև աստվածների կղզի ներկայացվում է Կրետեն, որի հետ է կապված, ըստ բազմաթիվ ավանդությունների, մարդկանց շնորհված մեծագույն բարիքներից շատերի, այդ թվում՝ նաև օրենքների ստեղծումը: Զևսը տարբերվում էր բոլոր աստվածներից իր արիությունը, խելքով, արդարամտությունը և այլ առաքինություններով: Նա սովորեցրեց մարդկանց կատարած հանցանքների համար դատել իրար՝ համաձայն որոշակի օրենքների, հրաժարվելով ուժի գործադրումից, վեճերը լուծելով դատարանում: Ընդհանուր առմամբ նա հաստատեց արդարամիտ օրենքների և խաղաղության գաղափարը, ըստ որի բարի մարդկանց վրա պետք է ներգործել նրանց համոզելով, իսկ չարերին ենթարկել՝ պատիժներով և վախով: Նա ոչնչացնում էր ավազակներին և ամբարիշտներին՝ մտցնելով հավասարակշռություն և ժողովրդավարություն (Diодор 2000, с. 71):

Գլուխ ԼԹ.

(189) Տե՛ս Երեմիա Ժ. 23:

(190) Տե՛ս Սաղմ. 79. 11:

(191) Տե՛ս Մատթէոս Ե. 28:

(192) Տե՛ս Յոք Ա. 5:

(193) Պարունակողը περιέχων. ի նկատի ունի, մարմինը չըջապատող օղբ, երբեմն կլիմայական պայմանները: Այլ տեղերում այն թարգմանվում է պարզապես «օղ» (1. [12], հմմտ Nem 9. 11):

Գլուխ Խ.

(194) Ըստ Պլատոնի՝ տեսականը էության ճանաչումն է, իսկ գործականը՝ իմացությունը, թե ինչպես պետք է վարվել: Տեսականն իրականացվում է հայեցողությամբ (κατανοοῦν), որը մտքի, իմացականի գործունեությունն է: Գործականը բանական հոգու գործողությունն է (խոհեցողականն՝ βουλευτικόν), որ կատարվում է մարմնի միջոցով: Աստվածային հայեցողությամբ և աստվածային մտքերով հոգին հաճույք է ստանում, և նրա այդ վիճակը կոչվում է մտածողություն կամ խորհուրդ, որով նա նմանվում է Աստծուն: Հայեցողությունն ամենակարևորն ու արժեքավորն է, ցանկալին ու գրավիչը, այն միշտ հասանելի է և կախված է մեզանից, իսկ գործականում և գործերում, որոնք մարմնով են կատարվում, կարող են լինել արգելքներ (Πλατων, т. 4, 1994, «Альбин [Алкиной], Ученник платоновскою философию», II. 2 –III. 1): Խորհելու ունակությունը երկակի է՝ խորհրդածության ակունքը, որ մեր միտքն է (νοῦν), և գործիքը, որը որոշակի բնական օրգան է՝ ճշմարտության և կեղծիքի տարբերակման համար, բնատուր կամ բնութեանական բանականությունն է կամ խելքը (նույն տեղում, IV. 1):

(195) Յերկրաւորքս՝ ἐν τοῖς περιγείοις, Վլադիմիրսկին թարգմանում է в среде обитателей земли (Немезий 2011, нр.м. 1003): Լատիներեն՝ «որոնք պտտվում են երկրի շուրջ» (Ant. 1565): Հավանաբար, խոսքն այն աննյութեղեն երկնային էակների մասին է, որոնք մասնակցություն են ունենում մարդկանց գործերին և մյուսներից ավելի փոփոխական են:

Գլուխ ԽԱ.

(196) Ժամուց դարձումն՝ τῶν ὥρων ἀποκατάστασις. խոսքը, հավանաբար, առհասարակ ժամանակի պարբերականություն մասին է:

(197) Տե՛ս Դան. ԺԳ.:

(198) Խոսքը Իբիկոս (Ἴβυκος. Ք. ա. Ջ. դ.) բանաստեղծի մասին է (տե՛ս Plut, garr. 14, 509 F):

(199) Պատարագաւք եւ այլովք այսպիսեաւքս համապատասխանում է ἀναθήμασί τε καὶ περιβόλοις-ին. ἀνάθημα նշանակում է «գոհաբերություն, սրբազան ընծա», περίβολος՝ «ցանկապատված վայր»: Վլադիմիրսկին

περίβολος-ը թարգմանում է՝ «տաճարներով, որոնցում, բնականաբար, կատարվում են սրբազան ծիսկատարություններ» (Hemezian 2011, num. 1044): Բառի այդ նշանակությունը մասին տե՛ս PG 40, p. 785, n. 14:

(200) Անաքսագորաս Կլագոմենացի (ծնվ. ≈500 թ.) փիլիսոփա, աստղաբաշխ, երկրաչափ, Հոմերոսի մեկնիչ: Ըստ Արիստոտելի՝ Անաքսագորասը պնդում էր, որ ամբողջ գոյացությունը հիմքը մանր մասնիկներն են, որոնք միանալով առաջացնում են որակապես տարբեր մարմիններ: Բնությունը մեղ գոյությունը հունի առաջացումը և չքացումը, այլ միայն այդ մասնիկների միացումը և անջատումը: Այդ նյութական մասնիկները բաժանելի են և կոչվում են «սպերմատա» սերմեր, իսկ Արիստոտելը դրանք անվանում է «Հոմոմերներ»: Բոլոր առարկաները, որ կազմված են այդ մասնիկներից, սկզբում եղել են իրար հետ խառնված: Անսահմանորեն բաժանելի այդ մասնիկներն իրենց մեջ չեն պարունակում ներքնակ շարժում, այլ շարժման մեջ են դրվում արտաքին մի ուժի միջոցով, որ կոչվում է «նուս» (բանականություն) կամ համաշխարհային ոգի (տե՛ս Arist. De metaph. 983b-984b):

(201) Ըստ Մորանի՝ Nem 124. 22-125. 2 հատվածը բացակայում է միայն հայերեն բնագրում:

PG 40, p. 791-ում այստեղ նոր գլուխ է սկսվում թվով 43, ինչին հետևելով, գլուխն առանձնացնում է նաև Վենետիկյան հրատարակիչը, սակայն հայերեն ոչ մի ձեռագրում այդպիսի բաժանում չկա: Հունարեն բնագրում այդ գլուխը կոչվում է τὸ ἐστὶ πρόνοια («Ինչ է նախախնամությունը»):

Գլուխ ԽԲ.

(202) Nem 126. 12-15 εἶναι δὲ καὶ τῆ δευτέρα καὶ τῆ τρίτη προνοία τὸ εἶναι παρὰ τῆς πρώτης, ὡς δυνάμει πάντα παρὰ τοῦ πρώτου Θεοῦ διοικεῖσθαι τοῦ τάξαντος καὶ τοὺς δευτέρους καὶ τοὺς τρίτους προνοητάς – «և երկրորդ, և երրորդ նախախնամությունը առաջին աստծով են, որպես ամենայն գործությունը՝ կարգավորվում է առաջին աստծով՝ կարգողով և՛ երկրորդ, և՛ երրորդ նախախնամողներին» (տե՛ս Plato. Tim. 38b-40e): Հայերեն թարգմանությունը մի փոքր խրթին է և անհասկանալի:

(203) Տողատակում նշված, միայն հայերեն բնագրում բացակայող արտահայտությունների բովանդակությունը հետևյալն է՝ «Այսպես, էպիկուրոսն ասում է. երանելին և անմահը ո՛չ ինքը հոգս ունի, ո՛չ էլ ուրիշներին է պատճառում, ուստի չի համակվում ո՛չ բարկությունից, ո՛չ ուրախությունից, քանզի բոլոր այսպիսի բաները տկարութեան նշան են: Բարկությունը օտար է աստվածներին, քանզի կամքին հակառակ մի բանի դեպքում է լինում, իսկ աստծո կամքին հակառակ ոչինչ չի լինում» (Հունարենից թարգմանությունը մերն է):

էպիկուրոսի (Ք. ա. 342-272 թթ.) հայտնի աշխատությունը կոչվում է «Բնություն մասին»: Այն կազմված է եղել 37 մասից, սակայն ամբողջությամբ չի հասել մեզ: Ականավոր փիլիսոփան մարդկային կյանքի նպատակն է համարում երջանկությունը, իսկ փիլիսոփայի բարձրագույն նպատակը՝ ատարաքսիան, այսինքն, ամեն տեսակի տանջանքի բացակայությունը, հաճույքը, անխռով կյանքը, մահից չվախենալը: Մահվան երկյուղը նախապաշարմունք է, որովհետև երբ մենք կանք, մահը դեռ չկա, իսկ երբ մահը կա, մենք արդեն չկանք: Երջանկությունն, ըստ նրա՝ հոգու անդորրն է: «Երբ մենք ասում ենք՝ նպատակը հաճույքն է, նկատի չունենք զգայական հաճույքը, այլ զերծ լինելը մարդկային տառապանքներից և հոգեկան հուզմունքներից: Հաճելի կյանք ստեղծում է զգաստ խելքը, որը զննում է, թե ինչն ընտրել և ինչից խուսափել, որը մի կողմ է նետում հոգուն հուզմունքներ պատճառող կարծիքները»: էպիկուրոսը սովորեցնում է նաև հեռու մնալ քաղաքական կյանքից: «Ապրիր աննկատ», – խորհուրդ է տալիս նա: Բայց «չի կարելի հաճելի ապրել՝ առանց ապրելու բանականորեն գեղեցիկ և արդարացի, և չի կարելի ապրել բանականորեն գեղեցիկ և արդարացի, առանց հաճելի ապրելու» (Лукреций 1983, cc. 31-40):

(204) Տե՛ս Arist. Ethic. Nicomach. 1144 b:

(205) Եվրիպիդեսն ու Մենանդրոսը հունական դրամատուրգիայի նշանավոր ներկայացուցիչներն են: Եվրիպիդեսն ապրել է Ք. ա. 480-406 թթ.: Եվրիպիդեսի ողբերգություններում հին առասպելները ներկայացվում են շեշտված մարդկային կրքերով և զգացմունքներով: Իսկ Մենանդրոսը (Ք. ա. 343-292 թթ.) Նոր ատտիկյան կատակերգության խոշորագույն ներկայացուցիչ է: Նրա գործերը երկար ժամանակ անհայտ էին

մնում: Այժմ հայտնի է նրա 16 ձեռագիր, որոնք պարունակում են 2300 չափածո տող: Մենանդրոսի մասին տեղեկություններ են հաղորդել Ապոլլոնորոսը, Պլուտարքոսը և այլք: Նա համակրել է Եվրիպիդեսին և իրեն համարել նրա երկրպագուն: Այս երկու հեղինակները հայ ժողովրդին հայտնի են եղել հնագույն ժամանակներից: «Գիրք Պիտոյից»-ը, որ հայկական բանասիրությունը համարում է Ե դարի վերջի հայ գրական կոթող, Եվրիպիդեսին որակում է «Մեծն Եվրիպիդես», իսկ Մենանդրոսին՝ «յույժ հռչակված» մակդիրներով (տե՛ս Գիրք պիտոյից 1993, էջ 57. 17, 55. 16):

(206) Երկկանգուն՝ *δίπηχον*, երկարության միավոր է երկու կանգուն, երկու ոտնաչափ: Մեկ կանգունը մոտ 0, 5 մետր է, երկուսը՝ մոտ 0, 92 մետր:

(207) *Չափ՝ μέδιμνος* (սորուն մարմինների չափ է մոտ 52, 53 լիտր):

(208) *τῆς κατὰ πλάτος δὲ μακαριότητος* (Nem 129. 11) նշանակում է «համատարած կամ բացարձակ երանությունից» (πλάτος-ի բառացի իմաստն է «լայնություն»):

(209) *Տե՛ս Ես. ԽԵ. 9:*

(210) *Նեմեսիոսի τῆς ἀρχῆς* (Nem 131. 11) այստեղ ունի «իշխանություն» իմաստը, բայց թարգմանված է բառի մյուս՝ «սկիզբ» իմաստով: Վլադիմիրսկին նույնպես թարգմանում է «իշխանություն»:

(211) *Տե՛ս Հռոմ. ԺԱ. 33:*

(212) *Տե՛ս Ղուկ. ԺԶ. 19:*

(213) *Տե՛ս Յովհ. Թ. 2, 3:*

(214) Պլատոնն իր տրամախոսություններում մեկ անգամ չէ, որ անդրադարձել է Սոկրատեսին և, մասնավորապես, նրա մահվանը: Ավելի հանգամանորեն այն ներկայացվում է «Սոկրատեսի պաշտպանականը» տրամախոսության մեջ: Սոկրատեսը մեղադրվում էր պետական, կրոնական և ընտանեկան կյանքին վերաբերող հնագույն իդեալների քննադատության համար: Դատավճիռը հետաձգվում է 30 օրով, քանի որ այդ ժամանակահատվածը համընկնում է դեպի Դելոս՝ Ապոլլոնի տաճար իրականացվող ամենամյա ուխտագնացության հետ՝ ի երախտագիտությունն աստվածների, որոնց շնորհիվ ոչնչացվել էր Մինոտավրոսը: Այդ սրբազան արարողության ընթացքում քաղաքը պետք է մաքուր պահվեր, և չէր կարող իրականացվել ոչ մի մահապատիժ (Plato Phaedo 58a-c): Այդ ժամա-

